

27 JUL 2016

ԴՕԿՏՕՐ ՊՕՂՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

ՍԵՌԱՑԻՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԱՐԺԻՎ  
ՇՐՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՊԱՎԱՀԱՆՈՒՄՏՈՐՆ  
Ardziv Pub. Book Store  
P. O. BOX 165, STA. A  
Boston, Mass.

ԲՈՍՏՈՆ, 1916  
«ՀԱՅՐԵՆԻԲ» ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Copyright, 1916

By DR. P. D. TOROSSIAN

Բայր Իրաւունքները վերապահուած են



11-186799p

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իմ «Սեռային Առողջաբանութիւն» անունով գրքը-  
քին հրատարակութենէն ի վեր համակրող ընթեր-  
ցողներէ բաւական թուով նամակներ ընդունած եմ  
որոնցմով անոնք կը գնահատեն իմ այդ առաջին  
գուղնաքեայ աշխատութիւնը :

Այն օրէն մինչեւ հիմա ես սեռային խնդիրներու  
վրայ աւելի բան կարդացած եւ այդ կարգի հիւան-  
դութեանց մէջ աւելի փորձառութիւն ունեցած եմ :  
Այս առաւելութիւններով նպաստաւորուած՝ ես փա-  
փաքեցայ աւելի լաւ գործ մը պատրաստել ու հայ  
հասարակութեան նուիրել : Այդ հաւատքով լոյս  
կ'ընծայեմ այս նոր գիրքը որպէս զի ան ժողովուր-  
դին մէջ մտնէ եւ աւելի բարիք գործէ :

Գիրքս գրած պահուն՝ ձեռքիս տակ ունեցած եմ  
հետեւեալ գործերը որոնցմէ ինչ ինչ կէտերու մէջ  
օգտուած եմ. Blochի "The Sexual Life of Our  
Time". William Lee Howardի "The Sex Know-  
ledge". William Hammondի «Երիտասարդական  
Մեղքեր», թարգմանութիւն Արայ Արայեանի.  
Kischի "The Sexual Life of Woman". Darwinի  
"The Descent of Man". Metchnikoffի "The Na-  
ture of Man". Spencerի "The Principles of Bio-  
logy" :

ԴՕԿՏՕՐ Պ. ԹՈՐՈՍԵԱՆ

Չըլսի, Սեպտեմբեր, 1916

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Երես

ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆ . . . . .	9
ՄԱՐԴՈՒ ԵՒ ԿՆՈՋ ԶԱՆԱԶԱՆԱԻՈՐՈՒՄԸ . . .	19
ՍԵՌԱՅԻՆ ԲՆԱԶԴԸ . . . . .	29
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ . . .	42
ՍԵՌԱՅԻՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ . . .	56
ՍԵՌԱՅԻՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆՑ ԴԱՐՄԱՆԸ 71	
ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ . . . . .	141
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ . . . . .	199
ՍԵՌԱՅԻՆ ԱՆԶՕՐՈՒԹԻՒՆ . . . . .	251
ԱՄՓՈՓՈՒՄ . . . . .	304

Սեռային գործիքին մէջ ես կը տեսնեմ մարդկա-  
յին յօրինուածքին մէջ եղող իսկական աններդաշնա-  
կութեան ամենայտուակ ասպարոյցը :

ՄԵԶՆԻՔՕՅ

ՍԵՌԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

## ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Պտղաբերութիւն կեանքի հինգ ստորոգելիներէն մէկը.—  
Սեռերու ծագումը.— Որձեւիգութիւն.— Ինքնարեղմնաւորու-  
թիւն.— Խաչակերպ բեղմնաւորութիւն.— Խաչակերպ բեղմնա-  
ւորութիւն անհրաժեշտ սեռերու առուցութեան համար.— Ա-  
րու եւ էգ սեռերու զանազանաւորումը.— Բեղմնաւորու-  
թեան չորս ընդհանուր օրէնքները.— Մարդ համեմատաբար  
ամենէն քիչ պտղաբեր արարածը:

Պտղաբերութիւն մէկն է այն հինգ ստորոգելի-  
ներէն որոնցմով գիտնականներ կը զանազանեն  
կեանքը անկենդան նիւթէն: Իւրաքանչիւր կենդանի  
էակ, բուսական թէ կենդանական, ամենէն պարզ  
միաբջիջային տեսակէն սկսեալ մինչեւ ամենէն մեծ,  
բարդ ու բազմաբջիջային, գրգռուելու, մար-  
սելու, աճելու եւ մաշուած անպէտ նիւթեր իր մար-  
մընէն դուրս վտարելու կարողութեան հետ ունի  
նաեւ պտղաբերութեան կամ իր նմանը արտադրելու  
կարողութիւնը: Պտղաբերութեան ընդունակութեան  
չնորհիւ է որ կեանքը այսքան բազմացած է ու տա-  
րածուած է ամբողջ աշխարհի երեսը, թէ ջուրին մէջ

եւ թէ ցամաքին վրայ :

Աձենէն ստորին, նախնական օրդանիւղմներու ձէջ պտղաբերութեան կերպը շատ պարզ է : Անոնց ձէջ արու եւ էգ կոչուած սեռերը չը կան : Բոցսը կամ կենդանին, ինչպէս օրինակ ամիրա կոչուած միաբը-ջիջային կենդանին, պարզապէս իր ձէջտեղէն կը բաժնուի երկուքի, որոնք ծնողի ճիշդ ձեւն ու պատկերը կառնեն. ասոնք ալ իրենց կարգին կը բաժնը-ուին կըլլան չորս, չետոյ ասոնք ալ կը բաժնուին կըլլան ութ եւ այսպէս շարունակաբար : Այս կերպով կը պտղաբերին ահագին թուով միաբջիջային թէ կենդանական եւ թէ բուսական օրդանիւղմներ, բոլոր բազմաբնակներ, պրօտօզօա, թթխմորի պզտիկ բոցսերը, պարամիսիոն կոչուած կենդանիները եւայլն :

Գրեթէ միեւնոյն կերպով կը պտղաբերին նաեւ շատ մը պարզ բազմաբջիջային կենդանիներ եւ բոցսեր : Բայց, տեսնուած է որ ստորին պարզ օրդանիւղմներ ժամանակ մը այս կերպով կ'իսուելէ ու բաժնը-ուելէ վերջ կը չողնին ու իրենց պտղաբերութեան կարողութիւնը խիստ կը տկարանայ, նոյն իսկ երբեմն բոլորովին կը դադրի : Երբ երկու տարբեր անհատներ սակաջն իրարու հետ կը միանան ու կը խառնուին՝ այն ատեն կունենանք դարձեալ առոյգ ու կենսունակ սերունդ մը, որու պտղաբերութեան կարողութիւնը կը վերակենդանանայ եւ բաժանման գործը կսկսի նորէն արագ արագ առաջ երթալ : Թէ-եւ այս տեղ դեռ արական եւ իգական որոշ սեռեր չը կան բայց եւայնպէս այս տեղէն կսկսի անոնց դադարը :

Այս նիւթի մասին շատ հետաքրքրական փորձեր

կատարած է Կօլոմբիա համալսարանի պրօֆէսօր Կալըրինս պարամիսիոն կոչուած մանրադիտակային կենդանիներուն վրայ : Իր փորձերու միջոցին տեսաւ որ անոնք պարզ բաժանման կերպով կը ցան իրենց ցեղը շարունակել մինչեւ վեցհարիւրերորդ սերունդը : Անկէ վերջ չողնեցան ու կանգ առին, բայց երբ երկու տարբեր անհատներ իրարու հետ միաւորեց անոնք վերակենդանացան եւ սկսան արագ արագ նորէն բաժնուիլ :

Աւելի բարդ ու բազմաբջիջային օրդանիւղմներուն ձէջ նոյն այս իրողութեան կամ օրէնքին շնորհիւ բնութիւն առաջ բերաւ երկու տարբեր սաղմեր, այսինքն, իրենց հիւլէներու կարգադրութեամբ եւ թերեւս քիմիական բազադրութեամբ իրարմէ երկու տարբեր բջիջներ որոնք եթէ իրարու հետ միանան խառնուած դանդուածին ձէջ առաջ կուգայ աւելի մեծ հիւլէական շարժում եւ արթնութիւն : Այսպէս՝ կենդանի մը կամ բոցս մը փոխանակ պարզ բջիջներու նման կ'իսուելու եւ բաժնուելու երկու նոյնատեսակ էակներու, կամ իր կողերէն կոկոնի ձեւով ծընունդ տալու ուրիշ անհատներու, իր բջիջներէն ու մանք կը չատկացնէ սերմ արտադրելու գործին իսկ ուրիշներ ձուն արտադրելու գործին. չետոյ սերմն ու ձուն իրարու հետ կը միանան եւ պտղաբերութեան գործը աւելի մեծ թափով առաջ կերթայ :

Նախնական շատ մը ստորին բազմաբջիջային օրդանիւղմներու ձէջ միեւնոյն անհատը կը պարունակէ թէ արական եւ թէ իգական սեռերը, այսինքն, թէ սերմը եւ թէ ձուն պատրաստող գործարանները : Այս դասակարգին կը վերաբերին շատ մը ստորին



բոջսեր ու կենդանիներ որոնք կը կոչուին որձեւէզ (hermaphrodite) : Այս տեսակէն են, օրինակի համար, մեր պարտէզներու շատ մը բոջսեր ու ծաղիկներ : Սոյն ծաղիկներ կը պարունակեն թէ առէջք եւ թէ վարսանդ ու այգայէս ընդունակ են իրենք իրենցմով արգասաւորուելու առանց տարրեր անհատի մը օգնութեան : Աւելի դարգացած ու բարձր օրգանիզմներու մէջ, նոյն խի մարդոց մէջ, որոշ կերպով դեռ կը տեսնուին որձեւէզութեան հետքեր . էգը կունենայ արական սեռի ծննդական գործարաններու հետքեր խի արուն կունենայ իգական ծննդական գործարաններու հետքեր : Կը պատահի երբեմն որ մարդիկ տարկանոնութեան շնորհիւ կըլլան իսկական որձեւէզ, կունենան թէ արական եւ թէ իգական ծննդական գործարաններ եւ դժուար է որոշել այդ անձնաւորութիւնը մարդ է թէ կին : Այս իրողութիւններ ցոյց կուտան որ մեր շատ հին անասնակերպ նախնիքներ որձեւէզ եղած են : Բայց հետըզհետէ աւելի դարգացած եւ բարձր օրգանիզմներու մէջ արու եւ էգ սեռերը իրարմէ բոլորովին կը զատուին, մէկ անհատը կունենայ չատկապէս սերմ արտադրելու պաշտօնը իսկ ուրիշ անհատ մը ձուն արտադրելու եւ պտղաբերելու պաշտօնը :

Այս կարգադրութիւնը տեղի կունենայ հետեւեալ պատճառով :

Բնախօսքներ քննած ու տեսած են որ այն բոջսեր եւ կենդանիներ որոնք որձեւէզ են, կենսունակ, կորովի եւ առողջ սերունդ մը չեն կրնար արտադրել ինքնարգասաւորութեամբ : Բայց երբ երկու տարրեր անհատներու սերմն ու ձուն իրարու հետ կը մի-

անան այն ատեն առաջ կուգայ շատ կենսունակ, բեղմնաւոր եւ առողջ սերունդ մը : Այս տեսակ բեղմնաւորութիւն կը կոչուի խաչակերպ բեղմնաւորութիւն : Օրինակի համար, ինչպէս վերը չի շեղի, բոջսեր ու ծաղիկներ կան որոնք ունին առէջք եւ վարանդ (արական եւ իգական մասեր), կ'արտադրեն թէ սերմ (ծաղկափոշի) եւ թէ ձու ու այսպէս ընդունակ են իրենք իրենցմով բեղմնաւորուելու : Բայց այն ծաղիկներ որոնք այդ կերպով կարգասաւորուին ոչ երկար կ'ապրին, ոչ ալ լաւ պտուղ կ'արտադրեն : Գարվին խիստ հետաքրքրական փորձեր ըրաւ այս մասին : Արուեստականօրէն երկու տեսակ բեղմնաւորութիւն եւս կատարեց ու տեսաւ որ խաչակերպ բեղմնաւորութեամբ ծաղիկները շատ աւելի փարթամ եղան եւ ընտիր պտուղ ու սերմ տուին :

Բարձրագոյն կենդանիներուն մէջ արու եւ էգ սեռերու զանազանութիւնը երթալով աւելի սուր կը դառնայ մինչեւ մարդուն մէջ ամենաբարձր աստիճանի մը կը հասնի : Մարդ ու կին իրենց Ֆիզիքական եւ հոգեկան չատկութիւններով ու կարողութիւններով՝ կը ներկայացնեն իրարմէ բոլորովին տարրեր անհատներ որոնց մերձեցումը հարկաւոր է որպէս զի արական ու իգական տարրերը, սերմն ու ձուն իրարու հանդիպին, միանան ու մարդ սեռի շարունակութեան գործը առաջ երթայ : Արու եւ էգ անհատները ցեղագրականօրէն իրարմէ որքան հեռու ըլլան սերունդը այնքան առողջ կ'ըլլայ : Այս բնական օրէնքին պատճառաւ է որ գրեթէ բոլոր կիսաքաղաքակիրթ եւ քաղաքակիրթ ցեղերու մէջ մօտիկ խնամիական կապերը վնասակար կը համար-

ուին: Երբ ամուսնական կապերը միեւնոցն գերդաստանին մէջ կը պահուին, այդ գերդաստանը ժամանակ մը վերջ կը վատասերի եւ իր կենսունակութիւնը կը կորսնցնէ, անոր անդամները կը դառնան տրակարամիտ եւ ապուշ: Այս իրողութեան տեղեակ ըլլալով է որ շատ մը կրօններ արգիլած են մօտիկ ամուսնութիւններ: Հայկական եկեղեցին, օրինակի համար, կը պահանջէ որ ամուսնացողներ իրարմէ եօթ «պորտ» հեռու ըլլան:

Մարդու եւ կնոջ սեռային տարբերութիւնները կը թուի թէ աւելի խոր եւ սուր կը դառնան մինչ մարդը կը քաղաքակրթուի: Վայրենի ցեղերուն, մինչեւ իսկ քաղաքակիրթ ժողովուրդներու վարնոց անդամներուն մէջ երկրորդական սեռային չատկանիչները պակաս նշմարելի են քան թէ զարգացած ժողովուրդներուն եւ անհատներուն մէջ: Վայրենիներուն մէջ մարդիկ այնքան մերկ, մազէ զուրկ կ'ըլլան որքան կիները: Յետոյ կիներ գրեթէ այնքան զօրաւոր են ու ընդունակ ծանր աշխատանքի որքան մարդիկ: Վայրենիներուն մէջ կիներն են որ գլխաւորապէս կը կատարեն դաշտի աշխատանքները, մարդիկ աւելի ժամանակ կուտան որսի եւ պատերազմի:

\* \* \*

Մարդ համեմատաբար ամենէն քիչ բեղմնաւոր արարածն է աշխարհի վրայ: Ասոր պատճառը անոր բնաշրջական (evolution) ամենարարձր աստիճանին վրայ կանգնելն է: Ընդհանրապէս խօսելով՝ արարած մը բնաշրջման որքան ցած աստիճանի մը վրայ

ըլլայ այնքան շատ բեղմնաւոր կ'ըլլայ, իսկ որքան արձր աստիճանի մը վրայ ըլլայ այնքան քիչ բեղմնաւոր կ'ըլլայ: Երբոր կ'ըսուի մարդ բնաշրջման ամենարարձր աստիճանին վրայ է կանգնած՝ այդ ըսել է ան ոչ միայն զանդուածով համեմատաբար աւելի խոշոր է քան շատ մը ուրիշ արարածներ, այլ ան ամենէն շատ ու բարդ գործարաններ ունի որոնք լաւ կերպով զանազանաւորուած են ու նուիրուած են իրենց պաշտօնին:

Սպէնսէր իր «Սկզբունք կենսաբանութեան» անունով գրքին մէջ պողարբերութեան մասին հետեւեալ ընդհանուր օրէնքները կը ներկայացնէ: Առաջին մեծ օրէնքն այն է թէ արարածներ որքան շատ պըգտիկ ըլլան այնքան շատ պողարբեր կ'ըլլան: Մանրադիտակային պարզ կենդանիներ ու բոցեր չափազանց պողարբեր են. այնքան շուտ կ'աճին, որ անոնց թիւը մէկ բոպէի կամ ժամուան մէջ միլիոններու կը հասնի: Ասոնցմէ աւելի մեծ ջրային բոցեր ու կենդանիներ դարձեալ շատ արագ կ'աճին, այնպէս որ կարճ միջոցի մը մէջ այնքան կը շատնան որ ահագին տարածութիւններ կը ծածկեն: Յամաքային կենդանիներուն մէջ մուկեր, որոնք համեմատաբար պըգտիկ մարմիններ ունին, շատ շուտ կ'աճին. տարին երբեմն մինչեւ հինգ անգամ ձագ կը բերեն եւ ամէն անգամ վեցէն մինչեւ քսան հատ: Կատուներ, որոնք մուկերէն մեծ են, պակաս պողարբեր են. ամէն անգամ հազու երեքէն մինչեւ հինգ ձագ կը բերեն եւ այնքան չաճախ չէ որքան մկներ: Ծուններ, ոչխարներ, կովեր նուազ պողարբեր են, որովհետեւ, աւելի մեծ մարմիններ ունին: Փիղը որ խոշոր կենդանի

մըն է շատ քիչ կը բաղմանայ: Մարդն ալ որ համեմատաբար բաւական խոշոր մարմին ունի շուներէն, ոչխարներէն, կատուներէն խիստ պակաս պտղաբեր է:

Երկրորդ՝ օրգանիզմներու պտղաբերութիւնը խոտորնակ կերպով կը համեմատի անոնց բնաշրջման աստիճանին: Կազմուածքով անոնք որքան բարդ ըլլան այնքան պակաս պտղաբեր կ'ըլլան: Օրինակի համար, առիւծը, որ թէեւ աւելի խոշոր է քան թէ մարդ եւ նոյնքան աշխույժ, աւելի պտղաբեր է քան թէ մարդ: Ասոր պատճառը մարդու աւելի բարդ կազմուածք ունենալն է, մանաւանդ իր ջղաչին դրութիւնը անհամեմատ կերպով աւելի բարդ է քան թէ առիւծին:

Երրորդ՝ օրգանիզմներու պտղաբերութիւնը խոտորնակ կերպով կը համեմատի անոնց ոչժի վատնումին. որքան աշխույժ եւ ոչժ վատնող ըլլան այնքան քիչ պտղաբեր կ'ըլլան: Տաքարիւն կենդանիներ, որոնք աւելի աշխույժ են, առհասարակ պակաս պտղաբեր են քան սառնարիւնները: Թռչուններ, որոնք աւելի տաքարիւն են եւ թռչելով աւելի ոչժ կը վատնեն քան թէ ստնտու կենդանիները, անոնցմէ պակաս պտղաբեր են: Մեր հասարակ հաւը աւելի հաւկիթ կ'ածէ տաք եղանակի մէջ քան թէ ցուրտ, որովհետեւ, ցուրտ եղանակի մէջ աւելի տաքութիւն կը վատնէ որ համադր է ուժի վատնումի: Չղջիկը մուկի մեծութիւն ունեցող կենդանի մըն է բայց անկէ շատ աւելի ուժ կը վատնէ թռչողական կեանք մը վարելուն պատճառաւ: Չղջիկը մէկ անդամէն միայն մէկ հատ ձագ կը բերէ, իսկ մուկը տասէն մին-

11-1867997

չեւ քսան հատ: Ընթերցողը թերեւս պիտի մտածէ չղջիկը առաջին օրէնքին համաձայն պէտք չէր այսքան քիչ պտղաբեր ըլլար: Պատճառը անոր շատ բարդ կազմուածք ունենալն է, ուրիշ խօսքով, բընաշրջման բարձր աստիճանի մը վրայ կենալն է: Մարդն ալ որ համեմատաբար աւելի գործունեայ կենդանի մըն է քան թէ իր մեծութիւն ունեցող ուրիշ շատ մը կենդանիներ, ինչպէս ոչխար, վագր, շուն եւայլն, անոնցմէ նուազ պտղաբեր է: Դիտուած է որ մարդկային այն ցեղերն ու ընտանիքներ, որոնք դանդաղաչարժ ու ծոյլ են եւ այդ պատճառաւ քիչ ուժգնութիւն կը վատնեն, միւս բաները հաւասար ըլլալով, աւելի պտղաբեր են քան թէ այն ցեղերն ու ընտանիքները որոնք շատ ժիր ու գործունեայ են եւ մեծ ուժգնութիւն կը վատնեն:

Չորրորդ՝ կենդանիներու եւ բոյսերու պտղաբերութիւնը ուղղակի կը համեմատի անոնց ստացած սնուղին. որքան շատ սնունդ ստանան այնքան շատ պտղաբեր կ'ըլլան: Ասոր ապացոյցը մենք կը տեսնենք մեր պարտէզի պտղատու ծառերուն եւ բանջարեղէններուն մէջ: Երբոր հողը, որուն մէջ անոնք կ'ածին, պարարտ է, այսինքն, կը պարունակէ առատ սնունդ անոնց համար, անոնք լաւ կ'ածին ու ընտիր պտուղ կուտան. բայց երբոր հողը աղքատ է հակառակը տեղի կ'ունենայ: Կենդանիներն ու թրջուններն ալ միեւնոյն ճշմարտութիւնը կը չայտնեն: Ընտանի հաւեր, որոնց սնունդը կանոնաւոր է, աւելի հաւկիթ կ'ածեն ու թուխ կը նստին քան թէ վայրի տեսակները: Ընտանի սագեր ու բազեր երկու անգամ աւելի հաւկիթ կ'ածեն քան թէ վայրի



տեսակները: Շուներ շատ աւելի ձագ կը բերեն քան թէ դաւլեր ու աղուէսներ, որովհետեւ, աւելի կանոնաւոր սնունդ կ'ստանան: Ուրիշ շատ գեղեցիկ օրինակ մը կուտան ընտանի եւ վաչրենի խոզերը: Եթէ վաչրենի խոզը տարին չորսէն մինչեւ տասը ձագ կը բերէ, ընտանի խոզը տասնեւեօթ ձագ կը բերէ: Վերջապէս մարդն ալ կը համակերպի այս օրէնքին: Միւս բաները հաւասար ըլլալով, այն ցեղեր որոնք անկանոն ու անբաւարար սնունդ կ'առնեն շնորհիւ իրենց հողագործական ու գիւղատնտեսական վտանգ մընաց վիճակին, ինչպէս շատ մը վաչրենի ցեղեր, համեմատաբար նուազ պտղաբեր են ու պակաս կը բազմանան քան թէ այն ցեղեր որոնք կանոնաւոր ու լիառատ սնունդ կ'առնեն շնորհիւ իրենց տնտեսական բարւոք վիճակին:

## II

## ՄԱՐԴՈՒ ԵՒ ԿՆՈՋ ԶԱՆԱԶԱՆԱՒՈՐՈՒՄԸ

Մարդ ու կին ամենէն լաւ զանազանաւորուած արու եւ էգ սեւերը.— Սեռային ընտրութեան խաղացած դերը մարդու եւ կնոջ զանազանաւորման մէջ.— Երկու սեւերու Ֆիզիքական, մտաւոր ու հոգեկան տարբերութիւնները.— Մարդու եւ կնոջ սեռային զգացմանց տարբերութիւնները.— Երկուքի ընդհանուր բնաւորութիւնը եւ գեղեցիկութիւնը:

Նախորդ գլխուն մէջ ըսի թէ բարձրագոյն կենդանիներուն մէջ արու եւ էգ սեւերու զանազանութիւնը երթալով աւելի սուր կը դառնայ մինչեւ մարդուն մէջ ամենաբարձր աստիճանի մը կը հասնի: Մարդկային սեւերու այս զանազանաւորութիւնը իւրաքանչիւր սեւի անհատականութիւնը զատորոշելու եւ բնաւորութիւնը զարգացնելու ու դուրս բերելու մէջ հզօր ազդակ մը եղած է, ուրիշ խօսքով, հզօր դեր մը խաղացած է քաղաքակրթութեան չառաջացման մէջ: Մէկը միւսին վրայ փոխադարձաբար ազդած է: Արդարեւ, քաղաքակրթութեան պատմութիւնը կարելի է ըսել մարդկային սեւերու զանազանաւորման պատմութիւնն է: Սեռային դա-

նազանաւորուծը քաղաքակրթութեան հետ կ'իլլէ ու կ'իջնէ: Առաջինը անհրաժեշտ պայման մըն է վերջինին:

Մարդ աւելի բնաշրջուած եւ անհատականացած սեռն է, he is more evolved, որովհետեւ, անիկա պտղաբերութեան համար շատ քիչ ուժգնութիւն կը վատնէ. իր ուժգնութեան մեծագոյն մասը ան կը պահէ իր անհատականութեան զարգացման համար: Այսպէս չէ կնոջ պարագային: Կին օրգանական մեծ ուժգնութիւն կը վատնէ պտղաբերութեան գործին համար: Այս պատճառաւ անոր անհատականութեան զարգացման համար շատ քիչ ժամանակ եւ ուժգրնութիւն կը մնայ: Կնոջ դաշտան, որուն պատճառաւ ան պարբերաբար ամսէ ամիս կը կորսնցնէ բաւական քանակութեամբ արիւն եւ ուժ, ուրիշ արգելք մըն է անոր աճման եւ զարգացման: Այսպէս ուրեմն՝ կին իր Փիլիքական ու մտաւոր ջօրինուածքով մանկան, բնութեան աւելի մօտ մնացած է քան մարդը: Ինչպէս գիտուն մը ըսած է, անիկա բնութեան հարազատ զաւակն է:

\* \* \*

Սեռային ընտրութիւն (sexual selection) գոյութեան ընդհանուր կռուէն զատ մեծ դեր խաղացած է հասցնելու մարդկային սեռը այն տեղ ուր ան հասած է աչօր: Հօր դեր մը խաղացած է զանազանելու մարդու եւ կնոջ տարբերութիւնները, որոշելու անոնց գեղեցիկութիւնը, մտաւոր կարողութիւնները եւայլն: Դարվին իր «Էջը Մարդուն» անունով գրքին վերջին մասին մէջ համառօտ կերպով կը

թուէ մարդու եւ կնոջ Փիլիքական եւ մտաւոր տարբերութիւնները ու այն ազդակներ որոնք դեր խաղացած են սոյն տարբերութիւնները առաջ բերելուն մէջ: Ահա թէ ինչ են իր գիտողութիւնները.

«Միջին հաշուով մարդ կինէն աւելի բարձրահասակ, ծանր ու զօրաւոր է, ունի աւելի լայն թիկունքներ եւ աւելի որոշ ու ցատուն մկաններ: Աւելի բարձրացօն է եւ աչքի վերեւի ոսկրէ եզրը աւելի դուրս ցցուած է քան թէ կնոջ: Մարմինը, մասնաւորապէս երեսը աւելի մազոտ է եւ ձաչնը տարբեր, աւելի ուժգին հնչիւն մը ունի: Կ'ըսուի թէ կարգ մը ցեղերու մէջ կանանց գոչնը քիչ մը կը տարբերի մարդոց գոչնէն: Մարդ աւելի քաջ, պատերազմասէր ու գործունեակ է եւ ունի աւելի հնարողական հանճար:

«Մարդու ուղեղը բացարձակ կերպով աւելի մեծ է, բայց թէ իր աւելի մեծ մարմնոցն համեմատութեամբն է որ մեծ է, կարծեմ դեռ որոշ կերպով ստուգուած չէ: Կնոջ երեսը աւելի կլոր է, ծնօտներ եւ գանկի ստորտը աւելի պղտիկ են ու կարգ մը մասեր աւելի դուրս ցցուած: Կոնքը աւելի լայն է քան թէ մարդուն, ան աւելի կանուխ կը հասուննաց քան թէ մարդը:

«Ինչպէս ամէն դասակարգի կենդանիներուն մէջ, նոյնպէս մարդուն մէջ արական սեռի բնորոշ չատկանիչները լիուլի կերպով երեւան. չեն դարմինչեւ որ ան չը հասուննաց եւ եթէ ներքինացուի անոնք երբէք չեն երեւիր: Մօրուքը, օրինակի համար, երկրորդական սեռային չատկանիչ մըն է եւ ա-

րու մանուկները անմօրուք են թէեւ կանուխ տարիքի մը մէջ իրենց գլխուն վրայ առատ մազ կ'ունենան :

«Արու եւ էգ մանուկներ իրարու շատ կը նմանին, ինչպէս ուրիշ շատ մը կենդանիներու պատիկները որոնց մէջ չափահասները իրարմէ լացն կերպով կը տարբերին : Նմանապէս անոնք չափահաս էգին շատ աւելի կը նմանին քան թէ չափահաս արուին : Էգը սակայն եւ այնպէս ի վերջոյ կարգ մը բնորոշ չատկանիչներ կ'ստանայ եւ իր դանկի ձեւակերպութեամբ կ'ըսուի թէ մարդուն եւ տղուն միջեւ միջանկեալ տեղ մը կը դրուէ» :

Ահասարակ ընդունուած է որ կին աւելի քաղցր ձայն ունի : Այս իրողութիւն Դարվին կը մեկնէ սեռային ընտրութեան վարդապետութեամբ : Կ'ըսէ ստորին կենդանիներ մինչեւ անդամ անուշ ձայներ կը հանեն, ունին կոշտ տեսակ երաժշտութիւն եւ ընդունակ են զնահատելու զայն : Թռչուններուն մէջ, օրինակի համար, երգեցողութիւն բաւական նուրբ ու բարձր աստիճանի մը կը հասնի : Միւրոյ եղանակին կենդանիներ, մասնաւորապէս արուները երաժշտական ձայներ կը հանեն էգերը գրաւելու համար : Այս սկզբունքով Դարվին կը կարծէ որ կիներու ձայնը աւելի քաղցրացաւ սեռային ընտրութեամբ՝ մարդիկ գրաւելու համար :

Դարվին սեռային ընտրութեամբ կը բացատրէ նաեւ մարդոց մօրուքը : Մօրուքը ստորին կենդանիներէն, կապիկներէն մեզի թողուած ժառանգութիւն մըն է որ երկրորդական սեռային չատկանիչ մըն է,

ինչպէս չիչեցի, եւ նշան է առնականութեան : Անկա առաջ եկաւ ու զարգացաւ էգերը գրաւելու համար :

Մարդոց, մանաւանդ կանանց մերկութիւն եւս սեռային ընտրութեամբ առաջ եկած է, ըստ Դարվինի : Կապիկներուն մէջ կը պատահի չաճախ որ էգերը աւելի մերկ կ'ըլլան, մանաւանդ իրենց փորին վրայ քան թէ արուները : Այս մերկութիւնը մեր կապիկանման նախամայրերուն մէջ երեւան պիտի բերէր մորթի պաշտառ գոյներ եւ ըլլար աղբիւր մը գեղեցիկութեան որ աչքի պիտի գարնէր ու գրաւէր արուները : Սեռային ու բնական ընտրութեան շնորհիւ հետզհետէ աւելի մերկ ու պաշտառ գոյն ունեցող էգերը ընտրուեցան իբրեւ կին արուներէն մինչեւ այդ չատկանիչները ժամանակի ընթացքին մէջ սաստկացան եւ չառաջ եկան այսօրուան կնոջ համեմատաբար աւելի պաշտառ գոյնն ու գեղեցիկութիւնը : Կին այդ չատկութիւնը ժառանգութեան օրէնքով տրուաւ նաեւ արու սերունդներուն, բայց դեռ մարդը աւելի մազոտ է քան իր էգ ընկերը :

Կնոջ իրանը համեմատելով իր սրունքներուն եւ թեւերուն հետ, աւելի երկար է քան թէ մարդուն : Աղբերն ու սրունքները, նաեւ թեւերը աւելի կարճ են : Ոսկորներն ու մկանները աւելի պզտիկ են : Մորթը աւելի փափուկ է եւ աւելի պաշտառ գոյն ունի : Ան աւելի ճարպ, հտեւաբար աւելի կըր որ չըջագիծ ունի քան թէ մարդ : Անոր հագագն ու ձայնը աւելի մանկան մօտ են : Կնոջ արիւնը մէկ խորանարդ միլիմէտրի մէջ չորսուկէս միլիոն կարմիր բջիջ կը պարունակէ : Մարդու արիւնը կը պարունակէ հինգ միլ-

խոն բջիջ: Նշանաւոր շուէտացի անդամազննին Բէ-  
ցիոս կը կարծէ որ կնոջ ուղեղ աւելի սլարզ կազմը-  
ուածք ունի քան թէ մարդուն, թէեւ կ'ըսէ, անսիտ-  
փոխ, չարատեւ մասնալատկութիւն մը չը կաչ որով  
կարելի ըլլայ միշտ դանաղանել անոր ուղեղը մար-  
դու ուղեղէն:

Ըստ Դարվինի մարդու եւ կնոջ մտաւոր կարող-  
ութեանց տարբերութեան մէջ հաւանական է որ  
սեռային ընտրութիւնը շատ կարեւոր դեր մը խաղա-  
ցած է: «Գիտեմ», կ'ըսէ, «որ կարգ մը գրողներ կը  
տարակուսին թէ այսպիսի ընդարօց տարբերութիւն  
մը կաչ, բայց այս գոնէ հաւանական պիտի երեւի  
եթէ ի նկատի առնենք այն համանման իրողութիւնը  
որ գոյութիւն ունի ստորին կենդանիներուն մէջ ո-  
րոնք կը ներկայացնեն երկրորդական ուրիշ սեռային  
չատկանիչներ:

«Ամէն ոք կ'ընդունի թէ ցուլը բնաւորութեամբ  
կը տարբերի կովէն, վաչրենի խողը մատակ խողէն  
եւ նժուղը զամբիկէն ու ինչպէս անասնանոց պահող-  
ներուն լաւ չալտնի է, մեծ կապիկներու արունները է-  
դերէն:

«Կին կը թուի թէ կը տարբերի մարդէն մտային  
ջորինուածքին մէջ գլխաւորապէս իր աւելի մեծ  
փափկասրտութեամբ ու այս ճիշդ է նոցն իսկ վաչ-  
րենիներու նկատմամբ, ինչպէս կը վկայեն շատ մը  
ճանապարհորդներ: Կինը շնորհիւ իր մաշական բը-  
նազդներուն կը ցուցնէ այս չատկութիւնները ակն-  
չալանի կերպով դէպի իր երեխաները, ուրեմն հա-  
ւանական է որ ան չաճախ ցոյց տաչ զանոնք նաեւ  
հանդէպ իր ընկեր արարածներուն: Մարդ ուրիշ

մարդերու նախանձորդն է, կը սիրէ մրցում եւ այս  
կ'առաջնորդէ զինք դէպի ձգտում ու փառասիրու-  
թիւն որոնք շուտով անձնասիրութեան կը փոխ-  
ուին:

«Երկու սեռերու մտաւոր կարողութեանց մէջ  
եղող գլխաւոր տարբերութիւնը կը կաշանայ այն  
կէտին մէջ որ մարդ ինչ բանի որ ձեռք զարնէ աւելի  
բարձր դիրքի կը հասնի քան թէ կին, ըլլայ այն խոր  
մտածողութեան, բանականութեան, երեւակաշու-  
թեան եւ ձեռներու ու զգայարաններու գործածու-  
թեան մէջ: Եթէ բանաստեղծութեան, նկարչու-  
թեան, քանդակագործութեան, երաժշտութեան,  
պատմութեան, գիտութեան եւ փիլիսոփայութեան  
մէջ նշանաւոր եղող մարդկանց եւ կանանց երկու  
ցանկ շինենք եւ իւրաքանչիւր առարկայի տակ եր-  
կոտասնեակ անուններ դնենք, այդ երկու ցանկերը  
երբէք իրարու հետ չը պիտի բաղդատուին»:

Դարվին ցոյց կուտայ որ ասոր պատճառը մար-  
դու քաջութիւն, չարատեւութիւն եւ վճռական աշ-  
խատութիւնն է:

«Երբոր երկու մարդիկ իրարու հետ մրցման մէջ  
կը մտնեն, կամ մարդ մը կնոջ մը հետ պիտի մրցի ո-  
րոնցմէ երկուքն ալ հաւասարապէս միեւնոցն մտա-  
ւոր կարողութիւնն ունին, միայն թէ մէկը աւելի  
գործունէութիւն, քաջութիւն եւ չարատեւութիւն  
ունի, այս վերջին այն ատեն աւելի երեւելի պիտի  
ըլլայ ամէն գործի մէջ ու պիտի գերադանցէ միւսը:  
Կրնանք ըսել որ ան հանճար մըն է, որովհետեւ,  
ինչպէս հեղինակաւոր անձնաւորութիւն մը չաշտա-

բարած է, հանձարը համբերութիւն է ու համբերութիւնը այս իմաստով կը նշանակէ անխոնջ, անընդճելի չարատեւութիւն» :

Տարակոյս չը կայ որ կին հոգեպէս նաեւ տարբեր արարած մըն է մարդէն : Ինչպէս Մանտէզաւցա ըսած է՝ մեծ սխալ մըն է ենթադրել որ մարմինը սեռ ունի բաց ոչ հոգին :

Երկու սեռերու բնաւորութիւններ զարմանալի կերպով կը համապատասխանեն իրենց արտադրած սաղմերուն . մարդուն կը նմանի սերմին խկ կնոջը ձուին : Մարդ նախաչարձակ ու չառաջխաղաց է եւ աչլազանութեան աւելի հակամէտ . կին պարզ է, կրաւորական, դիւրաւ սոսաւորուող եւ շուտ գրգռուող : Կանանց բնաւորութիւններ միատեսակ են, նախնական ընդհանուր, բնական տիպէն շատ չեն շեղիր . մարդոց ընդհակառակն իրարմէ լացն կերպով կը տարբերին : Կին աւելի իրեն մօտ եղող բաներով, թանձրացեալով ու անհատով կը հետաքրքրուի . մարդ հեռաւոր բաներով, վերացականով ու ընդհանուրով : Ըմբռնողութեան մէջ կին աւելի արագ է եւ ունի աւելի լաւ լիշողութիւն : Վերացական օրէնքներ գտնելու եւ անոնցմէ ընդհանուր եզրակացութիւններ հանելու մէջ, ընդհակառակն, մարդէն ետ կը մնայ : Կին մանկանց պէս շուտ թելադրութիւններ կ'ընդունի եւ հեշտութեամբ զօրաւոր անհատականութեանց ազդեցութեան տակ կ'ընայ : Շնորհիւ իր Ֆրիդրիքական յօրինուածքին՝ աւելի զգայնօտ է : Ասոր համար է որ կիներ աւելի կրօնասէր են, կրօն պահողները գրեթէ միշտ կիներ ե-

ղած են : Ասոր համար է նաեւ որ անոնք արտաքին գրգիռներուն աւելի շուտ կը պատասխանեն քան մարդիկ :

Կին եւ մարդ գործաւորներ ուսումնասիրող շատ մը խուզարկուներ կը համաձայնին որ կիներ աւելի հլու են եւ կարգապահ, թեթեւ գործեր այնչափ լաւ կ'ընեն որքան մարդիկ եւ կարգ մը բաներու մէջ չարատեւող են : Ընդհակառակն, չնչին տկարութեանց պատճառաւ աւելի շատ գործէ ետ կը մնան, աւելի շատ ենթակայ են պատասխանատու, ծանր գործեր կատարելու մէջ վրիպելու, ցոյց տալու պակաս խելք այն բաներուն մէջ որոնք իրենց սովորական զբաղմունքէն դուրս կ'իջնան : Ընդհանուր առմամբ ցոյց կուտան պակաս իղձ եւ ընդունակութիւն ինքնազարգացման համար :

Յաճախ վէճ ծագած է թէ որ մէկը աւելի զօրաւոր սեռային զգացում ունի, մարդ թէ կին : Կարծեմ տիրող կարծիքը այն է թէ մարդը աւելի զօրեղ սեռային զգացում ունի : Այս տեսակ չաչտարարութիւն մը խնդիրը լման կերպով չի բացատրեր եւ կարելի է ըսել սխալ է ան, խնդրին վրայ կարող է բոլորովին սխալ գաղափար տալ : Կինն ալ ունի մարդուն չափ զօրաւոր սեռային զգացում, միայն թէ հետեւեալ տարբերութիւններ կան երկուքին միջեւ : Կնոջ սեռային զգացում աւելի կրաւորական է, մարդուն ներգործական : Կնոջ զգացում աւելի բարդ է, աւելի ուշ կ'արթննայ, կը պահանջէ աւելի արտաքին գրգիռներ եւ իր օրգազմ աւելի դանդաղօրէն երեւան կուգայ : Միայն մերձեցման գործողութիւն սկսելէն վերջն է որ լիուլի կերպով երեւան կուգայ



ացն : Սեռային զգացման շրջանը կնոջ մէջ աւելի տարածուած է, մարդուն մէջ կեդրոնացած է : Կնոջ սեռային զգացումը հակամէտ է աւելի պարբերաբար երեւալու, որովհետեւ, զօրաւոր կերպով կապ ունի իր դաշտանին հետ :

Վերոյիշեալ իրողութիւններէն սխալ պիտի ըլլար հետեցնել որ մարդ կինէն աւելի բարձր էակ մըն է, ինչպէս ոմանք կը պնդեն : Մարդ եւ կին, երկու հակառակ սեռեր, ունին իրենց ուրոյն կոչումներ, ուստի եւ բոլորովին տարբեր կազմուածք եւ կարողութիւններ : Կին իր Ֆիզիքով սահմանուած է ըլլալու մայր, ատոր համար իր Ֆիզիքական ու հոգեկան ընդունակութիւնները դերազանցապէս չարմարցուած են սոցն պաշտօնին : Ատոր համար է որ անիկա աւելի փափկասիրտ է, զգայնոտ, ներկայով եւ մերձաւորով աւելի հետաքրքրուող : Մարդուն տրուած է հետապնդողի, կռուողի, պաշտպանողի ուստի եւ հեռուն նայողի եւ նախատեսողի դերը : Մէկուն տկարութիւնը միւսին ուժն է : Երկուքը զիրար կը լրացնեն : Իմացականութիւնը եւ սիրտը մեծ բաժինը ունին երկու սեռերու նօրմալ միութեան մէջ : Նոյնքան անիմաստ է պնդել մէկը միւսէն աւելի գեղեցիկ է : Զի թուիր թէ գեղեցկութեան բացարձակ չափանիշ մը կայ : Ընդհակառակն կը թուի թէ անիկա չարաբերական բան մըն է : Աշխարհի տարբեր ցեղերը բոլորովին տարբեր գաղափարներ ու չափանիշներ ունին գեղեցկութեան մասին : Երկու սեռերն ալ ունին իրենց մասնաշատուկ գեղեցկութիւնը եւ մէկը միւսին հետ բազդատութեան չի կրնար դրուիլ :

## III

## ՍԵՌԱՅԻՆ ԲՆԱԶԴԸ

Սեռային բնազդը տիեզերական.— Բարդ ու աւելի տեւական կը դառնայ բարձրագոյն կենդանիներուն, մասնաւորապէս մարդուն մէջ.— Հինգ զգայարաններու խաղացած դերը սեռային բնազդի զարթնումին մէջ.— Սիրոյ բարեբար ազդեցութիւնը մարդու վրայ.— Սէրը դիւրութեամբ ծուռ զգացումներու կը փոխուի եւ մարդ կը մոլորցնէ շնորհիւ վերջնոյն անկատար չօրինուածքին եւ միջավայրին :

Սեռային բնազդը տիեզերական է ամբողջ կենդանական աշխարհին մէջ : Մէն մի կենդանին, ամենէն պզտիկ միարջիջային տեսակէն սկսեալ մինչեւ ամենէն մեծն ու զարգացածը, ունի դէպի հակառակ սեռը նետուելու եւ անոր մերձենալու, հետը միանալու մղումը :

Սեռային բնազդը ամենէն նախնական, ստորին կենդանիներուն մէջ իրենց կեանքին պէս շատ պարզ է : Անոնց մէջ անիկա դրեթէ բոլորովին մեքենական բնույթ ունի եւ ներքին, տարբերային կոչը մղումով մը անոնք դէպի մէկգմէկ կը նետուին եւ իրարու հետ կը միանան : Օրինակի համար, մարդու սերմնակեն-

դանը ուր որ դնես անհանդարտ ու աշխուժ կերպով, արագ արագ ասդին անդին կը շարժի ու կը դառնայ: Երբէք չի թուիր թէ այդ շարժումները դիտաւորեալ ու նպատակաւոր են, խոհականութեան դրոշմը կը կրեն: Անիկա այդպէս կը շարժի եւ կարծես բան մը կը փնտռէ ձուին ներկայութեանն ալ բացակայութեանն ալ, արգանդին մէջն ու դուրսը, ռեւէ տեղ, նպաստաւոր ռեւէ միջավայրի մէջ: Զուին կը միանայ այն ատեն երբ պատահամբ անոր կը հանդիպի: Էրեստ Հէկքէլ կը կարծէ որ անոնք իրարու մօտ եղած ժամանակ մէկմէկու մերձաւորութիւնը կ'ըզան ու կարծես իրարու հոտն առնելով կը ձգուին դէպի մէկըմէկ: Ասոնցմէ քիչ մը աւելի բարձր եղող ստորին շատ մը կենդանիներուն մէջ տարակոյս չը կայ որ հօտը սեռային բնազդը արթնցնող եւ դանոնք իրարու առաջնորդող ամենէն կարեւոր ու թերեւս միակ ազդակն է: Հոտերով է որ անոնք իրարու ներկայութիւնը կ'իմանան եւ զիրար կը գրաւեն: Կարգ մը կենդանիներ իրենց ծննդական գործարաններուն մէջ չատուկ գեղձեր ունին որոնց պաշտօնն է մասնաւոր հոտ մը արձակել ու անով արթնցնել սեռային բնազդ:

Մինչ կեանքը կը բարձրանայ, հոտին վրայ կ'աւելնան նաեւ ուրիշ արտաքին սեռային գրգիռներ, ինչպէս ձայն, տեսք, համ ու հպման զգացողութիւնը: Բարձրագոյն կենդանիներուն մէջ, որոնք լաւ զանազանաւորուած զգայարաններ ունին, ձայնն ու տեսքը մասնաւորապէս կ'ըլլան զօրաւոր գրգիռներ: Թռչուններուն մէջ, օրինակի համար, ձայնը շատ կարեւոր դեր մը կը խաղայ այս խնդրին մէջ: Անոնք

խիստ մեծ չափով մը իրենց գեղեցիկ երգերովն է որ զիրար կը գրաւեն: Ապա անշուշտ մեծ դեր մը կը խաղայ նաեւ տեսքը: Վկայ են այս իրողութեան թռչուններու փայլուն ու գեղեցիկ փետուրները: Թռչնոց արուններն են առաւելապէս որ դարդարուած են փայլուն ու շքեղ փետուրներով ու ասոր նպատակն է գրաւել էգերը:

Սեռային բնազդը կենդանիներուն մէջ պարբերաբար միայն երեւան կուգայ: Որոշ եղանակներու մէջ, զլիաւորաբար դարնան ժամանակ, անոնք կ'ունենան զօրեղ սեռային զգացում որու շնորհիւ այդ ատեններ իրարու կը մօտենան եւ կը պտղաբերին: Այսպէս չէ հիմակուան մարդուն մէջ: Հիմակուան մարդը ընդունակ է ամէն ժամանակ սիրելու եւ պլտղաբերելու, դարուն, աշուն, ամառ, ձմեռ, ամէն ամիս եւ ամէն շաբաթ: Բաց եւ այնպէս խիստ նշանակելի իրողութիւն մըն է որ մինչեւ իսկ մարդուն մէջ զարնան ատեն ընդհանուր սեռային զարթնում մը տեղի կ'ունենայ, իսկ կնոջ մէջ սեռային զգացում մը տեղի կ'ունենայ, իսկ կնոջ մէջ սեռային զգացում զօրեղ կերպով երեւան կուգայ պարբերաբար, ամսէ ամիս, դաշտանի ժամանակ: Ասով ալ կ'ինը ցոյց կուտայ որ ինք բնութեան հարազատ զաւակն է, անոր աւելի մօտ է քան մարդը:

Սեռային բնազդը մարդուն մէջ անտարակոյս հզօր ազդակ մը եղած է քաղաքակրթութեան շառաջխաղացման մէջ: Այս բնազդը մեր կապիւնման նախահայրերուն մէջ շատ նման էր կենդանիներու սեռային բնազդին: Հաւանական է անոնք անասուններու պէս պարբերաբար, եղանակէ եղանակ կ'ունենային սեռային ցանկութիւն եւ իրենց գտած սնուն-

դի քանակութեան հետ կապ ունէր, ինչպէս կը կարծէ Դարվին: Այսպէս է ան նոյն խակ հիմնական ստորին վայրենիներուն մէջ: Անոնց մէջ զուտ կենդանական զգացում մըն էր եւ հոգեկան սէրը գոչութիւն չունէր անոր մէջ: Դեռ մինչեւ օրս ալ կան վայրենի ցեղեր որոնք չունին սէր բառը: Ինչպէս Սիր Զօն Լըբբօք առաջին անգամ նկատեց, որքան ետ երթանք դէպի նախնական վայրենի ցեղերը սիրոյ գաղափարը այնքան կը սլակսի, մինչեւ շատ ստորին վայրենիներուն մէջ իսպառ կը ջնջուի այն:

Երբ սնունդը եղաւ առատ ու կանոնաւոր շնորհիւ մարդոց կազմակերպութեան եւ արդիւնագործութեան, սեռային զգացումն ալ դարձաւ աւելի մշտական եւ մարդկային ուղեղի աճման ու զարգացման հետ անոր մէջ մուտ գործեց նաեւ մեծ չափով հոգեկան տարրը, սէրը որ այնքան վեհութիւն եւ խորհուրդ կուտայ քաղաքակիրթ մարդու ոչ միայն սեռային այլ եւ ամբողջ կեանքին: Քանտ կը գրէ.

«Բանականութիւնը գործօն ըլլալուն պէս չուշացաւ իր ազդեցութիւնը ի գործ դնելու նաեւ սեռային ըզգացումներուն վրայ: Մարդ շուտով գտաւ որ սեռային զգացումը, որ կենդանիներուն մէջ լոկ վաղանցիկ զգացում մըն է եւ մեծաւ մասամբ պարբերական գրգիռներէ կախում ունի, իր մէջ ընդունակ է երկարելու եւ սաստկանալու շնորհիւ երեւակաչութեան զօրութեան»: Ըստ Լէտուրնօյի՝ «Եթէ խնդրին արմատը իջնենք, կը տեսնենք որ մարդկային սէրը իր էութեամբ սոսկ կենդանիներու կողանքի եղանակն է բանական էակի մը մէջ: Անիկա մարդկային

էակի բոլոր կենսական ուժերը կաւելցնէ ինչպէս կողանքը ստորին կենդանիներու ուժերը կ'աւելցնէ: Եթէ սէրը երեւութապէս կողանքէն ահագին կերպով կը տարբերի, ատոր պատճառը կը կաշանայ այն իրողութեան մէջ որ սեռային մղումը, բոլոր մղումներու ամենէն նախնականը, ջղալին աւելի մեծցած ու զանազանաւորուած կեղրոններու մէջ աւելի լայնածաւալ ազդեցութիւն ի գործ կը դնէ եւ այդպէս մարդուն մէջ առաջ կը բերէ հոգեկան կեանքի ամբողջ աշխարհ մը որուն ստորին կենդանիները իսպառ անծանօթ են»:

Հինգ գաշարաններն ալ մարդուն մէջ կ'արթնցընեն սեռային զգացում: Բուրգան շատ գեղեցիկ կերպով նկարագրած է բոլոր զգալարաններու խաղացած դերը սեռային զգացման մէջ: Իր աշակերտներուն ուղղած մէկ քարոզին մէջ այսպէս կ'ըսէ.

«Ես չեմ գիտեր ով երիտասարդներ, ոեւէ ձեւ մը որ կարենայ այնքան կաշկանդել մարդու սիրտը որքան կնոջ ձեւը:

«Կնոջ ձեւը ով երիտասարդներ, կը կաշկանդէ մարդու սիրտը:

«Ես չեմ գիտեր, ով երիտասարդներ, ոեւէ ձաւն մը որ կարենայ այնքան կաշկանդել մարդու սիրտը որքան կնոջ ձաւնը:

«Կնոջ ձաւնը, ով երիտասարդներ, կը կաշկանդէ մարդու սիրտը:

«Ես չեմ գիտեր, ով երիտասարդներ, ոեւէ հոտ մը որ կարենայ այնքան կաշկանդել մարդու սիրտը

որքան կնոջ հոտը :

«Կնոջ հոտը, ով երխտասարգներ, կը կաշկանդէ մարդու սիրաը :

«Նս չեմ գիտեր, ով երխտասարգներ, ոեւէ համ մը որ կարենայ այնքան կաշկանդել մարդու սիրաը որքան կնոջ համը :

«Կնոջ համը, ով երխտասարգներ, կը կաշկանդէ մարդու սիրաը :

«Նս չեմ գիտեր, ով երխտասարգներ, ոեւէ հըպում մը որ կարենայ այնքան կաշկանդել մարդու սիրաը որքան կնոջ հպումը :

«Կնոջ հպումը, ով երխտասարգներ, կը կաշկանդէ մարդու սիրաը» :

Հոտառութիւն, ճաշակելիք եւ շօշափելիք կը կատարեն աւելի՛ զուտ կենդանական զերը, տեսողութեան և լսողութեան կը վերաբերին աւելի բարձր ու դադախարական զերը, աւելի աղնիւ զգացումներու գրգումը : Նս քիչ առաջ բացատրեցի հոտի կատարած զերը կենդանիներու սեռային կեանքին մէջ : Կը կարծուի որ կնոջ պարթօլինի գեղձերը, որոնք գետեղուած են անոր հեշտոցի երկու կողմը, կենդանիներու հոտաւէտ գեղձերու մնացորդներն են որ հետզհետէ մաշուելով կորսնցուցած են իրենց նախկին պաշտօնը : Թերեւս այս դերը մասամբ մը կը կատարեն հիմա անոնց երկար մազերը եւ ամբողջ մարմնի մակերեսն ու մորթը իրենց արձակած հոտով : Ասով պէտք է բացատրել կանանց չատուկ սէրը դէպի ալքեալ տեսակ հոտեր եւ բուրմունքներ, ինչպէս մուշկ եւալն, որոնք չաճախ կը գործածեն մար-

դիկ գրաւելու համար :

Քաղաքակիրթ մարդու կեանքին մէջ սակայն՝ հոտը վաղուց ի վեր գրեթէ բոլորովին դադրած է գործօն դեր կատարելէ սեռային չարաբերութեանց մէջ : Աւելի մեծ տեղ կը բռնէ այս դերին մէջ շօշափելիքը : Մարդու ամբողջ մորթը, որուն մէջ գետեղուած են զգացողական ջիղերը, կարելի է համարել հսկայական հեշտասիրական գործարան մը որ շօշափելով ու գրգռելով կարելի է առաջ բերել սեռային ցանկութիւն : Տարբերութիւնը ծննդական գործարաններու ծածկույթին եւ մորթի միւս մասերուն միջեւ միայն այն է որ առաջինին մէջ զգացողական ջիղերն ու գործիքները աւելի խիտ գետեղուած են քան թէ մորթի միւս մասերուն մէջ ու աւելի զգացուն է ան : Կանանց մէջ աւելի զգացուն են անոնց ծըծերը, չետոյ շրթունքներն ու երեսները :

Մանտէգացայ սեռային սէր կամ գործողութիւնը կը նկարագրէ իրրեւ շօշափողական զգացման աւելի բարձր ձեւ մը : Ստոր բնաւորութիւն ունեցող մարդկային էակներուն մէջ սէրը ոչ այլ ինչ է բաց եթէ լոկ հպում մը : Մազերու անմեղ շոյման եւ սեռային կրքի ամենասաստիկ չուզման միջեւ միայն քանակութեան տարբերութիւն կայ եւ ոչ որակի : Ուրեմն իրաւամբ ըսուած է թէ երբ մէկ մը դիտմամբ իր սիրեցեալի մորթին ոեւէ մէկ մասին կը դպչի, սեռային գործողութեան կէսը կատարած կ'ըլլայ : Միտ բերէք ասոր իբր օրինակ համբոյրը :

Ճաշակելու հակամիտութիւն սերտ կապ ունի շօշափողութեան հետ : Երբեմն կը պատահի տաքարիւն անհատներ զիրար սիրած ժամանակ այնքան կը

յուզուերն որ մէկգծէկ կը լիղեն եւ կը խածնեն արիւն հանելու չափ: Կենդանիներուն մէջ ընդհանուր է արուններուն համար սիրոյ ժամանակ էզերը խածնել:

Ասոնցմէ խիստ աւելի մեծ ազդեցութիւն ունին ներկայ քաղաքակիրթ մարդու սեռային կեանքին մէջ տեսողութիւնը եւ լսողութիւնը: Հէրտէր կը գրէ.

«Սկիզբէն մարդու բոլոր զգայարանները գործառնութեան միայն պղտիկ սահման մը ունէին, ստորին զգայարանները աւելի գործօն էին քան թէ բարձրերը: Մենք կը տեսնենք այս հիմակուան վաչրենիներուն մէջ. հօտը եւ համը անոնց առաջնորդներն են ինչպէս որ են կենդանիներուն: Բայց երբ մարդ երկրէն ու թաւուանրէն վեր կը բարձրանայ, հօտը ալլեւս ձեռնատու չէ իրեն հապա աչքը, ասիկա աւելի լայն թաղաւորութիւն մը ունի եւ կանուխ հասակէն ինքզինք կը վարժեցնէ ամենազեղեցիկ գոյներու եւ գծերու չափաւորութեան: Ականջը որ խորը զետեղուած է դուրս ցցուող դանկին ներքեւ, աւելի սերտ առնչութիւն ունի ներքին խոտչին հետ գաղափարներ հաւաքելու համար, մինչդեռ ստորին կենդանիներուն մէջ ականջը ուղիղ կը կանգնի եւ շատերուն մէջ այնպէս կազմուած է որ կը շտկուի գէպի ձայնի ուղղութիւնը»:

Հոտ, համ եւ հպում շատ քիչ գեղեցկագիտական արժէք ունին միւս երկու բարձրագոյն զգայարաններուն հետ բազմատեսով, որովհետեւ, ինչպէս չիլուեցաւ, անոնք աւելի կենդանական մղումներուն հետ կապուած են: Ինչպէս Շիլլէր կ'ըսէ. «Աչքի եւ ականջի պարադային մեզ շրջապատող նիւթը կոչա

ու թանձրացեալ կերպով չ'իջնար սոյն զգայարաններուն տակ, այդ պատճառաւ, այդ երկու զգայարանները կուտան մեզի գեղեցկագիտական ամենազուտ հաճույքը որ անխառն է տուխանքէն»:

«Տեսողութեան զգայարանը», կը գրէ Բլօխ, «սեռային կեանքի մէջ ճշմարտապէս գեղեցկագիտական զգայարան մըն է, սիրոյ առաջին լրարերն է: Այս զգայարանի շնորհիւն է որ ձեւն ու գոյնը կ'ըլլան արտաքին գրգիռներ: Տեսողութեան զգայարանի շնորհիւն է որ սիրեցեալ անձնաւորութեան ամբողջ տպաւորութիւնը առաջին անգամ կը հաղորդուի: Համակրութիւն եւ սեռային գրաւչութիւն առաջին անգամ գրեթէ միշտ տեսողութեան կ'ապաւինին: Սիրոյ ընարութեան մէջ տեսողութիւնը անվիճելի կերպով ամենակարեւոր զգայարանն է: Ըստ բնաչըրջման արդի վարդապետութեամբ կատարուած հետազոտութիւններուն՝ ալլեւս անտարակուսելի է որ կենդանի աշխարհի գեղեցկութիւնը սերտ կերպով կապուած է սեռային կեանքի հետ, արդարեւ, անով առաջին անգամ ի չայտ եկաւ եւ աչքը առաջին անգամ դայն տեսաւ ու գնահատեց: Շատ ճիշդ է անմահ Դարվինի չայտնած սա միտքը թէ «Ամէն գեղեցկութիւն տեսանելի դարձած սէր է»: Սիրեցեալ անձի ձեւը, կեցուածքը, քալուածքը, հագուստը, զարդարանքը եւ անոր մարմնի զանազան մասերու գիտողութիւնը, բոլոր այդ տպաւորութիւնները տեսողութեան զգայարանի միջոցով ընդունուած՝ ամենագորեզ սեռային ազդեցութիւնը ունին»:

Լսողութեան զգայարանը եւս մարդկային սեռա-

չին կեանքի մէջ մեծ տեղ մը կը բռնէ : Ես արդէն չի-  
շեցի ձայնի կատարած դերը կենդանիներու սեռային  
կեանքի մէջ : Դարվին աչնքան առաջ կ'երթայ որ նոյն  
խակ կը հաւատայ այժմեան աչնքան բարդ ու գեղե-  
ցիկ երաժշտութիւնը առաջ եկած է այս նախնական  
պարզ սիրային ձայներէն ու երգերէն : Անուրանալի  
է որ կնոջ ձայնը հմայիչ, մոզական ազդեցութիւն կը  
թողու մարդու վրայ եւ միեւնոյն ազդեցութիւնը չա-  
ճախ մարդու ձայնը կը թողու կնոջ վրայ : Չայն աչն-  
քան մեծ ազդեցութիւն ունի որ երբ դէմքով գեղե-  
ցիկ կին մը տգեղ ձայն կ'ունենայ իր գրաւչութեան  
գրեթէ կէսը կը կորսնցնէ : Այս տեսակ կնոջ մը ան-  
գամ մը ես հանդիպեցայ ասկէ տարիներ առաջ եւ  
լաւ կը չիշեմ տարօրինակ, տխուր սպաւորութիւն  
մը կրեցի երբ զայն տեսնելէն չետոյ անոր ձայնը լսե-  
ցի : Կարծեմ մենք բոլորս գիտենք առնական ձայնով  
կինը եւ կանացի ձայնով մարդը որքան անախորժ  
սպաւորութիւն կը թողուն մեր վրայ :

Ահա այսպիսի զգայարաններով է որ մարդ ու  
կին իրարու մէջ կ'արթնցնեն սէր : Իսկ ո՞վ կրնայ  
մէկ բառով ըսել թէ ի՞նչ է սէր : Սէր բարդ եւ բազա-  
դրեալ զգացում մըն է ու խիստ դժուար է անոր  
սահման տալ : Անոր մէջ կան շատ մը զգացումներ եւ  
տարրեր . կայ մարմնական ցանկութիւն, հոգեկան  
սէր, հիացում, համակրութիւն, գեղեցկազիտական  
զգացում եւայլն : Սէր տիեզերքի ամենամեծ ստեղ-  
ծադրածող ուժն է : Սէրն է որ մարդու կեանքին խոր  
հուրդ եւ իմաստ կուտայ եւ զայն սպրելու արժանի  
կ'ընէ, կեանքի ցաւոտ կողմը մոռցնել կուտայ : Ի-  
բաւունք ունի Շիլլէր երբ կ'երգէ այսպէս .

«Սիրով են օրհնուած վերի աստուածներ,  
Խեղճ տկար մարդը Աստուած կը դառնայ  
Երբեւիցէ սէր իրեն կը տրուի .  
Սէրն է որ երկինք կը վաչկեցնէ  
Գոյներով պայծառ ու Աստուածային,  
Ու տխուր երկիր կ'դարձնէ երկինք» :

Իրաւունք ունի Ռուսսօն երբ կը դրէ . «Ո՞չ ապաքէն  
ճշմարիտ սէրը բոլոր կապերու ամենաանարատն է :  
Ո՞չ ապաքէն սէրը ըստ ինքեան մեր բնութեան ամե-  
նամաքուր եւ ամենահոգակալ մղումն է : Չէ՞ որ ան  
կ'անդոսնէ ցած ու սողացող հոգիները որպէս զի  
ներշնչէ միայն մեծ եւ ուժեղ հոգիներ : Ու անիկա  
չ'ա՞ղնուացներ ամէն զգացում, չի՞ կրկնապատկեր  
մեր էութիւնը ու մեզ մեր մակարդակէն վեր բարձ-  
րացներ : Հակառակ ընկերային անհաւասարու-  
թեանց, սեռային չարաբերութիւնը կը մատնանշէ  
աւելի բարձր օրէնք մը որուն առջեւ մենք բոլորս  
հաւասար ենք» :

Սէրն է որ առաջին անգամ կեանքին գոյն կու-  
տայ եւ դուրս կը բերէ զգացումի ազնուագոյն ե-  
րանգներ ու ստուերներ առանց որոնց կեանքը միա-  
պաղաղ դորշ գոյն մը պիտի ունենար եւ պիտի ըլլար  
տաղտկալի անապատ մը : Առանց անոր գոյութեան  
եւ ստեղծադործող դործունէութեան ուրախութիւ-  
նը պիտի խիստ նուազէր ու ջնջուէր : Քրաֆտ է-  
բինդ կը հաւատայ նոյն խակ որ հանճարի, գեղար-

ուեստի ու բանաստեղծութեան կարելիութիւն չը կայ եթէ չըլլայ սիրոյ հիմը որուն վրայ անոնք կերտուին: Կրնայ ըլլալ ասիկա քիչ մը չափազանցութիւն է, բայց կարելի է միեւնոջն ատեն իրրեւ ասոր ազացոյց չիշել որ աշխարհի մեծ ստեղծագործող հանճարները բանաստեղծութեան, երաժշտութեան եւ քանդակագործութեան մէջ սեռային բուռն զգացումներով օժտուած անձնաւորութիւններ եղած են: Ալզպէս էին, օրինակ, Շէչքսպիր, Գէօթէ, Բայրօն, Շէլլի, Դանտէ, Րուբէնս, Եւալյն:

Ալզպէս ուրեմն, շատ մեծ եւ բարերար է առողջ սիրոյ ազգեցութիւնը մարդկային կեանքի վրայ ու առողջ սիրով սիրելը մարդու բնական իրաւունքն է: Բայց, եթէ առողջ սեռային զգացումը, սէրը այնքան վեհ ստեղծագործող ուժ մըն է, ափսոս որ սեռային կեանքը անխառն չէ շարիքէ շնորհիւ մարդու սեռային գործիքի անկատար ու աններդաշնակ ըլլալուն եւ անոր միջավայրին ու տգիտութեան: Մարդ համեմատաբար նոր էակ մը ըլլալով այս աշխարհին վրայ, դեռ լիուշի կերպով իր միջավայրին յարմարած չէ եւ անոր ջօրինուածքին մէջ կը մնան տակաւին շատ մը աններդաշնակութիւններ որոնց մէջ գլխաւոր տեղ մը կը բռնեն սեռային աններդաշնակութիւնները: Ասոր համար անոր սեռային զգացումը շատ հեշտութեամբ տգիտութեան եւ անժուժկալութեան պատճառաւ կրնայ ծուռիլ եւ թիւր, հիւանդոտ զգացումներու փոխուիլ որոնք այնքան աղիտալի վնասներու եւ ապերջանիկութեան պատճառ կը դառնան: Ես պիտի նկարագրեմ համառօտակի այդ աններդաշնակու-

թիւնները, բայց նախ քան այդ ընելը պիտի նկարագրեմ մարդկային արական եւ իգական սեռական գործիքները ու տամ անոնց բնախօսութիւնը, որպէս զի ընթերցողին հասկնալի ըլլայ ինչ որ չետոյ պիտի ըսեմ:

IV

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Մարդու սեռային գործարանները.— Սերմնակենդան.— Կնոջ սեռային գործարանները.— Մարդկային սաղմը.— Ձուռն ինչպէս կը չուէ դէպի արդանդը.— Մերձեցման նպատակն է սերմն ու ձուռն իրարու քով բերել.— Արբունք.— Տղուն մէջ.— Աղջկան մէջ.— Անոր աղբեցութիւնը երկուքին վրայ.— Ի՞նչ է դաշտան.— Մարդու եւ կնոջ պտղաբերութեան ժամանակաշրջանը:

Մարդու սեռային գործարանները կը բաղկանան անանդամէն, ամորձիներէն, արտահանող ծորանէն, սերմնաբշտիկներէն եւ չառաջագեղձէն: Իւրաքանչիւր ամորձին (ձախը քիչ մը աւելի խոշոր է եւ վար կը կախուի միւսէն) կը բաղկանայ 250-էն մինչեւ 400 մանր բլթակներէ ու այս բլթակներն ալ կը բաղկանան մանրիկ խողովակներէ որոնց ներսը պատուած է էպիթէլիալ կոշուած պարզ բջիջներով: Այս բջիջներ քանի մը անգամ բաժնուելով առաջ կը բերեն սերմնորդը կամ սերմնակենդան: Մանր խողովակները իւրաքանչիւր բլթակին մէջ իրարու հետ միանալով կը կազմեն աւելի մեծ խողովակներ ու

ասոնք ալ կը միանան կը կազմեն աւելի խոշոր խողովակ մը որ ամորձիէն դուրս ելլելով կը ճանչըցուի իրր արտահանող ծորան: Արտահանող ծորան ամորձիներէն դուրս ելլելէն վերջ կ'ելլէ վեր, փորի ներքին օղակէն կը մտնէ որովայնը, ապա կ'իջնէ վարը կոնքին մէջ, կը գետեղուի միզափամփուշտին ետեւ ու աչն տեղ կը միանայ սերմնաբշտիկին: Անոր երկարութիւնն է գրեթէ երկու ոտք: Սերմը անոր միջոցով ամորձիներէն կուգայ կը հաւաքուի սերմնաբշտիկին մէջ:

Սերմնաբշտիկը ողկուզանման, երկու ու կէս մատնաչափ երկար պարկ մըն է գետեղուած նոցնպէս միզափամփուշտին ետեւ որ կը ծառայէ իբրեւ սերմի ամբար: Անոր ծայրը կը բացուի միզուկին մէջ չառաջագեղձին չատակը: Երբոր սերմնաբշտիկները սերմով կը լեցուին անոնց մէջ առաջ կուգայ ճնշում եւ ձգտում: Այս ճնշում ծառայելով իբրեւ գրգիռ՝ ջիղերու եւ մկաններու բարդ գործողութեան մը շրջանորհիւ գանոնք կը կծկէ եւ անոնց պարունակութիւնը դուրս կը մղէ: Այս չառաջխաղացման վրայ հսկող կեդրոնը մէջքուղեղին մէջն է, աս ալ ենթարկուած է ուրիշ վերին կեդրոնի մը հսկողութեան որ ուղեղին մէջն է: Գիշերային հոստումներ արդիւնքն են այս գործողութեան: Այսպիսի պարպումներ ինքնաբերաբար ամուրի մարդուն մէջ կը պատահին ամիսը մէկէն մինչեւ չորս կամ հինգ անգամ: Արտաքին ու ներքին շատ մը գրգիռներ անդրադարձ գործողութեան շնորհիւ մէջքուղեղի կեդրոնը գրգռելով՝ կարող են սերմնացայտում առաջ բերել նոյն իսկ երբ սերմնաբշտիկները լաւ լեցուած ու ձգտուած չեն,



ուրիշ խօսքով, երբ կը պակսի զուտ բնախօսական գրգիռը, եթէ կարելի է այսպէս ըսել: Այսպէս՝ սերմնացալուծ կարելի է առաջ բերել արտաքին մեքենական գրգիռներով, ինչպէս ծննդական անգամներու մորթն ու մաղասամաչկը շփելով, միմիայն երեւակալութեան զօրութեամբ, առանց արտաքին մեքենական գրգիռի: Անիկա կրնայ առաջ գալ ներքին ալիւսալ ախտաժէտ փոփոխութիւններէ, ինչպէս մէջքուղեղի արենալիութենէ, երբ մարդ օրինակ, կոնակի վրայ կը պառկի: Ծննդական անգամներու բորբոքումէն, սնդութենէն, եւալն: Հասկնալի է ուրեմն որ սերմնահոսութեան լառաջխաղացումը, շնորհիւ մարդուն վրայ ազդող անհամար արտաքին ու ներքին գրգիռներու, չաճախ հեշտութեամբ իր բնախօսական վիճակէն դուրս կ'ելլէ եւ ախտաբանական վիճակի մէջ կը մտնէ: Ուրիշ խօսքով, սերմնացալուման գործողութիւնը տեղի կ'ունենայ նաեւ երբ չը կայ նօրմալ, բնախօսական գրգիռ, այլ կան միայն անբնական, արուեստական գրգիռներ:

Առնանդամը կը բաղկանայ երեք գլանաձեւ մասերէ: Երկուքը վեր իրարու քով դրուած են ու կը կոչուին խոռոչաւոր մարմիններ. միւսը անոնց ներքեւ զետեղուած է ու կը կոչուի սպունդաձեւ մարմին: Միզուկը այս վերջինին մէջէն կ'անցնի: Երեք մարմիններն ալ շինուած են սպնդանման հիւստուածքներէ որոնք ընդունակ են ընդլայնելու եւ կծկուելու: Գրգուման ժամանակ մեծ քանակութեամբ արիւն կը խօսժէ այս հիւստուածքներուն մէջ, որոնց ուռելով ու սնդանալով տեղի կ'ունենայ առնանդամի լա-

րում:

Սերմնակենդաններ մանրադիտակային գլուխ, մարմին եւ երկար սոչ ունեցող բջիջներ են որոնք շատ կը նմանին գորտի պզտիկ ձագերուն: Անոնք ժիր ու արագաչարժ կենդանիներ են եւ մեծ թուով կը գտնուին սերմնահեղուկին մէջ: Երբ անոնք չի տեսնուիր թէ կը շարժին, մեռած ու անկենդան կերպարանք մը ունին, այդ նշան է թէ իրենց արգասաւորութեան ընդունակութիւնը կորսնցուցած են:

Կնոջ ներքին սեռական գործարաններն են ձուարաններ, Փալօպեան խողովակներ ու արգանդը: Սրտաքին գործարաններն են հեշտոցը, անոր երկու կողմը գտնուող մեծ ու փոքր ամօթաչուրթները, ասոնց վեր գտնուող կնաբիրը, որ առնանդամին համապատասխանող գործարանն է, աւելի վեր գտնուող բարձրաւանդակը, ճանչցուած իր վեներական լեռ ու ասպ կուսաթաղանդը որ ընդհանրապէս մանեակի, երբեմն կիսալուսնի ձեւ ունի եւ կոյսերուն մէջ հեշտոցի դէմը կը ծածկէ ու մասամբ մը անոր մուտքը կը գոցէ:

Արգանդը տանձաձեւ, երեք մասնաչափ երկար, երկու մաս լայն եւ մէկ մաս թանձր՝ մկանունքէ կազմուած խոռոչաւոր գործարան մըն է որուն մէջ սաղմը կ'աճի ու կը կերպարանաւորի: Անիկա զետեղուած է կոնքին մէջ, վերջնադիքին առջեւ. լայն ծայրը վերն է իսկ նեղ ծայրը վար որ կը միանայ հեշտոցի ետեւի մասին: Վարի նեղ երկար մասը կը կոչուի պարանոց: Ասոր կեդրոն պզտիկ ծակ մը կայ որ կը կոչուի external os: Անիկա կը բացուի հեշտոցին եւ արգանդի խոռոչին մէջ ու այդ երկու տե-

դերը իրարու հետ չարարերութեան մէջ կը դնէ : Սերմնակենդաններ ասոր մէջէն է որ հեշտոցէն վեր կը սողան ու կ'անցնին արգանդին մէջ : Սովորաբար external os այնքան մեծ կ'ըլլայ որ հազիւ շիւղ մը կարելի է անոր մէջէն անցնել : Տղարբութեան ժամանակ անիկա կը բացուի ու այնչափ կը լայննայ որ երեխայի գլուխը բաւական հեշտութեամբ անոր մէջէն կ'անցնի ու դուրս կուգայ : Արգանդը ընդունակ է չղութեան ժամանակ չափազանց խոշորնալու : Տղարբութենէն յետոյ կը կծկուի ու տասը տասներկու օրուան մէջ կը վերադառնայ իր նախկին մեծութեան :

Արգանդի աջ եւ ձախ կողմը, անոր բաւական մօտիկ կը գտնուին ձուարանները ու ինչպէս իրենց անունէն չալտնի է սահմանուած են շինելու ձուն : Անոնք ամորձիներուն համապատասխանող գործարաններն են : Անոնց երկարութիւնն է մէկ ու կէս մատնաչափ, լայնութիւն երեք քառորդ իսկ թանձրութիւնը մէկ-երրորդ մատ : Կատարեալ հաւկիթի ձեւ ունին անոնք :

Փայլօպեան խողովակները երկու հատ են, արգանդի իւրաքանչիւր կողմը զետեղուած, աջ եւ ձախը : Իւրաքանչիւր խողովակ, որ բարակ մատիտի մը հաստութիւնը ունի, չորս մատ երկար է ու անոր մէկ ծայրը միացած է արգանդի վերի ծայրին ու կը բացուի անոր մէջ : Միւս ծայրը, որ ճիւղաւորուած է ու կը կոչուի ծոպաւոր ծայր, կը նստի ձուարանին վրայ : Ասոնց ներսը պատուած է մազանման ծայրեր ունեցող էպիթէլիալ բջիջներով որոնց պաշտօնն է ձուն, երբ ձուարանէն դուրս

կ'ելլէ, քէլ դէպի արգանդը : Երբ ձուն պարբերաբար ձուարանէն կը փրթի դուրս կ'ելլէ, Փայլօպեան խողովակի ծոպաւոր ծայրը իսկոյն փղի կնճիթին պէս կը բռնէ դաշն ու կը նետէ խողովակէն ներս : Ասոր բջիջներու մազանման ծայրերը յետոյ, հովէն շարժող ցորենի հասկերուն պէս, կամաց կամաց կը քշեն դաշն դէպի արգանդը ուր ան կամ կ'արգասաւորուի կամ քիչ մը ատեն մնալէն վերջ կ'անցնի դուրս :

Կնարիւր միզուկի բացուածքէն քիչ մը վեր զետեղուած պղտիկ պտուկի ձեւով գործարան մըն է որ կը պարունակէ մեծ թուով ջղաչին մանրաթելեր ու այդ պատճառաւ շատ զգայուն է : Անիկա կարեւոր պաշտօն մը ունի որ է զուգաւորութեան ժամանակ կնոջ մէջ արթնցնել սեռային ցանկութիւն ու տրամադրութիւն : Անիկա տեղի կ'ունենայ այն ժամանակ երբ առնանդամ անոր հետ շինման մէջ կուգայ հեշտոցէն ներս սահելու ժամանակ :

Ներքին գործարանները ամուր նեարդակապերով հաստատուած են կոնքի կողերուն ու իրարու եւ օժտուած են մեծ քանակութեամբ ջիղերով եւ շնչերակներով : Արգանդը մանաւանդ ջիղերով ու անդրադարձ գործողութիւններով կապուած է շատ մը ուրիշ հեռաւոր տեղերու հետ, այնպէս որ զանազան տեսակ գործարաններէ եկած գրգիռներէն շուտով կ'ազդուի ու ինքն ալ փոխադարձաբար կ'ազդէ սոցն գործարաններուն վրայ :

Ձուն պղտիկ, կլորածեւ բջիջ մըն է հարիւր չիսունէ մինչեւ հարիւր քսանհինգերորդ մատնաչափ տրամագծով : Անիկա կազմուած է արտաքին բարակ

Թաղանդէ մը, անկէ ներս գտնուող կիսահեղուկ նիւթէ մը որ կը կոչուի գոյացուցիչ ձուադեղնուց, ձուադեղնուցին մէջ, դրեթէ անոր կեղրոնը եղող ուրիշ մասէ մը որ կորիզ կամ սաղմնաբջախի անունով կը ճանչցուի եւ սպա ասոր մէջ գտնուող պղզտիկ բիծէ մը որ կը կոչուի սաղմնաբիծ: Այս վերջինի պաշտօնը որոշ կերպով չի գիտցուիր ինչ է, բայց սաղմնաբջախի կը կարծուի որ ձուի ամենէն կարեւոր մասն է: Անոր մէջն են ցեղի ամենաէական ու կենսական չատկանիչներն ու տարրերը ու անոր միջոցովն է որ առանձնացատկութիւնները ժառանգարար կը փոխանցուին սերունդէ սերունդ: Գոյացուցիչ ձուադեղնուցը բջիջին սնունդ տուող մասն է:

Չուարաններ կ'սկսին ձու պատրաստել նոցն իսկ մանկան ծնանելէն առաջ երբ ան դեռ արդանդին մէջն է, այնպէս որ երբ սղտիկ էդ երեխան դուրս աշխարհ եկած է արդէն որոշ թուով ձուեր կան անոր ձուարանին մէջ, միայն թէ հասուն չեն: Երբ աղջիկը կամաց կամաց կը մեծնայ, անոնք ալ կամաց կամաց կը հասունանան ու արբունքի ժամանակ ումանք արդէն հասունցած ըլլալով՝ հատ հատ ամէն ամիս անգամ մը ձուարանէն կը փրթին դուրս կ'ելլեն ու կը չուեն դէպի արդանդը: Բոլոր ձուեր չեն հասունար. շատեր կը մնան տհաս որոնք սպա փրձանալով կ'անհետանան: Կը կարծուի որ աղջիկ մը արբունքի ժամանակ 70,000 ձու կ'ունենայ իր երկու ձուարաններուն մէջ: Միջակ կնոջ կեանքին մէջ այս բազմաթիւ ձուերէն հազիւ վեցը, եօթը հատ բազկ կ'ունենան արգասաւորուելու եւ պտուղ տալու: Այսպէս է կարգադրած բնութիւնը ամբողջ դործարա-

նաւոր աշխարհին մէջ: Գոյութեան կռիւը սարսափելի է: Զնշող, կործանարար տարրեր ու ուժեր կը վխտան ամէն տեղ: Պէտք է արտադրել ահագին թուով ձուեր, որպէսզի անոնցմէ քանիները գոնէ կարողանան ճողոպրի կործանիչ տարրերէն, աճին եւ պտուղ տան:

Ամէն անգամին որ ձու մը ձուարանէն կը փրթի եւ դուրս կ'ելլէ իր ետեւ, պատուածքին տեղ, սպի մը կը թողու: Երբ ձու մը կ'արգասաւորուի անոր թողուցած սպին աւելի խոշոր կ'ըլլայ, այնպէս որ, հին ձուարան մը քննելով կարելի է ըսել թէ անոր տէրը քանի անգամ չլութիւն ունեցած է: Չուն երբէք չունի այն արագաշարժութիւն ու անհանդարտ բնաւորութիւնը որոնք սերմնակենդանին այնքան յատուկ են. հանդարտ եւ կրաւորական կեցուածք մը ունի: Չուն է որ գլխաւորաբար կը մատակարարէ նիւթը կերտելու համար երեխան, սերմնակենդան կը մատակարարէ միայն գրգիռը: Մերձաւորութեան նպատակն է այս երկու տարրերը որչափ կարելի է իրարու մօտ բերել որպէսզի անոնք հնարաւորութիւն ունենան իրարու հանդիպելու եւ միանալու: Երբ մարդն ու կին կը զուգաւորուին սերմը կը թափի հեշտոցին մէջ. չետոյ սերմնակենդաններ, այդ փոքրիկ անհանդարտ արարածներ, խուռներած external osի մէջէն կը չուեն դէպի արդանդ ուր աշխուժիւ կը փնտուեն ձուն, կարծես որսկան շուներու պէս ինկած ասդին անդին որս կը փնտուեն: Երբ անոնցմէ մէկը ձուն գտնէ իսկոցն գլխով, մարմնով ու պոչով կը խրուի անոր մէջ կը կորսուի եւ այն ատեն ձուն կ'արգասաւորուի ու կ'ենթարկուի

զարմանահրաչ փոփոխութիւններու: Կ'սկսի արագ արագ բաժնուիլ շատ մը բջիջներու, մօրմէն սնունդ առնելով կամաց կամաց կ'աճի ու կը կերպարանափոխուի արզանդին մէջ, կը մեծնայ մինչեւ ժամանակ մը վերջ կ'ըլլայ կատարելագործուած երեխայ մը: Արզանդ մերձաւորութեան ժամանակ իր կողմէն կ'օգնէ որ սերմը դիւրութեամբ իր ներսը անցնի եւ ձուին հասնի: Այս գործողութեան ժամանակ անիկա ցնցական կծկումներով վար կ'իջնէ դէպի հեշտոցը, չետոյ external os-ը կը բացուի կը գոցուի եւ ջրհանի մը պէս սերմը կը ծծէ ու դէպի վեր կը քաշէ:

\* \* \*

Արբունք այն տարիքն է որուն մէջ տղան ընդունակ կ'ըլլայ արտադրելու սերմ իսկ աղջիկը ընդունակ կ'ըլլայ դուրս բերելու հասունցած ձուն: Աղջիկը կ'ըլլայ կին, իսկ տղան կ'ըլլայ մարդ: Մենք ասկէ առաջ տեսանք արդէն որ աղջիկն ու տղան մանկութեան ժամանակ իրարու շատ կը նմանին Փիղիքապէս: Երբ անոնք արբունքի կը հասնին, կը սկսին խորունկ փոփոխութիւններէ անցնիլ ու իրարմէ լայն կերպով տարբերիլ: Արբունքի շրջան թէ տղուն եւ թէ մանաւանդ աղջկան կեանքին մէջ ամենափոփոխելի եւ փոթորկալի շրջան մըն է: Սեռային գործարաններու հասունութեամբ ոչ միայն երեւան կ'ըլլեն երկրորդական սեռային չատկանիչները, հապա նաեւ խորունկ փոփոխութիւններ տեղի կ'ունենան ընդհանուր Փիղիքական չորինուածքին, մասնաւորապէս ջղային, արենային եւ մար-

սողական համակարգութեանց մէջ: Արբունքի ժամանակն է որ աղջկան մէջ երեւան կուզան չաճախ ջղային, արենային ու մարսողական այլեւայլ տկարութիւններ, ինչպէս հիստէրիա, մելամաղձութիւն, ընկնաւորութիւն, խելագարութիւն, ցնցապար (chorea), կանանչախտ կոչուած տեսակ մը արեան հիւանդութիւն, եւ այլն:

Արբունքի հասնող տղան կը դառնայ աւելի մը կանուտ եւ պնդակազմ, կ'ստանայ աւելի խորտորտ շրջագիծ, երեսին վրայ պէխ ու մօրուք կը բուսնին, մազ կը բուսնի նաեւ ցայլքին վրայ: Զայնը աւելի հաստ եւ ուժգին հնչիւն մը կ'ստանայ: Ծնընդական գործարանները լրիւ կերպով կը զանազանաւորուին: Տղան իր առջի մանկական դրօսանքներէն այլեւս չի խորթիր. կ'սկսի ակնածու վերաբերմունք ունենալ դէպի իրական սեռը եւ լուրջ կերպով խորհրդածել: Կուզէ դիտնալ ո՞վ ստեղծեց աշխարհն ու տիեզերքը, ո՞վ է մարդ, ո՞ւսկից եկաւ ան եւ ո՞ւր կ'երթայ: Աշխարհին մէջ շատ անկատար բաներ, անիրաւութիւն ու զրկանք կը տեսնէ: Բնաւորութիւնը անհաստատ եւ դիւրազգաց կը դառնայ ու ան հակամէտ է անձնատուր ըլլալու մելամաղձութեան եւ չոռտեսութեան:

Աղջկան մարմնի ընդհանուր շրջագիծը կը լեցուի եւ կ'ստանայ աւելի շնորհալի ձեւ: Կոնքն ու ազդրերը կը լայնանան, արզանդն ու ձուարմանները, ծծերը կը մեծնան, մազ կը բուսնի վեներական լեռան վրայ եւ աղջիկը կ'սկսի ունենալ դաշտան: Դաշտան ըսելով պիտի հասկնանք այն կարգ մը բնախօսական չառաջիազացումները որոնք տեղի կ'ունենան կնոջ ծնըն-

գահան գործարաններուն մէջ երբ ձուարանէն ձու մը կ'սկսի գուրս ելլել ու չուել դէպի արդանդը: Երբ ասիկա տեղի պիտի ունենայ ձուարանները քիչ մը կը մեծնան, արդանդի շնչերակները պայթելու չափ կ'ուռին, կ'ուռին եւ կը կարմրին նաեւ ֆարսպեան խողովակներու, արագնդի եւ հեշտոցի մաղասամազկերը որոնք կ'արտադրեն մեծ քանակութեամբ մաղաս որ արեան հետ խառնուելով գուրս կը վազէ: Ծծերը կը լեցուն ու խիստ զգայուն կը դառնան: Կինը սովորականէն աւելի դիւրագրգիռ կ'ըլլայ, կ'ունենայ զօրեղ սեռային զգացում եւ ուրիշ ենթակայական ախտանիշներ որոնց մասին ուրիշ առթիւ աւելի մանրամասն պիտի խօսիմ: Կնոջ դաշտանը կը համապատասխանէ կենդանիներու կողանքին կամ ջեռուցքին: Երբ չլուծիւն տեղի ունենայ՝ կին այլեւս ինն ամիս դաշտան չունենար մինչեւ երեխան ծնի. ասկէ վերջն ալ ստնտուութեան ժամանակ չաճախ անիկա երեւան չելլեր, անկէ չետոյ կանոնաւոր կերպով ամսէ ամիս նորէն տեղի կ'ունենայ աչն: Ստնտուութեան ժամանակ բնութիւն այդպէս կը տընօրինէ որպէս զի կնոջ ուժերը պահպանէ, որպէս զի ան իր կորսնցուցած կաթին հետ արիւն ալ չը կորսնցնէ ու այդպէս տկարանայ: Սովորաբար քսանեութիւն օր անգամ մը տեղի կ'ունենայ դաշտան եւ կը տեւէ երեք կամ չորս օր: Թէեւ ձուի ուղեւորութիւն դէպի արդանդը եւ դաշտանը սովորաբար կը զուգադիպին եւ իրարու հետ կ'երթան, այսուամենայնիւ, չլուծիւն տեղի ունենալու համար անհրաժեշտ չէ որ դաշտան երեւի, որովհետեւ, ձուն կարող է ուղեւորել դէպի արդանդ առանց երբէք դաշտան տեղի ու-

նենալու: Պատահած է երբեմն աղջիկներ չլի մնացած են իրենց արբունքէն առաջ: Շատ անգամ չափահաս կիներ չլի մնացած են առանց դաշտան ունենալու, երբեմն աչն ժամանակ երբ կնոջ պտղաբերութեան շրջանը արդէն լմնցած էր եւ ան երբէք չոյս չունէր այլեւս պտուղ բերելու:

Երբ աղջիկը առաջին անգամ արբունքի կը հասնի, օտարօտի եւ անորոշ զգացումներ զինք կը պաշարեն: Սեռային բնագոյր ինքզինք կը չայտնէ աւելի երազանքի եւ սղատոնական սիրոյ ձեւով: Կին դարձած աղջիկը կը սիրէ մտածել առանձնութեան մէջ իր մաքուր, սղատոնական սիրոյ մասին, հակամէտ կ'ըլլայ մեղամաղձութեան: Ձգաչնոտ ու վերապահ կը դառնայ եւ կուզէ որ իր նոր եւ տարօրինակ զգացումները առարկայական զբաղմունք մը գտնեն: Այս պատճառաւ չաճախ ան կը նուիրուի կրօնի եւ բանաստեղծութեան որոնք վերջն ալ կը շարունակեն կապուած մնալ իր սեռային կեանքին հետ: Ասոր համար է որ շատ անգամ կնոջ կրօնական մոլեռանդութիւնը արբունքի ժամանակ երեւան կուգայ: Կամաց կամաց այս անորոշ, անհասկնալի զգացումները սեռային դոջն կ'ստանան եւ ի վերջոյ կը կեդրոնանան հակառակ սեռին վերաբերող ուրիշ անհատի մը վրայ:

Աղջիկներ աւելի շուտ արբունքի կը հասնին քան թէ տղաներ: Մարդու եւ տղու զարգացման ու դանդաղաւորման համար միշտ աւելի ժամանակ հարկաւոր է քան թէ կնոջ: Բարեխառն կլիմաներու մէջ աղջիկներ սովորաբար տասներեքէ մինչեւ տասնութեւց տարեկան եղած ժամանակ կ'սկսին դաշտան

ունենալ: Յուրտ կլիմաներու մէջ աւելի ուշ, տասն-  
 եւհինգէն մինչեւ տասնեւութերորդ տարիքին մէջ  
 երեւան կուգայ աչն: Տղաներ բարեխառն դօտինե-  
 րու մէջ ընդհանրապէս տասնեւչորրորդ կամ տասն-  
 եւեօթերորդ տարիքին մէջ կը հասնին արբուների:  
 Հիւսիսային ցուրտ դօտիներուն մէջ հազիւ քսան կամ  
 քսաներկուերորդ տարիքին մէջ կը հասնին անոր:  
 Տաք կլիմաներու մէջ երկու սեռերն ալ աւելի շուտ  
 կը հասունանան: Աղջիկներ իններորդ, իսկ տղաներ  
 տաս կամ տասներկուերորդ տարիքին մէջ կը հաս-  
 նին արբուներ եւ կ'աճուանան: Յեղեր կան ու-  
 րոնք աւելի շուտ կը հասունանան քան թէ ուրիշներ:  
 Օրինակի համար, լատինական ցեղերը կ'ըսուի թէ  
 աւելի կանուխ տարիքի մը մէջ արբուներ կը հասնին  
 քան անգլոսաքսոն եւ գերմանական ցեղերը որոնք  
 պաղարիւն են: Զգայնօտ ու ջղայնօտ ընտանիքներու  
 անդամները աւելի շուտ կը հասունանան: Գիւղը բը-  
 նակող տղաներն ու աղջիկները ուշ արբուներ կ'ունե-  
 նան: Քաղաքի մէջ բնակողներ, գեղի, ազնուական  
 կեանք վարողներ աւելի շուտ կ'արթնան: Գեղար-  
 ուեստով պարապող աղջիկներ ու պատանիներ աւե-  
 լի կանուխ տարիքի մը մէջ կ'արթնան: Երաժշտու-  
 թիւն, օրինակի համար, շատ ազդեցիկ է աչս տեսա-  
 կէտէն:

Կնոջ պ'ուղբերութեան ժամանակամիջոցը մօ-  
 տաւորապէս երեսուն տարի է, իսկ մարդուն երե-  
 սունեւհինգ: Կին երբ քառասունվեց տարեկան կ'ըլ-  
 լաչ դաշտան ունենալէ կը դադրի եւ անոր սեռային  
 զգացումները կամաց կամաց կ'սկսին մարիլ: Սեռա-  
 չին գործարանները կը մաշին եւ կը պղտիկնան: Հեշ-

տոցի մաղասամաշկը կը չորնայ ու կը կծկուի եւ ա-  
 սոր հետ մէկտեղ երեւան կուգան կարգ մը ուրիշ  
 ֆիզիքական ու հոգեկան փոփոխութիւններ: Այս  
 ժամանակաշրջանի մէջէն անցնող կիներ չաճախ կ'ու-  
 նենան ջերմ եւ տաք պաղ քրտինք, ջղային այլեւայլ  
 ախարութիւններ, գլխացաւ, երբեմն պարարտու-  
 թիւն եւայլն: Այս ախտանիշները կարող են տեւել  
 երբեմն մինչեւ երկու երեք տարի: Երբ կինը ընտե-  
 լանայ իր նոր վիճակին անոնք կ'անհետանան: Բո-  
 լոր անցման շրջանները այսպէս յեղաշրջումներ եւ  
 փոփոխութիւններ երեւան կը բերեն մարդուն եւ  
 կնոջ մէջ միանգամայն:

Մարդիկ չիտենհինգերորդ տարիքէն չետոյ կը  
 սկսին կորսնցնել իրենց սեռային զօրութիւնը: Թէեւ  
 աւելի ուշ տարիքի մը մէջ դեռ կ'արտադրեն սերմնա-  
 կենդան, աչտուամենայնիւ, զանոնք պատշաճ կեր-  
 պով գործածելու անկարող են:

Այս ընդհանուր կանոնին բացառութիւններ շատ  
 կ'ըլլան: Կը պատահի երբեմն որ մարդն ալ կինն ալ  
 իրենց սեռային կարողութիւնները կը պահեն մինչեւ  
 շատ ուշ տարիք մը եւ կ'արտադրեն նոյն իսկ ա-  
 ոողջ սեռունդ: Այսպէս՝ եղած են կիներ որոնք ի-  
 րենց ութսուն կամ իննսուներորդ տարիքին մէջ տը-  
 ղայ բերած են:

V

ՍԵՌԱՅԻՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Որձևելիզութեան հետքեր մարդուն մէջ.— Կուսաթաղանդը.— Անոր անպատեհութիւնը.— Մարդու թլիփը եւ անոր անպատեհութիւնը.— Դաշտան եւ անոր անպատեհութիւնները.— Տղարերութեան աննորմալ ցաւը.— Թէ տղուն եւ թէ աղջկան մէջ սեռային զգացումները սեռային հասունութենէն առաջ կուգան.— Գիւճութիւն տղաներուն եւ աղջիկներուն մէջ.— Սեռային հասունութիւն կուգայ ան ատեն, երբ տղան պատրաստ չէ ամուսնանալու.— Մարդ իր ծերութեան մէջ կը պահէ չաճախ սերմ արտադրելու ընդունակութիւնը բաց զայն գործածելու անկարող է:

Որպէս զի կարողանանք ունէ հիւանդութիւն գիտակցաբար ու պատշաճ կերպով դարմանել, մենք պէտք է ուսումնասիրենք ախտը առաջ բերող պատճառները, հիւանդին կազմուածքը, առանձնապատկութիւնները, նախատրամադրութիւնը եւայլն: Բոլոր հիւանդութիւններ դարմանելու ամենէն արմատական կերպն է գտնել անոնց պատճառներ եւ գանոնք վերցնել: Սեռային տկարութիւնները արտաքին պատճառներէ զատ խիստ շատ անգամ արդիւնքն են ներքին պատճառներու. մարդուն մէջ գտնուող յօ-

րինուածային թերութիւններու, սեռային գործիքի անկատարելութեան եւ աններդաշնակ զգացումներու: Որպէս զի կարողանանք բանաւոր կերպով առաջը առնել սեռային մոլութիւններու եւ հիւանդութեանց, մենք պէտք է ծանօթանանք զանոնք առաջ բերող ներքին եւ արտաքին պատճառներուն, մարդուն մէջ գտնուող այդ անկատար գծերուն եւ աններդաշնակ զգացումներուն հետ: Ես պիտի նըկարագրեմ հիմա մարդկային բնութեան մէջ եղող սեռային աններդաշնակութիւնները որոնք ծնունդ կուտան այնքան նեղութեանց եւ թշուառութեան:

Կարծեմ դուք կը չիչէք ես ասկէ առաջ տեղ մը ըսի արական եւ իգական ծննդական գործարանները ցոյց կուտան որձևելիզութեան հետքեր: Մարդուն մէջ իգական ծննդական գործարաններու հետքերը, արգանդի ե ֆալօպեան խողովակներու մնացորդները կը գտնուին չաճախ իսկ կնոջ մէջ արական ծըննդական գործարաններու հետքերը կը մնան: Ծըննդական գործիքի այս մաշուած մասերը ոչ միայն անպէտ դարձած են հիմա ու բնաւ պաշտօն մը չունին, այլեւ երբեմն ծնունդ կուտան հրէշային ուռուցյներու եւ խոցերու որոնք կեանքը կը վտանգեն: Ինչպէս Դարվին առաջին անգամ նկատեց, բոլոր անպէտ դարձած, մաշուած գործարանները աւելի խոցելի կ'ըլլան եւ ենթակալ հիւանդութեան: Կանանց մէջ պատահած քաղցկեղներ, ջրաբուշտեր, այլեւայլ տեսակ այլանդակ ուռուցյներ եւ խոցեր իրենց ծագումը չաճախ այս մաշուած մասերէն կ'առնեն: Հարիւրաւոր կիներ այս տեսակ ծագում ունեցող քաղցկեղներէն ու խոցերէն մեռած են:

Մարդուն մէջ դանուող իգական ծննդական զործարաններու մնացորդներն ալ երբեմն կ'աճին ու այդպիսով կը պատճառեն անոր սեռային զործարաններու խանդարմունքներ ու այլանդակութիւններ :

Ըստ Մեչնիքովի՝ մարդկային բնութեան մէջ մեծ աններդաշնակութիւն մը կազմող զործարան մըն է կանանց կուսաթաղանդը : Այս զործարան կենդանիներ չունին բնաւ, կնոջ միացն չատուկ է աչն եւ սաղմնարանութեան նաչելով անիկա վերջերս ստացուած զործարան մըն է : Այսպիսի վերջերս ստացուած զործարան մը կ'ակնկալուէր որ կարեւոր պաշտօն մը ունենար, իսկ ի՞նչ է անոր պաշտօնը կը հարցնէ Մեչնիքովի : Վաչեկըչամ կ'ըսէ անոր պաշտօնը դեռ հասկցուած չէ : Կուսաթաղանդը երբեմն ընտանեկան եւ ընկերային չարաբերութեանց մէջ մեծ դեր մը կը խաղայ եւ որովհետեւ կուսութեան նշան կը համարուի՝ բարոյական նշանակութիւն ընծայած են անոր : Ենթադրուած բռնարարութեան կամ ուրիշ գէպքերու ժամանակ այս կազմուածքի մանրագնին քննութիւնը յաճախ օրինական հարցուփորձի մէկ մասը կը կազմէ : Մեչնիքովի կարծիքով կուսաթաղանդը երբէք պաշտօն մը չունի : Ընդհակառակն վնասակար զործարան մըն է հետեւեալ պատճառներով : Անոր մաշումը սեռային միութեանէն չետոյ ոչ միացն արդեւք մը չէ սեռային չարաբերութեան ալիւ անախորժ խոչընդոտ մը կը վերցնէ : Արդէն շատ մը ցեղերու մէջ քիչ չարք ունի աչն եւ որքան շուտ որ կարելի է կը ջնջուի : Այսպէս՝ Չինաստանի, Հնդկաստանի կարգ մը նահանգներու եւ

Բրազիլիոյ Մակակուրաս կոչուած ցեղերուն մէջ անիկա կը ջնջուի աղջկան երեխայութեան ժամանակ : Ուրիշ ցեղերու մէջ կուսաթաղանդութեան անհաճոյ պարտականութիւնը չանձնուած է մասնաւոր անձերու : Հին աղբերուն մէջ այս պարտականութիւնը յաճախ կը կատարէին քուրմերը :

Երբ անիկա անսովոր կերպով պինդ ու ամուր է, կրնայ մերձեցման ժամանակ չարակից որովայնամաշկը պատուել եւ աղիտալի հետեւանքներ առաջ բերել : Երբ աննորմալ կերպով բազմանօթ է, անոր պատուիլը կրնայ առաջացնել երկար ու մինչեւ իսկ մահացու հանգամանք ունեցող արիւնհոսութիւն : Յետոյ այս թաղանդը բոցնն է յաճախ տեսակարար եւ ուրիշ ալիւզան վէրքերու : Ակններեւ է նաեւ որ անոր զոչութիւնը հեշտոցի կանոնաւոր առողջապահութեան արդեւք կը հանդիսանայ, մանաւանդ դաշտանի ժամանակ : Հաւանօրէն բաւական քանակութեամբ արիւն կը պահուի թաղանդին ետեւ որ կը մատակարարէ պարարտ հող մանրէներու ածման որոնք կրնան առողջութիւնը խանգարել : Ըստ Մեչնիքովի՝ շատ կարելի է արիւնատուութեան կարգ մը տեսակներ, ինչպէս օրինակ կանաչախտը (chloranaemia), առաջ կուգան մանրէներու ածուծէն : Այս վարկածը դիւրաւ կը բացատրէ թէ ինչո՞ւ ամուսնութիւնը այս տեսակ արիւնատուութեան համար յաճախ ամենէն դիւրապատրաստ դարձանն է, որովհետեւ, ամուսնութիւնը թաղանդը ջնջել կուսայ եւ աչպէս հեշտոցէն սեւէ հեղուկի պարպուելը հնարաւոր կը դարձնէ :

Ըստ Մեչնիքովի՝ այս թաղանդը իր ծագումը կը



պարտի ուշ ամուսնութեան եւ աւելի լաւ պիտի ըլլար եթէ անիկա չըլլար: Մարդկային ցեղի գոյութեան նախնական ժամանակաշրջանին մէջ, կ'ըսէ ան, սեռային չարարերութիւններ կ'սկսուէին կանուխ հասակի մը մէջ, արական սեռական գործարաններու հասուննալէն առաջ: Այսպիսի պարագաներու տակ կուսաթաղանդը ոչ միայն արդեւք չը պիտի հանդիսանար այլեւ մուտքը աւելի գոհացուցիչ պիտի դարձնէր: Թաղանդը աստիճանաբար առանց պատուելու պիտի ընդլացնէր մինչեւ որ ընդունակ ըլլար չափահաս առնանդամը ներս ընդունելու: Այս հայեցողութիւնը կ'ենթադրէ ուրեմն որ նախնական ժամանակներու մէջ թաղանդը բրտօրէն չէր պատուեր, այլ աստիճանաբար կ'ընդլացնէր: Անոր բռնի եւ ցաւալի պատուածը կը թուի թէ արդիական անհրաժեշտութիւն մըն է:

Ուրիշ աւելորդ դարձած, նեղացուցիչ սեռային գործարան մըն է մարդու թլիփը: Ի՞նչ օգուտ ունի թլիփը: Երբէք օգուտ մը չունի ան, ընդհակառակն, տղաներուն ու մինչեւ անգամ մարդոց կուտաց շատ նեղութիւն ու չարչարանք: Չափազանց նեղ, երկար թլիփ ոչ միայն արդեւք կը հանդիսանայ մաքրութեան, այլեւ չաճախ պատճառ կ'ըլլայ առաւել կամ նուազ ծանր Փիղիքական ու հողեկան խանգարմունքներու: Առնանդամի գլխիկին վրայ տեսակ մը դեղձեր կան որոնք սմէզմա կոչուած իւղոտ, պանիրի նման նիւթ մը կ'արտադրեն որու պաշտօնն է գլխիկը լարծուն եւ կակուղ վիճակի մէջ պահել եւ չի թողուլ որ թլիփը անոր փակի: Երբ թլիփը երկար է եւ գլխիկը միշտ կը ծածկէ, այն ատեն մեծ

քանակութեամբ սմէզմա կը հաւաքուի անոր տակ, կը տարբադարձուի եւ այդպէս առաջ կը բերէ այնտեղ աղտեղութիւն ու վարչահոտութիւն: Երկար թլիփը նաեւ գլխիկը միշտ գոց պահելուն պատճառաւ կ'առաջացնէ տաքութիւն եւ գրգիռ որոնք հետտութեամբ տղան ու պատանին ձեռնաշարժութեան կ'առաջնորդեն: Մէզը շնորհիւ տաքութեան ու գրգիռին՝ հակամէտ կ'ըլլայ միզանցքէն շարունակ վարկաթկթելու ու այդպէս առնանդամի ծայրն ու հագուստները թաց պահելու: Յետոյ երկար թլիփը չարմար բոցն է ուրիշ տեսակ աղտեղութեանց եւ վարակիչ կեղերու: Այդ պատճառաւ մեծապէս կը նպաստէ վեներական ախտերու տարածման: Երբ թլիփը այնքան նեղ է որ կարելի չէ գալն չեա քաշել ու գլխիկը մերկացնել, անմիա բան է այդ վիճակով մերձաւորութիւն կատարել, որովհետեւ, գործողութիւնը այն ատեն մարդուն հեշտասիրական բաւարար գոհացում չի տար:

Նեղաթլիփութիւն անդրադարձ գործողութեանց շնորհիւ մարդոց մէջ առաջ կը բերէ վաղաժամ սերմնացալուծ, որ զուգաւորման գործողութիւնը բոլորովին անգոհացուցիչ կը դարձնէ, իսկ տղաներուն մէջ գլխիկը այն անմիզապահութիւն, ցնցապար, ձիգ քալուածք եւ նոյն իսկ ընկնաւորութիւն: Անկարելի չէ որ մեծերուն մէջ նեղաթլիփութեան վերին աստիճան վտանգաւոր ու ծանր հետեւանքներ ծագին: Օրինակի համար, չափազանց նեղ թլիփը կարող է առնանդամի գլխիկը սաստիկ պըրկել, արեան շրջանը խափանել ու այդպիսով առաջացնել ուռեցք, բորբոքում եւ նոյնիսկ փտախտ:

Թլիփի բացակայութիւնը չի թուիր թէ պատճառ կ'ըլլայ ուրիշ անպատեհութեան: Ընդհակառակն ծարրութեան եւ առողջութեան խիստ կը նպաստէ եւ արդէն անխիղճ շատ մը ցեղերուն մէջ, ինչպէս հրէաներուն, արարներուն, թուրքերուն, պարսիկներուն, հնդիկներուն, թաթարներուն ու խափշիկներուն մէջ, կը վերցուի:

Կանանց մէջ աններդաշնակ, բոլորովին անհարկի պրօսէս մըն է անոնց դաշտանը որու միջոցին անոնք կը կորսնցնեն 100-էն մինչեւ 600 գրամ արիւն, ինչպէս նաեւ տղաբերութեան ցաւը: Արիւնհոսութիւն սովորաբար հիւանդութեան նշան մըն է: Քիթէն, թոքերէն, աղիքներէն կամ երիկամունքէն պատահած արիւնհոսութիւնը առաւել կամ նուազ ծանր հիւանդութեան նշան մըն է: Իզական ծննդական գործարաններէն պատահած արիւնհոսութիւնը եւս կրնայ խիստ մը նշանը ըլլալ, ինչպէս երբ արդանդի ուռոյցներէն կամ վէրքերէն առաջ կուզայ: Միակ բացառութիւնը կանանց մէջ տեղի ունեցող պարբերական հոսումներն են: Արեան այս պարբերական կորուստները սակայն առաւել կամ նուազ չափով կնոջ առողջութիւնը կը խաթարեն եւ անոր ուժը կը պակսեցնեն: Երբ արիւնհոսութիւնը սաստիկ է, կարող է առաջացնել վտանգաւոր արիւնատուփիւն: Ասիկէ զատ հոսումէն առաջ եւ վերջը կրնը կ'ունենայ ցաւ եւ ջղալին ու մտաւոր անձկութիւն:

Դաշտան գուտ բնախօսական չառաջնադացում մըն է եւ անոր հետ պէտք է բնկերանար սեւէ ցաւ կամ նեղութիւն: Ստորին կենդանիներուն մէջ ար-

եան հոսում չը կայ: Անոնց կտրանքի գլխաւոր նշաններն են ծննդական գործարաններու մաղասամաչիլի ուռիլ եւ հեղուկի թեթեւ հոսում որ հազիւ հաղ արեամբ քիչ մը ներկուած կ'ըլլայ բարձրագոյն կապիկներուն մէջ: Հարաման կը գրէ. «Ձիմպանդիի դաշտանի ժամանակ ծննդական գործարանները կ'ուռին ու կը կարծրին: Մեծ ամօթաշուրթերը, որոնք սովորաբար անչաչտ են՝ խիստ կը մեծնան ու ապա կը խոշորնան նաեւ փոքր ամօթաշուրթերը եւ կնարիբը»: Կանանց մէջ ծննդական գործարաններու ուռիլը շատ քիչ նշմարելի է, գլխաւոր դէպքը արեան հոսումն է: Ըստ Մեչնիքոֆի՝ պարզ է որ կանանց դաշտանին մէջ նոր բան մը տեղի ունեցած է: Կանանց հոսման այս վիճակը հաւանօրէն արդիւնքը եղած է ցեղային պատմութեան մէջ վերջերս կատարուած փոփոխութեանց: Նախնական ցեղերուն մէջ սեռային միաւորութիւնը կ'սկսուէր շատ կանուխ հասակի մը մէջ եւ չլուփիւնը դաշտանէն առաջ տեղի կ'ունենար: Դաշտանը չէր երեւնար ոչ չլուփեան եւ ոչ ալ ստնտուութեան ժամանակ եւ հաւանական է որ ստնտուութիւնը դեռ չը վերջացած նոր յղութիւն մը տեղի կ'ունենար: Այդ կերպով դաշտանի երեւումին այլեւս պատեհութիւն չէր մընար:

Վերջերս կատարուած դիտողութիւններէն դէպքեր դիտուած են որոնց մէջ յղութիւնը տեղի ունեցած է դաշտանի ժամանումէն առաջ: Յղութիւնը տեղի ունենալու համար անհրաժեշտ է որ դաշտանը անկէ առաջ երեւի: Այս բանը լուսաբանող իրողութիւններ պատահած են ոչ միայն տաք կլիմաներ-

րուն մէջ, այլ եւ մեր լաշնութեան աստիճանին տակը: Բախմանօք Ռուսիոյ մէջ տղաբերութեան առիթով հոգ տարաւ կնոջ մը որ տասնեւչորս տարեկանէն վեր չէր, տկար կազմուածք մը ունէր եւ դեռ մանկական դիմադիժ կը կրէր: Դաշտանը դեռ տեղի ունեցած չէր եւ տղաբերութիւնը նորմալ եղած էր: Շատ բանաւոր է ենթադրել որ կանուխ ժամանակներու մէջ արբունքի հասակէն վար եղող աղջիկներու ամուսնութիւնները գէթ աւելի ընդհանուր էին եթէ արգարեւ սովորական չէին: Այսպիսի պարագաներու մէջ դաշտանը շատ հազուադէպ երեւոյթ մը պիտի ըլլար: Երբ մարդ սկսաւ իր նախնական վիճակէն դուրս ելլել իր պտղաբերութեան պէտք էր շարժուի: Վաչրենիներու եւ քաղաքակիրթ ժողովուրդներու պատմութիւնը ցոյց կուտայ որ չառաջ դիմութեան եւ մտքի մշակութեան հետ զուգընթաց՝ տեղի ունեցած է ամուսնական տարիքի վերելք մը: Այդ պատճառաւ դաշտանի երեւոյթները կրնային իջայտ դալ եւ ներկայ վիճակին հասնիլ: Ասպիսի պարագաներու մէջ դարմանալի չէ որ դաշտան աննորմալ եւ միջնակ անգամ ախտաբանական երեւի: Դաշտանի հիմակուան վիճակը նորմալ կեանքի չառաջիւղացումներուն հետ ունէ երեւութական առնչութիւն չունի: Դիւրին է հիմա տեսնել թէ ինչո՞ւ շատ մը ցեղերուն մէջ դաշտանի մէջէն անցնող կիներ անմաքուր կը համարուի եւ անոր համար մասնաւոր կանոններ շինած են հոսուծի ժամանակ:

Երկունքի աննորմալ երեւոյթն ալ Մեչնիքոֆ կը բացատրէ ծննդաբերական պրօսէսներու բնաշարման պատմութեամբ: Իրաւցնէ, կ'ըսէ ան, զար-

մանալի եւ միանդամաչն եղական է տեսնել բնախօսական տեսակէտէն խակապէս նորմալ բներեւոյթի մը հետ ընկերացած այնքան ակնյայտնի մեծ ցաւ: Անտարակոյս ուրիշ կենդանիներ երկունքի ժամանակ կը տատային, բայց ստնտուներուն մէջ կիներ ամենէն սաստիկ ցաւը կը քաշէ: Անոր կարծիքով այս ցաւը մեծաւ մասամբ առաջ կկած է ուշ ամուսնութենէն: Աննորմալ կերպով կանուխ տարիքի մէջ տղայ բերող կանանց վրայ կատարուած հետազոտութիւնները ցոյց տուած են որ հակառակ բոլոր ակընկալութեանց երեխաներու ծնունդները հեշտ եղած են եւ ամէն ինչ նորմալ: Ասիկա անշուշտ չի նշանակեր լաւ է շատ կանուխ հասակի մը մէջ ամուսնանալ: Չափազանց կանուխ հասակի մը մէջ, երբ դեռ սեռական գործիքը եւ ամբողջ Ֆիզիքական կազմը լիուլի կերպով մեծցած ու զանազանաւորուած չեն, ամուսնանալը վնասակար է եւ շատ դեռահաս մայրեր ենթակայ կ'ըլլան վաղահաս մահուան: Միայն ցոյց կուտայ որ ամուսնութեան տարիքը որչափ բարձրանայ տղաբերութեան ցաւը կը թուի թէ այնքան կը սաստկանայ:

Թէ տղուն եւ թէ աղջկան մէջ սեռային հեշտասիրական զղացումները սեռային հասունութենէն առաջ կուգան: Նկատուած է որ պղտիկ երեխաներն անգամ սեռային գրգռումի նշաններ ցոյց կուտան երբեմն, իսկ պատանիներ շատ անգամ կը յայտնեն տարփանք դէպի կիներ: Այս աններդաշնակութիւնը կ'առաջնորդէ զանոնք գիճութեան որուն միջոցով կը ջանան դոհացում տալ իրենց գրգռուած զգացումներուն: Երբեմն ըսուած է ձեռնաշարժութիւն

սեռային ցանկութեան դոհացումն է անընական միջոցներով: Մեշնիքով կ'ըսէ մարդու աններդաշնակ կազմուածքն է որ կը թոյլատրէ այս զգացման վազահաս երեւումը սեռային հասունութենէն առաջ: Լէտուրնօն ճիշտ է ուրեմն, երբ կ'ըսէ սեռային այսպիսի դարտուղութիւններ աննօրմալ են բաց անբընական չեն: Օնանականութիւն դոյութիւն ունի նաեւ կենդանիներուն, մասնաւորապէս կապիկներուն մէջ: Այս իրողութիւնը ցոյց կուտայ որ ան մարդուն մէջ խոր արմատ ունեցող շարիք մըն է: Ըստ Դօկտօր Քրիսչէնի ձեռնաշարժութեան ունականութիւնը այնքան ընդհանուր է տղաներուն մէջ, որ շատ քիչերը կրնան ըսել թէ իրենք բոլորովին զերծ մնացած են անկէ: Ազլիկներուն մէջն ալ կարծուածէն աւելի ընդհանուր է ան:

Տղաներ ու աղջիկներ ընդհանրապէս ձեռնաշարժութեան մէջ կ'իջնան ինքնաբերաբար, բաց կան շատեր որոնք ուրիշներէն օրինակ կ'առնեն ու կը սորվին: Այսպէս՝ գիշերօթիկ դպրոցներուն, զօրանոցներուն, գործարաններուն մէջ պատանիներ ու աղջիկներ, չեսոյ ասոնցմէ աւելի մեծերը իրարու կը թելադրեն եւ օրինակ կուտան եւ ահա մոլութիւնը տարափոխիկ հիւանդութեան մը պէս շուտով կը տարածուի ամբողջ խումբին մէջ:

Երկու տեսակ դիճութիւն կալ, արտաքին-մեքենական կամ Փիղիքական եւ հոգեկան: Առաջին տեսակին մէջ հիւանդը կը ջանայ սեռային բաւարարութիւն եւ օրգազմ առաջ բերել ձեռնաշարժութեամբ կամ ուրեք կերպով սեռային գործարաններու մօրթն ու մաղասամաչկը շփելով ու

գրգռելով: Երկրորդ տեսակին մէջ հիւանդը կը ջանայ օրգազմ ու սերմնահոսութիւն առաջ բերել միւրայն երեւակալութեան զօրութեամբ, իր աչքի առաջ դանազան հեշտասիրական, տուփական պատկերներ բերելով առանց Փիղիքական գրգռիչ օգնութեան: Ի բնէ ջղաչնոտ եւ դիւրագրգռ անձերը աւելի են թափայ կ'ըլլան այս մոլութեան, նաեւ անոնք որոնց սեռային հեշտասիրական զգացումները վաղաժամ կերպով արթնցած են շնորհիւ մանկութենէն ի վեր անոնց վարած զեղխ կեանքին եւ հակառակ սեռին պատկանող անհասանելի շատ յարաբերելուն:

Ձեռնաշարժութիւն ամենէն աւելի վնասակար է դեռատի տղաներուն եւ աղջիկներուն: Ինչպէս Դօկտօր Քրիսչէն կ'ըսէ. «Տղուն մէջ սերմի հոսում չը կալ եւ տղուն մէջն է որ ձեռնաշարժութեան հետեւանքները ամենէն ազիտաբերն են օրգանիզմին, գրեթէ տարիքի խոտորնակ համեմատութեամբ: Անիկա կը վտանգէ առողջութիւն, միտք եւ մինչեւ անգամ կեանքը: Քիչ շատ դեռահաս տղաներ կը թարչամին, կը տժգունին, կ'ըլլան ապուշ եւ աղաղուն երբ այս աղիտալի հիւանդութեամբը կը բռնուին: Չարիքը գրեթէ ամբողջովին հետեւանքն է սեռային յարաբերութեան համար օրգանիզմի տհասութեան»: Այսպէս՝ հարիւրաւոր, հազարաւոր պատասխաններ ու աղջիկներ այս վատ մոլութեան շնորհիւ առողջութիւննին կը քայքայեն, կը ծիւրին, կեանքի կուրին դիմանալու բոլորովին անչարմար կը դառնան եւ շատ անգամ նոյն իսկ վաղահաս կերպով դեբեզման կ'իջնեն:

Աւելի մեծերուն եւ չափահասներուն մէջն ալ աչս մոլութիւնը բաւական ընդհանուր է: Ասոնց մէջ անիկա գոյութիւն ունի իբրեւ շարունակութիւն իրենց նախկին սովորութեան կամ իբր արդիւնք չեզաշըջուած սեռային զգացումներու եւ արտաքին պայմաններու: Հարիւրաւոր երիտասարդ եւ չափահաս մարդիկ եւ կանայք աչս մոլութեան մէջ չարատեւելով ու ծայրացեղութեան երթալով նօրմալ սեռային մերձաւորութեան ցանկութիւնն ու ընդունակութիւնը իսպառ կը կորսնցնեն եւ իրենց վրայ կը բերեն ծանր ու վտանգաւոր հիւանդութիւններ:

Ձեռնաշարժութեան անմիջական ու հեռաւոր վնասներն են սեռային փափուկ մասերու բորբոքում եւ թուլութիւն, երազագիճութիւն կամ աննօրմալ սերմնահոսութիւն, ընդհանուր Փիղիքական թուլութիւն, գունաթափութիւն, անքնութեան եւ անձկութեան նոպաներ, ախոնդանոտութիւն, սրտի տըկարութիւն, ջլախտաւորութիւն, սեռային կատարեալ անզօրութիւն, արզանդի վայրէջք, ցաւոտ եւ չափազանց արիւնոտ դաշտան, մտքի եւ մարմնի զարգացման կասեցում, մէջքուղեղի ծիւրում եւ թուլութիւն, ուղեղային խանդարում, ընկնաւորութիւն, խելագարութիւն, կնատեցութիւն, մարդատեցութիւն, սառիւրիասիս, նիմֆօմանիա եւայլն:

Ներկայ քաղաքակիրթ բարդ կեանքը առաջ բերած է սեռային ուրիշ չարիք մըն ալ: Թէեւ սերմի հասունութիւնը, ուրիշ խօսքով, արբունքը սեռային զգացումէն շատ վերջ կուգայ, բայց եւ այնպէս կուգայ այն ատեն երբ դեռ տղան սլատրաստ չէ ամուսնանալու: Տնտեսական հանգամանքներէն ստիպուած

պէտք է սպասէ. պէտք է դարձոյ երթայ, դիտութիւն կամ արհեստ մը սորվի, սլատրաստ ըլլայ ընտանիք սպասելու եւ ապա ամուսնանայ: Քաղաքակիրթութիւն որչափ առաջ երթայ ամուսնութեան ժամանակը այնքան կ'ուշանայ: Միջակ եւրոպացին հիմա հազիւ ամենէն շուտ 25-րդ տարիքին մէջ կրնայ ամուսնանալ, չաճախ կ'ստիպուի սպասել աւելի երկար, մինչեւ 29 կամ 30-րդ տարիքը, մինչդեռ անիկա արբունքի կը հասնի տասերեքէն մինչեւ տասնեւեօթ տարեկան եղած ժամանակ: Ասկէ յայտնի կ'ըլլայ թէ այսպիսի աններդաշնակութիւն մը ինչ փորձութիւններու եւ մոլութիւններու կարող է առաջնորդել մարդս: Դիւրին է հիմա հասկնալ թէ ինչու հազարաւոր, բիւրաւոր երիտասարդներ իրենց սեռային բաւականութիւնը աննօրմալ արարքներու, ձեռնաշարժութեան եւ գիճութեան մէջ, կամ անառականոցներէն ներս կը փնտռեն ու իրենց սրբութիւնը աղարտելէն, յաճախ առողջութիւննին աւրելէն, իրենց կեանքի ամենէն ծաղիկ մասը փճացնելէն վերջ միայն կը մտածեն ամուսնանալ եւ տուն կազմել: Դիւրին է նաեւ հասկնալ ինչո՞ւ անառակութիւն եւ վեներական ախտերը այնքան տարածուած են եւ դեռ կը տարածուին

Դարձեալ վերջին աններդաշնակութիւն մը երեւան կ'ելլէ մարդու սեռային կեանքին մէջ երբ անոր սեռական կարողութիւնները կ'սկսին նուազիլ: Մարդ չաճախ ծերութեան մէջ կը սպասէ իր հեշտասիրական զգացումները բայց կը կորսնցնէ զանոնք գործածելու ընդունակութիւնը: Թէեւ ուշ տարիքի մը մէջ դեռ կրնայ արտադրել սերմնակենդան, աչ-

նուամենայնիւ, բոլորովին անկարող է մերձաւորութիւն կատարելու եւ զայն պատշաճ կերպով գործածելու: Այս պատճառաւ անիկա իր ծերութեան մէջ խիստ ապերձանիկ ու անհանգիստ կ'ըլլայ եւ սեռային ալիւսալ ծուռ ունակութիւններու մէջ կ'իջնայ:

Ահաւասիկ ասոնք են սեռային աներգաշնակութիւնները որոնք ներկայ են մարդկային բնութեան մէջ ու պատճառ եղած են եւ կ'ըլլան այնքան ցաւի ու անհամար չարիքներու: Չարմանալի չէ ուրեմն որ շատ մը կրօնապետներ ու բարոյախօսներ հաւատացած են որ մարդկային բնութիւնը ստոր է, խէթ աչքով նայած են մարդու առողջ, բնական իրձերուն վրայ եւ քարոզած են խստակեցութիւն, հրաժարում աշխարհէն եւ սեռային ցանկութիւններէն: Մենք իրօքի կը հաւատայ եթէ կրօններն ու կարգ մը փիլիսոփաներ պատճառ դատած են մարդկային բնութիւնը ստոր չարտարելու՝ ատոր պատճառը պարզապէս կը կաշանայ այն իրողութեան մէջ որ սեռային աններգաշնակութիւններ կ'առաջնորդեն սեռային մոլորութիւններու: Եթէ կարելի չէ առաջ մ բոլոր այդ աններգաշնակութիւնները մարդու մէջէն ամբողջովին արմատախիլ ընել, հնարաւոր է գոնէ գիտութեան լոյսով գործել այդ ուղղութեամբ, մարմնական մարդանքներով, առողջ շիտակ դաստիարակութեամբ գանոնք մեղմել եւ կամաց կամաց շտկել: Տարակոյս չը կայ որ գիտութեան լոյսով ղեկավարուած կրթութիւնը շատ բան կրնայ ընել այս մասին: Յաջորդ էջերուն մէջ ես ցոյց պիտի տամ քիչ մը այդ կրթութեան կերպը:

## VI

## ՍԵՌԱՅԻՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆՑ ԴԱՐՄԱՆԸ

Առողջ մարմին անհրաժեշտ է սեռային նորմալ կեանքի համար.— Մայրեր իրենց երախտներուն լաւ սնունդ եւ մաքուր օդ տալու են.— Մանուկներուն ի՞նչպէս հոգ տանելու է.— Ծնողներ հսկելու են իրենց զաւակներ երբ անոնք արուսեքի կը մօտենան.— Տղաներ ու աղջիկներ պէտք է ստանան պատշաճ կերպով՝ սեռային տեղեկութիւններ դպրոցին մէջ.— Չանաղան կենդանիներու պաղարեութեանց կերպը.— Սեռային առողջապահական խրատներ պատանիներուն եւ աղջիկներուն:

Սեռային նորմալ կեանքի մը ամենէն առաջին եւ անհրաժեշտ պայմանն է նախ՝ առողջ եւ մաքուր մարմին եւ միաք մը: Մարմնի բոլոր գործարաններ ուղղակի թէ անուղղակի իրարու հետ կապ ունին եւ երբ մէկը կը վնասուի ուրիշ շատեր ալ կը վնասուին. արգարեւ ամբողջ մարմինը կը տուժէ: Սեռային գործիքը մարմնի խիստ կարեւոր ու անբաժանելի մէկ մասն է, սերտորէն կապուած է միւս գործարաններուն հետ: Երբ մարմնի միւս գործարանները

հիւանդացած են, անոնց հիւանդութիւնը կանգրադառնայ նաեւ սեռացին գործիքի վրայ, առաջ կը բերէ սեռացին աններդաշնակութեանց սաստկացում եւ այլ անկարգութիւններ: Ախտաժէտ, հիւանդոտ մարմինն է որ ամենէն աւելի հակամէտ կ'ըլլայ սեռացին վատ հակումներու եւ ունակութեանց: Առողջ մարմինը ընդհակառակն կ'ունենայ առողջ հակումներ եւ նորմալ սեռացին զգացումներ:

Ծնողներ իրենց զաւակներ հսկելու են եւ անոնց առողջութեան հոգ տանելու են շատ կանուխ հասակէ մը սկսեալ: Պէտք է մանուկներ ստանան լաւ սրնունք եւ մաքուր օդ որպէս զի անոնց միջոցով մատաղ հասակին մէջ կարողանան առուց եւ կորովի չափահաս կեանքի մը հիմը դնել: Ծնորհիւ շատ մը ծնողներու տգիտութեան ու անփութութեան անոնց երեխաներու աճումը անկարգ աննորմալութեան եւ սպաւհանուած օդի պատճառաւ կը կասի ու այդ երեխաները երբէք չեն կրնար լաւ կերպով աճիլ եւ առողջ ու կորովի մարդիկ եւ կիներ ըլլալ. մարմնով ու մտքով կը մնան անզարգացած եւ այդպէս դիւրին որս կ'ըլլան ամէն տեսակ հիւանդութիւններու, ձխորդութիւններու եւ սեռացին ախտաժէտ հակումներու ու մոլութիւններու: Պէտք է երեխաներուն ամէն օր լողանք տալ եւ անոնց մարմինը մաքուր ու չոր պահել: Պէտք է նայիլ որ անոնց աղբերուն մէջտեղ, թլիփին ու թեւերուն տակ աղտոցութիւններ չը հաւաքուին ու զանոնք զրգոնեն: Մենք տեսանք որ սեռացին բնազդը կարող է արթննալ նոյն իսկ երեխայութեան ժամանակ եւ առաջնորդել վատ մոլութիւններու: Սեռացին զգացման վաղաժամ

զարթնումը մանուկներու մէջ՝ չաճախ ազդարար նըշան մըն է որ երեխան սեռացին գործիքի եւ կամ ուրիշ գործարաններու խանդարմունքներ ունի: Ասոնք կրնան ըլլալ նեղաթլիփութիւն, ունէ պատճառաւ առաջ եկած առնանդամի կամ հեշտոցի բորբոքում ու գրգռում, միզուկի բորբոքում, օտար մարմիններու մուտք անոր մէջ, մորթի տկարութիւններ, աղիքի որդեր, պնդութիւն եւայլն: Երբեմն ջղային տակրութիւններ, որոնց կարգէն են ընկնաւորութիւն եւ մտային ուրիշ խանդարմունքներ, ձեռնաթիւն եւ մտային ուրիշ խանդարմունքներ, ձեռնաչարժութեան կը գրգռեն մանուկը: Լօմբրօզօ կը յիշէ շարժութեան կը գրգռեն մանուկը: Լօմբրօզօ կը յիշէ ընկնաւորութեան քանի մը դէպքեր որոնց մէջ հիւանդը իսկույն կ'սկսէր ձեռնաչարժել երբ հիւանդութեան նոսրաները կուգային: Պէտք է երեխան քնել տալ եւ վերցնել ունէ տեղական եւ ընդհանուր ախտաժէտ փոփոխութիւն որ կրնայ մանուկը փորձութեան առաջնորդել:

Խիտ նեղացուցիչ, չաճախադէպ անկարգութիւն մըն է տղաներուն մէջ նեղաթլիփութիւն որու վնասներու մասին արդէն խօսած եմ: Դիւրութեամբ կարելի է մանուկը այս նեղութենէն ազատ պահել կամ թլիփաւորութեամբ եւ կամ թլիփը ամէն օր չետ կամ թլիփաւորութեամբ եւ օճառով լուայով քաշելով, անդամը տաք ջուրով եւ օճառով լուայով եւ սպա գլխիկին վրայ քիչ մը վասէլին քսելով: Երբ մանուկը դեռ շատ փոքր է մաքրերը իրենք ընելու են մաքրողական այս գործողութիւնը: Չորս հինգ տարեկան տղաներուն ու աւելի մեծերուն սորվեցնելու է որ իրենք ամէն օր վերը բացատրածս եղանակաւ թլիփը ետ քաշեն, գլխիկը մաքրեն, վասէլինով օճեն ու այդպէս լպրծուն վիճակի մէջ պահեն: Այսպիսի

ունակութիւն մը մանուկը պիտի ազատէ շատ մը սեռամիզացիւն անկարգութիւններէ, ինչպէս գրգիռէ, ազտեղութենէ, անմիզապահութենէ, ձեռնամուրթենէ եւայլն. պիտի սորվեցնէ մաքրութիւն եւ տայ անոր դադափար անձնական առողջապահութեան, պատճառի եւ հետեւանքի գիտութեան մասին: Եթէ թլիփը չափազանց նեղ ու երկար է եւ շատ դժուարաւ յետ կը քաշուի, լաւ է դայն կտրել տալ:

Երեխաներու հագուստը պէտք է ըլլայ թույլ եւ զով: Վնասակար է զանոնք աչնպէս ամուր կապել եւ փաթթել մինչեւ որ ալ չը կրնան շարժիլ եւ անոնց ազդերուն մէջ տեղ եւ թեւերուն տակը տաքութիւն եւ խոնաւութիւն առաջ դան: Երեխան պէտք է ազատ շարժի որպէս զի լաւ աճի: Պէտք է հանգիստ զով հագուստներ հագնին նաեւ աւելի մեծերը: Տաքութիւն սեռային գրգռման մեծ աղբիւր մըն է: Որքան կարելի է խուսափելու է անկէ:

Ձգույշ ըլլալու է մանուկներու հետ վարուելուն մէջ: Մայրեր երբեմն իրենց երեխաներու ծննդական գործարաններուն հետ կը խաղան լոկ դուարճութեան համար կամ հանդարտեցնելու զանոնք երբ կուլան: Ասիկա շատ անխոհեմ քան մըն է որ անոնք կ'ընեն, որովհետեւ, այդպիսի արարքներ կրնան անոնց սեռային բնազդը չանկարծ արթնցնել: Լաւ է նոչնպէս անոնց կտիկընել, յետոյքին վրայ գարնել, զանոնք ձեծել ու գետնին վրայ քաշկուտել: Թույլ տալու չէ որ մանուկներ ճաղի մը կամ գերանի մը վրայ հեծած՝ սահին ու աչգ տեսակ խաղեր խաղան, որովհետեւ անոնց սեռային գործարանները աչգ կարգի խաղերուն մէջ

կ'ենթարկուին շփման եւ շփումէն առաջ եկած աստորժ զգացումը կ'արթնցնէ սեռային ցանկութիւն:

Պզտիկ մանուկներ, տղայ թէ աղջիկ, իրարու հետ պառկեցնելու չէ: Թույլ տալու չէ մանաւանդ որ անոնք օտար մէկի մը, իրենցմէ աւելի տարիքաւոր տղու մը կամ աղջկան մը հետ քնանան: Ասիկա զրգուելի, հակառողջական սովորութիւն մը ըլլալէն զատ շատ մը սեռային շարժքներու գուռը կը բանայ, որովհետեւ, անկողնի մէջն է որ տղաներ ու աղջիկներ չաճախ իրարու դէշ, սխալ բաներ կը պատմեն եւ վատ ունակութիւններ կը սորվեցնեն: Սեռային այլեւայլ ծուռ ունակութեանց մէջ ինկած մարդոցմէն շատերը իրենց մոլութեանց գրգիռը ստացած են աչն ատեն երբ մանուկ հասակին մէջ տարիքաւոր աղջկան մը կամ կնկան մը հետ պատահամար միեւնոյն անկողնին մէջ պառկած են:

Յետոյ ծնողներ զգուշ ըլլալու են իրենց սպասուհիներէն ու ծառաներէն: «Ով ծնողներ, պաշտպանեցէք ձեր զաւակներ ծառաներէն», կ'ըսէ Րէտիֆ Տը Լա Բրէտօն: Շատ են օրինակները տէչա ու վատ նկարագրի տէչր ծառաներու որոնք իրենց հոգատարութեան չանձնուած տղաներ ու աղջիկներ մոլորցուցած ու աւրած են:

Ծնողներ միշտ զբազուած պահելու են իրենց զաւակներ առողջ աշխատանքով եւ դնելու են անոնց մէջ լաւատես ու մաքուր կեանքի ըմբռնում մը, սէր դէպի ունէ մէկ բարի նպատակ, օգտակար զբաղմունք մը: Որքան կարելի է քաջալերելու է անոնց մէջ մարմնական մարզանքներու եւ բացօդեայ խաղերու սէրը եւ աչգպէս կրթելու եւ զօրացնելու է ա-



նոնց Ֆիզիքն ու կամքը: Պէտք է հող տանիլ սակաչն որ անոնք աներես եւ կամապաշտ չը դառնան: Կամապաշտութիւն երբէք ուժեղ կամք ըսել չէ: Կամապաշտ տղան չէ որ կրնայ իր կրքերը զսպել եւ զզացումները կառավարել: Այս տեսակ տղան հակամէտ է անվերջ նեղութիւններ բարդելու իր եւ ուրիշներու դիւին: Առհասարակ կամապաշտ տղաներն են որ թոյլ, արձակ նկարագրի տէր մարդիկ կը դառնան եւ հակամէտ կ'ըլլան սեռային ամէն տեսակ մոլութիւններու եւ չարագանցութիւններու: Մարդ մանուկ հասակէն պէտք է սկսի իւրացնել ինքնագոյման եւ ինքնամոռացութեան պատուական չտուութիւնները որոնք այնքան պէտք կ'ըլլան իրեն չաճախ: Ինքնագոյման վարժուած, ինքնամոռացութեան ընդունակ տղան ու աղջիկն է որ կրնայ ի պահանջել հարկին հրաժարիլ առարկելի հաճոյքներէն եւ ինքզինք ետ պահել փորձութիւններէն: Այդ տեսակ տղան ու աղջիկն է որ կրնայ տիրապետել իր անձին առանց դժուարութեան:

Ծնողներ հող տանելու են նաեւ որ իրենց դուստրներու միտքերը մաքուր եւ անարատ մնան, որ անոնք չար ընկերներու հետ չը չարաբերին եւ անոնցմէ սխալ, գէշ բաներ չը լսեն ու սորվին: Ըսուած է գեղեցիկ բան մը միշտ ուրախութիւն կը պատճառէ մարդուն: Կարելի է ըսել նաեւ տղեղ բան մը միշտ զգուանք կը պատճառէ մարդուն: Անձեղ մանուկը երբ իր չար ընկերներէն դադիր բան մը կը լսէ կամ անոնց վրայ տղեղ պատկեր մը կը տեսնէ այդ յաւիտեանս անոր մտքին վրայ կը մնայ եւ զգուանքի, տհաճութեան մշտական աղբիւր մը կը դառնայ: Մա-

նուկներու միտքը շուտ տպաւորուող կ'ըլլայ, անոնց կեանքը շատ դիւրաթեք է: Արդարեւ ծանր խնդիր մըն է երբ մանուկ մը իր չար ընկերներէն կեանքի վրայ սուտ ու սխալ, նողկալի բաներ լսելով՝ անոր վրայ տղեղ, վատ գաղափար կը կազմէ: Մեծ աշխատութիւն եւ ջանք հարկաւոր է մինչեւ ան վերջը կարողանայ կեանքի այդ տղեղ տպաւորութիւնը իր մէջէն հանել ու անոր տեղ առողջ, գեղեցիկ ըմբռնում մը դնել: Մարդիկ իրենց մոլութիւններէն շատերը, կարելի է ապահովաբար ըսել, մանկութեան եւ երիտասարդութեան ժամանակ կը սորվին եւ իրենց վատ ընկերներուն օրինակովը: Չար ընկերակցութեան խնդիրը ամենակարեւոր խնդիր մըն է որու մասին ծնողներ շատ ուշադիր ըլլալու են:

Թոյլ տալու չէ որ մանուկներ կանուխ հասակէ մը սկսին մտաւոր ծանր աշխատութիւններով պարապիլ, մանաւանդ յուզումնալի եւ ջղային մեծ ուժ խլող զբաղմունքներով ինչպէս երաժշտութեամբ: Արբունքէն առաջ կատարուած այսօրինակ աշխատութիւններ տղուն եւ աղջկան արբունքը փութացընելով՝ արգելք կ'ըլլան անոնց Ֆիզիքական լիուլի զարգացման: Պէտք է այս մասին զգուշ եւ խիստ չափաւոր ըլլալ: Այս տեսակէտէն դեռատի տղաներուն եւ աղջիկներուն վնասակար են նաեւ ներկայ քաղաքակիրթ կեանքի թատրոնները, մասնաւորապէս ստորին տեսակ սիրահարական ներկայացումները եւ շարժական կարգ մը յիմար պատկերները: Աւելի լաւ է դեռատի օրիորդներ ու պատանիներ երբէք չը տեսնեն այս տեսակ ներկայացումներ ոչ ալ պարել սորվին կանուխ հասակի մը մէջ:

Ծնողներ ապա խիստ աջալուրջ կերպով հսկելու են իրենց զաւակները երբ անոնք արբունքի կը մօտենան : Հայրեր ու մայրեր նկատի առնելու են երբ իրենց զաւակները կ'առանձնանան չաճախ գաղտնի տեղեր, իրիկուններ շուտ քնանալու կ'երթան, կ'ըսկըսին գունատուիլ, կը կորսնցնեն իրենց զուարթութիւնը, կը դառնան երկչոտ ու մեղամաղձոտ եւ սեւ մանեակներ կ'սկսին երեւիլ իրենց աչքերուն տակը : Այսպիսի պարագաներուն մէջ իմաստութեամբ ու պատշաճօրէն տրուած խրատ մը կրնայ ասպագայ շատ մը աղէտներու առաջը առնել : Եթէ ծնողներ իրենք չեն կրնար հաղորդել իրենց զաւակներուն պէտք եղած տեղեկութիւնները, կարող են վստահելի բարեկամի մը, ուսուցչին կամ բժշկին միջոցով դանոնք խրատել եւ զգուշացնել :

Տղան ու աղջիկ սեռացին խնդիրներու մասին պէտք է բաւական կանոնաւոր տեղեկութիւն ստանան դպրոցներուն մէջ : Դպրոցէն ներս, մանուկ հասակին մէջ հանգիստաւոր կերպով ստացուած ծանօթութիւնը մնայուն կերպով կը տպաւորուի մանկան մտքին վրայ եւ կարող է հօր կերպով ազդել անոր ասպագայ կեանքին վրայ : Տղուն ու աղջկան յարմար ժամանակին ու պատշաճ կերպով հաղորդուած սեռացին գիտութիւնը երբէք դանոնք մոլորութեան չի առաջնորդեր : Ընդհակառակն, եթէ մենք զլանանք անոնց այդ ծանօթութիւնը, անոնք վատ ընկերներէն, փողոցէն պիտի վերցնեն սխալ, դէժ կերպով ներկայացուած տեղեկութիւններ ու այդպիսով կեանքի վրայ վատ գաղափար պիտի կազմեն եւ մոլութեանց առաջնորդուին :

Ի հարկէ տղաներ ու աղջիկներ քանի զեռ պըզտիկ են, յարմար է որ միայն պարզ եւ ընդհանուր բաներու մասին տեղեկանան, չետոյ երբ կը մեծնան, կամաց կամաց կարելի է բանալ անոնց առջեւ աւելի բարդ ու ծածուկ պահուած խնդիրները : Օրինակի համար, Մարիա Լիշնէվսկա կը կարծէ որ նախակըրթարանի երրորդ կարգը կրնայ սորվիլ բնական պատմութեան սկզբունքները, բոցսերու արգասաւորութեան եւ ձուկերու ու թռչուններու պտղաբերութեան կերպը : Բարձրագոյն կարգերու ու միջնակարգ վարժարաններուն մէջ կամաց կամաց կարելի է այս գործողութիւնները աւելի մանրամասն բացատրել, տալ բարձրագոյն կենդանիներու պտղաբերութեան կերպը, տեղեկացնել վնասեցական ախտերու, անոնց անմիջական ու հեռաւոր վնասներու մասին, սեռացին ծուռ ունակութիւններու եւ չափազանցութիւններու վնասները եւալն : Այսպիսով պատանին սեռացին խնդիրներու մասին մութին մէջ չի մնար, անոր ստիպողական պահանջը գիտութեան մասին կը դօհանայ եւ ան կ'ազատուի անկիւններ ու մութ տեղեր քաշուելէն, կ'ունենայ գիտակցութիւն մարդու եւ բնութեան նոյնութեան մասին եւ շարքանքի զգացում դէպի կեանքի նախնական աղբիւրը : Ես փորձով տեսած եմ որ երիտասարդ պատանիներ ու աղջիկներ, նոյն իսկ չափահասներ, վերջին ծայր տղէտ են սեռացին առողջապահական խնդիրներու մասին : Տգէտ են սեռացին մաքրութեան, ծուռ ունակութիւններու եւ չափազանցութեանց վատ հետեւանքներու նկատմամբ, տղէտ են վնասեցական ախտերու անմիջական եւ հեռաւոր վնասներու

մասին: Հիմա երբ մէկ մը այս խնդիրներու մասին լսած է՝ եւ տեղեկութիւն չունի, ի՞նչ իրաւունք ունինք ակնկալելու որ ան ինքզինք շիտակ կերպով կառավարէ: Առաջին փորձութեամբն իսկ կարող է ինչալ եւ ինքզինք չարաչար կերպով վնասել: Երբ երիտասարդ մը կամ աղջիկ մը սակաչն առաջունէ այս խնդիրներու մասին լսած է, ժուժկալութեան օրհնութիւնները, չափազանցութեանց վնասները հաստատ կերպով անոր մտքին վրայ տպաւորուած են, բնական է որ ան աւելի զգուշաւոր ըլլայ եւ ինքզինք շիտակ կերպով կառավարէ: Տգիտութենէն երբէք բարի բան մը դուրս չի գար: Գիտութիւնը զօրութիւն է ըսուած է: Այս խօսքը որքան ճշմարիտ է ուրիշ բաներու մասին նոյնքան ճիշդ է նաեւ սեռաչին խնդիրներու մասին:

«Եթէ ծնողներուն կարելի ըլլար կարգալ», կը գրէ Դօկտօր Ստալլ, «այն բոլոր նամակները որոնք ես կ'ընդունիմ աշխարհի ամէն կողմ գտնուող երիտասարդներէն, անոնք երբէք անփութ չի պիտի մընային իրենց զուակներու մասին եւ պիտի շտապէին հաղորդելու անոնց պէտք եղած տեղեկութիւնները: Անոնց դանգաւորները առհասարակ սա իմաստը ունին. ինչո՞ւ ոեւէ մէկ մը զիս չզգուշացուց: Բարեկամ մը, ուսուցիչ մը, բժիշկ մը կամ քարոզիչ մը այս մասին ինձ բնաւ բան մը չըսաւ: Ծնողքս այս բանը գիտնալով մէկտեղ ճշմարտութիւնը ծածկեցին, զիս խաբեցին եւ թող տուին որ ծուռ ճամբէ մը քալեմ:

«Ծնողքս զիս զգուշացուցին ծխախոտի եւ ալ-

կօժօլի դործածութենէն, նարտախաղէ, հայհոյութենէ, գողութենէ եւ անհաւատարմութենէ: Պատուիրեցին ինձ եկեղեցի եւ կիրակնօրեայ դպրոց չաճախել, բայց բոլորովին անհոգ գտնուեցան մեծ պարտականութեան մը մէջ ու կործանուծիս բուն պատճառը եղող խնդիրը ինձմէ դաղտնի պահեցին»:

\* \* \*

Այս աշխարհին մէջ ամէն ինչ որ կեանք ունի, բուսական թէ կենդանական, ձուէ մը առաջ կուգայ: Առանց ձուի ոչ մէկ կենդանի էակ կը ծնի այս երկրի վրայ: Այսպէս՝ ձուէն առաջ կուգան բոլոր պարզ աչքով անտեսանելի մանրէներ ու ճճիներ, որդեր, զանազան տեսակ միջատներ, հսկայ կաղնիներ եւ ընկուզենիներ. բոլոր մանր ու խոշոր կենդանիներ, ինչպէս ձուկ, գորտ, ոչխար, ձի, առիւծ, փիղ եւ մարդ:

Առաջին գլխուն մէջ ես բացատրեցի ամենէն նախնական սեռ չունեցող կենդանիներն ու բոյսերը ինչպէս կը բազմանան պարզ բաժանման ձևով: Բացատրեցի նաեւ որ անոնցմէ աւելի մեծ ու բարդ օրգանիզմներ կ'սկսին ունենալ արու եւ էգ սեռեր որոնք բարձրագոյն կենդանիներուն ու բոյսերուն մէջ լաւ զանազանաւորուած ու որոշ կը դառնան: Արու սեռը կ'արտադրէ սերմ իսկ էգը կ'արտադրէ ձուն: Ձուն աւելի մեծ է քան սերմը ու աւելի սնունդ կը պարունակէ ապագայ փոքրիկին համար: Ձուածին կենդանիներուն մէջ մասնաւորապէս, ձուն սերմէն անհամեմատ խոշոր կ'ըլլայ ու կը պարունակէ առատ սնունդ, այն պարզ պատճառաւ որ ձագերը մօր

արգանդէն դուրս ծնելուն համար ձուէն պէտք է ստանան իրենց սնունդը եւ ոչ մօր արիւնէն :

Սերմը պէտք է ձուին հետ միանայ որպէս զի այս վերջինը ստանայ պէտք եղած գրգիռը ու սկսի արագ արագ բաժնուիլ շատ մը բջիջներու մինչեւ վերջը ձեւակերպուի ըլլայ փոքրիկ օրգանիզմ մը ճիշդ ծնողին նման : Զուին եւ սերմին միացման գործողութիւնը բոչսերու մէջ աչլեւալլ միջոցներով կը կատարուի : Հովերն ու միջատները կարեւոր դեր մը կը խաղան անոր մէջ սերմը ծաղկէ ծաղիկ տանելով ու ձուերը արգասաւորելով : Հովեր ծաղկափոշիներ (սերմը) կը թոցնեն ու կը ցրուեն օդին մէջ որոնք պատահամբ կ'իյնան ծաղկանց վարսանդներուն (իզական մասը) վրայ եւ աչգպէս զանոնք կարգասաւորեն : Միջատներու կատարած դերը այս գործողութեան մէջ ամենէն հրաշալին ու դարձանալին է : Մեղուներ, օրինակի համար, ծաղկանց գրաւիչ գոչներէն հրապուրուելով՝ կ'երթան անոնց վրայ կը նստին մեղր շինելու համար նեկտար ծծելու : Եատ մը ծաղիկներ ափսպէս կարգադրուած են որ երբ մեղուն կը ջանայ ծաղիկին հիւթեղ մասին հասնիլ եւ իր խալթոցը անոր մէջ խրել, անպատճառ անոր մարմնի մէկ մասը ծաղկափոշիներուն, սերմին պիտի քսուի : Յետոյ երբ մեղուն ուրիշ ծաղիկի մը աչցելութիւն կուտայ սերմը կը թողու անոր ձուերուն վրայ ու աչգպէս զանոնք կ'արգասաւորէ : Պարտէզն իջած ժամանակ երբէք դիտա՞ծ էք ինչպէս ժրաջան մեղուները բղղալով ծաղկէ ծաղիկ կը պտտին, անոնց բաժակներուն մէջ կը մտնեն կ'ելլեն եւ օրն ի բուն մեղր կը հաւաքեն : Անոնք մեղր հաւաքելու միջոցին

ճիշտ այս բեղմնաւորութեան գործողութիւնն է որ կը կատարեն :

Կենդանիներուն մէջ պտղաբերութիւն տարբեր կերպերով կը կատարուի : Ստորին կենդանիներուն, ինչպէս օրինակ, ձուկերուն մէջ անիկա հետեւեալ կերպով տեղի կ'ունենայ : Արու եւ էգ ձուկերէն մեծ մասը երբէք երարու հետ չեն զուգաւորուիր : Էգ ձուկը երբ տաք եղանակը կուզայ կ'երթայ իր ձուերը, որոնք միլիոններու կը հասնին, կ'ածէ ծովին կամ գետին խաղաղ մէկ մասին մէջ : Վերջը արուն կ'երթայ իր սերմը կը թափէ անոնց վրայ : Սերմն ու ձուն ջուրին մէջ իրարու կը միանան ու ժամանակ մը վերջ փոքրիկ ձուկեր կ'ելլեն : Այս փոքրիկ ձուկերէն շատ քիչերը կը մնան ու կը մեծնան . մեծ մասը կուլ կ'երթան ուրիշ աւելի մեծ ձուկերու կամ օտար ջրային կենդանիներու : Ծնող ձուկերը հազիւ թէ խնամք կը տանեն իրենց փոքրիկներուն : Ասոնք բոլորովին անպաշտպան կը մնան ջուրին մէջ եւ դիպուածաբար միայն կ'ապրին ու կ'ըլլան մեծ ձուկեր : Այսպէս ուրեմն՝ կը տեսնէք որ ձուկերուն մէջ արգասաւորութիւն առանց անոնց զուգաւորման, ծնողներու մարմնէն դուրս, ջուրին մէջ տեղի կ'ունենայ : Միայն քանի մը տեսակ ձուկեր կան որոնք կը զուգաւորուին եւ պղտիկ ձագերը մօր մարմնին մէջ կ'ածին ու կը մեծնան : Ձեզմէ գրեթէ բոլորն ալ տեսած ըլլալու են ձկան ձուն ու սերմը : Ձկան փոր կամ ձկնկիթ կոչուած փոքրիկ հատիկներէ կազմուած այն կարմիր նիւթը ձուերն են իսկ ձերմակ պանիրի նման նիւթն ալ սերմն է :

Գորտեր իրարու հետ կը զուգաւորուին, բայց

ասոնց մէջն ալ, ինչպէս ձուկերուն մէջ, պղտիկը մօր արգանդին մէջ չի աճիր այլ դուրսը, ջուրին մէջ: Երբ էգը պատրաստ է իր հաւկիթները ածելու, արուն զայն կը գտնէ ու վրան կը նստի: Էգը իր ձուկերը ածելուն պէս արուն իր սերմը անոնց վրայ կը թափէ ու այդպէս զանոնք կ'արգասաւորէ: Ասոնց ձուկերը պարփակուած են կաշուն, մածուցիկ նիւթով մը ու այդպէս պաշտպանուած: Ամառնային լրճակներուն վրայ գտնուող այն կանանչ կաշուն նիւթի կտորները գորտի ձուկերն են: Արգասաւորուած ձուկեր ժամանակ մը արեւին տակ մնալէն չետոյ կ'աճին ու ապա փոքրիկ գորտեր դուրս կ'ելլեն անոնցմէ երկար պոչերով: Վերջ անոնց պոչերը կը մաշին եւ այն ատեն պղտիկ գորտը ճիշտ մաշր գորտի ձեւը կ'ստանայ: Գորտերն ալ, ձուկերուն պէս, իրենց ձագերուն խնամք տանելու սովորութիւն չունին ու անոնց պղտիկներէն շատ քիչերն են որ արտաքին շատ մը թշնամի ազդեցութիւններէն ազատուելով կը մեծնան ու խոշոր գորտեր կ'ըլլան:

Յամաքային կենդանիներուն մէջ պտղաբերութեան կերպը տակաւ առ տակաւ կը փոխուի ու կը զարգանայ մինչ պարզ տեսակներէն կը վերանանք դէպի բարձրագոյն տեսակները: Սողուններուն, ինչպէս օձերուն մէջ, կանոնաւոր զուգաւորութիւն տեղի կ'ունենայ ու ձուկերը մօր արգանդին մէջ կ'արգասաւորուին, բայց ձուկերուն ու գորտերուն պէս, անոր մարմնէն դուրս կ'աճին ու կը կերպարանաւորին: Արու եւ էգ օձերը կը զուգաւորուին եւ այդ գործողութեան միջոցին արուն իր սերմը կը թափէ էգի ձուարանին մէջ ուր անոր ձուկերը կ'ար-

գասաւորուին: Յետոյ էգ օձը բաւական խնամքով բոցն կը շինէ արեւին տակ եւ իր հաւկիթները կ'աճէ անոր մէջ, թուով 20էն մինչեւ 80 հատ: Հաւկիթները ժամանակ մը արեւի տաքութեան տակ մնալով կ'աճին ու կը զանազանաւորուին մինչեւ անոնցմէ փոքրիկ օձեր կ'ելլեն: Երբ փոքրիկներ արդէն դուրս ելած են հաւկիթէն՝ ծնողներ այլեւս ուշադրութիւն չեն տար անոնց, կը ձգեն զանոնք իրենց բախտին: Կան կարգ մը տեսակ օձեր սակայն որոնք կը փաթթըուին կ'ըլլան կծիկ եւ այդպէս կը նստին իրենց հաւկիթներուն վրայ թռչուններուն պէս զանոնք տաքցնելու եւ թխսելու համար: Յետոյ երբ վտանգ կ'սպառնայ հաւկիթներուն կամ փոքրիկներուն, կատաղաբար կը կռուին եւ կը պաշտպանեն զանոնք: Օձերուն մէջ մենք կ'սկսինք տեսնել սերնդի քիչ շատ հոգատարութիւն բոցն շինելու եւ հաւկիթներու պաշտպանութեան ձեւով:

Կոկորդիլոսներու պտղաբերութեան ձեւը շատ նման է օձերուն: Ասոնց մէջն ալ կանոնաւոր զուգաւորութիւն տեղի կ'ունենայ եւ հաւկիթները կ'արգասաւորուին մօր արգանդին մէջ: Մաշր կոկորդիլոսը ապա արեւուն տակ բոցն կը շինէ եւ իր հաւկիթները կ'աճէ անոր մէջ, թուով 20էն մինչեւ 60 հատ: Կոկորդիլոսի հաւկիթները կարծր կրային կեղեւներ ունին ճիշտ հաւի ձուկին նման եւ այնքան խոշոր են որքան սաղի հաւկիթը: Երբեմն հաւկիթներ ածելէն վերջ մաշր կոկորդիլոսը փոխանակ զանոնք բաց արեւին դէմ թողնելու փտած տերեւներով ու բոցսերով կը ծածկէ: Հաւկիթներ շնորհիւ արեւին կամ փտած տերեւներու արտադրած տաքութեան, կ'ա-

ճին ու անոնցմէ կոկորդիլոսի ձագեր կ'ելլեն: Երբ ձագերը ծնած են, մայրը զանոնք կ'առաջնորդէ գետերը ուր զանոնք կը կերակրէ ու կը պաշտպանէ: Կոկորդիլոսի մէջ սերունդի պաշտպանութեան ու հոգատարութեան գործը արդէն բաւական առաջացած կը տեսնենք: Միեւնոյն կերպով կը պողարբրին բոլոր միւս սողունները, կրիաները, չետոյ թռչունները:

Երբ արու եւ էգ թռչունները զուգաւորուած են երկուքն ալ միասին բոցն կը շինեն: Այնպէս գեղեցիկ ու ճարտար կերպով բոցն կը շինեն երբեմն որ մարդ կը դարձանայ: Երբ բոցն պատրաստ է էգը մէջը կը նստի եւ իր հաւկիթները կ'ածէ: Հաւկիթներ ածելէն յետոյ էգը կը նստի անոնց վրայ ու իր մարմնով զանոնք կը տաքցնէ: Այս է որ մենք կը կոչենք թուխս նստիլ: Ժամանակ մը վերջ հաւկիթներուն մէջ փոքրիկ ձագեր առաջ կուգան որոնք իրենց սուր կտուցներով հաւկիթը կը ծակեն ու դուրս կ'ելլեն: Երբ ձագերը դուրս ելած են մայրը խնամքով զանոնք կը կերակրէ որդերով եւ միջատներով մինչեւ անոնք մեծնան: Երբ բաւական մեծցած են, անոնց թռչիլ կը սորվեցնէ ու ապա աշխարհ կը զրկէ զանոնք: Չեզմէ շատեր անշուշտ տեսած են այս գործողութիւնները: Տեսած էք ծառերու վրայ կամ կտուրներու տակ շինուած թռչնոց բոցները, անոնց մէջի սլաքի ձագերը որոնք ծածկալով իրենց փոքրիկ գլուխները կ'երկնցնեն ընդունելու իրենց մօր բերած կերակուրը: Դիտած ըլլալու էք նաեւ որ մայրը ի՞նչ խանդաղատանքով զանոնք կը կերակրէ ու կը հոգայ: Մեր ընտանի հաւի թուխս նստիլը նման է ասոր եւ

չատերուն անշուշտ ծանօթ է: Կէտ մը որ ձեր մըտքին վրայ կուգեմ տպաւորել այս է: Ամէն հաւկիթ որ թուխս կը դեննք ձեռ շի տար: Միայն այն հաւկիթներ ձեռ կուտան որոնք նախապէս արգասաւորուած են աքլորի մը միջոցով: Ասոր համար է որ երբ հաւարուծը կուգէ մեծ քանակութեամբ հաւկիթներ թխսել, իր հաւերուն հետ քանի մը հատ աքաղաղ կը պահէ:

Բարձրագոյն կենդանիներուն մէջ պողարբերութեան կերպը աւելի բազաւրեալ կը դառնայ ու երկար ժամանակ կ'առնէ սոյն գործողութիւնը: Կենդանածին (viviparus) կենդանիներուն մէջ, օրինակի համար, որոնց կը վերաբերինք նաեւ մենք, հաւկիթ ածել չը կայ: Զուի արգասաւորութիւնը թռչուններուն պէս մօր արգանդին մէջ տեղի կ'ունենայ, բայց սաղմը դուրս չ'ելլեր անկէ, այնտեղ կը մնայ ու մօր մարմնին մէջ կ'աճի մինչեւ որոշ ժամանակ մը չետոյ մայրը արդէն կատարելագործուած ձագը կամ երեխան կը ծնանի: Երբ փոքրիկներ ծնած են մայրը կը սնուցանէ զանոնք իր կաթովը մինչեւ մեծնան ու երթան իրենց գործին: Դուք դիտա՞ծ էք երբէք մայր կատուն իր սիրուն ձագերուն հետ: Ի՞նչ դուրգուրանքով զանոնք կը դիեցնէ, ի՞նչ խանդաղատանքով կը պաշտպանէ զանոնք: Ի՞նչպէս երբ վտանգ կ'սպառնայ անոնց կեանքին, զանոնք իր բերան բռնելով ասպհով, դաղտնի տեղեր կը փոխադրէ: Յետոյ անոնց հետ ի՞նչ անուշութեամբ կը խաղայ եւ զանոնք կը զուարճացնէ: Հապա ձագեր իրարու հետ ինչ զուարճութեամբ կը դօտեմարտին ու կը խաղան: Երբ ձագերը ջանկարձ կորսուին, մայրը

Ի՞նչ տխրագին կերպով կը կանչէ ու կը փնտռէ գանոնք: Երբ մարդ աչս բներեւոյթները կը դիտէ չի կրնար երկիւղածութեամբ ու հիացմունքով չը լեցուիլ բնութեան խորհրդաւոր իրերուն ու զարմանահրաշ զէպքերուն հանդէպ: Վերջապէս մարդու պըտ զարեբութեան կերպն ալ նման է բոլոր ստնտու կենդանիներուն, ինչպէս ոչխարին, կովին, ձիուն, առիւծին, փիղին եւայլն միայն թէ մարդուն մէջ շատ աւելի ժամանակ ու խնամք հարկաւոր է մինչեւ որ երեխան կերպարանաւորի ու ծնի: Ծնելէն վերջն ալ դոնէ տասնեւհինգ, քսան տարուան հոգատարութիւն պէտք է մինչեւ տղան ու աղջիկ կարենայ անկախ ապրիլ եւ ինքզինք հողալ: Մենք բոլորս ալ մեր հօրը շնորհիւ արգասաւորուած փոքրիկ, մանրագիտակալին սաղմէ մը առաջ եկած ենք: Մեր մայրը ինն ամիս շարունակ մեզ իր մարմնին մէջ կրեց, իր արիւնէն մեզ սնունդ տուաւ, սրտի դողով մեր շարժումները զգաց ու դիտեց: Ամէն զգուշութիւն ըրաւ որ մենք չը վնասուէինք ու վիժածներ դուրս չը դայինք: Յետոյ երբ մեզ ծնաւ, երկար ատեն մեզ դիցուց իր կաթովը, դիչերները մեր վրայ անքուն հսկեց, մեզ հազուեցուց, կերակրեց մինչեւ եղանք աշխոյժ պատանիներ ու երիտասարդներ: Անկէ վերջըն ալ իր հսկողութիւնը մեր վրայէն չը հեռացուց, ինչ որ կրնար ըրաւ մեզ օգնելու, առաջնորդելու եւ կեանքի մէջ յաջող ու պարկեշտ մարդիկ դարձնելու համար: Մայր մը չը կայ որ իր դաւկի յաջողութեանն ու բարօրութեանը չը փախաքի եւ անոնցմով չուրախանայ: Մեր հայրն ալ իր բաժինը բերաւ մեզ մեծցնելու եւ դաստիարակելու դործին մէջ: Ան աչ-

խարհին հետ մաքառեցաւ, մեր ապրուստը ապահովեց, մեզ պաշտպանեց, դպրոց դրաւ եւ մեզ կրթութիւն տուաւ: Ո՞վ է այն պատանին ու աղջիկը որ չի չարգեր իր մայրն ու հայրը խորին չարգանքով մը:

Աչսպէս՝ բնութիւն զարմանալի օրէնքներով կը կառավարէ ամբողջ տիեզերքը: Թէև բոցներն ու այլեւայլ միլիոնաւոր կենդանիները տարբեր կերպերով կը պտղարերին ու կը բազմանան, այսուամենայնիւ, միեւնոցն սկզբունքներով է որ անոնք բոլորը կ'աճին ու կը շատնան, միեւնոցն նախնական օրէնքներովն է որ անոնք բոլորը կը կառավարուին: Ծնունդի եւ մահուան, առողջութեան ու հիւանդութեան հիմնական օրէնքները ամէն տեղ միեւնոցն են: Բոլոր արարածներն ալ պղտիկ սաղմէ մը կը ծնին, պէտք ունին սնունդի, ջուրի եւ օդի որպէս զի մեծնան: Բոլորն ալ երբ հասունցած են կը պտղարերին, իրենց նմանը կ'արտադրեն, ապա կը ծերանան, կը մեռնին ու տեղի կուտան ուրիշ աւելի նոր, կենսունակ սերունդներու: Բոլորն ալ կ'ընեն այս բաները միայն թէ տարբեր կերպերով կ'ընեն: Բոլորի մէջն ալ զօրաւորներն ու առողջները կ'ապրին: Անըպաստ միջավայրի մէջ ինկածները, տկարներն ու անզօրները քաղահան կ'ըլլան ու կը կորսուին: Բնութիւն երբէք քառս մը չէ: Միութիւն մը կայ տիեզերքի բոլոր բներեւոյթներուն մէջ որուն եթէ վերահասու ըլլանք, բնութիւն մեզ քառս մը, հակասութեանց կոյտ մը չի պիտի երեւի. աւելի բարձր խոր ներհայեցութիւն մը պիտի ունենանք իրերու ընդհանուր կարգ ու սարքին մէջ, մեր նոյնութիւնը աւելի լաւ պիտի ըմբռնենք բնութեան հետ եւ աւելի

լաւ պիտի կարողանանք ինզքինքնիս կառավարել:

Հիմա, պատանինե՛ր, դուք արբունքէն առաջ անհոգ մանուկներ էիք, նորափթիթ ծաղիկներուն եւ կատուի ուրախ, չարածճի ձագերուն պէս: Ձեր այս արբունքի տարիքին մէջ ալ եղած էք մարդ եւ ընդունակ էք սերունդ արտադրելու մեծ ձուկերուն, թըռչուններուն ու կատուներուն պէս: Ասիկա ձեր կեանքին մէջ մեծ դէպք մըն է բաց եւ Ֆիզիքական եւ հոգեկան արագ փոփոխութիւններու, անհաստատ բընաւորութեան փափուկ շրջան մըն է որուն մէջէն պէտք է զգուշ ըլլաք որ ապահով կերպով անցնիք:

Ստորին կենդանիներուն մէջ կեանքի բոլոր չափազանցուածները համեմատաբար շատ պարզ են ու գրեթէ մեքենական ճշտութեամբ ժամանակին կը կատարուին շնորհիւ կենդանիի սուր բնազդներուն: Մարդուն մէջ այդպէս չէ: Մարդ ուղեղ, ջրային բարդ կազմուածք մը ունի: Ասոր համար անոր կեանքի չափազանցուածները աւելի բարդ են, անոր զարգացումը աւելի երկար ժամանակ կ'առնէ ու աւելի տաժանագին է: Փոխանցման շրջանները աւելի փոթորկալից են ու խորունկ չեղաշրջումներ առաջ կը բերեն անոր բնութեան մէջ, հետեւաբար աւելի վտանգաւոր են: Շնորհիւ իր զարգացած ուղեղին, մարդ կենդանիներու շատ մը նախնական բնազդներ կորսնցուցած է եւ իր բանականութեան պիտի ապակնի կեանքի շատ մը դործողութիւնները կատարելու համար: Ասոր համար է որ մարդկային երեխան ամենէն անօգնական արարածն է մինչեւ կ'ըլլայ 15 կամ 18 տարեկան: Այս է պատճառ որ մարդ աւելի պէտք ունի ուսման եւ գիտութեան ինք-

դինք կառավարելու համար: Տգիտութիւն մարդուն մէջ շատ աւելի աղիտաբեր է քան միւս արարածներուն մէջ:

Դուք այս տարիքին մէջ Ֆիզիքական փոփոխութիւններու հետ միասին պիտի ունենաք նաեւ հոգեկան փոփոխութիւններ: Պիտի ունենաք անորոշ, անհասկնալի իղձեր եւ զգացումներ: Շատ դիւրագրգաց էք հիմա եւ հակամէտ չոտետեսութեան: Կարելի է պիտի կարծէք աշխարհը գլխիվայր դարձած է ու անիկա հակասութիւններով, սխալներով եւ ամէն տեսակ անարդարութիւններով ու ցաւերով լեցուն է: Հանգիստ թողէք աշխարհը ու այդպիսի մտածութիւններու շատ անձնատուր մի ըլլաք: Այդ տեսակ տխուր, չոտետես խորհրդածութիւններ աշխարհը բարեկարգելու մազաչափ չեն օգնէր: Յետոյ, վերջը պիտի տեսնէք որ աշխարհը այնքան ալ գէշ չէ որքան դուք կը կարծէք: Բաւական լաւ աշխարհ մըն է ան:

Այս տարիքին մէջ դուք նաեւ շուտ տպաւորուող ու դիւրահաւան կ'ըլլաք: Ձգոյշ եղէք, ամէն մարդու, ամէն բանի մի հաւատաք: Ընկերներու եւ մարդոց պիտի հանդիպիք որոնք ձեզ տարօրինակ, կարելի է գալթակղեցուցիչ բաներ պիտի պատմեն: Կարելի է ոմանք ձեզ պիտի ըսեն մարդիկ բոլոր անբարոյ, սրիկայ են. նոյնպէս անբարոյ են ձեր հայրն ու մայրը եւ իրենց հայրն ու մայրը: Երբէք մաքուր, բարոյականի տէր մարդ չը կայ աշխարհի վրայ, ոչ ալ մաքուր կին կայ: Կիներ բոլորը խաբեբայ, կախարդիչ օձեր են: Ասոնք չիմար խօսքեր են որոնց հեղինակը կամ տխմար մըն է եւ կամ ախտաժէտ հոգիի տէր



մէկ մը որ կը ջանայ ձեր մէջ կեանքի մասին տգեղ, վատ ըմբռնում մը մտցնել: Ոչ ձեր հայրն ու մայրը անբարոյ, սրիկայ են եւ ոչ բոլոր մարդիկ ու կանայք: Ձեր հայրն ու մայրը բարոյականի տէր, պարկեշտ մարդիկ ու կիներ են որոնք բնութեան իրենց սահմանած մէկ մեծ ու վսեմ պաշտօնն է որ կը կատարեն: Երբէք անբարոյ եւ ամօթալի բան մը չը կայ անոր մէջ: Ժամանակ պիտի դայ երբ դուք ալ պիտի կատարէք կենդանական եւ հոգեկան տնտեսութեան այդ վսեմ պաշտօնը:

Կարելի է ուրիշներ ալ ձեզ պատմեն այն գիշերային սերմնահոսութիւնները, որոնք դուք սկսած էք ունենալ, խիստ վնասակար դործողութիւններ են: Պիտի ըսեն ձեզ ձեր կորսնցուցած հեղուկի ամէն մէկ կաթիլը քառասուն կաթիլ արեան ուժ ունի, ուստի եթէ անկէ տաս կաթիլ կորսնցնէք չորս հարիւր կաթիլ արեան ուժ կորսնցուցած կ'ըլլաք եւ այլն: Բնաւ մի հաւատաք ատոր: Ատիկա բոլորովին անվնաս, բնական դործողութիւն մըն է որ ամէն մարդու մէջ ամիսը մէկէն մինչեւ հինգ անգամ տեղի կ'ունենայ: Ձեր կորսնցուցած հեղուկը երբէք այդքան մոգական ուժ չունի եւ դուք բժիշկի մը գիմեցէք միայն այն ատեն երբ շարաթը մէկ անգամէն աւելի, երկու երեք, կամ հինգ վեց անգամ սերմնահոսութիւն կ'ունենաք:

Կարելի է ոմանք ալ ճիշդ ասոր հակառակը պընդեն: Պիտի ըսեն խիստ վնասակար է որ սերմը ներս մնայ, պէտք է դայն շուտ շուտ պարպել Ֆիզիքական եւ հոգեկան գրիռներու օգնութեամբ: Կարելի է նոյն իսկ ձեռնամուրթեան դործնական օրինակ տան ձե-

ղի եւ փորձեն ձեզ այդ ունակութիւնը սորվեցնել: Ասոնց տեղեկութիւններն ալ բոլորովին սխալ են եւ վտանգաւոր ու աւելի լաւ է այսպիսիներէն փախչիք ինչպէս թունաւոր օձերէ: Անոնք չարամտօրէն կամ չիմարարար ձեր կեանքը պիտի փճացնեն եթէ անոնց մտիկ ընէք: Ձեռնամուրթիւն դուք տեսաք որ բոլորովին աննօրմալ դործողութիւն մըն է եւ վերին աստիճան վնասակար է մարմնին, մտքին եւ հոգիին միանգամայն: Կրնայ ըլլալ ձեզմէ ոմանք ինքնարեւարար այս փորձութեան մէջ ինկած են արդէն քանի մը անգամ մինչ այս գիրքը կը կարդան: Եթէ այդպէս է, թող անմիջապէս դադրեցնեն սոյն վատ ունակութիւնը: Անշուշտ ըսել չեմ ուզեր անոնք որ մէկ երկու անգամ այս փորձութեան մէջ ինկած են հոգով եւ մարմնով կորսուած են եւ փրկութիւն չը կայ անոնց համար: Թող մահու չափ չը վախնան այդպիսիները մինչ այս տողերը կը կարդան: Կարելի է իրենց մէկ երկու սխալի վատ հետեւանքները դարձանել եթէ միայն չոտի ունակութիւնը իսկոյն դադրեցնեն ու ալ երբէք չը շարունակեն: Եթէ շարունակեն, անիկա անշուշտ շատ չանցած գիրենք դէշ կերպով պիտի վնասէ:

Գիտէ՞ք ինչու ձեռնամուրթիւնը վնասակար է, աւելի վնասակար քան վաղաժամ եւ չափազանց նօրմալ սեռային շարքերութիւնը, մասնաւորապէս ձեզ համար: Որովհետեւ, նախ՝ դուք դեռ տհաս էք ու ըման կերպով հասունցած չէք: Ծիշտ է, դուք հիմա եղած էք մարդ եւ ընդունակ էք սերմ արտադրելու, այսուամենայնիւ, այդ չի նշանակեր լաւ հասունցած էք եւ ընդունակ էք սեռային դործունէութեան սկսե-

լու: Դուք պէտք է դեռ եւս սպասէք մինչեւ լաւ մը հասուննաք մարմնով ու հոգով: Ա՛րդ, երբ դուք ձեր ծննդական ու ջղաչին գործարանները իրենց հասունութենէն առաջ գործածէք ու պաշտօնի կոչէք, անոնք անշուշտ աճելէ ու հասուննալէ պիտի դադրին եւ ատոր հետ մէկտեղ պիտի կասի նաեւ ձեր հոգեկան ու մարմնական ընդհանուր զարգացումը: Ես արդէն ասկէ առաջ ըսած եմ որ սեռաչին դրութիւնը հզօր ազդեցութիւն ունի մտաւոր եւ մարմնական տնտեսութեան վրայ: Անոր անժամանակ ու շարաչար գործածութիւնը աննպաստ կերպով պիտի անդրադառնայ ուղեղին եւ ընդհանուր Ֆիզիքական կազմը աւճեցնի վրայ:

Երկրորդ՝ ձեռնաշարժութեան գործողութիւնը չաճախակի կրկնելու համար շատ աւելի դիւրութիւն եւ չարմարութիւն կայ քան նօրմալ սեռաչին մերձաւորութեան համար: Յետոյ՝ այս ունակութիւնը շատ կը նմանի գինի խմելու կամ օփիում ուտելու ունակութեանց: Երբ մէկ մը անգամ մը այս գործողութեան փորձառութիւնը կ'ունենայ, ճիշդ գինովութեան պէս անով կը բռնուի եւ զօրաւոր հակամիտութիւն կ'ունենայ չաճախ կրկնելու դաշն. իսկ անոր չաճախակի կրկնումը հասկնալի է որ աւելի վնասաբեր ու աղիտալի կը դառնայ:

Երրորդ՝ ձեռնաշարժութեան մէջ ջղաչին դրութիւնը, միտքը աւելի շատ կը վնասուի քան չափազանց նօրմալ սեռաչին չարաբերութեան մէջ: Ձեռնաշարժութեան մէջ մտքի գործունէութեան խոշոր բաժին մը կ'իջնայ: Ձեռնամուրը պէտք է իր երեւակալութիւնը սաստիկ լարէ իր աչքի առաջ ամէն տեսակ

հեշտասիրական ու տուխական պատկերներ բերելու համար: Երեւակալութեան բռնի ու շարաչար դործածութիւնը խիստ կործանարար կերպով կ'ազդէ ուղեղին եւ ընդհանուր ջղաչին համակարգութեան վրայ: Ասոր համար է որ հոգեկան դիճութիւնը համաձայն շատ մը բժիշկներու վկայութեան՝ աւելի վնասակար է քան թէ Ֆիզիքականը: Այս վատ ազդեցութիւնը աւելի սաստիկ կ'ըլլայ երբ մէկ մը ջղաչնոտ ու դիւրագրգիռ բնաւորութիւն ունի:

Չորրորդ՝ նօրմալ սեռաչին չարաբերութեան մէջ գործողութիւնը նօրմալ կերպով կը վերջանայ եւ մարդուն բաւականութիւն կուտայ, որովհետեւ, իր երազներու, երեւակալութեան առարկան ներկայ է: Մարդն ու կին զիրար կը դգուեն եւ իրարու հոգեկան մեծ հաճոյք կուտան: Ձեռնաշարժութեան մէջ այդպէս չէ, ուստի ձեռնամուրը ամենեւին չի ստանար շիտակ բաւականութիւնը: Ձեռնամուրը ինքը կ'զգայ որ գործողութիւնը աննօրմալ ու ստորնացուցիչ է ու այդ գիտակցութիւնը աւելի կը սաստկացնէ իր դժգոհութիւնը, ստորնութեան զգացումը: Ան իր գլխին չանդիմանութիւններ կը տեղայ իր վատ արարքներուն համար ու այդպէս ալ աւելի կը սաստկացնէ իր հոգեկան տանջանքը: Ահա, այս պատճառներով եթէ ձեռնամուրութեան ունակութեամբ բռնուիք եւ դաշն շարունակէք, մտքով եւ մարմնով պիտի քայքայուիք եւ դառնաք կատարեալ ջլախտաւորներ ու դիւրին որս մը այլեւալ տեսակ հիւանդութեանց:

Պատմեմ ձեզի թէ ինչպէս կրնաք սոյն մուրութեան հակումը ձեզմէ հեռու պահել: Նախ եւ առաջ

մեծ խնամք տարէք ձեր Ֆիզիքական մաքրութեան: Երբ կ'ըսես Ֆիզիքական մաքրութեան հոգ տարէք, ըսել չեմ ուզեր միայն մարմնի մակերեսը մաքուր պահեցէք հասպա նաեւ մարմնի ներսը, արիւնը: Ամենօրեայ սառն լողանքներէն դատ, որի մասին վերջը աւելի մանրամասն պիտի խօսիմ, շարաթը քանի մը անգամ տաք ջուրով լողանք առնելու էք եւ ձեր մարմինը լաւ մը մաքրելու էք մինչեւ որ քաղցր ու անուշ հոտ մը բուրէ անկէ: Հակառողջական է, ամօթ է մարմինը անխնամ պահել եւ թողուլ որ անոր վրայ աղտոցութիւններ հաւաքուին ու այդպէս անախորժ հոտեր բուրեն անկէ: Երբեմն ես կը հանդիպիմ հիւանդներու որոնց մարմինները այնքան անմաքուր են, այնքան թանձր աղտեր կուտակուած են անոնց զանազան մասերուն վրայ որ մարդ ուզողակի կը զըզուի: Մորթը ծակոտակէն գործարան մըն է որ կը ծառայէ ոչ միայն իրրեւ մարմնի ծածկոցի հասպա նաեւ կը կատարէ թոքի պաշտօն: Անոր ծակոտիներու միջոցով քրտինքի ձեւով շարունակ խոնաւութիւն եւ մաշուած նիւթեր, թոյներ դուրս կ'ելլեն մարմնէն: Իւրաքանչիւր օր մէկ լիտր խոնաւութիւն եւ թոյն կ'արտաքսուի մարդու մարմնէն այս կերպով: Եթէ մարդու մը ամբողջ մորթը կակուղ թիթեղով լաւ մը ծածկենք, անիկա կարճ միջոցէ մը պիտի մեռնի ներս մնացած թոյներուն պատճառաւ: Երբ մարդ իր մորթը անլուայ կը թողու, այդ պատճառաւ քրտինք եւ աղտոցութիւններ մորթին վրայ հաւաքուելով անոր ծակոտիները կը գոցեն, ի՞նչ տեղի կ'ունենայ: Կուտակուած աղտը կակուղ թիթեղի դերը կը կատարէ ու չի թողուր որ մարմնէն խոնաւութիւն եւ թոյ-

ներ դուրս ելլեն: Թոքերու եւ երիկամներու գործը կը ծանրարեռնուի, թոյները կը մնան մարմնին մէջ ու այդպէս արիւնը կ'ապականեն: Ընդհակառակն, երբ ան իր մորթը լուացուած, մաքուր վիճակի մէջ կը պահէ, անոր ծակոտիները լայն կը բացուին, քրտինքի գեղձերը գործօն վիճակի մը մէջ կը մտնեն, մորթը լաւ կը շնչէ ու այդպիսով արիւնը կը մաքրուի եւ ջիւղերը կը զօրանան:

Ամէն առաւօտ ձեր լողանքի եւ լուացումի ժամանակ պէտք է տաք ջուրով եւ օճառով զգուշութեամբ մաքրէք նաեւ ձեր սեռային գործարանները եւ չը թողուք որ աղտեր հաւաքուին, օրինակ, թըլիփին տակ, կամ ամորձիներու մորթին ծալքերուն մէջ: Աղտոտութիւն միշտ ու ամէն տեղ զգուշի չատկութիւն մըն է որ ոչ միայն կեանքը պփռալի կը դարձնէ այլեւ գործնականապէս շատ մը հիւանդութիւններու դուռը կը բանայ: Երբոր սեռային գործարաններ աղտոտ կը մնան, այդ պատճառաւ անոնց մէջ գրգիռ ու խոնաւութիւն առաջ կուգան, ի՞նչ կը պատահի: Ձեր ուշադրութիւնը կը դառնայ անոնց վրայ եւ այդ ձեզ պատճառ կուտայ որ դուք դրդուած գործարանները ձեռնէք եւ ապա փորձութեան մէջ իջնաք: Ընդհակառակն, երբ անոնք մաքուր, չոր ու զով կը մնան դուք խաղաղ միտք կ'ունենաք եւ ձեր ուշադրութիւնը երբէք անոնց վրայ չի դառնար: Անոնք որ նեղաթլիփութիւն ունին լաւ է որ իրենց բժիշկին դիմեն ու թլփատուին: Ասիկա խիստ պիտի նպաստէ իրենց մարմնի կանոնաւոր մաքրութեան:

Արիւնը մաքուր պահելու համար ապա դուք

պէտք է ձեր աղիքները միշտ լոյծ ու բաց վիճակի մէջ պահէք եւ գրգռիչ կերակուրներէն ու ըմպելիներէն հեռու մնաք: Մի գործածէք մանանեխ, չափազանց պղպեղ, ուրիշ գորաւոր համեմներ, սուրճ թէյ, խոզի միս, սօտայով եւ այլ գրգռիչ նիւթերով շինուած հարկւրաւոր խմելիքները: Ասոնք բոլորը ձեր ջիղերը պարաստ անպիտի գրգռեն եւ սեռային ցանկութիւնն ու զգացումները արթնցնեն: Կերակուր որքան պարզ ըլլայ այնքան լաւ է: Պարզ, մաքուր ջուրը ամենէն անվնաս, ամենէն լաւ ըմպելին է որմէ առատօրէն ամէն օր խմելու էք:

Երբէք մի գպչիք մանաւանդ, մանաւանդ ալիօձօլի: Ասիկա արիւնը թունաւորող, միտքն ու սեռային զգացումները գրգռող ամենակարող նիւթ մըն է: Վստահարար կարելի է ըսել անբարոյ կենցաղի, սեռային չափազանցութեանց եթէ ոչ մեծագոյն մասը, գէթ շատ խոշոր մաս մը արդիւնքն է այս նիւթի գործածութեան: Իրաւունք ունէին հիները երբ կ'ըսէին. «Մի նայիր գինիին կարմրութեան, անիկա ետքը օձի պէս պիտի խածնէ ու քարբի պէս պիտի խայթէ, չետոյ աչքերդ օտար կանանց պիտի նային եւ սիրտդ ծուռ բաներ պիտի խօսի: Մի արբենաք գինով որուն մէջ անառակութիւն կայ»: Անառականոց պահողները լաւ տեղեակ են անոր ազդեցութեան երբ իրենց անառականոցներուն կից միշտ գինետուններ կը պահեն: Անոնց չաճախորդները նախ գինետուն կը նըստին եւ ապա ներս կ'երթան այն ատեն երբ ալիօձօլը իրենց միտքը զուարթացուցած, կամքը թուլցուցած եւ սեռային ցանկութիւնը սաստիկ գրգռած է:

Իրիկուններ ուչ ատեն մի ճաշէք եւ ճաշէն ան-

միջապէս չետոյ քնանալու մի երթաք: Ուտելէն դունէ երեք կամ չորս ժամ վերջ դացէք անկողին: Երբ ծանր ու գրգռիչ ճաշ մը առնելէն վերջ շուտով անկողին կ'երթաք, ձեր երակները առատ արեամբ եւ գրգռիչ նիւթերով լեցուած կ'ըլլան: Այդ պատճառաւ ուղեղ գործօն վիճակ մը կ'ունենայ եւ ջիղերն ալ շատ զգայուն կ'ըլլան: Այս վիճակին մէջ ենթակայ պիտի ըլլաք անքնութեան ու երազատեսութեան որոնք ձեզ փորձութեան պիտի առաջնորդեն:

Լեցուն փամփուշտով անկողին մի երթաք: Մի գափամփուշտը միշտ պարպեցէք չետոյ անկողին դացէք: Երբ միգափամփուշտ լեցուն է, սերմնաբշտիկներ կ'ենթարկուին ճնշման ու այդ բան կ'առաջացնէ սեռային գրգռութիւն եւ առնանդամի լարում: Ասոր համար է որ առաւօտներ երբ միգափամփուշտը լեցուած է, առնանդամի լարում կ'ունենանք:

Չափազանց կակուղ անկողիններու վրայ մի քրնանաք եւ շատ թանձր վերմակներով մի ծածկուիք: Այնպէս ըլլալու է ձեր անկողինը որ զով ու հանգիստ կերպով քնանաք մէջը: Չափազանց տաքցած մարմինը խիստ դիւրագրգիռ կ'ըլլայ ու այդպէս հակամիտութիւն կ'ունենայ փորձութեանց մէջ ինչնալու: Անկողինը պէտք չէ այնպէս ըլլայ որ մարդ մէջը խրուի եւ կորսուի: Պէտք է ան պինդ եւ հաստատուն ըլլայ այնպէս որ մարդ առանց անոր մէջ փոս չինելու քնանայ եւ հանգիստ դառնայ: Այս տեսակէտէն փետուրէ անկողինները երբէք լաւ չեն. մազէ անկողիններն ամենէն լաւն են:

Կոնակի վրայ մի քնանանք: Սորվեցէք միշտ ձեր աջ կողմին վրայ քնանալ: Երբ կոնակի վրայ կը

պատկիրք, արիւնը կը խուժէ մէջը ուղեղին մէջ, այդ պատճառաւ աչն տեղ գտնուող սեռական գործարաններու ջղալին կեդրոնը կը գրգռուի եւ դուք կ'ունենանք սեռալին գրգռութիւն եւ աննօրմալ սերմնահոսութիւն:

Այս բոլոր մարմնական կանխազգուշութիւններէն չետոյ կրնաչ ըլլալ նորէն սեռալին գրգռում ունենաք: Երբ այդպէս կը պատահի, գացէք անմիջապէս ձեր սեռալին գործիքը պաղ ջուրի մէջ դրէք քանի մը բոպէ: Այդպէս ըրէք ամէն անգամ երբ գըրգըռում կ'ունենաք եւ կը վախնաք փորձութեան մէջ պիտի իջնաք: Պաղութիւն շուտով ձեր գրգռումը պիտի վանէ, որովհետեւ, ընթարմացնող ազդեցութիւն ունի անիկա ջիղերուն վրայ:

Արգարեւ՝ այս տեսակէտէն շատ ընտիր, նախազգուշական միջոց մըն է ամէն օր, մանաւանդ ամառուան տաք եղանակին, պաղ ջրով լողանք անելը: Պատուական վարժութիւն մըն է աչս որ մէկէ աւելի օգուտներ ունի: Նախ եւ առաջ անիկա տաքցած, գրգռուած մարմինը կը գովացնէ եւ կը հանդարտեցնէ, այդպիսով բաւական երկար ատեն ազատ կը պահէ մարդ սեռալին գրգռութենէ: Երկրորդ՝ մորթը մաքուր պահելով գործօն վիճակի մէջ կը գնէ ու արեան մաքրութեան կը նպաստէ: Երրորդ՝ արեան շրջանառութիւնը զօրացնելով կը նըպաստէ ամբողջ մարմնի բարելաւութեան եւ առողջութեան: Սիրար ուժով կը գործէ, ստամոքսը լաւ կը մարսէ, գեղձերը գործօն վիճակի մը մէջ կը մըտնեն եւալն:

Պաղ ջրով լողանք առնելու գանազան կերպեր

կան: Կարելի է առնել աչն թաց լաթով մը շիուելով, ցօղացիրով, ուղղակի ջրին մէջ ընկղմելով: Լաւ է տաք եղանակի մէջ սկսիլ աչն միջնէն մարդկամաց կամաց վարժուի անոր: Ամենէն դիւրին, քիչ ջղալին ցնցում պատճառող կերպն է թաց լաթով շիուելը: Կարելի է աչս կերպով սկսիլ լողանքը, չետոյ աստիճանաբար անցնիլ միւսներուն: Պաղ եղանակի մէջ երկար ատեն մնալու չէ ջրին մէջ: Մէկէ միջնէն երեք բոպէ մնալու է յետոյ դուրս ելլելէն վերջ հաստ սրբիչով մը մորթը լաւ մը չորցնելու եւ շիուելու է միջնէն որ ան սկսի տաքնալ եւ կարմրիլ: Երբ աչս հակազդեցութիւնը դաչ մարդ թարմ եւ առօրէ կը դաչ: Տաք եղանակի մէջ կարելի է աւելի երկար ատեն մնալ ջուրին մէջ: Երբ մէկ մը ջուրին մէջ եղած ժամանակ կ'սկսի կապուտնալ, անմիջապէս դուրս ելլելու է անկէ: Այդ կը նշանակէ պաղութեան չի կրնար դիմանալ, անոր հակազդելու ուժ չունի:

Սորվեցէք նաեւ միշտ պաղ, լաւ հովահրուած ննջասենեակի մէջ քնանալ: Շատ գէշ ունակութիւն մըն է տաք, անշարժ միջնոլորտի մէջ քնանալը: Ինչպէս արդէն քանի մը անգամ ակնարկած եմ, տաքութիւն մարդ մեղկ ու դիւրագրգռու կը դարձնէ: Ասոր համար է որ տաք երկիրներու մարդիկ դիւրագրգռու եւ տաքարիւն կ'ըլլան: Պաղ օդը մաքուր կ'ըլլայ եւ գրգռուած ջիղերն ու սեռալին զգացումները կը հանդարտեցնէ: Յուրտ երկիրներ ապրող մարդիկ պաղարիւն կ'ըլլան: Կը պատմեն Քրանսական խորհրդարանին մէջ ցուրտ սենեակ մը կայ: Երբոր երեսփոխաններէն մէկը կ'սկսի գրգռուիլ ու տաքնալ խսկոցն դաչն աչք ցուրտ սենեակը կը տանեն եւ կէս ժամի

չափ կը բանտարկեն անտեղ: Մարդը պաղ օդին մէջ զովանալէն չետոյ կ'սկսի հանդարտիլ եւ իր պաղարիւնութիւնը վերստանալ: Ամառ ձմեռ, ձեր ննջասենեակի պատուհանները վերի կողմէն լաջն բացէք եւ սորվեցէք մաքուր օդ շնչել: Յուրտէն երբէք մի վախնաք: Թող ձիւնը նոցն իսկ փչէ ձեր երեսին վըրայ: Միայն ցուրտ եղանակի մէջ բրդէ տաք վերմակներով լաւ ծածկուելու եւ պաշտպանուելու էք: Ամառ ատեն եթէ չարմարութիւն ունիք, դուրսը, բաց օդին մէջ քնացէք:

Մաքուր օդը կեանք է: Արիւնը մաքրելու, ջիւղերը զօրացնելու եւ հանդարտ վիճակի մէջ պահելու ամենէն գերազանց, ազդու միջոցը: Անձրեւը ինչպէս պապակած, թառամած բոյսին զուարթութիւն եւ կենդանութիւն կը պարգեւէ, մաքուր օդն ալ անպէս մարմնի ընթարմացած, կիսամեռ բջիջներուն, տկարացած ու դիւրագրգիռ ջիւղերուն զուարթութիւն ու կենդանութիւն կը շնորհէ: Անիկա արիւնը թոքերուն միջոցով մաքրելով՝ սրտին ուժ կուտայ, բոլոր գեղձերը գործօն վիճակի մէջ կը դնէ, ախորժակը կը սրէ, մարսողութիւնը կը զօրացնէ, լաւ քուն կը բերէ եւ ուղեղին ու ամբողջ ջրդալին դրութեան զուարթութիւն եւ թարմութիւն կուտայ, ուրիշ խօսքով, մարդու ամբողջ հոգին կը բարձրացնէ: Մաքուր օդի ձեզ անպէս վարժեցուցէք որ ալ երբէք չը կրնաք հանդուրժել դարչահոտ մթնոլորտի: Երբ դուք միշտ մաքուր, պաղ օդի մէջ քնանաք, ան ատեն պիտի ըլլաք առողջ, ամուր ջիւղերու տէր երիտասարդներ ու ալ դիւրագրգիռ չի պիտի ըլլաք:

Երբ կը գտնէք ձեր սեռային զգացումները բաւական զօրաւոր են ու դժուար է գանոնք զսպել, ինքզինքնիդ մտաւոր եւ ֆիզիքական լուրջ աշխատանքի տուէք: Կարգացէք կենսազրական, պարզ դիտական, առողջապահական, բնական պատմութեան վերաբերեալ գործեր: Երբ մ'լտքերնիդ միշտ զբաղուած պահէք այս տեսակ առարկաներու ուսումնասիրութեամբ, ան ատեն ձեր ուշադրութիւնը սեռային խնդիրներէն մէկիդ պիտի դառնայ եւ ձեր հեշտասիրական զգացումները պիտի պաղին: Շատ ազդեցիկ են այս տեսակէտէն մասնաւորապէս տրամաբանական դիտութիւնները, ինչպէս մաթեմատիկա: Իսահակ Նեւտոնի համար կը պատմուի ինք երբէք իր կեանքին մէջ սեռային մերձեցում ունեցած չէ եւ ան չէր գիտեր ինչ ըսել է սեռային գրգռութիւն: Եղած են ուրիշ մարդիկ ալ որոնց սեռային զգացումը ճշնջրուած ու գրեթէ բոլորովին ջնջուած է շնորհիւ մաթեմատիկական լուրջ աշխատութիւններու:

Ամէն տեսակ մարմնամարզութիւն ու ֆիզիքական աշխատութիւն ալ սեռային գրգռութիւնը վանելու պատուական միջոց մըն է: Շատ պարզ է ասոր փիլիսոփայութիւնը: Մարդկային մարմինը որոշ չափով ուժգնութիւն միայն կրնայ արտադրել: Երբոր անց ուժգնութիւնը մէկ ուղղութեամբ շատ կը գործածենք ալ ուրիշ բաներու համար քիչ կը մնայ անկէ: Սեռային գործողութիւններու համար ալ մեզմէ ուժգնութիւն կը վատնուի եւ չաճախ մեծ ուժգնութիւն: Երբոր մտային ու մկանական գործունէութեանց համար շատ ուժգնութիւն կը վատնենք, ալ սեռային գործունէութեան համար շատ քիչ ուժգր-

նութիւնն կը մնայ: Հակադարձաբար, երբ սեռային գործունէութեան համար մեծ ուժգնութիւն կը վատնենք, ալ մտաւոր ու Ֆիզիքական գործունէութեանց համար քիչ ուժգնութիւն կը մնայ: Երբ սեռային գործունէութեան մէջ ծայրացեղութեան կ'երթանք, արդէն մարմնով ու մաքով կը տկարանանք ու կ'ըլլանք անզոր: Ասոր համար է որ կուփամարտիկներ, ըմբիշներ եւ բոլոր մարզիկներ, ինչպէս նաեւ գիտական եւ գեղարուեստական լուրջ պարաօմունքներով զբաղող մարզիկ համեմատաբար սեռական շատ բարեխառն, նոյն իսկ սառն ընաւորութեան տէր անձեր կ'ըլլան:

Յետոյ, պատանիներ, սեռային փորձութիւններէն ասլահով մնալու համար դուք ոչ միայն ձեր մարմինը պէտք է մաքուր պահէք այլ եւ միտքը: Միտքը ասպին ազդեցութիւն ունի մարմնական բոլոր գործողութիւններուն վրայ իսկ սեռային գործողութիւններուն վրայ մասնաւորապէս՝ ան հզոր, գերիշխող ազդեցութիւն մը ունի: Զօրաւոր հազորդակցութիւն մը կազ մտքին ու սեռային գործարաններուն միջեւ, այնպէս որ մի միայն երեւակայութեան գործութեամբ կարելի է զանոնք շարժման մէջ դնել եւ առաջ բերել օրգազմ ու անոր ընկերակցող ամէն մէկ մարմնական փոփոխութիւնը: Անմաքութիւն որքան զգուելի է Ֆիզիքական կեանքի մէջ, նոյնքան եւ աւելի զգուելի է մտաւոր ու հոգեկան կեանքի մէջ: Ես վստահաբար պիտի ըսեմ անմաքութիւնն է պատճառը ոչ միայն շատ մը Ֆիզիքական հիւանդութիւններու եւ խօթութիւններու հասլա նաեւ ընկերային հազար ու մէկ չարիքներու եւ անբարոյ կեն-

ցաղի: Որովհետեւ, խորհուրդներ մարդու կեանքին մէջ ազդեցութեան խիստ լայն, տարածուած շրջան մը ունին: Խորհուրդներն են որ մեզ ամէն բոլորին աչս ու աչն զործին կը մղեն, աչս ու աչն արարքներէն եւ կը պահեն: Խորհուրդներն են որ մեզ հեռատեսել, կանխատեսել, ասպազային համար ծրագիրներ կազմել կուտան եւաչն: Այդպէս չէ կենդանիներուն մէջ: Անոնց կեանքը շատ պարզ է: Բնազդներով եւ քանի մը պարզ գրգիռներով է որ անոնք իրենց կեանքը մեքենական կերպով առաջ կը տանեն: Միտքը, որու ամենարարձր արտայայտութիւնն է կամքը, գերազանցօրէն առաջնորդողի, վերահսկողի պաշտօնն ունի: Ասոր համար է որ երբ մարդու մը միտքը կը խանդարուի, այդ մարդը անասուններու աստիճանին իջնելու չափ կ'ստորնանայ: Արդ, երբ մարդու մը միտքը, խորհուրդները առողջ են ու մաքուր, այդ մարդու վարքը լաւ կ'ըլլայ ու մաքուր: Երբ անոր խորհուրդները վատաւողջ են ու անմաքուր, այդ մարդու կեանքն ալ վատաւողջ կ'ըլլայ ու անմաքուր: Մարդու մը միտքը, խորհուրդները ինչ որ են անոր կեանքն ալ աչն կ'ըլլայ: Հիմա, ի՞նչ ըսել կուզեմ երբ կ'ըսեմ մտքերնիդ մաքուր պահեցէք: Ի՞նչ է մտքի մաքրութիւն: Ըսել կուզեմ հիւրընկալեցէք աչն խորհուրդներ միայն որոնք ձեր եւ ուրիշներու երջանկութեան, բարօրութեան կը նըպաստեն: Մի հիւրասիրէք խորհուրդներ որոնք ձեզ եւ ուրիշներուն տհաճոյ են եւ վնասակար: Ուրիշներու հանդէպ բարեացակամ, գեղեցիկ խորհուրդներ տաժեցէք: Ինչ խորհուրդներ որ նուաստ ու ազեղ են եւ եթէ ուրիշներ իմանալին մենք այդ տեսակ

խորհուրդներ կը տածէինք իրենց հանդէպ պիտի ամ-  
 չընայինք եւ իրենք ցաւէին, երբէք մի թողուք ա-  
 պաստան գտնեն ձեր մտքին մէջ: Ինչ որ գեղեցիկ է,  
 ճշմարիտ է այն սիրեցէք: Տուրտու խորհուրդներ տը-  
 դեղ, անասնական են: Չանոնք մի հիւրասիրէք ձեր  
 մտքին մէջ, անոնք ձեզ ձեռնամուկութեան եւ ուրիշ  
 մոլութիւններու պիտի առաջնորդեն: Սէրը աւելի  
 բարձր պէտք է պահուի, երբէք այդպէս ստորնացը-  
 նելու չէ գայն: Մինչեւ իսկ ստոր անառակ աղջիկներ  
 աղնուարարոյ երիտասարդներ կը սիրեն. կոպիտ,  
 անասնաբարոյ երիտասարդներէն չեն ախորժիր:  
 Ինչո՞ւ համար մարդկային սէրը այնքան բարձր կը  
 դասենք, անհամեմատ աւելի վեհ է կենդանիներու  
 սերէն: Որովհետեւ, անոր մէջ հոգեկան սէրը շատ  
 մեծ տեղ մը կը գրաւէ: Երբ կնոջ վրայ այնպէս կը  
 նայինք, ինչպէս ստոր, վաւաշտոտ բնութեան տէր  
 մարդիկ կը նային, այն ատեն աշխարհի գեղեցիկու-  
 թենէն, բանաստեղծութենէն շատ բան կը պակսի:  
 Ամօթ է վաւաշտոտ ըլլալ: Ոեւէ պարկեշտ կին իսկոյն  
 խոտելի պիտի նկատէ այն մարդ որ ուրիշ կերպով չի  
 նայիր իր վրայ բաց եթէ կենդանական զգացումնե-  
 րով: Միշտ աւելի գաղափարական, աւելի քնքուշ  
 զգացումներով նայելու էք կնոջ վրայ, մօտենալու էք  
 անոր: Կենդանական զգացումը պէտք է շատ վերջ  
 դաս: Ու ան պիտի դաս: Այդ մասին փութկոտ ըլլալ  
 ցոյց կուտայ անասնական բնաւորութիւն մը: Յիշե-  
 ցէք որ կինը ստեղծագործող մայրութեան վսեմ կո-  
 չումն ունի: Յիշեցէք որ ան տկար սեռին կը պատ-  
 կանի եւ կարօտ է ձեր պաշտպանութեան ու յար-  
 դանքին: Ուստի եղէք միշտ քաղաքավար ու ազ-

նըուարարոյ անոր հանդէպ:

Կարդացէք մի միայն ընտիր, մաքուր գրական-  
 նութիւն: Թող ձեր միտքը, մաքուր տան մէջ ապրած  
 մարդուն պէս որ ալ աղտոտութեան չի կրնար դի-  
 մանալ, մաքուր գրականութեան վարժուի, առողջ  
 գրքերով սնանի ու ալ երբէք չի կրնայ հանդուրժել  
 ստոր, աղտոտ գրականութեան: Կարող էք կարգալ  
 նոյն իսկ սեռային խնդիրներու վրայ, միայն ձեզ  
 յարմար, ուղիղ գիտական գործեր կարդացէք եւ ոչ  
 դարձելի, պոռնիկագրական վէպեր որոնք ձեր միտքը  
 պղտորելէն, ձեզ գրգռելէն զատ ուրիշ շնորհք չու-  
 նին:

Ստոր, անմաքուր նկարագրի տէր պատանինե-  
 րէն եւ երիտասարդներէն հետու կեցէք: Պատեհու-  
 թիւն գտէք չաճախ ձեզմէ աւելի կրթուած, բարձր  
 մարդոց ընկերակցութիւնը վայելելու: Միջավայրը  
 հզօր կերպով կ'ազդէ նկարագրին վրայ եւ կարծեմ  
 չափազանցութեան մէջ ինկած չենք ըլլար եթէ ը-  
 սենք մարդու մը ընկերակցութիւնը, միջավայրը ինչ  
 որ է ինքն ալ այն կ'ըլլայ: Միայն բացառիկ, հասուն-  
 ցած, զօրեղ բնաւորութեան տէր նկարագրներն են  
 որ իրենց միջավայրին վրայ իրենք կ'ազդեն մեծ չա-  
 փով մը ու բարեկարգիչի դեր կը կատարեն: Նոյն  
 իսկ ասոնք բոլորովին անհաղորդ չեն մնար իրենց  
 միջավայրի ազդեցութենէն:

Անմաքուր, տգեղ խորհուրդներ ոչ միայն ձեզ  
 այլեւայլ փորձութիւններու եւ մոլորութիւններու  
 պիտի առաջնորդեն այլեւ պիտի աւրեն ձեր իսկ ա-  
 ռողջութիւնը, դէմքը: Մաքուր միտքը մարմինը կա-  
 ռավարող ջղային կեդրոնները անաղարտ պահելով



խիստ կը նպաստէ Ֆիզիքական բոլոր գործողութեանց պատշաճ կատարումին: Արդարեւ ամենաէական պաշտան մըն է ասոր համար: Բոլոր տղեզ մըտքերն ու յոյզերը կործանարար կերպով կ'ազդեն ուղեղին ու ջղային ընդհանուր դրութեան վրայ: Այդ պատճառաւ երբ մարդ վատ մտքերով եւ տղեզ չտղերով կը սնանի իր մարմնական բոլոր գործողութիւնները կը խանգարուին: Մենք բոլորս գիտենք նախանձի եւ ատելութեան ազդեցութեան տակ ընդհանուր մարմնական ուժն ու կայտառութիւնը ո՞րքան կը պակսին: Ինչպէս սիրաբանական կը գործէ, մասնագործութիւնն ու դաստիարակութիւնը կը խանգարուին, դէմքը կ'ալակերպի, եւայլն: Տխրութեան ժամանակ մարմնական գործողութիւնները ո՞րքան կը ճնշուին: Մարդ ոչ ախորժակ կ'ունենայ ուտելու եւ ոչ ալ կերածը լաւ կը մարսէ: Սիրաբանական թուլ կերպով միայն կը գործէ, միտքը կը բխանայ, եւայլն: Այսպէս դէշ կ'ազդեն մարմնին նաեւ տրոփոտ, տղեզ խորհուրդները: Անոնք մարդ ջղայնոտ ու գիւրազրդիւ դարձնելով սրտի կանոնաւոր գործունէութիւնը կը խանգարեն, այդ պատճառաւ կը խանգարեն նաեւ մարմնական բոլոր միւս գործողութիւնները. արեան շրջանառութիւնը, մարսողութիւնը, լեարդի եւ բոլոր միւս մեծ ու պզտիկ գեղձերու գործունէութիւնը եւայլն: Քունն ալ կը խանգարուի մինչեւ ի վերջոյ ամբողջ մարմինը չտղնած, քայքայուած վիճակի մը մէջ կ'իջնայ եւ այն ատեն կը տղեղնան ամբողջ մարմնի կերպարանքն ու գիմաղձերը, որովհետեւ, ճշմարիտ գեղեցկութեան պայմանը աստիճանութիւնն է, բառին ամենալայն իմաստով. կայ-

տառ, կենսութիւն աստիճանութիւն եւ մտքի մաքրութիւն: Տոբոտ, տղեզ խորհուրդները այնքան վատահորէն դէմքը կը տղեղնեն որքան, օրինակ, փորոտութեան սարսափելի թոյնը: Դէմքը կատարեալ հաշիւի մըն է մտքին մէջ անցնող դարձող բոլոր խորհուրդներուն ու չոյզերուն: Ամէն մէկ պզտիկ միտքը, յոյզը իսկոյն կ'արտայայտուի ու կը գծագրուի դէմքին վրայ շնորհիւ մկանական շարժումներու: Երբ յոյզը, խորհուրդը տղեզ է, պատկերն ալ այն տեղ տղեզ կ'ըլլայ: Երբ անիկա գեղեցիկ է, անոր պատկերն ալ այն տեղ գեղեցիկ կ'ըլլայ: Ասոր համար է որ ձեռնամուկութեամբ բնուած, տափական երազներով սնած պատանիին դէմքը իր որոշ տղեզ պատկերն ունի որ չաճախ մէկ նաչուածքով կարելի է իսկոյն ճանչնալ: Ազդիկներ շուտ կը ճանչնան այդ տեսակ կերպարանք որ շատ խտտելի է անոնց աչքին: Անոնք համարձակ, կայտառ դէմքեր կը սիրեն:

Ձեր սրբութիւնը մինչեւ ամուսնութեան ժամանակ պահեցէք: Անոր հետ այնպէս մի վարուիք ինչպէս դուրս նետուելիք կտոր մը անպէտ թղթի: Անիկա իր որոշ արժէքն ունի եւ նկարագրիւր ձեւակերպելու, զարգացնելու մէջ հզոր դեր մը կը խաղայ: Երբէք, երբէք ապօրինի սեռային չարաբերութիւն մի ունենաք: Երբոր ձեր ընկերներէն ու բարեկամներէն ոմանք կը ջանան ձեզ համոզել որ ժուժկալութիւն վնասակար է, երբոր կը փորձեն ձեզ ճամբայ ցոյց տալ եւ անառականոցներ տանիլ, մի անսաք անոնց: Անոնք երբէք չեն գիտեր իրենց խօսքերուն եւ արարքներուն նշանակութիւնը: Ձեր մաքուր կեանքեր պիտի աւրեն եթէ անոնց մտիկ ընէք:

Բացարձակ ժողովուրդներն չի թուիր թէ ակնյայտ-  
նի կերպով միտքն ու մարմինը կը վնասէ: Մինչեւ  
քսանեւէորրորդ տարին, անիկա ըստ փորձառու բը-  
ժիշկներու վկայութեան՝ նկատողութեան արժանի  
ոեւէ վնասակար հետեւանքներ առաջ չի բերեր:  
Քսանեւէորսէն մինչեւ երեսունվեցերորդ տարին,  
կատարեալ առնական զօրութեան եւ սեռային ըն-  
դունակութեան տարիներ, կրնայ ըլլալ առաջ բերէ  
առողջ անձերուն մէջ քանի մը աննշան խոռվութիւն-  
ներ, ինչպէս ընդհանուր գրգռականութիւն, մեղ-  
կութիւն, ախոնդանոտ գաղափարներ եւ թեթեւ  
գլխի պտոցտ. ջղաչնոտ անձերուն մէջ մեղմադձու-  
թիւն, անձկոտ զգացումներ եւայլն: Բայց աչս հետե-  
ւանքները ընկերային շարիքներէն եւ վեներական  
ախտերէն ծագող վտանգներուն հետ համեմատելով  
այնքան չնչին են որ բացարձակ ժողովուրդներն եւ  
մաքրութիւն պէտք է պահուի մինչեւ ամուսնութեան  
թուականը: Եթէ դուք մեզ պէս վեներական ախտե-  
րով վարակուած, նաեւ ուրիշ ընկերային դժուար-  
ութիւններու մէջ ինկած հարիւրաւոր երիտասարդ-  
ներու Ֆիզիքական շարժարանքները, հոգեկան ու  
մտաւոր տանջանքները տեսնէիք, երիտասարդնե-  
րու, որոնք իրենց մաքրութեան հետ անհոգ կերպով  
վարուելով դաչն կտոր մը աղտոտ, անպէտ քուրջի  
պէս մէկդի նետեցին, մեզ բոլորովին իրաւունք պի-  
տի տալիք ժողովուրդեան եւ մաքրութեան պէտքը  
ազդու կերպով շեշտելուն համար: Իրաւունք չունի՞  
Վերա երբ կ'ըսէ. «Նս կարծեմ աղջիկ մը պէտք է ի-  
րաւունք ունենայ պահանջելու իր սիրահարէն այն  
մաքրութիւնը որ ան անկէ կը պահանջէ: Մենք չենք

ուզեր մեզ գոհացնել ողորմելի մնացորդներով: Մենք  
չենք ուզեր մեր ապագայ տիրոջ եւ իշխանին մէջ  
մեզմէ աւելի վար էակ մը տեսնել: Աչն ատեն աչ-  
խարհի մէջ աւելի երջանկութիւն պիտի ըլլայ, ա-  
ւելի սէր, աւելի շքեղութիւն եւ ապրելու ուրախու-  
թիւն»: Ժողովուրդեամբ դուք պիտի ազատուիք  
այլեւայլ ընկերային շարիքներէ եւ վեներական ախ-  
տերէ. ժամանակ պիտի տաք որ ձեր միտքն ու մար-  
մինը լման կերպով աճին ու հասունանան. պիտի կա-  
րողանաք կրթել կամքերնիդ, սորվիք համբերութիւն  
եւ դուրս բերէք ձեր հոգեկան ազնուագոյն զգացում-  
ներն ու չոյզերը դէպի իդական սեռը: Ժողովուր-  
դեամբ պիտի սորվիք նաեւ որ կեանքի մէջ սեռային  
սէրէն զատ կան ուրիշ բաներ ալ որոնց կ'արժէ նը-  
ուիրուիլ եւ անոնց համար ապրիլ: Կան դիտութիւն,  
գեղարուեստ, հայրենասիրական ու մարդասիրական  
գործեր որոնք ներշնչումի մեծ աղբիւրներ կրնան ըլ-  
լալ եւ կեանքը հաճելի ու օգտակար դարձնել: Կըր-  
նայ ըլլալ ժողովուրդեան վարձքը շատ ուշ դայ եւ  
անոր համար երկար սպասէք, բայց վստահ եղէք որ  
անիկա պիտի դայ: Ու երբ դայ, պիտի բերէ ձեզի  
ձօխ օրհնութիւններ որոնց համար կարժէր երկա՛ր  
սպասել:

Արբունքէն մինչեւ քսանեւէինգերորդ տարիքը  
դեռ ամօման եւ զանազանաւորման տարիներ են:  
Մարդ իր կատարեալ առնական զօրութեան եւ կո-  
րովին չի հասնիր մինչեւ կ'ըլլայ քսանեւէինգ տարե-  
կան: Ուստի լաւ չէ ասկէ աւելի կանուխ տարիքի  
մը մէջ ամուսնանալ եւ աչս տարիները թող ձեր ա-  
մուսնութեան եւ ապագայ կեանքին համար պատ-

րաստութեան տարիներ ըլլան: Դուք գիտէ՞ք մրցման ելլող մարզիկներ, ասպարէզ վազողներ ինչ ըզգուշութեամբ եւ խնամքով կը պատրաստուին իրենց մրցումներուն համար: Ամենապղտիկ թերացումը իրենց մարմնական վարժութիւններուն մէջ, ամենապղտիկ անզգուշութիւնը, անժուժկալութիւնը ուտելու, խմելու, քնանալու, սեռալին ցանկութեանց մէջ կրնայ անոնց մտաւոր եւ մկանական ուժերը պակասցնել եւ չաղթութիւնը կորսնցնել տալ: Անոնք իրենց մրցումէն առաջ ոչ գլինիի պէտք է դաշին եւ ոչ կնիկան: Պէտք է լաւ քնանան եւ սնունդ առնեն, լուացուին, շփուին, միտքը մաքուր եւ խաղաղ պահեն եւ իրենց մկանական ուժը ամենաբարձր մակարդակի վրայ պահեն: Երբ այս տեսակ մրցումներու համար այսչափ զգուշութիւն եւ պատրաստութիւն հարկաւոր է, հապա ո՞րքան աւելի զգուշութիւն եւ պատրաստութիւն հարկաւոր է կեանքի համար որ ասոնցմէ հարիւր անգամ, հազար անգամ աւելի զժուար մրցում մը, կոխ մըն է: Վա՛ջ անոնց որոնք այս մեծ կոռւին համար պատրաստուիլ չեն գիտեր եւ իրենց ուժերը անկանոն կենցաղով, գէշ մոլութիւններով կը վատնեն: Բնութիւն առանց տարակոյսի այդպիսիներ անշշուկ քաղահասն պիտի ընէ: Ուստի, ո՛վ երիտասարդներ, այս դժուարին կոռւին մէջ եթէ կուզէք չաղթող հանգիստնալ, եթէ կուզէք սիրուն, արժանաւոր աղջկան մը սէրը շահիլ ու երջանիկ տուն մը կազմել պէտք է մարմնով, մտքով ու հոգեւով միանգամայն լուրջ կերպով պատրաստուիք եւ կրթուիք: Քանի դեռ ժամանակ ունիք եւ կեանքի բեռան տակ մտած չէք, ձեր Ֆիզիքը զարգացնե-

լու, զօրացնելու համար մեծ խնամք տարէք: Ինքզինքնիւ տուէք ամէն տեսակ մարմնամարզական վարժութիւններու ու այդպէս կրթեցէք ձեր մարմինն ու կամքը: Ո՞րքան գեղեցիկ է մարզկային մարմինը եւ ինչ անհուն կարելիութիւններ ունի անիկա իր մէջը: Դժբաղդարար մարզիկ առհասարակ իրենց կարելիութեանց մէկ տասներորդ, մէկ հարիւրերորդ մասն իսկ դուրս չեն բերեր: Առողջութեան չարգը գիտցէք, զայն պահելու ուսումը լաւ ուսումնասիրեցէք: Կեանք առանց առողջութեան սառապանք է: Հիւանդոտ մարդուն համար սրտաբուղիս, անխառն ուրախութիւն չկայ: “To be weak, is to be wretched”, կ’ըսէ մեծ գիտուն մը. այսինքն տկար ըլլալ կը նշանակէ թշուառ ըլլալ: Շատ մը մարզիկ իրենց երիտասարդութեան ժամանակ թեթեւամտօրէն ու տգիտարար առողջութիւննին աւրած, վեներական նողկալի հիւանդութիւններով բռնուած ու վերջը չարաչար զղջացած են բաց ալեւս շատ ուշ եղած է: Յաճախ ժամանակ դտէք լեռներ, դաշտերն ու բլուրներն այցելելու եւ բնութեան հետ հաղորդուելու, մտերմանալու: Սորվեցէք սիրել բնութիւնը, բարեսէր մայր բնութիւնը եւ անոր գեղեցիկ տեսարանները:

Յետոյ անպատճառ արհեստ մը, գիտութիւն մը, դործնական բան մը սորվեցէք որպէս զի կարող ըլլաք ընտանիք պահել: Ձեր վաստիած դրամը խնայեցէք, սին, լիմար բաներու համար մի վատնէք: Դրամ աւելցուցէք մինչեւ ձեր ամուսնութեան ժամանակ կարողանաք կովիկ դումար մը ունենալ: Գէշ բան է չքաւոր վիճակի մէջ ամուսնանալ եւ այդպէս

կեանքը շարունակել: Չքաւորութիւն մեծ չարիք մըն է որ հողին եւ մարմինը միանգամայն կը մաշեցնէ եւ սէրը մինչեւ անգամ կը մեռցնէ: Թող ձեր սիրեցեալ հարսը չը գիտնայ ինչ է կարօտութիւնը սուսած բանը: Թող անիկա ձեզմով ուրախանայ:

Աւելի լաւ է ժամանակին շուտ ամուսնանաք եւ քսանհինգերորդ տարիքէն վերջ երկար չը չետածը գէջ ամուսնութիւն: Չամուսնացողին համար փորձութիւններ համեմատաբար աւելի շատ են: Աճէն բան իր ժամանակին պէտք է կատարուի: Երբ բան մը իր ժամանակէն դուրս կը կատարուի, իրերու բնական կարգէն կը շեղի ու այլեւս զանազան անկարգութիւններու, զարտուղութիւններու պիտի հանդիպի: Շուտ ամուսնութիւն ոչ միայն ձեզ պիտի ազատէ շատ մը մոլորութիւններէ այլեւ ամենայն հաւանականութեամբ խիստ ուրախ եւ երջանիկ ամուսնութիւն մը պիտի ըլլայ: Մնուրանալի է որ երիտասարդութեան սէրը աւելի գեղ եւ փայլ ունի քան թէ չամուսնացածութեան սէրը: Երիտասարդութեան սէրը նաեւ ընդունակ է աւելի խոր երջանիկ ծերութեան մը հասնելու եւ առողջ զաւակներով ու թոռներով ուրախանալու:

\* \* \*

Արդէն ես քանիցս պատմած եմ որ էգ սեռն է ձուն պատրաստողն ու անկէ երախան կերտողը: Արուն միայն կը մատակարարէ ձուի բաժանման ու զանազանաւորման գործը: Էգն է որ ձուն իր մարմնին մէջ կը պահէ ու կը պաշտպանէ, սնունդ կու-

տայ անոր, կը մեծցնէ, երկար ու ցաւազինօրէն կը տքնի մինչեւ կատարելագործուած ձագը դուրս աշխարհ կը բերէ: Արուն իր սեռային պարտականութիւնը կէսէն մինչեւ երեք, չորս ընդհանրապէս կը կատարէ կը լմնայ: Օրեր, շաբաթներ ու ամիսներ հարկաւոր են մինչեւ որ էգը իր գործը լմնցնէ, մինչեւ երախան կերպարանաւորէ ու ծնանի: Մայրութեան կոչումը ուրեմն աւելի դժուար է քան թէ թեան կոչումը ուրեմն աւելի զժուար է քան թէ հայրութեան կոչումը: Մայրութեան պարտականութիւնները աւելի ծանր են ու բազմատեսակ: Իգարութիւնները աւելի ծանր են ու բազմաթիւ կոչումին կան սեռի կեանքն ալ այս դժուարին կոչումին պատճառաւ աւելի ենթակայ է առողջական զանազան խանգարումներու: Այդպէս է կեանքը: Որքան բարդ ու բազմաթիւ ըլլայ անիկա, այնքան շուտ խանգարման ենթակայ կ'ըլլայ:

Աղջիկներ, դուք որ սահմանուած էք ըլլալու մայր, ինչպէս բնութեան շատ մը ուրիշ արարածներ, կ'արժէ, անհրաժեշտ է որ սեռական կարգ մը ծանօթութիւններ ստանաք որպէս զի տգիտութեամբ ձեր առողջութիւնը չը խանգարէք, կարողանաք կայտառ, երջանիկ մայրեր ըլլալ: Երբէք աղանաք կայտառ, երջանիկ մայրեր ըլլալ: Երբէք ամուսնացի բան մը չը կայ այս խնդիրներուն մէջ: Անօթալի բան մը չը կայ այս խնդիրներուն մէջ: Անփափկանկատութիւն չէ բնաւ անոնց վրայ խօսիլ եւ ծանօթութիւն ստանալ: Սեռային չառաջխաղացումներ կեանքի անբաժան ու ամենակենսական մէկ մասը, մանաւանդ ձեր կեանքի մէկ շատ խոշոր մասը կը կազմեն եւ ձեր մարմնական միւս գործողութիւններուն վրայ ազդեցութեան լայն շրջան մը ունին: Անխոհեմութիւն է, ծիծաղելի է իրականութենէն փախչիլ: Սեռային խնդիրներու վրայ պատշաճ ու

վայելուչ կերպով խօսել, գրել, ծանօթութիւն ստանալ ոչ թէ անբարոյ վարմունք մըն է այլևս շատ բարոյական: Առանց առողջութեան մտքին ու մարմնին միանգամայն՝ բարոյականութիւն չըլլար: Մենք մինչև հիմա կը կարծէինք բարոյականութիւն կը պարտադրէ մեզ միայն ուրիշներուն վնաս չը հասցընել եւ եթէ կարելի է անոնց օգնութեան ձեռք կարկառել: Հիմա աւելի լուսաւորուած ենք ու գիտենք որ անբարոյականութիւն գործած կ'ըլլայ մէկ մը նաեւ այն ատեն երբ չափազանցութեանց, խօլընթացքի մը մէջ ինչալով, տգիտարար իր վրայ հիւանդութիւններ հրաւիրելով՝ կը տառապի եւ ուրիշներուն անձկութիւն ու չարչարանք կը պատճառէ, կամ իր հիւանդութիւնները ուրիշի փոխանցելով զանոնք իր պէս կը թշուառացնէ: Հարկը բարոյ, հազարաւոր կիներ տգիտարար իրենց սեռային գործարանները խանգարած ու այդ պատճառաւ մարմնական ցաւերու մատնուելով իրենց ընտանեկան լարկը թշուառացուցած են: Հին, ժամանակաւրէյ գաղափարներ պէտք է թողունք: Դուք որ նոր սերունդին կը վերաբերիք եւ մայրութեան նուիրական կոչումն ունիք, պարտաւոր էք օգտուել զիտութեան փրկարար լոյսէն որպէս զի կարողանաք առողջ մայրեր ըլլալ եւ ձեռնհասօրէն մեր մատաղ սերունդի Ֆիզիքական եւ հոգեկան դաստիարակութեան գործը ստանձնելով՝ ապագայ առողջ, կորովի սերունդներ պատրաստել:

Ձեր արբունքի տարիքին մէջ դուք ընդունակ կ'ըլլաք պատրաստելու մարդկային սաղմը եւ ըստանձնելու մայրական կոչումը: Դաշտանն է այս ի-

բողութեան աւետիս բերողը: Երբ առաջին անգամ դաշտան կ'ունենաք, ըսել է թէ այլևս պարզ աղջիկ մը չէք, հասցա եղած էք ակնածելի, դրաւիչ կիներ իր գեղեցկութեան կատարելութեան հասած, պտուղ տուող փարթամ ծաղկին պէս: Դաշտան ամէն ամիս իր հետ կը բերէ հոգեկան եւ մարմնական կարգ մը խռովութիւններ որոնցմէ շատ քիչ կիներ գերմ կը մնան: Ատոնք են թեթեւ գլխացաւ, ընդհանուր ակարութիւն եւ թուլութիւն, ծանրութեան զգացում կողերուն մէջ, ախորժակի կորուստ, դիւրագրգռութիւն, երբեմն նոցն իսկ լալու հակամիտութիւն եւսլն: Արբունքի հասակին մէջ առաջին անգամ կ'սկսիք աղօտ կերպով սիրոյ զգացում ունենալ: Առաջին անգամ պէտքը, փափաքը կ'ըզաք երիտասարդէ մը փայլալուելու, անոր պաշտպանութեանը չանձնուելու: Երբէք ամօթալի բան մը չը կայ այս զգացումներուն մէջ: Անոնք բոլորովին նօրմալ, առողջ իղձեր են եւ անհրաժեշտ՝ մայրութեան ընտանիքը վառ պահելու համար: Միայն պէտք է զանոնք կառավարել եւ չը թողուլ որ ձեզ սխալ ուղղութեամբ առաջնորդեն:

Դաշտանի ախտանշանները աւելի բուն ու սաստիկ կերպով կը չայտնուին երբ կիներ զղայնոտ ու վատուժ է: Կայտառ, զօրաւոր կիներուն մէջ համեմատաբար թեթեւ կ'ըլլան անոնք: Նորատի կիներուն մէջ դաշտանը իր առաջին երեւումէն մինչև մէկ տարի կը պատահի չաճախ որ անկանոն կերպով աւելի կ'ունենայ: Օրինակի համար, կրնայ ըլլալ երկրորդ, երրորդ ամսուն ան երբէք չերեւի կամ շատ քիչ արին հոսի: Չորրորդ ամսուն առատ հոսում

մը կարելի է տեղի ունենայ իսկ հինգերորդ ամսուն նորէն բոլորովին անհետանայ: Այս անկանոնութիւնները առաջին տարուան համար բնական են, մի վախճաք: Երկրորդ տարին անոնք կը շտկուին եւ դաշտանը բոլորովին կը կանոնաւորուի:

Յոգնած, տկարացած ժամանակ կրնայ ըլլալ դաշտան չունենաք: Միտ պահեցէք ասիկա: Շատ մը աղջիկներ ու կիներ այս իրողութեան անտեղեակ ըլլալուն պատճառաւ սաստիկ վախցած ու մտաւոր անձկութեան մէջ ինկած են: Միայն չղութեան ժամանակ չէ որ դաշտան կը դադարի: Կնոջ դաշտանը մեծ չափով մը կարելի է անոր առողջութեան չափանիշը համարել: Երբ ան առողջ է ու կորովի, դաշտան ամէն ամիս կանոնաւոր կերպով տեղի կ'ունենայ: Երբ ան ուժասպառ է կամ կարգ մը տեսակ հիւանդութիւններ ունի, անիկա շատ անգամ տեղի չունենար կամ աննօրմալ, անկանոն կերպով տեղի կ'ունենայ: Բնութիւն այս կերպով կը ջանայ կնոջ ուժերը պահել, չի թողուր որ ուժասպառ եղած կինը դաշտանի միջոցով քիչ մըն ալ արիւն եւ ուժ կորսնցնէ: Կը տեսնէ՞ք որքան զարմանալի են բնութեան օրէնքները: Այսպէս՝ դաշտան չափաւ չերեւիր երբ կինը թոքախտ, անարիւնութիւն, ճահճատենդ, սիֆիլիս, քաղցկեղ եւ ուրիշ ասոնց նման ուժ սպառող ախտեր ունի: Անիկա ժամանակաւոր կերպով տեղի չունենար նաեւ կարգ մը տարափոխիկ հիւանդութիւններէ վերջ, որոնք են, օրինակ, տիֆո, թոքատապ, չօղացաւ, կեղծմաշկ եւալլն: Երբեմն հասարակ պաղաւուրթիւն, պարզապէս անսընունդ մնալ եւ հակաառողջական պայմաններու տակ

ապրիլ, ինչպէս կը պատահի աղքատներուն մէջ, կամ մարմնական եւ մտաւոր ծանր աշխատութիւն, անձկութիւն ու վախ, պատճառ կ'ըլլան անոր չերեւնալուն: Այսպիսի դէպքերու մէջ կը պատահի երբեմն որ կինը կ'ունենայ փոխանորդական, չեղաչըրջուած դաշտան (vicarious menstruation). այսինքն, արիւնը փոխանակ արդանդէն ու հեշտոցէն հոսելու, ուրիշ տեղէ մը, օրինակի համար, քթէն կը հոսի: Հազուադէպ պարագաներու մէջ դաշտան սկիզբէն ի վեր երբէք չերեւիր, ինչպէս օրինակ, երբ կինը դոց կուսաթաղանդ ու նեղ հեշտոց ունի, կամ ներքին ծննդական դործարաններէն դուրկ է: Երբոր տասնեւհինգ, տասնեւլեց տարեկան եղած ժամանակ ամսէ ամիս կ'ունենաք գլխի եւ կոնակի ցաւ, սրտախառնուք, ընդհանուր անձկութիւն եւ տկարութիւն բաց երբէք արեան հոսում չը կայ, անմիջապէս ձեր բժիշկին դասցէք եւ ինքզինքնիդ քննել տուէք:

Երբոր դաշտանի ժամանակ գլխու եւ կոնակի սոսկալի ցաւ կայ բաց հոսումը շատ սակաւ է, արդանդին մէջ ծանր խանդարումներ ըլլալու են: Այսօրինակ դէպքի մը մէջ դարձեալ ձեր բժիշկին դեմեցէք եւ ինքզինքնիդ քննել տուէք: Հաւանական է արդանդի դրսի ծակը (external os) ուէէ կերպով դոցուած է ու արիւնը չի կրնար անկէ դուրս ելլել: Կը մնայ ներս, կը մակարդի կ'ըլլայ կոշտ արիւն, ասոր վրայ ուրիշ թարմ արիւն կը հաւաքուի, կոշտը կը մեծնայ եւ որովհետեւ դուրս չի կրնար ելլել, կը ճնշէ ջիգերուն վրայ եւ այդպէս կը պատճառէ անհնարին ցաւ կողերուն, կոնակին ու գլխուն մէջ:

Այս վիճակը կրնայ առաջ դալ դանազան սրտաճառներով արգանդին հասած Ֆրիդրիխի վնասներէ, ինչպէս հարուածներէ, բանի մը դէմ դարնուելէն ու ցնցուելէն եւ կամ սաստիկ ուժ ի դորձ դնելէն: Այսպիսի պարագաներու մէջ կրնայ սրտասէլի որ արդանդի վարի ծայրը քիչ մը կը ճեղքբառուի կամ կը սրորբուի: Վերջ այնտեղ սպի մը կը դոյանայ որ արտաքին ծակը սղծելով կը դոցէ: Կամ կրնայ ըլլալ այս ծակը բնականէն արդէն շատ սղտիկ կ'ըլլայ եւ արեան ազատ արտահոսման արդեւ կը հանդիսանայ: Երբեմն ալ կը սրտասէլի աղջիկը կամ կ'ինը աչնչալի ջղաջնոտ կ'ըլլայ որ դաշտանի ժամանակ անոր արդանդի վարի ծակը խիոյն կը կծկի ու կը դոցուի երբ արիւնը դուրս հոսած ժամանակ անոր կը դալչի: Նորմալ, առողջ աղջիկը պէտք չէ այս տեսակ ցաւեր ունենայ: Երբ այս տեսակ ցաւեր կ'ունենաք, խիոյն ձեր մօր կամ բժիշկին պատմելու էք: Երբէք անհամեստութիւն չէ սեռային ցաւեր չաչտնել ու անոնց համար դարման փնտուել: Երբէք միտք չը կայ կեղծ համեստութեամբ դանոնք ծածկելուն եւ լուռ մարտիրոսութեամբ տառապելուն մէջ:

Մենք տեսանք որ դաշտան ամէն ամիս աղջիկէն կը խլէ բաւական չափով ուժ եւ անոնք որ վատուժ են աւելի ցաւ ու նեղութիւն կ'ունենան, հետեւաբար աւել ուժ կը կորսնցնեն: Արդ՝ դուք բոլորդ, մանաւանդ անգոր ու գունատ եղողներդ, պէտք է ամէն կերպով ձեր մարմնի ուժը աւելցնէք, զձեզ ամբապնդէք որպէսզի դաշտանը թեթեւ կերպով անցնի ու ձեզմէ շատ ուժ չը խլէ: Ասիկա դուք կորող էք ընել մարմնամարզութեան, լաւ սնունդի, լո-

գանքներու, մաքուր օդի շնորհիւ, կանոնաւոր ասլրելակերպով:

Պէտք է դուք ամէն օր սիստեմատիկ մարմնամարզ ունենաք արեան շրջանառութիւնը լաւ վիճակի մէջ դնելու եւ ջրդերն ու մկանները զօրացնելու համար: Անցած են այն ժամանակները երբ մարմնամարզութիւն աղջկանց համար անվայել, անյարմար զրօսանք մը կը համարուէր, երբ նրբութիւն ու փափկութիւն անոնց մէջ բաղձալի բաներ կը նկատուէին: Իրական գեղեցկութիւն, շնորհալիութիւն առանց առողջ, կայտառ մարմնի կարելի չէ ձեռք բերել: Վտիտ, վերջին ծայր փափուկ մարմնի մէջ երբէք գեղեցիկ, գրաւիչ բան մը չը կայ: Ընդհակառակն կանացի գրաւչութիւններ են լեցուն մը կաններ, կայտառ մարմին, կարծիր երեսներ որոնք ընդունակ են նաեւ աղջիկը կորովի մայր մը դարձնելու:

Կրնաք հետեւիլ թեթեւ տեսակ մարմնամարզական խաղերու եւ վարժութիւններու: Մարզեցէք ձեր թեւերը, մէջքի եւ կուրծքի մկանները: Մաքուր օդի մէջ ամէն օր խոր շնչառութեան վարժութիւն ըրէք եւ բաւական տեղ քալեցէք: Մէջքն ու իրանը շնորհալի ձեւ սլիտի ստանան եթէ հետեւեալ մարմնամարզը ընէք: Ոտները իրարու քով դրած ուղիղ կանցեցէք: Յետոյ առանց ծունկերը ծալելու մարմինը մէջքին վրայ դէպի առաջ՝ գետին ծռեցէք եւ ջանացէք ձեռներով չատակին դալչիլ: Նորէն վեր բարձրացէք եւ միեւնոյն գործողութիւնը կրկնեցէք քսան, երեսուն, քառասուն անգամ: Ասիկէ զատ մարմինը ծռեցէք կողէ կող դէպի աջը եւ ձախը, կամ

կողերուն վրայ շուրջանակի դարձուցէք: Ձեզ համար լաւ մարմնամարդ է չմշկելը, պայմանաւ որ լաւ հաղուած ըլլաք եւ պաղ չառնէք, նաեւ տէննիսը:

Դուք հաւանական է նկատեցիք ես ըսի կարող էք հետեւիլ թեթեւ տեսակ մարմնամարդութեանց: Թեթեւ բառը դիտումնաւոր կերպով դորձածեցի: Ձեզ համար մեծ ուժ պահանջող, ցնցիչ մարմնամարդական խաղերն ու քաջադորձութիւնները վնասակար են ու լաւ է որ դանոնք երբէք չը փորձէք: Պատճառը ձեր ֆիզիքական առանձնաչատուկ կազմընաւորն է: Դուք կը վիշէք կարելի է, ես ասկէ առաջ պատմած եմ արգանդն ու ձուարանները նեարդակապերով կախուած են կոնքին մէջ ու հաստատուած անոր կողերուն: Այս նեարդակապերը առածգական ըլլալով՝ կարող են ձգուիլ ու երկնալ, այդպիսով իրենց ուժը, տօնը կորսնցնել: Արդ՝ երբ դուք շափաղանց ուժ պահանջող դորձեր կ'ընէք, ինչպէս օրինակ, մեծ ծանրութիւն մը կը վերցնէք եւ կամ բարձր տեղէ մը վար կը ցատկէք ու այդպիսով ներքին դորձարանները ճնշման կ'ենթարկէք, կրնայ ըլլալ արգանդի եւ ձուարանի նեարդակապերը սաստիկ ձգտման ենթարկուելով ձեքձեքուին ու թուլնան եւ այդ պատճառաւ արգանդն ու ձուարանները տեղափոխուին: Այսպիսի պարագաներու մէջ շատ անգամ կը պատահի որ արգանդը դէպի ետ կը ծռի, վար կ'իջնէ կամ առջեւի կողմը կը թեքուի: Ձուարանները կարող է պատահել որ վար իջնան: Արգանդի եւ ձուարաններու այսօրինակ տեղափոխութիւններ ծանր խնդիրներ են, որովհետեւ, անոնք իրենց հետ կը բերեն կոնակի

ցաւ, ցաւոտ դաշտան, ընդհանուր տկարութիւն, ջղաջնութիւն եւ դիւրագրգռութիւն: Այս տեսակ ֆիզիքական ճիգերէ զգուշ ըլլալու էք դուք մանաւանդ դաշտանի ժամանակը, որովհետեւ, այդ ժամանակ նեարդակապերը կը կակուղնան եւ արգանդն ու ձուարանները արեամբ կը լեցուին ու խիստ կը ծանրանան: Այս վիճակին մէջ անոնք աւելի ենթակայ կ'ըլլան տեղափոխուելու երբ ճնշմանց ու ցնցումներու կ'ենթարկուին: Դաշտանի ժամանակ երբէք ոեւէ ծանր բան վերցնելու չէք, ոչ ալ ոեւէ տեսակ մեծ ցնցում պատճառող դորձեր ընելու էք: Պէտք չէ նոյնիսկ պարելու երթաք, ոեւէ մարմնամարդական խաղեր խաղաք ու երկար ատեն ոտքի վրայ կանգնիք: Երբ տաք սրահներու մէջ կը պարէք ու կը խաղաք դաշտանի ժամանակ եւ ասպ ցուրտ օդին մէջ կ'իլլէք, մեծ վտանգ կայ որ պաղ առնէք եւ այդպիսով պատճառէք արգանդի ու ձուարաններու արենալիութիւն ու բորբոքում, նոյն իսկ տեղափոխութիւն: Շատ մը կիներ եւ աղջիկներ իրենց ձուարաններէն զրկուած են, որովհետեւ, բարակ հաղուստներով տաք սրահներու մէջ պարելէ ու քրտնելէ չետոյ ցուրտ օդի մէջ դացած ու պաղ առած են: Երբոր արդէն բաւական կոնակի ու գլխի ցաւ ունիք, պէտք է պառկիք եւ հանգիստ ընէք մինչեւ որ դաշտանը անցնի: Հարիւրաւոր աղջիկներ ու կիներ այս տեսակ զգուշութիւններ անտես ընելով իրենց վրայ բերած են շատ ցաւ ու տառապանք:

Դուք ալ սովորութիւն ըրէք ամէն օր պաղ ջրով լողանք առնել: Սառն ջրով լողանք կուտայ թարմութեան եւ կայտառութեան զգացում մը եւ առողջ,



լեցուն միաններ: Անիկա պատուական միջոց մըն է հալեցնելու տժգոյն, պարարտ աղջիկներու ապա-  
ւոյժ, անպէտ ճարպը: Շատ նիհար աղջիկներ լաւ է որ դաղջ ջրով սկսին լողանքներ ու չետոյ կամաց կամաց ջուրը պաղեցնեն: Ի հարկէ պէտք է տաք սենեակի մը մէջ առնել լողանքը: Դաշտանի օրերէն զատ, ամէն օր պաղ ջրով լողանք առնելու էք: Անիկա մեծապէս պիտի նպաստէ նաեւ ձեր խառնուածքի չտտակութեան որի մասին վերջը աւելի երկար պիտի խօսիմ: Դաշտանի օրեր աւելի լաւ է դաղջ ջրով լողանք առնէք, որովհետեւ, պաղ ջուրը կըր-  
նայ արդէն բորբոքած ձուարաններուն եւ արգանդին պատճառել արեւնալիութիւն ու աւելի բորբոքում: Կանաչախտ (տեսակ մը անարիւնութեան հիւ-  
ւանդութիւն) ունեցող աղջիկներ շատ պիտի օգտը-  
ուին եթէ ծովը կամ հանքալին ջուրերը երթան ու ա-  
նոնց ջրերով լողանք առնեն եւ ապա երկար ատեն արեւին ու մաքուր օդին մէջ մնան: Աղջիկներ, արեւէն մի փախչիք, սորվեցէք արեւուն մէջ ապրիլ, ծծել անոր կենսատու ճառագայթները: Արեւը կեանք է, վնասակար մանրէներու ամենէն մահացու թշնամին: Շատ առողջ ու կաշտառ պիտի ըլլաք եթէ արեւուն մէջ քալէք ու պտտիք: Արեւը մարմնի բո-  
լոր բջիջներու կենսունակութիւնն ու գործունէու-  
թիւնը կ'աւելցնէ:

Դաշտանի ժամանակ ամէն օր ձեր ծննդական արտաքին գործարանները տաք ջուրով եւ օճառով զբուշուրեմքով լուարու եւ մաքրելու էք: Պէտք չէ թողուք արիւն եւ ուրիշ հեղուկներ անոնց վրայ մը-  
նան, տարբաղաբոլիս եւ անախորժ հոտեր արձա-

կեն: Ասիկա դուք ընելու էք նաեւ ամէն օր: Ար-  
բունքի եւ դաշտանի ժամանակ մարմնի բոլոր գեղ-  
ձերը, մասնաւորապէս ծննդական գործարաննե-  
րուն, խիստ գործօն կը դառնան եւ մեծ գործունէ-  
ութեան մը կ'սկսին: Ամօթաշուրթերուն մէջտեղ եւ  
անոնց բոլորտիք, ինչպէս մարդոց առնանդամի  
գլխիկին վրայ, գեղձեր կան որոնք պանիրի նման  
իւղոտ նիւթ մը կ'արտադրեն: Ասոնց պաշտօնն է  
ամօթաշուրթերը կակուղ եւ լարծուն պահել եւ չը  
թողուլ որ անոնք իրարու փակին: Արբունքի ժա-  
մանակ սոյն գեղձերը մեծ քանակութեամբ կ'արտա-  
դրեն այս նիւթէն որ եթէ ամէն օր չը մաքրուի  
չուտով կը հաւաքուի ծննդական գործարաններուն,  
ամօթաշուրթերուն ծալքերուն մէջ, կը տարբաղա-  
դրուի ու այդպէս անախորժ հոտեր կ'արձակէ:  
Ասկէ զատ առաջ կը բերէ անոնց մէջ տաքութիւն,  
եւք եւ խոնավութիւն որոնք սեռային գրգռման ու  
փորձութեանց պատճառ կ'ըլլան: Ծննդական գոր-  
ծարանները այնքան պէտք ունին լուացումի եւ  
մաքրութեան որքան ձեռներն ու երեսները:

Սորվեցէք նաեւ մաքուր օդի գործածութիւնը:  
Ամէն օր դուրս ելէք եւ մաքուր օդի մէջ պտոյտ ը-  
րէք. քսան, երեսուն անգամ խոր կերպով շնչեցէք  
եւ ձեր թոքերը առատ, թարմ օդով լեցուցէք: Ձեր  
ննջասենեակի պատուհանները լայն բացէք եւ վար-  
ժընդեցէք բաց, թարմ օդին մէջ քնանալու: Յաճախ  
ժամանակ գտէք տղաներուն պէս դաշտը կըլլելու եւ  
բնութեան գիրկը նետուելու, անոր բներեւոյթները  
տեսնելու եւ ուսումնասիրելու, ուրախ մանկանց  
պէս անոր ծաղիկներուն մէջ խառնուելու եւ կաշտ-

ուելու, անոր չքնաղ տեսարաններով հրճուելու եւ ներշնչուելու: Շատ մը կիներու նեղարտութեան, ջղաչնութեան պատճառը շարունակ դոց տան մէջ մնալ եւ անմաքուր օդ ծծելն է: Շատ մը աղջիկներու ախտաժէտ հակումներու, վատ, տխուր մըտքերու պատճառը տան մէջ առանձնանալ եւ ինքնամփոփուելն է: Կանոն ընելու էք ամէն օր ինքզինքնիդ տունէն դուրս նետել եւ թարմ օդ առնել, աշխարհ տեսնել: Մաքուր օդը ամենէն զուարթացուցիչ ու կազդուրիչ դեղն է որ երբէք կարելի է գտնել: Երբ ամէն օր դուրս ելլէք, ուշադրութիւններով ուրիշ բաներու վրայ դառնալով ձեր վրայէն պիտի հեռանայ եւ դուք չտեսես մտածութիւններու, վատ հակումներու հակամէտ պիտի չըլլաք, աւելի զուարթ ու լաւատես պիտի ըլլաք: Ես վստահ եմ թէ ամէն տանտիրիկն իւրաքանչիւր օր անպատճառ կէս ժամ դոնէ ժամանակ գտնէր ու դուրս ելլէր թարմ օդ առնելու, աւելի ուրախ պիտի ըլլար, իր ցաւերուն կէսը պիտի փարատէր եւ ան աւելի ուժ պիտի ունենար իր տան գործերը կատարելու:

Մէզը երկարատեան փամփուռալին մէջ մի պահէք: Շատ մը աղջիկներ իրենց զրազմունքներուն պատճառաւ, կամ կեղծ համեստութենէն զրգուած, ինչպէս օրինակ հանրային շէնքերուն մէջ իրենց վերայ անասորժ ուշադրութիւն չը դարձնելու համար, արտաքնոց չեն երթար մէզը պարպելու. երկարատեան դաշն կը պահեն միզամփոփուալին մէջ: Ասիկա խիստ վնասակար բան մըն է որ անոնք կ'ընեն: Միզամփոփուալը գետեղուած է ճիշդ արգանդին առջեւ: Երբոր անիկա մէզով կը լեցուի ու երկար ա-

տեն աչքպէս լեցուած, ուռած վիճակի մէջ կը մընայ, կը ճնշէ արգանդին դէմ ու դաշն կը ծռէ դէպի ետ: Ջանացէք այս վատ ունակութեամբ երբէք չը բռնուիլ: Անմտութիւն է շնորհիւ կեղծ համեստութեան ինքզինքնիդ նեղել եւ ձեր սեռային գործարաններուն ծանր վնասներ հասցնել:

Արգանդի տեղափոխութեան ուրիշ չաճախադէպ պատճառ մըն ալ պնդութիւնն է, շատ մը կիներու անէծքը: Կարելի է դուք դիտէք վերջնադիրը գետեղուած է արգանդին ետեւ, անոր վարի կողմը: Երբ պնդութեան պատճառաւ անիկա լեցուն է եւ ուռած, կը ճնշէ արգանդի վզին վրայ, դէպի առաջ ու աչքպէս արգանդի վերի մասը ետ կը ծռէ: Երբոր թէ պնդութիւն կայ եւ թէ մէզը պահելու սովորութիւն, արգանդի տեղափոխութեան աւելի մեծ վնասանք կայ, որովհետեւ, այժմ կրկնակի պատճառներ միասին կը գործեն անոր դիրքը իր տեղէն խախտելու: Միզամփոփուալը վերի կողմէն արգանդը կը հրէ դէպի ետ, վարի կողմէն վերջնադիրը գաշն կը հրէ դէպի առաջ: Այս կերպով անիկա ենթակայ կ'ըլլայ դիւրաւ տեղափոխուելու:

Աղջիկներ, ինքզինքնիդ ազատ պահեցէք պնդութեան անիծեալ վիճակէն: Անիկա է պատճառը նաեւ շատ մը ուրիշ չարիքներու, ինչպէս դիւստացաւի, արգանդի արեւնալիութեան ու բորբոքման, արեւն ապականութեան, թուլութեան, չոքնածութեան եւ ջղաչնութեան, կունակի ցաւի, պզտոր խառնուածքի, մորթի դանազան տկարութեանց եւ այլն: Այս ախտանշաններէն շատերը առաջ կուզան շնորհիւ պնդութեան պատճառաւ աղիքներուն մէջ

կուտակուած անպիտան կաղերուն ու թոչներուն որոնք կը ծծուին արեան մէջ եւ զայն կ'ապականեն: Շատ մը աղջիկներ ու կիներ այս անպիտան տկարութենէն տարիներով կը տառապին առանց դիտնալու իրենց խօթութեանց պատճառը, առանց իրենց վիճակը բժիշկին յայտնելու: Կ'ամ չնան յայտնելու իրենց բժիշկին մինչեւ անգամ որ իրենք պընդութիւն ունին: Պէտք է մէկ կողմ նետել այս տեսակ մտայնութիւններ: Ուրիշ նկատողութիւն պէտք է արգելք հանդիսանայ մարմնի կատարեալ առողջութեան:

Ամէն օր, մէկ անգամ դոնէ, պէտք է աղիքներու լոյծ ու հանդիստ պարպում ունենաք: Աղիքներ լոյծ ու բաց պահելու համար ձեզ քանի մը կանոններ տամ: Ամէն առաւօտ նախաճաշէն առաջ մէկ կամ երկու գաւաթ ջուր խմեցէք: Օրական առ նուազն ութ, տաս գաւաթ խմելու էք անկէ: Նախաճաշէն առաջ միշտ թաց պտուղ կերէք: Գործածեցէք առատ բանջարեղէն եւ պտուղ. կաղամբ, շոգլամ, սպանախ, ճակնդեղ, կանաչ լուբիա եւ բակլայ, ստեպղին, թարմ եգիպտացորեն, խնձոր, դեղձ, սեխ, խաղող, ծիրան եւայլն: Այս բանջարեղէններէն մէկ երկու տեսակ ամէն ճաշի ժամանակ սեղանի վրայ ունենալու էք եւ ուտելու էք: Կարգ մը պտուղներ ունին չատկապէս լուծողական չատկութիւն ու լաւ է անոնցմէ շատ գործածել: Անոնք են ծիրան, դամոն, սալոր, դեղձ, թուզ, արմաւ եւայլն: Լաւ են այս տեսակէտէն նաեւ ընկուզեղէնները, չամիչ, մեղրը, չետոյ ձիթապտուղ եւ մանաւանդ անոր իւղը: Զիթապտուղի իւղը ընտիր, լուծողական չատկու-

թիւն ունեցող իւղ մըն է որմէ ամէն ճաշի ժամանակ կարելի է առնել մէկէ մինչեւ երեք թէչի դգալ ուղղակի խմելով կամ կերակուրի հետ գործածելով: Ճերմակ հաց մի ուտէք: Գործածեցէք սեւ, թեփով հաց: Սեւ հաց իր մէջ կը պարունակէ ցորենի թեփը որ աղիքներ դրդուելու եւ շարժելու համար պատուական նիւթ մըն է: Երբոր պարպումի դրդուը կուգայ երբէք մի չետածգէք գործողութիւնը, անմիջապէս դացէք ու ձեր աղիքները պարպեցէք: Երբ բնութեան ճացնին մտիկ չընելով պարպումի գործողութիւնը կը չետածգէք, անոր դրդուը կ'երթայ ու կրնայ ըլլալ ալ երկարատեւ նորէն չի դաց: Յետոյ ամէն օր, որոշուած ժամուն պէտք է կանոնաւորապէս արտաքնոց երթաք, հոգ չէ թէ դրդուը եկած չէ: Երբ ամէն օր կանոնաւոր կերպով ձիւղ ժամանակին երթաք ու նստիք աղիքները կը սորվին ու ինքզինքնին այդ ժամին կը պարպեն: Պէտք է նաեւ ամէն օր քալէք եւ իրանի ու մէջքի մարմնամարդ ընէք ինչպէս վերը ձեզ բացատրեցի:

Քիչ առաջ ըսի թէ արբունքի ժամանակ մարմնի բոլոր դեղձերը, մասնաւորապէս ծննդական դործարաններուն, թեւի տակին, երեսին եւ կուրծքին, շատ գործօն կը դառնան: Գեղձերու այս բուռն գործունէութեան շնորհիւ մարմինը զանազան քիմիական նիւթերով կը տողորուի: Քիմիական այս նիւթերու պատճառաւ չաճախ աղջկանց մարմիններէն անխորժ հոտ մը կը բուրէ, բան մը, որ եթէ չըսեմ զգուշիլի գէթ խիստ տհաճօց է զգացուն եւ բժախնդիր մարդոց: Դուք ասոր դէմը կրնաք բորովին առնել շատ դիւրին կերպով մը, այն է, ա-

ուստ ջուր խմելով եւ ամէն օր լողանք առնելով : Երբ առատ ջուր խմէք, սոյն քիմիական նիւթերը կը ջրախառնուին, կը թուլնան ու ալ անախորժ հոտեր չեն բուրեր, ընդհակառակն, անուշ հոտ մը պիտի գայ ձեզմէ այն ատեն :

Յստակ, պայծառ մորթ աղջկանց դեղեցկութեան դիտարար աղբիւրներէն մէկն է : Անոնցմէ շատեր ամէն ինչ պիտի տային եթէ կրնային մաքուր ու չստակ խառնուածք մը ունենալ : Հիմա, դուք այս ալ կրնաք ձեռք բերել եթէ առատ ջուր խմէք, ամէն առաւօտ պաղ ջրով լողանք առնէք եւ ձեր աղիքները միշտ լոյծ ու մաքուր վիճակի մէջ պահէք : Դուք անշուշտ կը չիչէք քիչ վեր ես պնդութեան վրայ ինչ խօսեցայ : Կը չիչէք ըսի անոր շնորհիւ անախորժ թոշներ կը ծծուին արեան մէջ եւ դայն կ'ազականեն : Ըսի նաեւ արբունքի ժամանակ մամրնի բոլոր դեղձեր բուռն դործունէութեան մը կ'սկսին եւ մեծ քանակութեամբ զանազան քիմիական նիւթեր կ'արտադրեն որոնք նոյնպէս կը ծծուին արեան մէջ : Արդ, դուք դիւրաւ պիտի կրնաք հասկնալ որ ապականուած սեւ արիւն պղտոր, տղմոտ դոյն մը միայն կրնայ տալ մորթին : Յստակ, պայծառ մորթ մը ունենալու համար հարկաւոր է ունենալ մաքուր, կարմիր արիւն : Մաքուր, կարմիր արիւն ունենալու համար պէտք է անոր մէջի անախորժ նիւթերը, թոյնները դուրս նետել մարմնի երեք մեծ կոյուղիներուն միջոցով : աղիքներուն, երիկամներուն եւ լեարդին, նաեւ թոքերուն ու քրտինքի դեղձերուն միջոցով : Առատ ջուր խմելով երիկամները եւ լեարդը լաւ մը կողողուին ու կը մաքրուին եւ մէզը

անոնց միջոցով կանոնաւոր կերպով կը դառնի : Քրտինքի դեղձերն ալ դործօն վիճակի մէջ մտնելով քրտինքի միջոցով կարգ մը անպէտ նիւթեր արիւնէն դուրս կը նետեն : Աղիքներն ալ լոյծ ու բաց վիճակի մէջ պահուելով այդ կերպով ահագին քանակութեամբ անախորժ նիւթեր ու կազեր մարմնէն դուրս կը վտարուին եւ արիւնը կը մաքրուի :

Պաղ ջրով լողանքն ալ հետեւեալ կերպով մորթը կը չստակացնէ : Նախ՝ անիկա մորթի վրայի աղտերը կը սրբէ կը տանի, անոր ծակոտիները կը բանայ եւ այդպէս քրտինքի դեղձերուն ազատ ու կանոնաւոր դործելուն լայն ասպարէզ կուտայ : Երկրորդ՝ արիւնը մարմնի մակերեսը, մորթի մազական անօթներուն մէջ կը զրկէ ու այդպէս մորթին պայծառ, կարմիր դոյն կուտայ : Երբ սառն ջրով լողանք կ'առնենք, սկիզբ չնչերակներն ու մազական անօթները պաղութեան պատճառաւ կը կծկին ու արիւնը դէպի մարմնի ներսը կը խուժէ : Ասիկա երկար չի տեւեր, ասոր շուտով կը չաջորդէ հակազդեցութիւն մը որու միջոցին մազական անօթները կ'ընդլայնին ու այդ ժամանակ արիւնը կը խուժէ դէպի մարմնի մակերեսը եւ հաւասարապէս կը բաժնուի անոր ամէն մէկ մասին : Կուզայ առատ կերպով կը բաժնուի նաեւ մորթին որ առողջ կարմիր դոյնով մը կ'սկսի շիկնել եւ տաքնալ : Այս հակազդեցութիւնը աւելի շուտ, աւելի լաւ կերպով տեղի կ'ունենայ երբ թրջուելէն յետոյ մորթերնիս հաստ սրբիչով մը ժիր կերպով կը շիկնէք : Այսպէս՝ դուք այս միջոցները բանեցնելով կարող էք ունենալ կարմիր սիրուն աչտեր եւ չստակ ողորկ մորթ մը : Յոյն եւ հռովմէ-

ացի օրիորդները դիտէ՞ք ինչու այնքան գեղեցիկ էին, մաքուր չտակ մորթ ունէին: Որովհետեւ, լաւ դիտէին մորթը խնամելու արուեստը: Անոնք ամէն օր բաղնիք կը մտնէին եւ լողանք կ'առնէին: Իրենց մորթը կը լուային, կը շիէին եւ անուշահոտ իւղերով կ'օծէին: Ջուրի պէս առատ շատ քիչ բան կայ բաց մենք անկէ օգտուել չենք դիտեր: Այս մասին մենք շատ ետ մնացած ենք յոյներէն եւ հռովմէացիներէն:

Ձեր երեսներուն եւ մարմնին վրայ ունէ տեսակ փոշիներ, արուեստական նիւթեր մի քսէք: Անոնք ոչ միայն կ'աւրեն ձեր մորթը ալլեւ անունը, որովհետեւ, ունէ կըթուած, մաքրասէր մարդ այդ տեսակ արուեստական, կեղծուպատիր շղարներէն ու կծու հոտերէն կը զզուի: Անոնք խակոյն աղջկան կեղծ, ծանծաղ հոգին ու նկարադիրը կը չայտնեն: Ունէ լաւ, անմեղ աղջիկ արուեստական շղարներ, կեղծ բաներ չի գործածեր իր գեղեցկութեան համար, խաբել չի սիրեր, իր խակական դոչնով միայն երեւան կ'ելլէ: Բնութիւն դուք չէք կրնար խաբել, արուեստականօրէն գերազանցել: Կարող էք անոր օգնել միայն անոր օրէնքները լաւ մը ուսումնասիրելէ վերջ ու անոնցմով առաջնորդուած՝ բնական միջոցներ գործածելով: Դուք կը յիշէք ես ըսի մորթին մէջ անհամար ծակոտիներ կան որոնց միջոցով անթոքերուն պէս կը շնչէ եւ մարմնէն թոյներ դուրս կը վտարէ: Երբ դուք զանոնք փոշիներով (երբեմն նոչնիսկ թունաւոր տեսակ) կը խցէք ալ անիկա չի կրնար շնչել, արեան շրջանառութիւնը կը խախտուի, մորթը անանուղ կը մնայ ու այդ պատճառաւ

շատ չանցած ան կը տփգունի եւ կը կնճռի:

Արբունքի ժամանակ շատ մը աղջկանց երեսներու եւ մարմնի ուրիշ մասերուն վրայ բշտիկներ երեւան կ'ուզան որոնք մորթին այնքան տգեղ երեւոյթ մը կուտան եւ կերպարանքը կ'աւրեն: Անոնք շատ կ'երեւին մանաւանդ դաշտանի ժամանակ: Մորթին մէջ տեսակ մը գեղձեր կան որոնք կ'արտադրեն սիբրմ կոչուած իւղոտ նիւթ մը որու պաշտօնն է մորթը կակուղ ու ճկուն վիճակի մէջ պահել: Երբ անոնք արբունքի եւ դաշտանի ժամանակ ժիր գործունէութեան մը կ'սկսին, կ'արտադրեն մեծ քանակութեամբ սիբրմ որ յաճախ կը խոնուի գեղձերուն մէջ մազերու արմատներուն տակ, կ'ուռի եւ այդպէս առաջ կը բերէ բշտիկներ: Անոնք երեսէն զատ մեծաւ մասամբ երեւան կուզան կոնակի մորթին վրայ եւ երբ պնդութիւն կայ աւելի շատ կ'ըլլան: Կը պատահի երբեմն աղջիկներ զանոնք անհետացնելու համար անոնց հետ կը խաղան, զանոնք կը փորփրեն ու այդ պատճառաւ խոշոր վէրքեր կը շինեն: Անոնց տեղ վերջ սպիւններ կը դոչանան որոնք մորթը մնացուն կերպով կ'ալլանդակեն: Անոնց դէմն առնելու համար երբէք գեղ մի գործածէք: Չանոնք տեսակ տեսակ փոշիներով մի ծածկէք, մի փորփրէք: Աւելի գէշ կ'ըլլան երբ այդպէս կ'ընէք: Միայն զանոնք առաւօտ ու իրիկուն տաք ջուրով եւ լաւ օճառով, ինչպէս օրինակ, կաստիլ օճառով լուացէք ու մաքրեցէք: Երբոր բշտիկներ խոշոր են ու սիբրմ դուրս չի կրնար գալ, կրնաք անոնց վրայ քիչ մը մաքուր ձիթապտուղի իւղ քսել որպէս զի կակուղնան եւ սիբրմ փրթի դուրս գայ: Ասկէ զատ ուրիշ բան մի ը-

նէք. անոնք վերջ ինքնաբերաբար կ'անհետանան : Ի հարկէ աղիքներն ալ լոյծ ու մաքուր վիճակի մէջ պահելու էք : Երբոր բշտիկներ շատ դէշ հանդամանք կ'ստանան, մորթի հիւանդութեանց մասնագէտի մը գացէք եւ անոր պատուէրներ միայն ի դործ դրէք :

Ձեր եղունգներուն ու մազերուն ալ հոգ տարէք : Խնամքով ձեր եղունգները կտրեցէք եւ զանոնք միշտ ճերմակ, մաքուր վիճակի մէջ պահեցէք : Կեղտոտ եղունգներ անփոյթ, անդդուց բնաւորութեան եւ դէշ կրթութեան նշան են, մանաւանդ աղջկան մէջ կարծես աւելի զղուանք կ'ազդեն անոնք : Ուեէ կրթուած երիտասարդ մը երբ աղջկան մը եղունգները կեղտոտ տեսնէ խօլոյն աննպաստ համարում մը կը կազմէ անոր վրայ :

Ձեր խառնուածքը պղտոր ու ցեխոտ պիտի ըլլայ նաեւ եթէ դուք անկանոն կերպով ճաշէք եւ մարսողութիւննիդ խանգարէք, եթէ անմաքուր խորհուրդներ հիւրընկալէք ու անոնցմով սնանիք, եթէ ջղալին ուժգին չուզմունքներու եւ ցնցումներու անձնատուր ըլլաք, օրինակի համար, եթէ բարկանաք, սաստիկ նախանձի եւ ատելութեան գերի դառնաք : Զղային այս չուզումները, ինչպէս նաեւ անկանոն ունակութիւնները, մորթի գոյնը կ'աւրեն սրտի զարկը, արեան շրջանառութիւնը խանգարելով : Շատ մը աղջիկներ, մանաւանդ դործաւոր դասակարգէն, երբեմն մէկ երկու կտոր խմորեղէնով ամբողջ ճաշ մը կ'ընեն իսկ երբեմն չափազանց կուտեն եւ իրենց ստամբոսը պատռելու աստիճան կը խճողեն, ինչպէս կիրակի օրերը : Այդպիսով անոնք վաղ թէ ուշ իրենց մարսողութիւնը պիտի խանգար-

րեն եւ ատով իրենց մարմնին մէջ թոցներ գոցացընեն : Պէտք է կանոնաւոր ու չափաւոր կերպով սընունդ առնել : Ճաշի պահէն դուրս բան մի ուտէք : Կերակուրը լաւ ծամեցէք, արագ արագ մի ուտէք, լաւ ժամանակ տուէք ուտելուն : Ամէն տեսակ դըր-դըռիչ խմելիքներէն, թէյէն եւ սուրճէն աւելի լաւ է հոռու մնաք :

Յետոյ մտքերնիդ միշտ մաքուր ու խաղաղ պահեցէք : Երբէք տգեղ խորհուրդներ մի հիւրընկալէք : Անոնք անշուշտ ձեզ պիտի դրդեն, ջղայնոտ դարձընեն եւ դէմքի գեղեցկութիւնը եղծանեն : Ձեր կուսութիւնը մինչեւ ամուսնութեան թուականը թանկագին գոհարի մը պէս պահեցէք, բայց մանաւանդ անարատ պահեցէք ձեր հոգիի կուսութիւնը : Ես ուսնց վարանելու պիտի ըսեմ անիկա ուեէ առաքինի երիտասարդի համար աւելի արժէք ու չարք ունի քան թէ Ֆիզիքական կուսութիւնը : Ֆիզիքական կուսութիւն կրնայ ուրիշ տեսակ միջոցներով եւ ջնջուիլ : Աղջիկներ կան որոնք թէեւ իրենց արտաքին կուսութեան նշանը պահած են, ամէն բան են բայց ոչ կոյս :

«Բնութեան սովորական ընթացքին մէջ», կ'ըսէ Մօրօ, «նորատի կիներ իր դաշտանի առաջին երեւումի ժամանակ տակաւին տէրն է ողջախոհութեան եւ անբծութեան այն սիրելի յատկութիւններուն որոնք մենք սովոր ենք կոչել բարոյական կուսութիւն : Պատուաւոր ու մաքուր մարդու մը համար ծագկող կնութեան այս գեղեցիկ յատկութիւնը շատ աւելի սիրելի ու չարգի է քան Ֆիզիքա-

կան կուսութիւնը: Անառակ մարդիկ միայն այս վերջինը կը նկատեն իբրեւ արժէքաւոր ստացուածք մը, որովհետեւ, անիկա կը մատակարարէ զօրաւոր զրգիւ մը անոնց չողնած ու ցամքած երեւակացութիւններուն: Բայց բարոյական ու Ֆիզիքական կուսութիւններ միշտ եւ անհրաժեշտաբար իրարու կապուած չեն, որովհետեւ, մէկը առանց միւսին կրնայ ներկայ ըլլալ: Ֆիզիքական կուսութիւն կըրնայ զանազան բունի միջոցներով ջնջուիլ եւ սակայն բարոյական կուսութիւնը կարող է Ֆիզիքական աւերներուն մէջ մնալ դեռ մաքուր ու անաղարտ: Այսպէս՝ երկուքը իրարմէ լացն կերպով կը տարբերին: Անոնք լացն կերպով կը տարբերին նաեւ արժէքով եւ նշանակութեամբ»:

Դուք դիւրութեամբ պիտի կրնաք ձեր մտքի խաղաղութիւնը, բարոյական կուսութիւնը պահել եթէ սակաւապէտ, պարզ եւ գործունեայ կեանք մը վարէք ու առողջ զբոսեր միայն կարգաք: Ձեզիս կեանքը անհամար փորձութիւններու եւ մոլութիւններու դուռ կը բանայ թէ աղջկան եւ թէ տղուն առջեւ: Երբէք հարստութեան մի ցանկաք, հարուստ էրիկ մի փնտռէք որպէս զի մի միայն երթաք անոր տուն հանգիստ կեանք վարէք. ծառայ բռնէք, ծուլութեան վարժուիք, ռեւէ տնական գործի ձեռք չը տաք եւ զուարճութիւններու ետեւէ իջնաք: Հարստութիւն պէտք է ըլլայ մի միայն միջոց մը մեր Ֆիզիքական եւ հոգեկան զարգացման ու կատարելագործման համար: Ծուլ, զեզիս կեանքը երբէք չարմարութիւն չունի մեզի տալու այդ զարգացումը: Ինքզինք-

նիդ տուէք օգտակար պարագմունքներու եւ ապա ձեզ վարժեցուցէք Ֆիզիքական աշխատանքի: Վերտանգաւոր ունակութիւն մըն է օրն ի բուն տան մէջ ծուլ ծուլ նստիլ եւ ամբողջ ժամանակը վէպ կարգալով ու դաշնամուրին վրայ նուազելով անցունել, կամ ինքնավերլուծութեան յաճախ անձնատուր ըլլալ: Այս մեղկացուցիչ ունակութիւնը, որ մեր ունեւոր դասակարգի աղջիկներուն մէջ բաւական ընդհանուր է, պէտք է դատապարտուի: Տնական գործերու մէջ միշտ պատրաստ եղէք օգնել ձեր մօրը: Որովհետեւ քիչ մը կարգալ ու գրել գիտէք, այդ տեսակ գործեր ձեզ անչարմար, անարժան մի համարէք: Ո՛րքան ցաւալի է որ մեր դպրոցական բարեկեցիկ օրիորդներէն շատերը ցած աչքով կը նային տնական ձեռագին այս կարգի գործերուն վերայ ու ինքզինքնին անոնցմէ վեր կը դասեն: Այդ տեսակ օրիորդներ չաճախ ոչ կանոնաւոր կերակուր մը եփել կը սորվին, ոչ կար կրնան կարել, ոչ ալ գիտեն լուացք ընել կամ սեղան պատրաստել: Աւելի շատ վէպի, երաժշտութեան ու զուարճութեան ետեւէ են: Խուլութեան այնքան վարժուած են որ մարմնով եղած են թուլ, մեղկ արարածներ եւ ալ Ֆիզիքական, տնական աշխատանքի երբէք չեն կրնար տուկալ: Տան մէջ քիչ մը գործ ընել իրենց համար մեծ տանջանք մըն է: Այս տեսակ աղջիկներ օր մը չարաչար պիտի զղջան իրենց այս մտայնութեան համար: Այս տեսակ կիներն են որոնք մեծաւ մասամբ տղայ ունենալէ կը խորշին: Անոնք օր մը պիտի գտնեն որ համեղ կերակուր մը եփել գիտնալը էրիկը գոհացընելու, տունը երջանկացնելու համար շատ արժէ-

քաւոր դիտութիւն մըն է: Մաքուր լուացք ընել, կոկիկ սեղան պատրաստել տղայ մեծցնելու, տունը զուարթացնելու համար կարեւոր դիտելիքներ են: Երբէք ստոր բան մը չը կայ ձեռացին տնական զործերուն մէջ: Անոնք ձեռներուն եւ մկաններուն հետ կը կրթեն նաեւ միաքը եւ ընդհանուր կրթութեան անհրաժեշտ մէկ մասը կը կազմեն: Մի կարծէք միւսին մարդերն են որ պէտք ունին պինդ, դիմացկուն մկաններու եւ զօրաւոր ջիղերու: Կիներն ալ կորովի մայր մը, ժիր տանտիկին մը ըլլալու համար պէտք ունին պինդ մկաններու եւ զօրաւոր ջիղերու: Արդարեւ անոնք կը նպաստեն նաեւ կորովի ուժեղ կամք եւ նկարագրի մը ունենալուն:

Եղէք միշտ հեղահամբոյր եւ քաղցրաբարոյ: Այս չատկութիւններ աղջիկներուն շատ վայել են: Միշտ ջանացէք ձեր անձին կատարելապէս տիրապետել: Զսպեցէք ձեր մէջ բարկութեան կիրքը: Անիկա կիներուն շատ գէշ կը յամբարի: Ըսել չեմ ուզեր եղէք բոլորովին անյուզ ու անջիղ: Ո՛չ, աղջիկ մը որ չոյզ, նախասիրութիւն չունի շատ բան չի արժեր: Բաց ամէն բոլորին զայրանալու եւ փրփրելու պէտք չը կայ բնաւ: Ասանկ բնաւորութիւն գէշ կրթութեան նշան է եւ առողջութիւնը կ'աւրէ: Այն աղջիկը որ շուտ մը կը բարկանայ, իր մօր խիստ խօսքեր կը խօսի, անբաղձալի, անհամակրելի ամուսին մը կ'ըլլայ: Ոեւէ պարկեշտ, արժանաւոր մարդ այդ տեսակ դիւրագրգիռ եւ բարկացող կին չի պիտի սիրէր ունենալ իր տան մէջ:

Գոհակի ընկերուհիներէն խորշեցէք ու միայն մաքուր նկարագրի տէր անձերու հետ չարաբերե-

ցէք: Կարդացէք եւ քիչ մը աշխարհ ուսումնասիրեցէք: Կոյր ու ողորմելիօրէն տգէտ մի մնաք: Զգոյշ եղէք, երիտասարդներ կան որոնք շատ ճարպիկ են աղջիկ խաբելու մէջ: Արտաքուստ շատ քաղցրախօս, կտրիճ ու զոհող կ'երեւին անոնք բաց ներքնապէս ստոր, դաւաճան ու վախկոտ արարածներ են:

Թող ձեր հագուստները վայելուչ եւ պարզ ըլլան: Աչք ծակող, փայլուն տարազներէն եւ նորաձեւութիւններէն հեռու կեցէք: Այն աղջիկը որ կը ջանայ աչք ծակող, մեծաշուք հագուստներով ինքզինք ցուցադրել եւ իր վրայ ուշադրութիւն հրաւիրինք ցուցադրել եւ իր վրայ ուշադրութիւն հրաւիրել պարկեշտ էրիկ մը չի պիտի կրնայ դտնել: Երարեւի՛ր թէ ես կրնայի ձեզ համոզել որ սեղմիրանը մէկդի ձգէիք: Անիկա կը ճնշէ կուրծքին վրայ եւ ծծերը կը մաշեցնէ: Ներքին ծննդական գործարանները կը սղմէ եւ անոնց արեան շրջանառութիւնը կը խափանէ: Կրնայ նոյն իսկ զանոնք տեղափոխել: Լեարդին վրայ ալ կը ճնշէ եւ կարող է գայն այնքան մաշեցնել որ անկէ մահ առաջ գայ: Ես տեսած եմ աղջիկներ որոնց մէջքն ու մարմինը սեղմիրանով եւ ուրիշ հագուստներով այնքան պրկուած էին որ անոնք չէին կրնար գետին ծռիլ կամ հանգիստ նստիլ: Ամէն մէկ պզտիկ շարժման ժամանակ կը վախնային մի գուցէ իրենց հագուստները պատռէին: Ալ կըրթի գուցէ իրենց հագուստները պատռէին: Ալ կըրթի նաք երեւակայել այսպիսիներու ներքին գործարաններու վիճակը ինչ կ'ըլլայ: Ես տեսած եմ աղջիկներ որոնց մէջքերը ճնշմամբ այնքան մաշած էին որ տարակուսելի էր երբեւիցէ անոնք կարողանային մայր ըլլալ: Դուք պէտք չէ կապկորէն ամէն բանի մէջ ուրիշներուն հետեւիք: Քաղաքակրթութեան ամէն



բան լաւ չէ: Անոր մէջ շատ գէշ սովորութիւններ կան որոնցմէ մէկն է սեղմիրանը: Դուք պէտք է ձեր խելքը, դատողութիւնը գործածէք եւ ինչ որ լաւ է, օգտակար է այն ընդօրինակէք: Հալաստանի մէջ հայ կիներ սեղմիրան չեն գործածեր ի՞նչ եղած է իրենց: Աւելի առողջ, առուցք եւ գեղեցիկ չե՞ն: Հին հռովմէացի եւ չոչն օրիորդներ սեղմիրան չէին գործածեր բաց եւ այնպէս շատ գեղեցիկ էին: Երանի՛թէ դուք անիկա բոլորովին մէկդի ձգէիք, բաց կը վախնամ թէ ասիկա յուսահատական կոչ մըն է իմ կողմէն, որովհետեւ, բժիշկներ տարիներէ ի վեր սեղմիրանի դէմ խօսած եւ անոր վատ հետեւանքները մատնանիչ ըրած են, բաց եւ այնպէս կիներ դարձեալ կը շարունակեն զայն գործածել: Գոնէ եթէ բոլորովին չէք կրնար անկէ հրաժարիլ, խորհուրդ կուտամ ձեզի որ կակուղ տեսակներ գործածէք, անոնք որ երկաթեայ կամ ոսկրէ կարծր ձողեր չունին իրենց մէջ: Յետոյ լաւ կ'ըլլայ որ զայն կախէք ձեր ուսերէն: Երկու հատ հաստ երկը հաստատեցէք անոր վերի կողմը եւ զանոնք անցուցէք ձեր ուսերուն վրայ այնպէս որ սեղմիրանը եւ անոր վըրայ դրուած ծանրութիւնները կախուին ուսերէն եւ ոչ թէ ճնշեն ձեր մէջքին վրայ: Մէջքն ու կողերը երբէք պրկելու չէք, զանոնք ազատ ու հանգիստ թողնելու էք:

## VII

## ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ամուսնութիւն քաղաքակրթիչ ազդակ մը.— Տգիտութիւն պատճառը շատ մը ամուսնական չուսախարութեանց.— Ի՞նչ պայմաններով պէտք է ամուսնանալ.— Ի՞նչպէս ընտրութիւն ընելու է.— Հարսանեկան գիշերուան առողջապահութիւնը.— Չափազանցութեանց վնասները.— Չափաւորութեան օրհնութիւնները.— Կինն ու էրիկը ի՞նչպէս վարուելու են իրարու հետ.— Տղարբութեան վախը.— Տղարբութիւն արգիւելու համար գործածուող վնասակար միջոցները.— Պէ՞տք է չղութիւն արգիւելու գիտութիւնը ժողովուրդին սորվեցնել.— Յղի կնոջ առողջապահութիւնը.— Սեռը կարելի՞ է որոշել.— Ամուսնութիւն:

Ամուսնութիւն կեանքի թազն ու սպակը, արդարեւ, կերպով մը կարելի է ըսել անոր նպատակն է, որովհետեւ, անոր միջոցովն է որ գործարանաւոր էակը իր ամենակատարեալ զարգացման կը հասնի եւ կեանքը կը շարունակուի: Մենք տեսանք որ բոլոր բոյսերն ու կենդանիները կը ծնին, կ'աճին որպէս զի հասուննան եւ ստուղ տան ու յետոյ անցնին երթան: Անոնք կ'անցնին կ'երթան, բաց չնոր-

հիւ անոնց միութեան ցեղը կը մնայ ու կը չարատեւէ: Մարդը այս օրէնքին բացառութիւն չի կազմեր: Եթէ բնութիւնը անոր մէջն ալ սեռային զօրաւոր բընազգը դրած է որպէս զի ան սերունդ արտադրելով իր ցեղը շարունակէ եւ այդպէս ինքզինք անմահացընէ, ապա ուրեմն իրաւամբ ամուսնութիւն կարող ենք կեանքի պսակադիր դէպքը կոչել: Եւ եթէ լեցուն ու կատարեալ կեանքը այն ատեն միայն կ'ունենանք երբ մեր մարմնի բոլոր գործարանները լիուլի կերպով կը նուիրուին իրենց պաշտօնին եւ կը կատարեն զայն, ապա ուրեմն մենք այն ատեն կատարեալ կեանք մը կը վարենք երբ կը թեւակոխենք ամուսնական կեանքին մէջ:

Ժամանակէ ժամանակ եւ տարրեր երկիրներու մէջ եղած են կրօնապետներ ու փիլիսոփաներ որոնք ջանացած են ցոյց տալ որ կին ստոր եւ մարդ մոլորցընող էակ մըն է եւ քարոզած են կնատեսացութիւն: Հին ժամանակներու մէջ այդպէս քարոզեց բուդդայականութիւն եւ միջին դարերու մէջ այդպէս քարոզեց եւ քրիստոնէութիւն: Այդ երկու կրօնները կը սորվեցնէին որ մարդկային բնութիւնը կազմուած է իրարու հակառակ երկու տարրերէ, հոգիէն ու մարմնէն: Հոգին միայն լաւ է ու մաքուր, մարմինը չարիքներու անմաքուր աղբիւր մըն է, հետեւաբար պէտք է անգոսնել զայն եւ ամէն տեսակ իղձ ու ցանկութիւն որոնք անկէ կը բղխին: Սեռային ցանկութիւն ամենէն զօրեղ և յաճախ մարդ մոլորցնող ցանկութիւնն է, ուրեմն պէտք է զսպել ու խաբառ նուաճել զայն: Եւ որովհետեւ կին այդ ցանկութիւնը գրգռող արարածն է, այդ ժամանակուան կրօնաւոր-

ներու աչքին ան դարձաւ խոտելի արարած մը որմէ պէտք էր փախչել: Բուդդայան ամէն տեսակ հաճոյքներ վայելելէն յետոյ դժգոհ մնաց աշխարհէն ու ինքզինք ի վերջոյ խստակեցութեան տուաւ: Ինք եւ իր աշակերտներ ամուրիութիւն որդեգրեցին իրրեւերջանկութեան մէկ կարեւոր պայմանը: Պօղոս առաքեալ քրիստոնեաներուն կը գրէ այսպէս. «Քանզի կուզէի որ բոլոր մարդիկ ինձ պէս ըլլային, բայց իւրաքանչիւրն ունի իր պարզէն Աստուծմէ, մէկն այսպէս միւսն այնպէս: Բայց ամուրիներուն կ'ըսեմ, լաւ է անոնց եթէ կեանք ինծի պէս: Բայց եթէ ժուժկալութիւն չունին թող ամուսնանան, քանզի լաւ է ամուսնանալ քան թէ այրիլ»:

Բաւական դարձանալի է որ աւելի վերջեր, տասնեւիններորդ լուսաւորեալ գիտական դարուն մէջն իսկ եղան մեծ հանճարներ որոնք միջին դարու խստակեացներուն պէս բուռն կերպով արտայայտեցին զգուանք դէպի կին եւ քարոզեցին կնատեսացութիւն: «Ի՞նչ է, կ'ըսէ Ծոպէնհաուէր, «այդ գաճաճ, նեղ ուսերով, լայն կողերով ու կարճ սրունքներով սեռը որ սեռային ցանկութեամբ մթազնած առնական իմացականութիւն մը միայն կրնայ կոչել գեղեցիկ»: Ըստ Հարտմանի՝ սէր կը պատճառէ աւելի չարչարանք քան հաճոյք: Անոր կարծիքով կարելի չէ տարակուսիլ որ բանականութիւն կը հրամայէ սէրէն խստաւ հրաժարում եւ այս վախճանին հասնելու համար իրրեւ միջոց՝ կը լանձնարարէ սեռային ցանկութեան ջնջումը ներքինացման միջոցով եթէ ատոր կարելի է ապաւինիլ ցանկութիւն ջնջելու համար: Քիչ շատ ասոնց նման կնատեսացներու հանդի-

պած եմ մեր երիտասարդներուն մէջ: «Մենք ոչ մէկ կնոջ եւ ամուսնութեան չենք հաւատար: Հաւատարիմ կին չը կայ, անոնք բոլորն ալ խաբեբաներ են: Ո՞ր մէկ մարդ ամուսնացած ու ճշմարտապէս երջանիկ եղած է», այս եւ ասոնց նման խօսքեր լսած եմ անոնցմէ:

Ասոնք արտուր, վասնդաւոր մտայնութիւններ են որոնք բոլորովին հակառակ են առողջ, նորմալ մարդկութեան: Այսպէս խօսողներ, գրեթէ առանց բացառութեան, հիւանդոտ մարդիկ են որոնք բնութեան կերպերու մասին քիչ տեղեկութիւն ունին: Կեանքը, մարդկային ցեղը պիտի մնա՞ջ աշխարհի վրայ թէ ոչ: Եթէ պիտի մնայ, ուրեմն մարդ եւ կին պէտք է իրարու հետ սպրին եւ զիրար սիրեն: Յոռեատեսութիւն կը թուի թէ բոլորովին հակառակ է իրականութեան և կարելի է պնդել որ կեանքը, սէրը աւելի հաճոցք ունի քան թէ ցաւ: Որովհետեւ, եթէ կեանք աւելի ցաւ ունենար քան հաճոցք անիկա հիմա արդէն դադրած պիտի ըլլար գոյութենէ: Բնաշըրջում տեղի չի պիտի ունենար: Յաւ միշտ կ'ենթադրէ օրդանիզմի գոյութեան սպառնացող կործանարար վիճակ մը: Շարունակական ցաւի ու ճընշման տակ ունէ կեանք չի կրնար բարգաւաճիլ, վաղ թէ ուշ պիտի մեռնի: Ասիկա կենսաբանական ճընշմարտութիւն մըն է: Բայց մենք կը տեսնենք որ հակառակը տեղի ունեցած է եւ տեղի կ'ունենայ: Կեանք բազմացած է ու բռնած է երկրիս երեսը: Բնաշըրջման գլուխ գործոցը եզոզ մարդն ալ արագ արագ կ'աճի ու կը տարածուի ամբողջ աշխարհի վրայ:

Անողոր, խիստ բնութիւն իր գործը առանց չը-

շուկի, հաստատ կերպով կը շարունակէ: Յոռեատեսներու, կնատեսներու ողբերը երբէք չեն կրցած դայն իր ընթացքէն կասեցնել: Հակառակ անոնց արտունջներուն եւ դժգոհութեան, մարդն ու կին դարձեալ կը շարունակեն զիրար սիրել, իրարմով ներշնչուիլ ու երջանկանալ: Տարակոչս չը կայ որ ամուսնութիւն մեծ քաղաքակրթիչ ազդակ մը եղած է: Շնորհիւ ամուսնութեան, շնորհիւ կնոջ ներկայութեան մարդու վայրենական, բիրտ մղուանները դապուեցան ու մեղմացան: Շնորհիւ ամուսնութեան ան կրցաւ ինքզինք յարատեւ, արդիւնաբեր աշխատանքի վարժեցնել, պարտականութեան զգացումը իր մէջ զարգացաւ եւ անոր ընդհանուր բնութիւնը հասունցաւ ու ազնուացաւ: Արդարեւ առանց կնոջ, առանց ընտանեկան չարկի կեանք տաղտկալի անպատ մը պիտի ըլլար եւ մարդ այդ անպատին մէջ ման եկող վայրենի կենդանի մը: «Եթէ ինձմէ հարցըուէր», կը գրէ Յինք, «ըսելու թէ ի՞նչ է արդի քաղաքակրթութեան ամենէն ազդեցիկ ու ազնուացուցիչ տարրը, ես պիտի պատասխանէի կին, գեղեցկութիւն, սէր եւ ամուսնութիւն: Եթէ ինձմէ հարցըուէր սակայն ըսելու թէ ի՞նչ էր նախկին միջին դարերու ամենէն առանձնապատուկ եւ ներքին էութիւնը, իմ պատասխանս պիտի ըլլար ոխերիմ թշնամութիւն գէպի ամէն ինչ որ իզական էր, գէպի գեցեղկութիւն, սէր և ամուսնութիւն»: Ու հետաքրքրական է գիտել որ մինչ քաղաքակրթութիւնը առաջ կ'երթայ, կնոջ գիրքն ու պատիւն ալ համեմատաբար կը բարձրանան: Այժմ բոլոր քաղաքակիրթ երկրներու մէջ կին մեծապէս կը չարգուր ու կը պատ-

ուրուի եւ տարակոյս չը կայ որ շատ չանցած քաղաքակրթութեան չառաջացման մէջ ան պիտի ունենայ աւելի գործօն ու խոշոր մասնակցութիւն մը: Անոնք որ կը կարծեն հաւատարիմ կին չը կայ, բոլոր կիներ խարերաներ են, մեծ անարդարութիւն մը կ'ընեն անոր ջինջ ու մաքուր հոգիին եւ ծանր կերպով կը նախատեն նաեւ ամբողջ մարդկային աղբը: Կեանքի մէջ աւելի գեղեցկութիւն, աւելի ճշմարտութիւն կայ քան այգպիտիները կը կարծեն: Եթէ միայն աչպիտիները ինքզինքնին բարձրացնեն ու ազնուացնեն, ցոյց տան աշխատասիրութիւն ու բարի գործ արժանանալու գեղեցիկ, լաւ աղջկան մը սիրոյն, այն ատեն պիտի գտնեն որ նոյնքան եւ աւելի պարկեշտ աղջիկներ կան որքան երիտասարդներ, որ կարելի է գտնել հաւատարիմ կին եւ անոր հետ երջանիկ կերպով ապրիլ եթէ միայն իրենք հաւատարիմ եւ մաքուր մնան:

Անտարակոյս շատ մը երիտասարդներ եւ օրիորդներ իրենց ամուսնական կեանքին մէջ կատարելապէս չուստիտար եւ ալերջանիկ եղած են, բայց ատոր պատճառը եթէ որոնենք պիտի տեսնենք որ չաճախ անոնց տգիտութիւնն է եղած: Առանց տարակոյսի, ինչպէս կեանքի ուրիշ շատ մը շարիքները մեր իսկ ձեռքով, տգիտութեան եւ ծուլութեան պատճառաւ կը բերենք մեր գլուխը, նոյնպէս ամուսնական ու սեռային շարիքներէն եթէ ոչ բոլորը, գէթ անոնցմէ խոշոր մաս մը մեր իսկ տգիտութեամբ եւ չափազանցութիւններով կը բերենք մեր գլուխը: Շատ մը երիտասարդներ ու աղջիկներ իրենց ամուսնութենէն դժգոհ մնացած են, որովհե-

տեւ, խիստ կանուխ տարիքի մը մէջ ամուսնացած են առանց երբէք զիրար լաւ ճանչցած ըլլալու, ամուսնութեան կոչումն ու անոր չարակից պարտականութիւնները լիովին ըմբռնած ըլլալու: Ուրիշ շատեր հիասթափ եղած են, որովհետեւ, ամուսնութեան նշանակութիւնը լման կերպով հասկցած չեն, ծոյլ ու անձնասէր եղած են, չափէն աւելի մեծ աղքատութիւններ ունեցած են ամուսնական կեանքէն եւ հանգիստ կեանքի մը ետեւէ եղած են: Շատ մը երիտասարդներ իրենց տունը թշուառացուցած են, որովհետեւ, զանազան վեներական ախտերով բռնուելէ չետոյ, առանց անոնց ծանր հանգամանքը զիտնալու եւ լաւ մը բժշկուելու ամուսնացած են եւ վարակած են իրենց կիները, կամ կամքի թուլութեան պատճառաւ չափազանցութիւններով մէջ ինկած են եւ աւրած են թէ իրենց սեփական առողջութիւնը եւ թէ իրենց ամուսիններու առողջութիւնը: Շատ մը կիներ իրենց առողջութիւնը խանգարած են, դաւակ ունենալու ուրախութենէն զրկուած են, որովհետեւ, առողջութեան օրէնքներու ծանօթութենէն իսպառ զուրկ եղած են: Բնութիւն իր անողք օրէնքներն ունի եւ ան հաւասարապէս կը պատժէ այդ օրէնքներուն կամաւ անհնազանդ եղողը եւ թէ տգիտարար անաստողը: Բնութիւն տգիտութեան համար երբէք թողութիւն չընէր: Ամուսնութիւն ամենալուրջ խնդիր մըն է որուն մէջ ամուսնացող երիտասարդն ու աղջիկը միայն զգացումով կառավարուելու չեն: Անիկա մի միայն անձնական երջանկութեան խնդիր մը չէ: Ան իր տուած երջանկութեան համար կը պահանջէ ծանր պարտականու-

թիւններ եւ գոհողութիւններ, յաճախ նոյն իսկ ցաւ ու տառապանք: Ան գործ ունի մեծապէս սերունդին հետ, արդարեւ, անոր հիմնական նպատակը պողաբերութիւն է, ինչպէս տեսանք: Ուստի ամուսնացող երիտասարդն ու աղջիկը պէտք է պատրաստ ըլլան ստանձնելու ամուսնութեան ծանր պարտականութիւնները, դիմադրաւելու անոր դժուարութիւնները: Պէտք է անոնք այս խնդրին մէջ գործածեն խելք ու դատողութիւն, չըջահալեաց կերպով մտածեն եւ նկատի ունենան իրենց թողած սերունդի որպիսութիւնը: Մենք պարտինք ուրեմն ուսումնասիրել բնութեան օրէնքները որպէսզի տգիտաբար անոնց դէմ չը մեղանչենք եւ անոր պատիժը մեր վրայ չը բերենք: Իմ նպատակը սիրտի ըլլայ յաջորդ էջերուն մէջ ամուսնական կեանքի օրէնքներու մասին քիչ մը տեղեկութիւն հաղորդել ընթերցողներուն եւ այդ կեանքի չարիքներէն խուսափելու կերպը ցոյց տալ:

\* \* \*

Ամուսնացող երիտասարդը նախ պէտք է ի վիճակի ըլլայ ընտանիք պահելու: Ըսել չեմ ուղեր անպատճառ պէտք է կալուած կամ մեծաքանակ դրամ ունենայ: Ի հարկէ եթէ անիկա կրցած է կոկիկ դուժար մը աւելցնել այս նպատակին համար աւելի լաւ, բայց եթէ ան դրամ չունի, դոնէ պէտք է ըլլայ գործելու ընդունակ, աշխատասէր եւ իր պարտականութեան գիտակից: Չքաւորութիւն առանց տարակոչսի մեծ արգելք մըն է Փիլիքական եւ հողեկան լի-

ուրի զարգացման: Կարօտութեան եւ անօթութեան երկիւղն է որ մեծաւ մասամբ մարդոց խաբել, դողնալ ու խարդախել կուտայ: Առանց նիւթական տանելի կացութեան, առանց քիչ շատ բարեկեցիկ վիճակի կարելի չէ սէրը, մարդու նուրբ ու ազնիւ ըզգացումները գործօն ու վառ վիճակի մէջ պահել, ոչ ալ պատշաճ կերպով տղայ մեծցնել ու կրթել:

Երկուքի մէջն ալ պէտք է ըլլայ փոխադարձ ճշմարիտ սէր: Առանց ճշմարիտ սիրոյ ամուսնութիւն պժղալի է քաղաքակիրթ մարդու զգացումին եւ շատ են այս տեսակ ամուսնութեան օրինակներն որոնք ապերջանիկ ու թշուառ դուրս եկած են: Այն մարդ կամ կինը որ աշխարհային, անձնասիրական եւ դձուճ շարժառիթներէ դրդեալ կ'ամուսնանայ, սիրոյ քաղաքակիրթիչ, բարձրացնող ուժին դէմ կը գործէ եւ մարդկային ցեղը աղնուանայէն ետ կը պահէ: Որովհետեւ, առանց սիրոյ ամուսնութիւն միայն ամուսնացեալներուն վրայ չէ որ վատ կերպով կ'ազդէ զանոնք դժբաղդացնելով շնորհիւ անհամաձայնութեան ու հակակրութեան այլեւ սերունդին վրայ: Առօջ, դեղեցիկ սերունդ մը արտադրելու համար կինն ու էրիկը պէտք է ունենան կատարեալ սէր եւ միութիւն: Երբ ամուսնորուն մէջ սէր եւ համակրութիւն չը կայ, սերունդը մարմնով ու մտքով պակաս կ'ըլլայ:

Ամուսնութիւն մի միայն հանդիստ ապրելու համար, հարստութեան, ընկերային բարձր դիրքի, քաղաքական եւայլն չետին նպատակներու համար պէտք է դատապարտուի: Պէտք է դատապարտել նաեւ ամուսնութեան աչն հին ու բարբարոս կերպը

որ դեռ եւս գոչութիւն ունի չետամնաց երկիրներուն մէջ, աչն է, առանց աղջիկը տեսնելու եւ դաչն լաւ մը ճանչնալու անոր հետ ամուսնանալ: Գարձեալ, խստիւ պէտք է դատապարտուի աղջիկը շատ կանուխ հասակի մը մէջ ամուսնացնելը, երբ ան մարմնով ու մտքով երբէք լման կերպով հասունցած չէ, մարդ ճանչնալու, շիտակ ընտրութիւն ընելու կարողութիւն չունի եւ ամուսնութեան նշանակութիւնը դեռ լիովին կերպով ըմբռնած չէ: Աղջիկը պէտք է առ նուազն քսան, քսաներկու տարեկան ըլլայ ամուսնութեան ժամանակ: Այս տարիքին մէջ ան հազիւ թէ մտքով ու մարմնով հասունցած կ'ըլլայ եւ կրնայ շիտակ ընտրութիւն ընել:

Երկուքն ալ պէտք է ըլլան առողջ: Երբ մէկը կամ միւսը վատ, անբուժելի հիւանդութեամբ մը կը տառապի, պէտք չէ ամուսնանայ եւ աշխարհ բերէ տխեղձ ու տկար երեխաներ եւ աչդպիսով աշխարհի թշուառներու թիւը աւելցնէ: Մասնաւորապէս երեք հիւանդութիւններ լուրջ չիշատակութեան արժանի են այս տեղ, որովհետեւ, ցեղը վատասերելու հզօր ազդակներ են: Ատոնք են արբեցութիւն, սիֆիլիս եւ թոքախտ:

Արբեցութիւն բուն արբեցողին մէջ զանազան հիւանդութիւններ, ինչպէս ջղաչին ու մտաչին տրկարութիւններ, լեարդի հիւանդութիւն, կարծրերակութիւն եւայլն առաջ բերելէն զատ, ընտանեկան անհամաձայնութեան եւ դժբաղդութեան պատճառ ըլլալէն զատ, աւերիչ ազդեցութիւն կը թողու նաեւ սերունդին վրայ: Պղտիկ մաս մը միայն արբեցող ծնողներու սերունդէն, եօթէն մինչեւ տասնեւեօթ

առ հարիւրը, մտքով ու մարմնով առողջ կը ծնին. մեծագոյն մասը արագ վատասերման նշաններ ցոյց կուտայ, կ'ըլլայ տկարամիտ, ապուշ, հակամէտ արբեցութեան, ոճրագործութեան, թոքախտի եւ լուսնոտութեան: Վիճակագրութիւններ ցոյց կուտան որ արբեցող ծնողաց ողջ մնացած զաւակներու մէկ ութերորդ մասը ընկնաւորութեամբ կ'ազդուի, իսկ բոլոր ապուշ տղաներու կէսէն աւելին այդ տեսակ ծնողներէն կը սերի: Ալիօժօլ մարմնի բջիջները, մասնաւորապէս սերմը, ուղղակի կը թունաւորէ, աչնպէս որ զգաստ, առողջ մարդ կամ կին մը երբ մէկ անգամ միայն արբենայ ու այդ ժամանակ սեռային մեքէցում ունենայ, կարող է ծնունդ տալ բոլորովին վատասերած երեխայի մը: Ասիկա ճիշտ է մանաւանդ երբ մարդ մը, թէեւ մէկ անգամէն շատ չի խմեր, բայց շարունակաբար կը խմէ ու ինքզինք ալիօժօլով միշտ տոգորուած կը պահէ:

Յեղը ոչ պակաս վատասերող երկրորդ ազդակ մըն է սիֆիլիսը: Ֆուրնիէրի եւ Տարնովսքիի ուսուսմանասիրութիւնները այս իրողութիւնը աչժմ լիուլի կերպով հաստատած եւ ճանչցուցած են եւ արժանի են մեծ գնահատութեան: Բայց ես ասոր վրայ աւելի երկար պիտի անդրադառնամ վեներական ախտերու մասին խօսած ժամանակ:

Թոքախտն ալ ցեղը վատասերման կ'առաջնորդէ, որովհետեւ, սերունդը կը տկարացնէ եւ կուտայ անոր մասնաւոր հակամիտութիւն սոչն հիւանդութեամբ բռնուելու: Բլօխ կ'ըսէ, անոնք որ չաչտնի թոքախտ եւ սկրօֆուլա ունին, պէտք չէ ամուսնանան: Նոյն կարծիքը կը չաչտնէ նաեւ Օղէր: Ըստ

Օղբերի՛ երբ մէկու մը մէջ թոքախտը դադրած է առաջ երթալէն, կամ բոլորովին բուժուած է, անոր մարմնական ուժը տեղն է, լաւ միջավայրի մէջ կ'ապրի եւ ընտանեկան առողջ պատմութիւն մը ունի, ամուսնութեան փորձը (այսպէս միայն կարող ենք կոչել զայն) կրնայ չաջող դուրս դալ եւ ան կրնայ ըլլալ ծնունդ տայ առողջ երեխաներու: Երբ ախտը սակաւն դործօն վիճակի մէջ է, հիւանդը տաքութիւն եւ մանրէներ ունի, ամուսնութիւնը պէտք է արգիլուի մանաւանդ կնոջ համար, որովհետեւ, տղարեւութիւնը զայն շուտով կը վատթարացնէ: Ըստ Դիւրուայի՝ «երբ թոքախտով վարակուած կին մը կ'ամուսնանայ, առաջին տղարեւութեան կրնայ բաւական գիմանալ, երկրորդին դժուարութեամբ կը գիմանայ, իսկ երրորդին երբէք չի կրնար գիմանալ»:

Սեռային ընտրութեան ժամանակ այս երեք ախտերէն զատ զդուշանալու է նաեւ մտային խանդարումներէ, դառտէն, չափազանց պարարտութենէն, շաքարախտէն, քաղցկեղէն, որոնք բոլորը ժառանգական են եւ կարգ մը ուրիշ ջղալին տկարութիւններէ: այս տեսակէտէն լուրջ ուշադրութեան արժանի է նաեւ կնոջ ծծերու բացակայութիւնը կամ հիւժումը, որովհետեւ, մօր կաթը անհամեմատ աւելի դերտղանց է արուեստական կաթէն մանուկը սնուցանելու եւ անոր կենսունակութիւն տալու համար: Դիտուած է որ արուեստական կաթով սնած երախաներ իրենց կենսունակութիւնը շուտով կը կորսնցնեն ու չեն կրնար գիմանալ զանազան վարակէ հիւանդութիւններու: Երբ անոնք կուզան դիւրին որս մը կ'ըլլան անոնց եւ շուտով կ'երթան: Յա-

ճախ վերին աստիճանի դժուար դործ է արուեստական կաթը չարմարցնել մանուկի ստամոքսին եւ զայն մեծցնել:

Մարդիկ շատ անգամ սեռային ընտրութեան ժամանակ անտես կ'ընեն Ֆիզիքական գեղեցկութիւնն ու առողջութիւնը եւ կը հրապուրուին իմացական ու բարոյական դրաւչութիւններով: Բարոյական եւ մտաւոր ձիրքեր անշուշտ լաւ բաներ են եւ շատ կարեւոր տեղ մը կը բռնեն, բայց առողջութիւնն ու Ֆիզիքական գեղեցկութիւնը աղբիւրներն են միւս բոլոր ձիրքերուն եւ երիտասարդ սիրահարը պէտք է լուրջ նկատողութեան առնէ աղջկան Ֆիզիքական չատկութիւնները: Ամէն զօրութեան, ամէն գաղափարի, բարոյական ամէն գեղեցկութեան ետեւ դարձեալ կը գտնենք նիւթը: Վաղուց ի վեր է որ ընդունուած է թէ առողջ միտքը առողջ մարմնի մէջ կ'ապրի: Այժմ աւելի հեռուն կ'երթան եւ կ'ընդունին որ ոչ միայն առողջ միտքը հապա նաեւ առողջ հոգին առողջ մարմնի մէջ կ'ապրի: Անցած են այն ժամանակներ երբ կը հաւատային հոգին մարմնէն բոլորովին ազատ, առանձին գոյութիւն ունեցող բան մըն է որ երբ մարմինը կը մեռնի, թռչնոյ մը պէս կը թռչի ու կ'երթայ: Ըստ բնախօսական արդի ցուցմունքներուն, հոգի ըստած բանը ոչ այլ ինչ է բայց եթէ մարմնի դործարաններու համադործակցութեան եղանակը կամ արտաչափութիւնը: Բուն իսկ մարդկային շաղուածքն է: Որքան տարբեր մարմիններ նոյնքան տարբեր հոգիներ: Երբ կ'ըսենք այս ինչ մարդ այն ինչ տեսակ հոգի ունի, ուրիշ բան ըսել չենք ուզեր բայց եթէ այս ինչ եղանակաւ կը

մտածէ, կը շարժի ու կ'արտայայտուի. կատարելապէս իր կազմուածքին, շղատին դրութեան, ուղեղին համեմատ կը չուզուի եկող արտաքին գրգռներէն եւ ապա կը հակազդէ իր միջավայրին վրայ: Ուստի երբոր մարմինը այլանդակուած եւ հիւանդոտ է, հոգին ալ տխեղծ ու հիւանդոտ կ'ըլլայ: Երբ մարմինը, բառին ամենալայն իմաստով, առողջ է եւ գեղեցիկ, հոգին ալ առողջ եւ գեղեցիկ կ'ըլլայ: Առողջութիւն եւ գեղեցիկութիւն էսպէս միեւնոյն բաներ են: Առանց կատարեալ առողջութեան գեղեցիկութիւն չենք կրնար ունենալ: Էսպէս միեւնոյն բաներ են նաեւ գեղեցիկութիւն եւ բարոյականութիւն: Կատարելապէս առողջ ու գեղեցիկ մարդ էսպէս բարի է: Ոչ պակաս հեղինակաւորութիւն մը քան Հէրբէրտ Սպէնսէր կ'ըսէ սեռային ընտրութեան մէջ առաջին տեղը պէտք է տալ աղջկան Փիզիքական գեղեցիկութեան եւ առողջութեանը, որովհետեւ, ամբողջ սերունդի մը գեղեցիկութիւնը, կենսունակութիւնը եւ ազնիւ ձիրքերը գեղեցիկ առողջ մայրերէն կախում ունին: Ուսման ան կուտայ երրորդական տեղ եւ շատ իրաւամբ իմ կարծիքով: Որովհետեւ, երբ կին մը լաւ երաժշտագէտ է, կրնայ դաշնամուրին վրայ գեղեցիկ կտորներ նուագել բայց մարմնով տկար է, շարունակ գլխի ու կոնակի ցաւ ունի, մեղամաղձոտ է եւ տրտնջոտ, անոր տունը շատ տխուր պիտի ըլլայ հակառակ կնոջ երաժշտական բարձր ձիրքերուն: Երբ ուրիշ կին մը լատիններէն գիտէ եւ Վիրգիլիոս կրնայ լաւ կարդալ եւ հասկնալ բայց անքան վտիտ մարմին ունի որ հազիւ թէ կրնայ տպահով կերպով ծնունդ տալ երախայլ մը, անոր լեզուագիտութիւնը

ո՞րքան մեծ ուրախութիւն պիտի ըլլայ իր էրկան: Ծատ քիչ: Ընդհակառակն, ուրախ, երջանիկ տուն կազմելու չարմարութիւն ունին կայտառ եւ զուարթ աղջիկներ որոնք ընդունակ են կորովի մայրեր ըլլալու, կարող են երախայ գիեցնել եւ մեծցնել, մաքուր տուն պահել եւ լաւ կերակուր եփել, որոնք իրենց զուարթութեամբն ու գործունէութեամբը, անուշ բնաւորութեամբ կարող են իրենց էրկան սէրը միշտ վառ պահել: Թօշնած այտեր ու վաղահաս կընճիւղներ, շարունակական հեծեծանք ու տրտնջում սէրը կարող են շուտով պաղեցնել, բայց առոյգ կըլոր մարմին, կարմիր այտեր եւ կենսուրախ, քաղցր բնաւորութիւն սիրոյ մշտական աղբիւրներ են: Երիտասարդներ ուրեմն ընտրելու են առողջ ու գեղեցիկ բայց եւ խելացի, ուշիմ օրիորդներ: Հոգ չէ թէ բարձր ուսում չունին: Ի հարկէ ըսել չեմ ուզեր ուսումը արժէք չունի, քաւ լիցի. երբ աղջիկը առողջութեան եւ գեղեցիկութեան հետ ուսում ալ ունի աւելի լաւ, բայց երբոր երկուքէն մէկը միայն ունի նախընտրելի է առողջ ու բնական խելք ունեցող աղջիկը:

Ոմանք կը հաւատան գեղեցիկ ծրագիր մը պիտի ըլլար եթէ ամուսնացողները, մարդ թէ կին, բժշկական ընտրութեան ենթարկուէին ու ապա իշխանութիւններուն զիրենք ամուսնութեան չարմար նկատող բժշկական վկայական մը ցոյց տալէ չետոյ միայն ամուսնանային: Առայժմ աս տեսակ ծրագիր մը գործադրելու եւ չաջողցնելու համար դորձնական դժուարութիւններ շատ կան: Ամերիկայի կարգ մը նահանգներ սկսած են այս տեսակ օրինագծեր անցնել



եւ գործադրել: Տեսնենք թէ ինչ արդիւնք պիտի տան անոնք: Ես կը հաւատամ աւելի հանրային կըրթութեան: Իմ համոզումը այն է թէ մինչեւ որ հասարակութիւնը այս խնդիրներու մասին կատարելապէս չը լուսաւորուի, տիրող վտանգներուն լաւ մը վերահասու չըլլայ, սեռային ընտրութեան հարցը գոհացուցիչ կերպով պիտի չը լուծուի: Ամուսնութեան խնդիրը չափազանց փափուկ խնդիր մըն է որպէս զի արտաքին կօնտրօլի ենթարկուի: Անհատական ազատութիւն պէտք է այդ աստիճան սեղմել ու բռնաբարել:

Ամուսնացողներուն մէջ պէտք է Ֆիզիքի մեծ անհաւասարութիւն ըլլայ: Անախորժ ու աղիտալի հետեւանքներ կրնան ծագիլ անկէ: Խիստ անչարմար է, օրինակի համար, որ խոշոր մարմնով մարդ մը ամուսնանայ պզտիկ կնկան մը հետ, որովհետեւ, կըրնայ անոր պատճառել ցաւ եւ ուրիշ անպատեհութիւններ:

Լաւ է որ երիտասարդը ամենէն քիչ գոնէ հինգ տարով մեծ ըլլայ աղջիկէն, որովհետեւ, կինը շուտ արբունքի կը հասնի եւ շուտ ալ կը կորսնցնէ պլտղաբերութեան կարողութիւնը: Ամենէն շատ տասնեւհինգ կամ տասնեւվեց տարի պէտք է երիտասարդը աղջիկէն մեծ ըլլայ, տարիքի ասկէ աւելի մեծ տարբերութիւն կրնայ վատ հետեւանքներու ընդ առաջնորդել թէ ամուսններուն եւ թէ սերունդին նկատմամբ: Այսպիսի պարագաներու մէջ էրիկն ու կինը ոչ Ֆիզիքապէս եւ ոչ հոգեպէս կրնան իրարու հետ հաշտ ու սիրով ապրիլ, որովհետեւ այս տեսակ ամուսնութիւն պարզա-

պէս անբնական է: Երբոր տարիք առած, ճերմակ մազերով թշուառական մարդ մը նորատի, սիրուն աղջկան մը ձեռքը կը խնդրէ եւ կը չաջողի դաշն իր տուն բերել շնորհիւ հարստութեան ու ընկերային բարձր դիրքի եւ ապա մէկ երկու տարի վերջ կը տեսնէ որ իր կարողութիւնները արդէն սկսած են նուազիլ բաց կինը տակաւին թարմ ու առոյգ է եւ անոր ուժերը դեռ նոր երեւան կ'ելլեն, երբէք թող չը զարմանայ այդ մարդ եթէ իր կինը չը կրնալով իրմով գոհանալ՝ իրեն դէմ կը դաւաճանէ եւ իր սրնէն դուրս, ուրիշ տեղեր իր տաք կրքերուն համար դովութիւն, իսկ պրկուած ջիղերուն համար հանգըստութիւն կ'որոնէ, կամ եթէ ճշմարիտ կնոջ մը վայել առաքինութեամբ թէեւ իր տան հաւատարիմ կը մընայ, կամաց կամաց կ'սկսի թարշամիլ, կը հիւժի, ներքին թախիժ մը իր կեանքը կը կրծէ եւ շուտով աշնան թօշնած տերեւին նման կը խամրի ու կը չորնայ:

Ի հարկէ աւելի անբնական ու անչարմար է որ կինը մարդէն տաքէց ըլլայ, որովհետեւ, ինչպէս մենք տեսանք, կին աւելի շուտ իր սեռային կարողութիւնները կը կորսնցնէ ու երբ ան արդէն պառաւած է եւ իր գրաւչութիւնը կորսնցուցած իսկ մարդը երիտասարդ է եւ հուժկու, ի՞նչ պիտի ըլլայ այս վերջինի վիճակը: Պաղութիւն, անհաւատարմութիւն ու անհամաձայնութիւն հաւանական է որ անպակաս ըլլան այս տեսակ զոյգերուն մէջ: Յետոյ այսօրինակ ամուսնութեանց ազդեցութիւնը վատ կ'ըլլայ նաեւ սերունդին վրայ: Առոյգ ու կորովի սերունդ ապահովելու համար անհրաժեշտ են առոյգ ու

կորովի ծնողներ եւ կատարեալ ներդաշնակութիւն ու սէր անոնց մէջ: Անհաւասար ամուսնութենէն անդօր ու տկարամիտ սերունդ մը դուրս պիտի դայ: Վտանգաւոր է բնութեան օրէնքներուն հետ խաղալ եւ իմացական կամ բարոյական գրաւչութիւններով տարուելով, ընկերային ու աշխարհային նկատումներէ դրդուած՝ մարդկային կեանքի ֆիզիքական, կենդանական կողմը անտես ընել եւ ջանալ կենդանական զգացումները քնացնել: Մարդ իր մտաւոր եւ բարոյական բոլոր ձիրքերով մէկտեղ կենդանի մըն է եւ իր կենդանական պահանջներն ունի: Ինչ որ բնական է եւ պատշաճ պէտք է այն ընել: Բնութեան օրէնքներուն դէմ գործողը պիտի պատժուի, ուչ թէ կանուխ:

Խոստալիելու է նաև համարիւն, մօտիկ ազգականներէն ամուսնութիւն կնքելէն, որովհետեւ, այսպիսի արիւնակցական ամուսնութեանց հետեւանքը վատ կ'ըլլայ դարձեալ սերունդին վրայ: Այս տեսակ միութիւններէն սերած տղաներ կենսունակ չեն ըլլար, կ'ըլլան տկարամիտ եւ ապուշ: Յեղը դօրաւոր եւ առողջ դարձնելու համար խիստ բաղձալի է տարբեր ընտանիքներու պատկանող, տարբեր տիպերու տէր առողջ անհատները բերել իրարու քով:

Կանանց կրթութեան մէջ չաճախ ցաւալիօրէն պակաս թողուած առարկաներ են առտնին տնտեսութիւն, առողջապահութիւն եւ հոգեբանական գիտութիւնները: Ամուսնացող աղջիկը տուն պիտի պահէ և մայր պիտի ըլլայ: Հետեւաբար անոր կրթութիւնը պէտք է՝ գերազանցապէս չարմարցուի այդ կոչումներուն: Տղաներու հոգատարութեան եւ դաստիար-

բակութեան խնդիրը ամենակարեւոր հարց մըն է: Մայրն է որ իր զաւակներու նկարագրի հիմերը պիտի դնէ անոնց մանկութեան ժամանակ: Ուստի ան պէտք է դիտնայ առտնին տնտեսութիւն, լաւ եփել ու կարել, մաքուր ու կոկիկ տուն պահել: Պէտք է սորվի գուարթ, երջանիկ ըլլալու եւ տան մէջ ուրախ մթնոլորտ մը ստեղծելու արուեստը, քանզի գուարթ ու երջանիկ ըլլալն ալ գիտութիւններ են որոնք պէտք է սորվիլ: Ան պէտք է դիտնայ նաև առողջապահութիւն եւ բաւական հոգեբանութիւն որ պէսզի կարենայ պատշաճ կերպով տղայ մեծցնել եւ դաստիարակել:

\* \* \*

Հարսանեկան դիշերուան առողջապահութեան վրայ երիտասարդն ու աղջիկը պէտք է աւելի ծանօթութիւն ստանան: Մայրեր պէտք է իրենց աղջիկներուն լիակատար տեղեկութիւն տան մերձեցման նշանակութեան ու չառաջխաղացումներու մասին: Խոր տգիտութիւն այս խնդիրներու մէջ կարող է պատճառ դառնալ մտաւոր ու ֆիզիքական անհարկէ պատասխանքի եւ ազդել աղջկան ամբողջ ապագայ կեանքին վրայ: Երիտասարդներ առաւել քան երբէք փափկանկատ եւ մեղմ ըլլալու են իրենց կիներուն հանդէպ ամուսնութեան առաջին դիշերը: Հիմա է ժամանակը ցոյց տալու իրենց կրթութիւնն ու ժուժկալութիւնը: Աղջիկներ հարսանեկան պատրաստութիւններէն եւ ամուսնութեան արարողութեանց չարակից չողնութիւններէն, նաև անոր առթած չոյ-

դերուն պատճառաւ խիստ անտրամադիր կ'ըլլան սե-  
ռաչին գործողութեան՝ ամուսնութեան առաջին դի-  
շերը: Երիտասարդներու կողմէն բիրտ շարժում մը,  
բռնի ստիպում մը կարող է գիւրադբաց եւ զգալուն  
կին մը ընդմիջտ իրենցմէ օտարացնել եւ դանտնք ի-  
րենց աչքին խոտելի դարձնել: Ես կը հաւատամ  
չափ մը կանանց իրենց էրիկներուն դէմ ունեցած  
հակակրօնութիւնը կ'սկսի այն խակ ու բարբարոս կեր-  
պէն որով էրիկները կը ջանան իրենց առաջին ա-  
մուսնական պարտաւորութիւնը կատարել: Էրիկնե-  
րէն ոմանք առաջին դիշերը շատ անգամ պարզապէս  
օրինական բռնարարութիւն մըն է որ կ'ընեն, որով-  
հետեւ աղջիկները չաճախ այնքան երկչոտ, չիտթուած  
ու անտրամադիր կ'ըլլան: Բիրենդ շատ գեղեցիկ  
կերպով կը նկարագրէ կնոջ հոգեկան վիճակը հար-  
սանեկան առաջին դիշերը: «Ամուսնական կեանքի  
սկզբնաւորութեան ժամանակ», կ'ըսէ ան, «ամէն  
բանէն առաջ փափկանկատ խոհեմութիւն եւ ինքնա-  
զըսպում հարկաւոր են: Մինչ նորատի հարսը (դեռ  
եւս անարատ կոչս մը) կուգայ դէպի հարսանեկան  
առագաստը, իր էրկան պէս լիուլի կերպով պատ-  
րաստուած չէ գալիք բոլոր դէպքերուն համար: Ա-  
մէն պարագաներուն մէջ, անիկա քիչ մը ահուզողով  
կ'սպասէ նոր փորձառութեան: Մերձեցման առաջին  
գործողութիւնը կը բերէ անոր որոջ չափով ցաւ, եւ  
այս ցաւը մի միայն Ֆիզիքական ցաւ չէ ...: Ասկէ  
դատ, պէտք է չիշենք որ կնոջ մը ասլերակերպի ամ-  
բողջական չեղաչրջումը խոր տպաւորութիւն մը կը  
թողու անոր մտքին վրայ: Ժամանակ ու հանգիստ  
պէտք են մինչեւ որ ան կարողանայ ընտելանալ իր

նոր միջակայքին, մինչեւ կարողանայ իր բարոյա-  
կան եւ կրօնական համոզումները չարմարցնել փոխ-  
ուած պարագաներուն եւ մինչեւ որ կարողանայ  
«խորհիլ որ ճշմարիտ սէրը պարզ համեստութեան  
դերը խաղաց»: Անհամբեր էրիկներ մեղրալուսնի  
ժամանակ իրենց ցոյց տուած տգիտութեան եւ ան-  
փափկանկատութեան պատճառաւ չաճախ աւրած են  
յետագայ ամուսնական կեանքի մը երջանկութիւ-  
նը»:

Երիտասարդներ իրենց նորատի հարսերուն հան-  
դէպ միջտ պաշտպանի, փայտիպտղի դերը ստանձնե-  
լու են եւ երբէք անոնց կամքին հակառակ բան մը ը-  
նելու չեն: Համբերելու են քանի մը օր մինչեւ ա-  
նոնց երկիւղն ու յոգնութիւնը փարատին, մինչեւ ա-  
նոնք իրենց նորմալ վիճակը դտնեն, մինչեւ իրենք  
ալ տրամադիր ըլլան եւ նշան տան իրենց:

Մերձեցման առաջին գործողութիւն կը պատճա-  
ռէ կնոջ բաւական Ֆիզիքական ցաւ: Ժամանակ  
հարկաւոր է մինչեւ որ պատուած ու բորբոքած  
մասերը նորմալ վիճակի մը դառնան եւ ցաւը անհե-  
տանայ: Ուստի անհրաժեշտ է նորատի կինը առաջին  
զուգաւորութենէն յետոյ ժամանակ մը հանգիստ  
թողուլ մինչեւ որ ան կազդուրուի:

Թող չը զարմանան իմ ընթերցողները եթէ ըսեմ  
մարդոց մեծագոյն մասը մերձեցման ճիշդ կերպն ու  
եղանակը չեն գիտեր: Փորձառու եւ հմուտ բժիշկ-  
ներ կը վկայեն որ անոնցմէ շատեր չափազանց տը-  
գէտ, անձնասէր, անխորհուրդ եւ անասնական են  
որպէս զի կարողանան կենդանական եւ իմացական  
տնտեսութեան մեծ եւ զերազոյն սիրային գործողու-

թիւնը պատշաճ կերպով կատարել: Ասոր համար անոնք ոչ միայն չեն կրնար տալ իրենց կիներուն աչն լիովի հաճոյքը որ անոնց իրաւունքն է, այլ եւ չաճախ անոնց մէջ կը պտահաւեն հիստէրիա, մելամաղձոտութիւն և ջղային ուրիշ տկարութիւններ: «Մերձեցման գործողութիւնը», կ'ըսէ Դօկտոր Հայդ, «կը մնայ ամենէն երեւելի օրինակը կեանքի բոլոր այն գործողութիւններուն որոնք կը վրիպին եթէ դէշ կերպով կատարուին, որովհետեւ, մարդը լաւ չը կատարած պարտաւորութեան զգացումով կը մնայ ամօթահար և գլխիկոր, իսկ կիներ յուսախաբութեան համար ուրիշ տեղ հատուցում կը փնտռէ եւ իր տնէն դուրս իր պրկուած ջիղերուն եւ տրոփող քունքերուն համար հանգստութիւն կ'որոնէ»: Ամէն երիտասարդ յարմար ժամանակին իր բժիշկէն այս մասին պէտք է լաւ կերպով տեղեկութիւն ստանայ:

Կիներն ու էրիկը պէտք է մաքրութեան մասին վերջին ծայր բծախնդիր ըլլան: Այս մասին շատ հոգածու ըլլալու են մասնաւորապէս գէր կիներն որոնք ճարպոտ են ու շատ կը քրտնին: Շատ մը տուններ զրկուած են իրենց մարդերէն պարզապէս, որովհետեւ, էրիկը կըրցած չէ դիմանալ մաքրութեան պահասութեան: Մայրեր պէտք է սորվեցնեն իրենց աղջիկներուն մաքրութիւն սեռային գործարաններուն մէջ ինչպէս նաեւ ուրիշ տեղեր:

Սեռային չարաբերութեանց մէջ միշտ չափաւոր ըլլալու է: Զափաւորութիւնն է մէկ մեծ դաղտնիքը առողջութեան եւ երջանկութեան: Մարդիկ չաճախ շատ անխորհուրդ եւ մոլի կը դառնան սեռային չարաբերութեան մէջ ու չափազանցութիւններով կ'աւ-

րեն թէ բուն իրենց եւ թէ իրենց կիներու առողջութիւնը եւ վաղահաս ծերութեան մը կը հասնին: Այս տեսակ չափազանցութեանց անմիջական վնասներն են մարդուն մէջ՝ աննօրմալ սերմնահոսութիւն, արիւնահոսութիւն, ջղային այլեւայլ խանգարմունքներ ու տկարութիւններ եւ մինչեւ իսկ կատարեալ սեռային անզօրութիւն: Թէեւ սեռային մերձեցում կիներն պակաս ուժ կը խլէ քան մարդէն, որովհետեւ, ան կրաւորական գէրք կը բռնէ եւ բան չի կորսնցըններ, աչնուամենայնիւ չաճախակի մերձեցում անոր վրայ ալ վատ կերպով կ'ազդէ: Կրնայ առաջ բերել անոր մէջ արգանդի, Ֆալօպեան խողովակներու եւ ձուարաններու արեանալիութիւն եւ բորբոքում, ցաւոտ դաշտան, հեշտոցի դրդիւ, ամլութիւն եւայլն: Երբ աղջիկ մը ամուսնանալէն անմիջապէս յետոյ կ'սկսի գունաթափիլ, ծիւրիլ և վատուծնալ, իննստու հարիւր դէպքերուն մէջ անոր էրիկը սեռային պարտաւորութեան մէջ ծայրայեղութեան կ'երթայ եւ շատ կը չարչարէ գայն: Ասիկա ճիշդ է մանաւանդ փափուկ օրիորդներու նկատմամբ: Այն երիտասարդ որ իր ամուսնական իրաւունքներուն չափը չի կրնար պահել, ցոյց կուտայ որ իր մէջ անասնական բնութիւնը շատ զօրեղ է, վերջին ծայր թոյլ կամք ունի եւ հոգեկան նուրբ ու գեղեցիկ զգացումներէն զուրկ է: Մտիկ ըրէք ինչ կը պատմէ բժիշկ մը այս մասին իր փորձառութեանէն.

«Երիտասարդ ու գեղեցիկ աղջիկ մը որ իր քաղաքի բարձրագոյն վարժարանին մէջ բոլոր պատիւները շահած էր եւ յետոյ նշանաւոր ճեմարանի

մը մէջ կանացի վարժութիւններու համար մրցանակներ վաստկած՝ իր ծնողներու համոզումով յօժարեցաւ ասմուսնանալու մարդու մը հետ որ անկէ շատ վար էր եւ որու միակ չանձնարարականը անոր հարստութիւնն էր :

«Կնոջ ամուսնանալէն քանի մը ամիս չետոյ կանչուեցայ զայն տեսնելու եւ աւելի գթալի տեսարան մը հաղիւ թէ տեսած ըլլամ իմ բժշկական ասպարէզին մէջ : Չէի կրնար հաւատալ որ իմ առաջ եղող այն կմախացած ու մաշուած արարածը բեկորն էր այն գեղեցիկ աղջկան որ մօտերս այնքան անուանի եղած էր իր գրաւչութեանց մասին : Հսկարտ խելքով փայլող պայծառ աչքերուն փոխարէն անոր բուժ ու սառած գունտերը արդէն մօտեցող խելագարութեան տխուր պատմութիւնը կ'ընէին :

«Գազան էրիկը հասցուցած էր խեղճ աղջիկը այս տխուր վիճակին՝ բոլորովին ծալրացեղութեան երթալով իր ամուսնական իրաւունքներուն մէջ : Դրժուար է երեւակայել այն սոսկալի վիճակը որուն ամբողջ ծննդական կազմուածքը ենթարկուած էր : Արգանդը, հեշտոցը, միզամիտուշտը եւ վերջնաղիքը սոսկալի կերպով բորբոքած ու յօշոտուած էին : Կնոջ վիճակը պարզապէս ահուելի էր : Շատ մը ցաւալի շարաթներու դարմանումէ չետոյ հաղիւ ան կրցաւ քիչ մը առողջութիւն գտնել :

«Կինն ու էրիկը դատարան գացին ամուսնալուծութիւն ստանալու եւ առաջինի երգուեալ չաչտարարութիւններէն եւ վերջինի լիուլի խոստովանութիւններէն դուրս եկաւ որ մարդը ամուսնութեան առաջին գիշերէն ի վեր իր չար կիրքերէն ծագած

անհաւատալի դազանական ընթացքով մը գիշեր ու ցերեկ խոշտանգած էր խեղճ կինը» :

Հիմա կուան սովորական մարդը իր սեռային կարողութիւնը չիսուն տարեկան եղած ժամանակ կ'սկսի կորսնցնել ու դեռ եօթանասուն, ութսուն տարեկան չեղած կը ծերանայ ու կը մեռնի : Պատճառ մը չը կայ սակայն որ մարդ իր սեռային կարողութիւնը չը պահէ մինչեւ եօթանասուներորդ տարիքը ու չ'սպրէ հարիւր տարի : Ասոր մէկ գլխաւոր պատճառը անոր սեռային չափազանցութիւններն են : Սեռային գործողութեան չառաջխաղացումները բաւական իրաւամբ բժիշկին մէկը նմանցուցած է ընկնաւորութեան չառաջխաղացումներուն : Երկուքն ալ ջղային ուժի մեծ պոռթկումներ են : Ճիշդ ինչպէս ընկնաւորութեան մէջ սկիզբ չուզման շրջան մը կուգայ եւ ապա անոր կը չաջորդէ թուլութեան շրջանը, նոյնպէս սեռային գործողութեան մէջ առաջ մարդ ջղային ուզման շրջանէ մը կ'անցնի որուն կը հետեւի թուլութեան շրջանը : Երկու գործողութիւններն ալ մարդէն կը խլեն մեծ ջղային ու կենդանական ուժ, որովհետեւ, երկուքի մէջն ալ այնքան կը լարուին ու կը պրկուին մարմնի ջիղերն ու մկանները : Եւ արդէն երկու գործողութիւններու ալ թուլութեան շրջանը չի՞ ցուցներ որ մարմինը անսովոր չուզումէ մը անցած է եւ կորսնցուցած է մեծ ուժ : Արդ՝ չաչտնի է որ հիւանդի ընկնաւորութեան նոպաները որքան շատ կրկնուին հիւանդութիւն այնքան ծանր հանգամանք կ'ստանայ ու հիւանդը այնքան շուտ կը քայքայուի ու կ'սպառի : Նոյնպէս մարդ

որքան շատ սեռային չարաբերութիւն ունենայ, այնքան շուտ կը կորսնցնէ իր սեռային զօրութիւնը ու կ'սպառուի: Երբոր անիկա ժուժկալ է, արուեստական գրգիռներով իր կարողութիւնները չի վատներ, կարող է իր ուժը պահել մինչեւ շատ չառաջացած տարիք մը:

Այս մասին շատ ճարպիկ կերպով կ'արտայայտուի Պօմէրօյ երբ կ'ըսէ. «Մենք կարող ենք նեկտարը խմել որքան որ կ'ուզենք: Բնութիւն ինքը ըմպելիքը կը խառնէ եւ դաշխուրանը մեր շրթունքներուն կը մօտեցնէ, բայց, եթէ շատ խմենք, անիկա առաջին անգամ ըմպելիքը կը թուլցնէ անոր մէջ ջուր խառնելով, չետոյ անոր վրայ կ'աւելցնէ լեղի, ի վերջոյ գուցէ նաեւ մահառիթ թոյն»:

Ո՞րքան յաճախ կարելի է սեռային մերձեցում ունենալ առանց ուրիշ անհարմարութիւններ առաջացնելու: Անշուշտ մարդիկ այս մասին իրենց կարողութիւններով մեծապէս կը տարբերին: Յաճախ ըսուած է մէկ մարդու կերակուրը ուրիշի մը թոյնն է: Ծարաթը երկու անգամ զուգաւորուիլ կարող է մէկու մը առողջութիւնը բոլորովին քայքայել իսկ ուրիշի մը համար երբէք անախորժ հետեւանքներ չունենալ: Կարելի է սա ընդհանուր կանոնը տալ: Ուրիշ մարդ գաղբելու է այն ատեն երբ սեռային մերձեցումը գինք չոգնած ու թոյլ վիճակի մը մէջ կը թողու հետեւեալ օրը եւ առանց արուեստական գրգիռներու այլեւս սեռային ախորժակ չունենար: Երբ մարմինը մէկ սեռային մերձեցումէ չետոյ իր թարմութիւնը կորսնցուցած է, այլեւս ուժ ու բնական ախորժակ չունի, ըսել է թէ պարտասած է,

ժուժկալութեան եւ հանգստի պէտք ունի մինչեւ կազդուրուի: Առ հասարակ կարելի է ըսել շարաթը մէկ մերձեցում բաւական է մարմինն ու միտքը առողջ ու կորովի վիճակի մէջ պահելու համար:

Կնոջ կամեցողութիւնը միշտ պէտք է նկատի առնուի եւ անոր տրամադրութիւնը չարգուի: Երբէք մարդն ու կինը ինքզինքնին աժանցնելու չեն եւ թոյլ տալու չեն որ սէրը սոսկ կենդանական կիրքի եւ տուփանքի աստիճանին իջնէ: Գաղափարական ազնիւ զգացումներու գործածութեան համար առատ տեղ թողնելու է: Երիտասարդներ իրենց փաղաքշանքներու ժամանակ պէտք է սպասեն մինչեւ որ կինը նշան տայ: Պէտք է թողուլ որ սեռային ախորժակը բնական կերպով դայ: Երիտասարդներ երբէք պէտք չէ ալիօճօլով, տուփական պատկերներով, խօսակցութիւններով եւ գրքերով արուեստականօրէն ինքզինքնին գրգռեն ու ապա իրենց կամքը կնոջ վրայ բռնադատեն: Հաճելի ու գաղափարական միութեան մը համար երկու կողմէն ալ պէտք է ըլլայ կատարեալ կամեցողութիւն ու տրամադրութիւն: Երջանիկ է այն մարդը որ ժուժկալութեան ու փափկանկատութեան արուեստը լաւ սորված է, որովհետեւ, անիկա ընդունակ է միշտ իր կնոջ յարգանքները չնչնելու եւ անոր սէրը վառ պահելու:

Կինն ալ իր կողմէն շատ բան կրնայ ընել էրկան սէրը վառ պահելու համար: Սեռային չարաբերութեանց ժամանակ անիկա պէտք է կրաւորական դիրք բռնէ, պէտք է ան աւելի ցանկացուի քան թէ ցանկայ: Կնոջ համեստութիւն մարդու ցանկութիւնը կը շատցնէ: Ճարպիկ կինը նազանքով եւ իր ցանկու-

թեան մասնակի թաքուցումով կրնայ մարդը միշտ հմայել, իր դրաւչութիւնը պահել եւ դայն իրեն կապել: Կնոջ կողմէն ցոյց տրուած համեստ դժկամակութիւնը աւելի հրապուրիչ է մարդուն քան թէ չաչտնի հրաւէրը:

Անոնք որ կրնան աւելի լաւ է առանձին անկողիններու մէջ քնանան, որովհետեւ, միասին պառկելը ոչ միայն մաքրութեան եւ հանգստութեան տեսակէտէն հակառողջական է, այլեւ պատճառ կ'ըլլալ անժուժկալութեան: Պէտք է մարդը միշտ կնոջ շնորհքը խնդրողի դերին մէջ պահել: Անոր սեռային ցանկութեան գոհացումը այնքան ալ դիւրին եւ հասարակ դարձնելու չէ, որպէս զի չըլլալ թէ չափազանց անձաւ ընտանութիւն զգուանք պատճառէ:

Դժուար արուեստ մըն է կնոջ սէրը միշտ վառ պահելու արուեստը: Մարդիկ կան որոնք կը կարծեն ամուսնական եւ սիրային ամէն պարտականութիւնը կատարած կ'ըլլան երբ իրենց կինը պարզապէս կը կերակրեն, կը հագուեցնեն, տան մը մէջ կը պատսպարեն ու գիշերէ գիշեր, ուշ ատեն միայն դայն կ'աչցելեն: Մարդիկ կան որոնք ասկէ աւելի ուշադրութիւն չեն տար իրենց ամուսիններուն: Այսպէս՝ պրօֆէսորներ, գիտական մարդիկ կան որոնք բոլորովին կը խորատուգուն իրենց գիտութեանց եւ ուսումնասիրութիւններուն մէջ եւ հազիւ երբէք ընտանիքը իրենց միտքը կը բերեն: Առեւտուրի մարդիկ, վաճառականներ կան որոնք գիշեր ցերեկ առեւտրական ծրագիրներով ու հաշիւներով այնքան կը դրաւուին որ իրենց կնոջ եւ տղաներուն վրայ նայելու ժամանակ չունին: Խաղամուլ ու զուարճասէր ե-

րիտասարդներ կան որոնք միշտ տնէն դուրսն են եւ իրենց կնոջ երեսը հազիւ երբէք կը տեսնեն: Կարծես թէ կինը երբեմն երբեմն միայն սեռային ախորժակը գոհացնելու, տղայ բերելու համար եղած է ու ան ասկէ զատ ուրիշ ցանկութիւն եւ պահանջ չունի, ուրիշ տեսակ բաւականութիւններու չի կարօտիր: Երբէք երիտասարդներու մտքէն չի՞ անցնիր որ կին իրենց պէս միտք եւ հոգի ունեցող արարած մըն է, հետեւաբար, ունի իր հոգեկան իղձերը, պահանջները: Երբէք անոնց մտքէն չի՞ անցնիր որ ան կը կարօտի շատ անգամ իրեց ուշադրութեան ու զգուանքին, իրենց ընկերակցութեան: Երբէք անոնց մըտքէն չի՞ անցնիր որ ան տան մէջ շարունակ առանձին ապրելով, իրենց ընկերակցութենէն զուրկ մընալով անարեւ բոյսի մը պէս պիտի ծիւրի ու թառամի:

Կիներ իրենց առանձնալատուկ խառնուածքին բերուածով մասնաւոր կերպով կ'ըման ուշադրութեան ու զգուանքի: Բնական է, մարդկային է այս զգացումը: Ամէն մարդ ուշադրութիւն եւ զգուանք կը սիրէ: Կիներ շնորհիւ իրենց զգայնոտ ու մանկական բնաւորութեան աւելի շատ կը սիրեն դայն: Ուստի երիտասարդներ եթէ կ'ուզեն երջանիկ տուն մը կազմել պէտք է բաւականաչափ ժամանակ չատկացնեն իրենց կնոջ ընկերակցութեան, անոր վրայ ուշադիր ըլլան եւ դուրգուրան, մտքով ու հոգով անոր հետ հաղորդուին եւ իրենց տղաներու կրթութեամբն ու զարգացումովը հետաքրքրուին: Ասիկա պզտիկ խնդիր մը չէ: Մարդ միայն հացով ու մարմնական կոշտ ցանկութիւններով չի սնանիր: Ուրիշ

հոգեկան բերկրութիւններ ու հաճոյքներ ալ պէտք են իրեն: Արդարեւ՝ հոգեկան չոյզերն ու բերկրութիւնները աւելի մեծ տեղ մը կը բռնեն անոր կեանքին մէջ: Կի՛նն ալ եթէ ոչ աւելի, դէթ նոյնքան պէտք ունի անոնց որքան մարդը: Իմաստուն էրիկը իր կընով սիրոյ կրակը միշտ վառ պահելու համար անոր վրայ երբեմն երբեմն իւզ կը կը լեցնէ:

Կը պատահի շատ անգամ մարդն ու կի՛նը ամուսնութենէն յետոյ տան մէջ խիստ անզգուշ կը դառնան իրենց նիստ ու կացի մէջ, արտաքին երեւոյթի մասին: Ընտանութիւն անոնց վայելչութեան, գեղեցկութեան զգացումը կը բթացնէ: Աչսպէս, օրինակ, մարդ մը աչնպէս կը խօսի ու կը վարուի տան մէջ ինչպէս երբէք չի պիտի ընէր ուրիշ կնոջ մը ներկայութեան: Կի՛ն մը աչնպէս կեղտոտ ու անկարգ հագուստներով իր էրկան դէմը կ'ելլէ որոնցմով երբէք ուրիշ մարդու մը երեւան պիտի չելլէր. կամ իր սեղանը, տունը աչնքան խառնակ ու կեղտոտ կը պահէ որուն համար պիտի ամչնար եթէ օտար մը իր տունը մտնէր: Բայց ասիկա արդեօք ծիծաղելի ու միանգամայն արգահատելի չէ՞: Կի՛ներ շուկայ երթալու, անծաօթ մարդոց դէմը ելլելու համար ժամերով երբեմն կը չարդարուին ու շքուին բայց իրենց էրկան ներկայութեան, որուն սիրոյ եւ հիացումին միշտ ցանկացող են, երբէք չեն քաշուիր ամբողջ օրը կեղտոտ, զզուելի հագուստներով երեւնալէն: Երբ կնոջ պարտքն է օտարներէն աւելի իր էրիկը հանգիստ եւ զոհ պահել, անհեթեթ չէ՞ անոր կողմէն անփոյթ ըլլալ եւ տունը կեղտոտ ու խառնաչիօթ վիճակի մէջ թողուլ: Դարձեալ՝ երբ էրկան պարտքն է միշտ

չարգանք ներչնչել իր կնոջ, տարօրինակ կը թուի որ ան ալ անզգուշ կը վարուի իր արտաքին երեւոյթին ու նիստ ու կացին մէջ: Կի՛նն ու մարդը չէ՞ն տեսներ որ իրենց կեղտոտ, անկարգ երեւոյթը իրարու հանդէպ ունեցած հիացման զգացումը պիտի պակսեցընէ, որովհետեւ տղեղ պատկերը անջնջելի կերպով պիտի դրոշմուի իրենց մտքին վրայ: Կի՛ներ չէ՞ն ըզզար որ խառնաչիօթ վիճակի մէջ պահուած տունը իրենց զգալուն էրիկներուն զգուանք պիտի պատճառէ եւ նուազեցնէ անոնց իրենց հանդէպ ունեցած լաւ համարումը: Էրիկներ չէ՞ն կարծեր որ փնթի ունակութիւններով պիտի մեռցնեն կնոջ իրենց հանդէպ ունեցած յարգանքի զգացումը:

Կի՛ն մը որքան գեղեցիկ կ'ուզէ թող ըլլայ, երբոր անիկա տան մէջ անփոյթ մնալով չի վարանիր երկար ատեն զգալուն, մաքրասէր էրկան առաջ կեղտոտ ու անկարգ արտաքինով մը մնալու, վաղ թէ ուշ տղեղ պատկերը էրկան մէջ պիտի չարուցանէ զըզուանքի զգացում մը դէպի իր կի՛նը: Ուեւէ գեղեցիկ բան երբոր տղեղ երեւոյթով կը ներկայացուի իր դրաւչութենէն կը կորսնցնէ: Գեղեցիկ, մաքուր բան ամէն մարդ կը սիրէ, նոյն իսկ կեղտոտ մարդը: Արտաքին երեւոյթը մեծ դեր կը խաղայ մեր նախասիրութեանց եւ դնահատումներուն մէջ: Իմաստուն կի՛նը պիտի ջանայ երբէք սեւէ կերպով իր էրկան զըզուանք չազդել, իր մաքրութեամբն ու գեղեցկութեամբը շարունակ հիացում պատճառել անոր: Մի՛նչեւ անգամ դործի ժամանակ անիկա միշտ կոկիկ եւ մաքուր կ'երեւի: Ըսել չեմ ուզեր անշուշտ իր թանկագին շորերը կը հագնի, ոչ, այլ ան պարզ եւ աժան



լաթէ շինուած իր դործի հագուստները նոյն իսկ ծիշտ մաքուր եւ գեղեցիկ վիճակի մէջ կը պահէ: Ամէն կին պէտք է սորվի իր տունը ճաշակաւոր կերպով կահաւորելու, մաքուր եւ կարգաւորուած վիճակի մէջ պահելու արուեստը: Մաքրութիւն եւ կարգաւորութիւն սիրոյ եւ հիացումի մշտական աղբիւրներ են եւ սէրը վառ պահելու, տուն մը երջանիկ եւ ուրախ դարձնելու միջ հոօր գեր կը խաղան: Կեդտոտութիւն եւ տգեղութիւն ընդհակառակն կեանքը պժգալի կը դարձնեն, կը բթացնեն, կը մեռցնեն գեղեցկագիտական ամէն զգացումները: Այս աշխարհին մէջ տգեղութիւն եւ կեղտոտութիւն արդէն բաւական շատ կայ: Մեր ձգտումը պէտք է ըլլայ կեանքը գեղեցկացնել, մեր շուրջը մաքրութիւն ու գեղեցկութիւն սփռել: Արդարեւ՝ գեղեցկութիւնն է որ այս կեանքը ապրելու արժանի կը դարձնէ: Մարդն ու կին տան մէջ թէ դուրս, պէտք է այնպէս վարուին իրարու հետ իբր թէ իրարմէ շատ յարգուած ու սիրուած, նոր ճանչցուած ծանօթներ կամ բարեկամներ ըլլալին:

\* \* \*

Բոլոր առողջ կիներ կը սիրեն զաւակ ունենալ: Երախաներու սէրը անոնց բնութեան անբաժան մէկ մասը կը կազմէ: Այս սէրը անոնք կը չափեն նոյն իսկ իրենց մանկութեան ժամանակ երբ այնքան դուրս գուրանք ցոյց կուտան դէպի խրճիկներ եւ մաշրական դերեր կ'տանձնեն անոնց հանդէպ: Անոնք մանուկ հասակին մէջն իսկ ցոյց կուտան որ մաշր ըլլալու

սահմանուած են: Երախացի այս սէրը այնքան բնական ու անհրաժեշտ է կանանց համար որ անոնց բընութիւնը պիտի վատասերի եթէ անոնք ամուլ մընան: Ծնորհիւ մաշրութեան անոնց բնաւորութիւն ու հոգին աւելի կը զանազանաւորուին ու կատարեալ զարգացման մը կը հասնին: Նոյնը կարելի է ըսել մարդոց նկատմամբ թէեւ աւելի պակաս չափով մը: Հաշրութեան շնորհիւ մարդու բնութիւնը կը լայննայ ու լրիւ կերպով կը հասունանայ:

Երբ այս աչսպէս է մեծ սխալ մըն է կինը իր մաշրութեան կոչումէն զրկել: Բնութեան օրէնքներուն բոլորովին հակառակ կը դործեն այն էրիկներ որոնք անձնասիրական, այս կամ այն շարժառիթներէ դըրդըուած կը զլանան իրենց կիներուն մաշրութեան իրաւունքը: Չոր ու անպտուղ ծառի մը կը նմանին այն ամուլներ որոնք զաւակ չունին: Տխուր է, ամայի է այն տունը ուր սիրուն, առողջ մանուկներու ուրախ ճիչերը չեն լսուիր: Թէ էրկան եւ թէ կնոջ հոգիները ցուրտ ու տհաս կը մնան երբ անոնք անզաւակ են: Ես կը հաւատամ շատ մը ամուլներ իրարմէ պիտի չը բաժնուէին, իրարու հետ սիրով պիտի մընային եթէ զաւակներու տէր ըլլալին: Զաւակ չունեցող ամուլներուն մէջ վէճ ու անհամամաձայնութիւն շատ շուտ կը մտնեն:

Այս չէ սակայն ամուլութեան ամբողջ աղիտալի հետեւանքը: Անձնասէր էրիկը իր կինը մաշրութեան իրաւունքէն զրկելու համար չաճախ կը դիմէ այնպիսի անբնական միջոցներու որոնք առողջութեան վերջին ծայր վնասակար են: Ահա ասոնցմէ մէկն է օնանականութիւն: Զուգաւորութեան ժամանակ, երբ

խմացական ու կենդանական տնտեսութեան սիրաչին վսեմ գործողութիւնը մօտ է իր կանոնաւոր վերջաւորութեան, երբ մարդն ու կինը խաղաղ մտքով եւ ուրախ սրտով պէտք է վայելեն սիրաչին այս գործողութեան ընկերացող ամէն մէկ հաճոյքը, էրկըր ահա գործողութեան գերագոյն բոպէին իր առնանդամը հեշտոցէն դուրս կը հանէ եւ չի թողուր որ տաք սերմը անոր մէջ թափի. այսպիսով սոցն վսեմ գործողութիւնը բոլորովին անկատար կը մնայ, կը վրիպի եւ մարդն ու կինը լաւ չը կատարուած, խեղաթիւրուած գործողութեան մը առաջ կը մնան իսպառ չուսախար, դժգոհ եւ բոլորովին անձկուտ վիճակի մը մէջ: Մարդը շնորհիւ այն վախին թէ մի գուցէ սերմը հեշտոցին մէջ թափի եւ չլուծիւն առաջացնէ, կ'ենթարկուի մտային եւ ջղաչին սոսկալի անձկութեան մը որ ամենալատ կերպով կ'ազդէ անոր առողջութեան վրայ: Այս տեսակ երկարատեւ անձկութեան պատճառաւ անոր ջղաչին համակարգութիւնը կը խանգարուի, մարդը կը դառնայ կատարեալ ջլախտաւոր մը, կարող է ունենալ նոցն իսկ մէջըրդեղի հիւժում եւ մտային խանգարում:

Մերձեցման ժամանակ մեծ քանակութեամբ արիւն կը խոտէ թէ մարդոց եւ թէ կանանց ծննդական գործարաններուն մէջ: Որովհետեւ մարդ շուտ կը դրզուուի եւ շուտ ալ կը հանդարտի, գործադրութենէն չետոց արիւնը անոր գործարաններէն շուտով կը քաշուի եւ ան կը հանգստանայ: Այսպէս չէ կնոջ պարագային: Ան կամաց կը չուզուի եւ ուշ ալ կը հանդարտի, ուստի աւելի երկար ժամանակ հարկաւոր է որպէս զի արիւնը անոր գործարաններէն քաշ-

ուի: Այս չառաջխաղացման մեծապէս կը նպաստէ տաք սերմը երբ հեշտոցին ու արգանդին վրայ կը թափի: Երբ կինը սակայն ծնանականութեան կամ ընդհատուած մերձեցման կ'ենթարկուի, տաք սերմի այս նպաստաւոր ազդեցութենէն կը զրկուի, արիւնը արգանդէն ու ձուարաններէն շուտով չի քաշուիր ու երբ ընդհատուած գործողութիւնը երկարատեւ շարունակուի վտանգ կայ որ կինը ունենայ յիշեալ գործարաններու արեւնալիութիւն ու բորբոքում:

Կարելի է բնութիւն խաբել: Անոր օրէնքներուն դէմ գործողը պիտի պատժուի միշտ: Բնութիւն մարդուն մէջ սեռային բնազդը չատուկ նպատակի մը համար դրած է ու այդ գերագոյն նպատակն է ցեղին շարունակութիւնը: Սեռային բնազդը միջոց մըն է այս նպատակին համար որուն պէտք է ստորակարգուի ու ծառայէ անիկա: Արդ՝ երբ մարդ ընդհատուած գործողութեան վարժութեան կը հետեւի, ի՞նչ կ'ընէ: Բնութեան նպատակը անբնական, բուռն միջոցներով կը խափանէ եւ անոր միջոցը կ'ընէ նպատակ: Արդիւնքը կ'ըլլայ ամաչութիւն, հիւանդութիւն եւ մահ: Կինը արեւէն ու ջուրէն զրկուած ծառի մը պէս կը գեղնի ու կը չորնայ, մեղամաղձութեամբ ու հիստէրիազով կը դարնուի, իսկ մարդը կ'ըլլայ ջլախտաւոր եւ կամ խելագար մը:

Ձաւակ ունենալու, մաչրութեան երկիւղը գոչութիւն ունի նաեւ կիներուն մէջ որոնք չաճախ կը քաջալերեն իրենց էրիկները զիրենք ամուլ պահելու ջանքերուն մէջ: Ձանազան շարժառիթներէ դրդուած կիներ տղայ ունենալէ կը խորշին: Ոմանք մի միայն

անձնասիրական նկատումներով այդպէս կ'ընեն, որպէս զի տղաբերութեան ցաւէն, զաւակ մեծցնելու նեղութենէն ազատ մնան և զուարճութեան ու ուրախութեան ետեւէ ըլլան: Ուրիշներ չքաւորութեան պատճառաւ կը խորշին անկէ իսկ ոմանք ալ անձնական տկարութեան պատճառաւ: Այս նպատակին համար անոնցմէ շատեր կը դիմեն ամէն տեսակ անպատշաճ միջոցներու: Երբ չեն կրնար չղութիւն արգիլել, շատ անգամ արուեստական վիժումով կ'ոչնչացնեն իրենց արգանդին պտուղը: Այս վերջինը շատ տարածուած սովորութիւն մըն է գրեթէ բոլոր ժողովուրդներուն, մասնաւորապէս հիմալուան քաղաքակիրթ ազգերուն մէջ: Արդարեւ՝ տղաբերութեան երկուցը մարդկային բնութեան մէջ եղած է սեռային ուրիշ մեծ աններդաշնակութիւն մը եւ մարդու ընտանեկան այս թոյլ բնազդի շնորհիւ մէկէ աւելի ցեղեր այս աշխարհի երեսէն անհետացած են:

Հայերուն մէջն ալ բաւական մեծ չափով սկսած է մուտ գործել տղաբերութեան վախը, ինչպէս նաեւ արուեստական վիժում առաջացնելու սովորութիւնը, մանաւանդ արտասահման բնակող հայերուն մէջ: Ամերիկայի եւ Եւրոպայի մեր նոր սերունդի կիներուն մէջ հիւանդոտ, տկար բան մը կայ որ անձկութիւն պէտք է պատճառէ ամէն բանիմաց եւ խորհող հայուն: Հին սերունդի կորովի, աշխատասէր, տասնեակ զաւակներու տէր մայրերը կը թուի թէ անհետանալու վրայ են: Նոր սերունդի կիներ աւելի հանգստութեան, հաճոյքի եւ զուարճութեան ետեւէ են բաց աւելի տկար են ու հիւանդոտ: Ամերիկա գաղթող հայ կիներու առողջական վիճակը հե-

ուու է միւթարական ըլլալէ: Հայրենիքէն առուց, կարծիր թշերով աղջիկներ այս երկիր գալուն ու մուսնանալուն պէս կը կորանցնեն իրենց առողջութիւնը եւ զանազան տկարութիւններով կը դարնըուին, մայր ըլլալէ կը վախնան եւ աշխատանքի բոլորովին անընդունակ կը դառնան: Տարակոցս չը կայ որ մէկէ աւելի պատճառներ կան ասոր համար, ինչպէս կլիմայի, կերակուրի, միջավայրի փոփոխութիւնը եւայլն: Բաց, իրբեւ բժիշկ, պատճառ ունիմ հաւատալու որ մէկ խոշոր պատճառն ալ թէ կանանց եւ թէ անոնց էրիկներու սեռային զեղծումներ ու մուրորութիւններն են, ուրիշ խօսքով, անոնց անբնական ասլրեւակերպն է: Տղաբերութեան վախէն մղուած՝ յղութիւն արգիլելու համար հայ կիներ յաճախ կը գործածեն այնպիսի միջոցներ որոնք հակառակ են վաչելչութեան եւ մաքրութեան, նաեւ կը դիմեն արուեստական վիժումներու իրենց արգանդին պտուղը ոչնչացնելու համար ու այդպէս կ'աւերեն իրենց առողջութիւնը: Վիժում առաջ բերելու համար շատ անգամ անխորհուրդ կերպով կը գործածեն վերին աստիճանի վտանգաւոր միջոցներ: Ես գիտեմ հայ կին մը որ այս նպատակին համար գործածեց լուցիկ ու այդ պատճառաւ թունաւորուեցաւ ու մեռաւ: Կը ճանչնամ ուրիշ մը որ նոյնպէս թունաւորուեցաւ եւ քիչ մնաց մեռնէր: Կը ճանչնամ կին մը որ վիժում առաջ բերաւ ծանր բան վերցնելով բաց այնքան ծանր հիւանդացաւ որ նոյնպէս քիչ մնաց մեռնէր: Ես գիտեմ կիներ որոնք վիժում առաջացնելու համար գործածեցին ուրիշ տեսակ միջոցներ, առաջ բերին սաստիկ արիւնհոսութիւն և հազիւ հազ մահէն ա-

զատուեցան: Գիտեմ նաև կին մը որ վիժում առաջ բերելէն յետոյ ենթարկուեցաւ երկարատև արիւնհոսութեան, այդ պատճառաւ այնքան արիւն կորսընցուց որ վերջին ծայր տկարացաւ եւ երբ ուրիշ պըզտիկ հիւանդութիւն մը եկաւ իր վրայ չը կրցաւ դիմանալ և մեռաւ: Շատ են այն միջոցները որոնցմով կիներ կը ջանան իրենց արգանդին պտուղը ոչնչացընել: Այն բոլոր միջոցները որոնք անոնք կը գործածեն կարող են առաջ բերել արգանդին մէջ ծակ կամ պատուուածք, օդի մուտք անոր երակներուն մէջ որ շատ վտանգաւոր բան մըն է, ներքին ծննդական գործարաններու տեղափոխութիւն ու այրում, սաստիկ արիւնհոսութիւն եւ անոր հետեւող անարիւնութիւն, թունաւորում եւայլն:

Բոլոր բժիշկներ կը վկայեն որ արուեստական վիժում կնոջ վրայ շատ աւելի աղիտալի ազդեցութիւն կը թողու նոյն իսկ եթէ փորձառու բժշկի մը կողմէն և զգուշաւոր միջոցներով կատարուի, քան նորմալ տղաբերութիւնը: Երբ բնութեան գործը կը խանդարուի միշտ աղիտալի հետեւանքներ կը ծագին: Արուեստական վիժում կը նմանի ծառի մը վըրայէն անոր բոլոր տհաս պտուղները փրցնելուն: Երբոր ծառի մը վրայէն անոր բոլոր տհաս պտուղները բռնի կերպով կը փրցնենք եւ զայն ժամանակէն առաջ կը մերկացնենք ծառը չի՞ չորնար: Միեւնոյնն է նաև կնոջ պարագային: Երբ յղութիւն տեղի կ'ունենայ, բնութիւն կը մտադրէ եւ կնոջ իմացական ու կենդանական տնտեսութիւնը այնպէս կը կարգադրէ որ տղաբերութեան յառաջխաղացումը շարունակուի մինչեւ իր վախճանին հասնի, երախան

աճի ու մեծնայ մինչեւ հասուեցած պտուղի մը պէս ժամանակին արգանդէն ինքնիրեն փրթի եւ դուրս աշխարհ գայ: Բայց երբ յղութեան յառաջխաղացումը կը խափանուի, դեռ չը զանազանաւորուած ու չը զարգացած սաղմը տհաս պտուղի մը պէս բռնի կերպով արգանդէն կը քանդուի եւ դուրս կը հանուի, բնութեան ամբողջ կարգադրութիւնը, կնոջ ամբողջ ջղաչին եւ Ֆիզիքական համակարգութիւնը տակն ու վրայ կ'ըլլան եւ այդպէս կինը կը վնասուի:

Երբեմն կարծես բնութիւն յատկապէս ուրիշ կերպերով կինէն իր վրէժը կը լուծէ անոր այս մեղքին համար: Յայտնի է որ արգանդի պաշտօնն է սաղմը կերպարանաւորել, մեծցնել ու ժամանակին դուրս աշխարհ զրկել: Արդ՝ երբ արուեստական կերպով կրկին ու կրկին վիժում կ'առաջացուի եւ արգանդը պարապ կը թողուի, բնութիւնն ալ կարծես քէն պահելով արգանդին անպատճառ գործ տալու համար առաջ կը բերէ անոր մէջ այլեւայլ տեսակ ուռեցքներ ու խոցեր: Դիտուած է որ քաղցկեղ եւ ամէն տեսակ ուռեցքներ ու կեղեր ամուլ պահուած արգանդներուն մէջ աւելի կը պատահին: Անոնք արդէն աւելի ենթակալ են աճելու ամէն տեսակ վիրաւոր ու տըրորուած հիւսուածքներու մէջ: Երբ արուեստական վիժում կը կատարուի, արգանդին մէջ վիրաւոր, բզկտուած մակերես մը կը բացուի որ կը մատակարարէ պարարտ հող կեղերու եւ խոցերու աճման:

Այսպէս՝ մեր հայ կիներն ալ, ուրիշ ժողովուրդներու կանանց պէս, այս վատ ունակութիւններուն մէջ ինչպիսի իրենց առողջութիւնը կ'աւրեն, կ'ունեն-

նան գլխի ու մէջքի ցաւ, խոցեր եւ վտանգաւոր ու-  
ռեցքներ, կ'ըլլան նեղսիրտ ու ջղայնոտ արարած-  
ներ: Զուր չէ որ շատ մը իմաստուններ ըսած են եր-  
ջանիկ կերպով ապրել կը նշանակէ բնական կերպով  
ապրել: Երբէք պատճառ մը չը կա՞ որ կիներ ըլլան  
հիւանդոտ եւ նեղսիրտ, շարունակ զանգատին կըռ-  
նակի ու գլխի ցաւի մասին եւ այդպէս իրենց տան  
խաղաղութիւնն ու երջանկութիւնը վրդովեն: Մեր  
հին սերունդի կիներ մէջքի ու գլխի ցաւ չունէին,  
գիւրազրգիւռ չէին. աւելի առողջ, դիմացկուն ու  
աշխատասէր էին: Ասոր պատճառը անոնց բնական  
կերպով ապրելն էր: Անոնք քննեղ էին ու հիմակ-  
ուան դադանի ու ծուռ բաներ չէին գիտեր, չլու-  
թիւն արդիւելու վրայ քիչ կը մտածէին, վիժում ա-  
ռաջացնել ծանր մեղք մը կը համարէին: Եթէ հի-  
մակուան հաց կիներէն շատեր տկար են եւ հիւան-  
դոտ, եղած են ջլախտաւոր ու չոռետես արարած-  
ներ, պատճառն այն է որ անոնք անբնական կեր-  
պով կ'ապրին, բնութեան օրէնքներուն դէմ չաճախ  
կը մեղանչեն:

\* \* \*

Վիժումի վնասակարութիւնը բնականաբար կը  
բերէ մեզի սա հարցման դէմ չանդիման. պէ՞տք է  
յղութիւն կանոնաւորելու գիտութիւնը ժողովրդին  
սորվեցնել: Ոմանք կը պնդեն այդ գիտութիւնը ժո-  
ղովուրդին երբէք սորվեցնելու չէ, որովհետեւ, ա-  
տիկա հակառակ պիտի ըլլար Աստուծոյ պատուէր-  
ներուն: Աստուած մարդուն եւ կնոջ ըսաւ. «Աճեցէք

եւ բազմացէք ու երկիրը լեցուցէք»: Շատեր ալ  
կան որոնք տնտեսական նկատումներէ դրդուած՝ կը  
պնդեն թէ պէտք է այդ գիտութիւնը ժողովուրդին  
սորվեցնել: Ասոնց կարծիքով մարդկային ցեղը ա-  
րագ կերպով կ'աճի ու կը տարածուի ամբողջ աշ-  
խարհին վրայ: Եթէ մարդկութիւնն այս չափով աճի  
ու բազմանայ շատ շանցած աշխարհը պիտի խճողուի  
եւ երկիրն ալ չի պիտի կրնայ կերակրել զայն: Անգ-  
լիացի Բոբէրտ Մալթուս այսպէս մտածողներէն ա-  
ռաջինը եղաւ որ այս հարցը 1798ին լուրջ եւ փիլի-  
սոփաչական կերպով քննելու ելաւ ու ապա կարգ մը  
չափազանց չոռետես ու երկիւղալի եզրակացութիւն-  
ներու հասաւ: Ըստ Մալթուսի հայեցողութեան՝  
մինչդեռ մարդիկ կը բազմանան երկրաչափական,  
այսինքն 1, 2, 4, 8, 16, 32ի համեմատութեամբ,  
ապրուստի միջոցները կ'աւելնան թուաբանական,  
այն է 1, 2, 3, 4, 5, 6ի համեմատութեամբ: Ուրեմն  
բազմամարդութիւնը վար պահելու համար հարկա-  
ւոր են ջլատող աղղեցութիւններ, ինչպէս մոլու-  
ւոր են ջլատող աղղեցութիւնն, հիւանդութիւն, պատերազմ,  
թիւն, աղքատութիւն, արգելիչ միջոցներ եւ բարոյական  
դուլութեան կռիւ, արգելիչ միջոցներ եւ բարոյական  
սեղմումներ: Մալթուս ասոր իբրեւ դարման յանձ-  
նարարեց համեմատական ժուժկալութիւն: Անոր  
այս վարկածը խոր տպաւորութիւն թողուց իր ժա-  
մանակակից շատ մը մարդոց վրայ եւ ունեցաւ Զօն  
Ստուարտ Միլի, Բիքարտօի, Քալմէրսի նման մեծ  
պաշտպաններ: Մալթուսի մահէն չետոյ սակայն այս  
վարկածը ինկաւ եւ մոռացութեան տրուեցաւ իբրեւ  
սաստիկ չոռետես ու գիտական ճշդութենէ դուրկ  
հայեցողութիւն մը:

Հետաքրքրական է Սպէնսէրի եզրակացութիւնը այս հարցին վերաբերմամբ: Սպէնսէր այնքան ալ վախնալու պատճառ չի տեսներ այս մասին որքան Մալթոս: Իր բնաշրջման օրէնքով ան կը կարծէ որ պիտի դաշ ժամանակ երբ մարդկութիւն աճելէ պիտի դադրի: Անոր մէջ պատահած մահերը հաւասար պիտի ըլլան ծնունդներուն եւ այսպէս մարդիկ կանգ պիտի առնեն բազմանալէ: Ասիկա առաջ պիտի դաշ պտղաբերութեան բնաշրջական օրէնքով, այսինքն, կենդանի մը որքան բարդ ու զարգացած ըլլա՞յ անոր պտղաբերութեան կարողութիւնը այնքան կը պակասի, որովհետեւ, աւելի ուժ եւ երկար ժամանակ հարկաւոր պիտի ըլլան անոր զարգացման ու դործունէութեան համար, հետեւաբար սերունդ արտադրելու դործին քիչ ուժգնութիւն եւ ուժ պիտի կրնայ յատկացնել: Ասոր ապացոյցը կը տեսնենք կեանքի շատ մը բներեւոյթներուն մէջ: Չարգացած եւ չառաջացած ազգեր այնքան շուտ չեն բազմանար որքան կիսավայրենի ցեղերը: Աղքատ ընտանիքներ, որոնց կեանքը համեմատաբար աւելի պարզ է, առհասարակ աւելի բազմամարդ կ'ըլլան քան թէ հարուստ ընտանիքները: Թոյլ ու անհոգ կեանք վարողները աւելի պտղաբեր կ'ըլլան քան թէ խիստ դործունեայ եւ բազմազբաղ մարդիկ ու կիներ: Բարդ ու ջղաչին մեծ ուժգնութիւն վատնող կեանքը որ քաղաքակրթութեան հետեւանքն է եւ անոր հետ դուզընթաց առաջ կ'երթայ պտղաբերութեան ընդունակութիւնը երթալով կը պակսեցնէ:

Եթէ այս խնդրին մէջ իւրաքանչիւր ազգն ու ժողովուրդը իր պարագաները ի նկատի պիտի առնէ

եւ անոնց համեմատ վարուի, մեզ պէս ջարդուած ու պակասած ժողովուրդի մը համար բազմամարդութեան վախը գոչութիւն պէտք չէ ունենայ եւ հարցը շատ պիտի պարզուի եթէ հանրային առողջապահութեան տեսակէտէն դաշն քննենք: Հարցնենք, արդեօք կա՞ն պարագաներ որոնց մէջ յղութիւն եւ ապա յաճախակի տղաբերութիւն կրնան վտանգաւոր դառնալ թէ մօր եւ թէ տղուն համար: Բոլոր բժիշկներ պիտի պատասխանեն այն՝, կան այսպիսի պարագաներ որոնց մէջ յղութիւն պէտք է արգելուի: Յղութիւն պէտք է արգելել երբ կիներ թոքախտ, մտքի խանգարում, ջղաչին ուրիշ ծանր հիւանդութիւններ, գործօն սիֆիլիս, մահացու տեսակի արիւնատուրթիւն, շաքարախտ, զէչ տեսակ սրտացաւ, երիկամունքի եւ լեարդի մնայուն հիւանդութիւններ, շատ նեղ կծկուած կոնք ունի, երբ ենթակայ է արիւնհոսութեան եւ շարունակական վիժումի: Յղութիւն հակամէտ է բոլոր այս տկարութիւնները վատթարացընելու եւ կնոջ մահը փութացնելու: Երբոր կինը նեղ, կծկուած կոնք ունի չի կրնար ապահով կերպով ողջ երեխային ծնունդ տալ եւ յղութիւն այդ պարագային թէ տղուն եւ թէ մօր համար վտանգաւոր չառաջխաղացում մը կը դառնայ: Յղութիւն պէտք է արգելուի, նոյնիսկ վիժում առաջացուի երբ ան արդէն տեղի ունեցած է, (օրէնքը կը թոյլատրէ այս) այն դէպքերուն մէջ ուր կինը ենթակայ է վտանգաւոր տեսակի շարունակական ործի ու փսխումի (pernicious vomiting): Ես գիտեմ երիտասարդ, խիստ առուց նորապսակ օրիորդ մը որ այս պատճառաւ իր չղութենէն երկու ամիս վերջ մեռաւ: Կնոջ

էրիկը ինձ կը պատմէ իր ամուսինը ամէն օր չորս հինգ անգամ կը փսխէր եւ երբէք չէր կրնար սնունդ առնել: Այսպէս ան անսնունդ մնալով այնքան տկարացաւ որ օր օր ջանկարծամաս եղաւ:

Յղութեան պէտք է չափ դնել նաեւ այն պարագային երբ կինը, մանաւանդ փափկակազմ կին մը, արադ արագ ամէն տարի չլի մնալով տղայ մը կը բերէ ու այդ պատճառաւ շուտով կը վատուծնայ եւ կը խամրի: Պէտք է մայրը սիրոյ սեղանին վրայ շուտով զոհ բերել իր սերունդին: Պէտք է ան ապրի ու վաչելէ իր արդանդին պտուղը: Պէտք է տեսնէ իր դաւախներու մեծնալը, անոնց կեանքի մէջ ունեցած յաջողութիւնը, քաջագործութիւնները ու անոնցմով ուրախանայ: Փափուկ կնոջ մը համար ամէն տարի տղայ մը բերելը կարող է խիստ ծանր բեռ մը ըլլալ եւ անոր ուժերը շուտով ջլատել: Պէտք է երկու ջղութեան մէջտեղ դնէ երկու կամ երկու ու կէս տարի անցնի որպէս զի կինը մէկ տղաբերութենէն չետոյ կազդուրուի, իր ուժերը վերստանայ եւ պատրաստուի յաջորդ տղաբերութեան: Եթէ միջակ կնոջ տղաբերութեան շրջանը 25 տարի հաշուենք, այդ հաշուով անիկա իր կեանքին մէջ 10 տղայ պիտի ունենայ, թիւ մը որ պէտք է ասոր համար պղտիկ համարել: Բայց այս խնդրին մէջն ալ, ինչպէս ուրիշ շատ մը խնդիրներուն, կարելի է հասարակ դատողութեան հետեւիլ: Այս տեսակ առողջապահական կանոններ կարելի է ճիշդ միեւնոյն կերպով չարմարցնել մէն մի անհատի Փիզիքական կազմուածքին: Պէտք է նկատի առնել իւրաքանչիւր կնոջ ասողութիւնն ու առանձնաչատկութիւնը: Անոնք

որ առոյգ են ու կորովի կրնան ծնունդ տալ աւելի թուով երախաներու առանց Փիզիքայէս տուժելու: Այսպիսիներուն համար այս տեսակէտէն շատ մտահոգութիւն պատճառ չը կայ:

Այս խնդրին նկատմամբ ի՞նչ պիտի ըսենք հասարակացաւ ու կարօտ ընտանիքներուն համար որոնք կարծես կեանքի իբր հեղնութիւն յաճախ ամենէն պտղաբեր ու բազմամարդը կ'ըլլան: Ձգաւոր ծնողներուն համար մեծ թուով երախաներ ունենալ խոշոր բեռ մը, այո՛, մինչեւ անգամ անէծք մը չըլլա՞ր: Կարելի է ուրանալ որ այս տեսակ ընտանիքներուն մէջ ընդհանրապէս կնոջ առողջութիւնը շնորհիւ գէշ սնունդի եւ հակառողջական պաշտաններու շուտով կ'աւրուի եւ տղաներն ալ ոչ պէտք եղած Փիզիքական խնամքը եւ ոչ ալ կանոնաւոր դաստիարակութիւն մը կրնան ստանալ: Նկատի առնելու է եւ այն որ այս տեսակ աղքատ ու նեղուած կիներ տղաբերութեան բեռէն ազատուելու համար, յաճախ կը դիմեն արուեստական վիժումի, նոյն իսկ չուսահատական միջոցներու որոնցմով զիրենք կ'ենթարկեն ծանր վտանգներու: Այսպիսիներուն հարցար անգամ աւելի աղէկ չէ՞ յղութիւն կանոնաւորելու գիտութիւնը սորվեցնել քան թէ թողուլ որ անոնք անխորհուրդ կերպով վտանգաւոր ու չուսահատական միջոցներու դիմեն: Ես այդպէս կը կարծեմ:

Յղութիւն կանխարգիլելու համար երկու տեսակ միջոցներ կան, բնական եւ արուեստական: Ամենէն վաչելուչ, ամենէն օրինաւորը բնական միջոցներն են որոնց մասին բանաւոր պատճառ ունեցող կիներ պէտք եղած ժամանակ իրենց բժիշկէն կարող

են տեղեկանալ :

Կնոջ հետ յաճախակի մերձեցում ունենալ երբ ան չլի է, վնասակար է ու տհաճելի, մանաւանդ չղութեան սկիզբն ու վերջը : Յղութեան սկիզբը անիկա հակամէտ է առաջ բերելու վիժում իսկ վերջերը շատ մը կիներու համար վերջին ծայր անախորժ գործողութիւնն մը կը դառնայ այն եւ կրնայ այդ ժամանակ եւս վիժում առաջացնել :

Յղութեան ժամանակ կնոջ միտքը որքան կարելի է կատարելապէս խաղաղ եւ ուրախ վիճակի մէջ պահուելու է : Խաղաղ եւ հանգիստ պէտք է պահուին նաեւ արգանդն ու ծննդական միւս գործարանները : Զուգաւորութեան յարակից եղող մտային ու ջղային յուզումները, ծննդական գործարաններու շարժումներն ու ցնցումները չեն կրնար կնոջ արգէն լարուած մտքին եւ փափուկ ու խախտուելու խիստ հակամէտ եղող ջղային ընդհանուր համակարգութեան վրայ վնասակար ազդեցութիւն չունենալ : Յետոյ չղութեան ժամանակ յաճախակի մերձեցում կրնայ աղիտալի ազդեցութիւն թողուլ երախաներուն վրայ : Այսպիսի պարազաներու մէջ վտանգ կայ որ անոնք ըլլան տխրած, հիւանդոտ եւ տկարամիտ : Կօրնէլի բժշկական դպրոցի մանկաբարձութեան պրօֆէսոր Դօկտօր Էդգէր կ'ըսէ. «Յղութեան առջի ամիսները եւ վերջերը սեռային մերձեցում պէտք է արգելուի : Անիկա պէտք է արգելուի նաեւ այն ատեններ որոնք կը համապատասխանեն դաշտանի ժամանակաշրջանին, որովհետեւ, այդ ժամանակներ ծննդական գործարանները ենթակայ են բորբոքելու եւ վիժումի մասնաւոր հակամիտութիւն մը

կայ : Յղութեան ժամանակ սեռային յարաբերութիւն կը համարուի ամենէն հզօր ազդակներէն մէկը վիժում եւ առողջական խանգարումներ առաջ բերելուն մէջ» :

Յղի կիներ մասնաւոր խնամքի եւ հոգատարութեան պէտք ունի : Նախ եւ առաջ ան պէտք է ունենայ որոշ չափով մարմնամարդ : Տղան ծնանելու ժամանակ մաշրը կ'ենթարկուի մկանական եւ ջղային ծանր գործի որուն համար լաւ ուժ հարկաւոր է : Այս դժուարին աշխատութեան եւ անոր չարակից եղող ցաւերուն համար կիներ պէտք է սկիզբէն ինքզինք չարմարցնէ իր ուժերը մարմնամարդով, լաւ սնունդով ու թարմ օդով բարձր պահելով : Եթէ թոյլ մնայ ու իր մկանական ուժը պակսի, երկունքի ժամանակ ան շատ պիտի նեղուի ու դառն ցաւ կրէ : Ի հարկէ չղի կիներ ինքզինք ծանր մարմնամարդի ենթարկելու չարմարութիւն չունի, մանաւանդ չղութեան սկիզբները երբ սրտախառնուք ու փսխուք յաճախ կը պատահին ու վերջերը երբ տղան մեծցած է ու ծանր բեռ մը ունի վրայ : Ան կրնայ սակայն ապահովարար թեթեւ մարմնամարդ ընել, ինչպէս օրինակ, ամէն օր դուրս ելլել ու քալել : Այսօրինակ ամենօրեայ մարզանք մը բաց օդին մէջ գրեթէ յոգնեցնելու աստիճան, թէ զինք եւ թէ իր երախան լաւ վիճակի մը մէջ պիտի դնէ մօտեցող երկունքին համար :

Երկրորդ՝ չղի կիներ պէտք է ստանայ լաւ սընունդ, որովհետեւ հիմա երկու հոգիի համար պիտի ուտէ : Մսեղէն եւ բանջարեղէն խառն կերակուր ամենէն օգտակարն է : Առաւօտեան սրտախառնուքն



ու թուլութիւնը արգելելու համար կրնայ, երբ դեռ անկողնին մէջն է, թեթեւ նախաճաշ մը առնել ու չետոյ մէկ երկու ժամ նիրհել վեր ելլելէն առաջ: Յըղութեան վերջերը կարող է կանոնաւոր ճաշերու մէջտեղ աւելորդ թեթեւ ճաշեր եւս առնել: Պէտք է ան կանոն ընէ շուտ շուտ բայց քիչ ուտել, որովհետեւ, մեծցած ու վեր բարձրացած արգանդը այժմ բաւական կը ճնշէ ստամոքսին վրայ եւ անոր տարողութիւնը կը պղտիկցնէ, այնպէս որ խոշոր ծանր ճաշ մը կրնայ զինք նեղացնել ու չղանցնել: Գործածելու է նաեւ առատ պտուղ:

Աղիքներն եւս պէտք է խնամքի արժանանան եւ չլի կինը պէտք այժմ աւելի քան երբ եւ իցէ ինքզինք պնդութենէն ազատ պահէ: Երիկամներ չղութեան ժամանակ խիստ հակամէտ կ'ըլլան աւրուելու եւ հիմա մարմնին մէջ զանազան թոյներ կազմուելու վրտանդներ շատ կան: Ուտի չլի կինը իր աղիքները պէտք է միշտ բաց պահէ ու պնդութեան շնորհիւ ուրիշ թոյներ ալ չաւելցնէ արդէն իր մէջ դտնուող թոյներուն վրայ:

Առատ մաքուր օդ անհրաժեշտ է չլի կնոջ համար: Ան աւելի մեծ քանակութեամբ ամխային թըթու կազ կ'արտադրէ, որովհետեւ, երկու հոգիի համար կը շնչէ: Պէտք է ան խորշի անմաքուր մթնոլորտէ, պէտք է իր սենեակը լաւ հովահրուած վիճակի մէջ պահէ եւ ծծէ առատ թարմ օդ:

Մորթն եւս պէտք է մաքուր պահէ որպէս զի անոր ծակոտիները բանայ եւ պատեհութիւն տայ թոյներուն անոնցմէ դուրս ելլելու, այգպիսով նաեւ երիկամներու եւ թոքերու ծանրաբեռուած գործը

թեթեւցնէ: Մինչեւ չղութեան վերջերն ալ կրնայ ամենօրեայ բաղնիքներ առնել: Զգուշ պէտք է ըլլայ սակայն սաստիկ տաք եւ պաղ լողանքներէ որոնք կրնան առաջ բերել ջղային ցնցում եւ այդ պատճառաւ նաեւ վիժում:

Հագուստները պէտք է ըլլան թույլ ու հանգիստ: Սեղմիրանը եւ ուրիշ տեսակ պրկող բաները պէտք է մէկ կողմ թողուլ: Ստինքները պէտք է երբէք ճընշման ենթարկուին: Անոնց պտուկները պէտք է մաքուր պահել զանոնք վէրքերէ ազատ պահելու համար: Եթէ անոնք ներս կ'երթան, զանոնք ամէն օր ձեռքով դուրս քաշելու է:

Ի վերջոյ յլի կնոջ մտային վճակը պէտք է որքան կարելի է, անդորր ու գուարթ ըլլայ: Այսպիսի կնոջ մտային վիճակը շատ զօրեղ կերպով կ'աղդէ երախային վրայ: Խաղաղ եւ դեղեցիկ իտէպններով լեցուն միտքն եւ ուրախ սիրտը ամէն կերպով կ'օգուեն երախայի դեղեցիկ ձեւակերպման եւ նօրմալ, կանոնաւոր զանազանաւորման ու դարդացման: Ան պէտք է խորշի ջղային սաստիկ չղուճներէ, մտատանջութենէ, տխրութենէ, նախանձէ եւայլն: Իր բարեկամներն այժմ պէտք է խիստ զգուշ կերպով վարուին անոր հետ: Յլի կինը օտարոտի քմահաճոյքներ կ'ունենայ եւ շատ դուրադրդիւ է: Պէտք է հիմա անոր հետ աւելի մեղմօրէն ու համբերութեամբ վարուիլ:

Մանկան ծնանելէն չետոյ վաղեմի հրէաները մայրը քառասուն օրուան չափ կ'առանձնացնէին եւ էրկան թույլ չէին տար անոր մօտենալու: Այսպիսի սովորութիւն մը կար նաեւ հին հայերուն մէջ որ

մինչեւ հիմա տեղ տեղ կը շարունակուի: Տեղական չորջորջուծով մաշքը կը մտնէր «քառասունք» եւ այդ ժամանակամիջոցը լրանալէն չետոյ միայն դուրս կ'ելլէր եւ էրկան հետ կը չարաբերէր: Շատ գեղեցիկ սովորութիւն մըն էր այս, որովհետեւ, երկունքէն չետոյ, նաեւ ծիծ տուած ժամանակ, մաշքը շատ չորնաձ կ'ըլլայ այնպէս որ կատարեալ հանգստի պէտք ունի եւ սեւէ ջղային ու հոգեկան չոցերու չի կրնար դիմանալ: Դիտուած է որ կաթը հոգեկան ցնցումներու ժամանակ երբեմն կը վնասուի ու կրնայ երախան վնասել:

Կարելի՞ է արդեօք մանկան սեռը որոշել եւ ուզած ժամանակ աղջիկ կամ տղայ ունենալ: Այս մասին պէտք է ըսեմ բժշկութիւն գեռ որոշ ու դրական բան մը չի գիտեր: Սեռը որոշելու նկատմամբ գոյութիւն ունեցող բազմաթիւ վարկածները գեռ վարկած կը մնան: Անոնցմէ եւ ոչ մէկը ապացուցուած եւ ստույգ իրողութեան կարգը անցած է: Շատ հին ժամանակներէ չետէ մարդիկ այս խնդրով հետաքրքրուած են որու մասին զանազան հայեցողութիւններ առաջ բերած են եւ գեռ կը բերեն:

Առաջներ շատ ընդհանուր էր այն դադափարը թէ սեռը ծնողներ կրնային որոշել շնորհիւ իրենց երեւակալութեան եւ իղձերուն: Օրինակի համար, եթէ մաշքը շարունակ տղու վրայ մտածէր, իր երեւակալութիւնը անոր փափաքով սնանէր, շնորհիւ արձաններու եւ նկարներու միշտ տղու պատկերներ պահէր իր աչքի առաջ, այն ատեն տղայ կ'ունենար: Ուրիշ վարկած մըն ալ այն էր թէ մերձեցման ժամանակ որ սեռը որ առոցք եւ զօրաւոր ըլլար եւ գոր-

ծօն դերը ստանձնէր մանուկը այդ սեռէն կ'ըլլար: Կար ատեն մըն ալ երբ կը հաւատային մարդու սերմը կ'որոշէ սեռը: Ըստ այս հայեցողութեան աջ ամորձիէն եկած սերմը կուտայ տղայ, ժախ ամորձիէն եկած սերմը կուտայ աղջիկ: Ասկէ վերջ առաջ բերուեցաւ այն վարկածը թէ սերմն ու ձուն միասին կ'որոշեն սեռը: Երբ աջ կողմէն եկած սերմը կը միանայ աջ ձուարանէն եկած ձուին կ'ունենանք տղայ, երբ ձախ կողմի սերմը կը միանայ ձախ կողմի ձուին կ'ունենանք աղջիկ: Կարգ մը գիտնականներ ալ կը պնդեն որ կնոջ տարիք եւ սնունդը կ'որոշեն սեռը: Դեռատի կիներ աւելի աղջիկ կը ծնին իսկ արիքոտ կիներ տղայ: Երբ կիներ լաւ սնունդ ստանայ աւելի շատ աղջիկ կը բերէ: Եթէ գէշ կերպով սնանի աւելի շատ տղայ կը բերէ: Ուրիշներ ալ կ'ըսեն բնութիւն ինքը կ'որոշէ այս խնդիրը: Երբ ժողովուրդի մը մէջ մէկ սեռը զգալի կերպով պահած է, այն ատեն կիներ աւելի շատ հակառակ սեռէն զաւակ կը ծնանին երկու սեռերու հաւասարակչութիւնը պահպանելու համար:

Համեմատարար նոր հայեցողութիւն մըն ալ այն է թէ ոչ կնոջ ստացած սնունդը եւ ոչ ալ մարդուն սերմը ունէ գեր կը խաղան այս խնդրին մէջ, կնոջ ձուն միմիային կ'որոշէ սեռը: Սեռը արդէն ձուին մէջ որոշուած է անոր արգասաւորութեան առաջ երբ գեռ ձուարանին մէջն է: Այս հայեցողութեան հեղինակն է անգլիացի գիտնական Դասօն որ կը ջանայ փաստերով ցոյց տալ իր վարկածի ճշդութիւնը: Դասօն կ'ըսէ աջ ձուարանը կ'արտադրէ արու ձու, իսկ ձախ ձուարանը կ'արտադրէ էգ ձու: Իւրաքանչիւր

դաշտանին միայն մէկ ձուարան դուրս կը դրկէ ձու մը որ կը չուէ դէպի արգանդ արգասաւորուելու: Մէկ ամիս մէկ ձուարան կը պատուի ու ձու մը դուրս կը դրկէ խկ չաջորդ ամիսը միւս ձուարանը կը պատուի ու ձու մը կը դրկէ դուրս: Հաղուադէպ պարզաներու մէջ միայն՝ երկու ձուարաններ միասին կը պատուին եւ մէկ կամ աւելի ձուեր դուրս կը դրկեն երբ կ'ունենանք երկւորեակ, երբեմն ալ երեք տղայ: Այսպէս՝ երբ աջ հակիթը կարգասաւորուի մարդու սերմով կ'ունենանք տղայ, երբ ձախ հակիթը կ'արգասաւորուի միւս կողմէ սերմով կ'ունենանք աղջիկ:

Ըստ Դասօնի՝ անդրանիկ մանկան սեռը չաչտնի է որ այս կերպով ոչ կրնանք դուշակել եւ ոչ ալ որոշել, բայց երբ կին մը անդամ մը զաւակ ունեցած է կրնանք միւսները դուշակել եւ որոշել չլուծեան տեղողութեան հաշիւներով:

Այս հաշիւողութիւնն ալ իր արժէքը կորսնցուցած է, որովհետեւ, դիտուած է որ եղած են կիներ որոնք մէկ ձուարանով միայն երկու սեռէ ալ զաւակ ունեցած են: Դեռ ուրիշ հաշիւողութիւններ ալ կան սեռը որոշելու մասին բայց չ'արժեք դանոնք բոլորը այս տեղ թուել ու նկարագրել: Այսքան մեծ թուով զանազանատեսակ վարկածներ ցոյց կուտան արդէն որ սեռի որոշման խնդիրը դեռ մութ գաղտնիք մըն է եւ անոր վրայ տակաւին օրէն ստույգ ծանօթութիւն մը չունինք: Այս մասին մինչեւ կարողանանք գիտութենէն դրական օգնութիւն ստանալ, պէտք է սպասենք աւելի ստույգ տեղեկութիւններու:

\* \* \*

Հաշուուած է որ առհասարակ ամէն ութը կամ տասը ամուսնութենէն մէկը ամուլ դուրս կուգայ: Առաջներ երբ դեռ լաւ խոշորացուցներ չունէինք եւ վեներական ախտերու, մասնաւորապէս միզկատապի վրայ մեր տեղեկութիւնները սակաւ էին, այս թերութիւնը գրեթէ ամբողջապէս կնոջ կը վերադրէին: Հիմա որոշ գիտենք սակայն որ ամլութեան պատճառը շատ անգամ մարդն է եւ ճշմարտութենէն հեռու չենք ըլլար եթէ ըսենք ամլութեանց չորսէն մէկուն մարդն է պատասխանատու:

Մարդու ամլութեան պատճառներն են անոր սեռացին անզորութիւնը, սերմնահեղուկի մէջէն սերմնակենդանի բացակայութիւն եւ սերմի սակաւ արտադրութիւնը: Սերմնակենդանի բացակայութեան ամենէն հասարակ պատճառը միզկատապն է: Երբ միզկատապ կ'անցնի դէպի ներս եւ կը վարակէ երկու ամորձիները այն ատեն անոնք շատ մը դէպքերու մէջ սերմնակենդան արգատրելու կարողութիւնը կը կորսնցնեն ու մարդը կը դառնայ ամուլ: Այս մասին աւելի մանրամասն պիտի խօսին երբ վեր առնեմ վեներական ախտերը:

Կնոջ չբերութեան պատճառները շատ են: Անոնցմէ մէկն է Փալօպեան խողովակներու բորբոքումը, տձեւութիւնը կամ ծոմուկումը: Ասոնք գլխաւորաբար առաջ կուգան միզկատապէն եւ շատ ընդհանուր են հիմակուան ժամանակները շնորհիւ վեներական ախտերու լայն տարածման: Այսպիսի պարզաներու մէջ սաղմը չի կրնար ծոմուկում, գոցուած եւ կամ թարախով լեցուն Փալօպեան խո-

դովակներու մէջէն կանոնաւոր կերպով չուել զէպի արգանդը, եթէ երբէք աչնտեղ հասնի ալ պիտի փրճանայ կամ իր կենսունակութիւնը կորսնցնէ: Ոչ ալ մարդու սերմը կրնայ ապահով կերպով երթալ ու Փալօպեան խողովակին մէջ ձուին հանդիպիլ:

Ուրիշ պատճառ մըն է ձուարաններու մաշումը, տեղափոխութիւնը կամ վատասերումը աչեւալ կերպերով, ինչպէս անոնց մէջ բուսած խոյլերով, մանր ու խոշոր բուշտերով եւալն: Տեղափոխութեան պարագային սաղմը չի կրնար Փալօպեան խողովակին մէջն անցնիլ իսկ միւս խանգարումներու պարագային ձուարանը աչեւս չի կրնար սաղմ արտադրել:

Երբորդ պատճառ մըն է արգանդի բացակայութիւնը կամ անոր չափազանց պզտիկ մեծութիւնը, ապա անոր բորբոքումը, տեղափոխութիւնը, ծրմըռկումը եւ չափազանց նեղ external os եւ երկար պարանոց: Բորբոքուած արգանդին մէջ սաղմը չի կրնար հաստատուիլ եւ աճիլ: Տեղափոխութեան պարագային սերմը չի կրնար դիւրութեամբ հեշտոցէն արգանդին մէջն անցնիլ: Նոցնը ճշմարիտ է երբ պարանոցը չափազանց երկար է կամ անոր անցքը ծուռուծուռ է եւ կամ external osը չափազանց նեղ է:

Չորրորդ պատճառ մըն է խիստ նեղ ու կարճ հեշտոց որուն մէջ սերմը չի կրնար բաւարար չափով լեցուիլ կամ մնալ որպէս զի հնարաւորութիւն ունենայ զէպի վեր, արգանդէն ներս անցնիլ: Երբեմն՝ հեշտոցէն հոսող հեղուկները սաստիկ թթու կ'ըլլան որոնք հեշտոցին մէջ թափուած սերմը կ'ոչնչացնեն: Ամլութիւն կրնայ առաջ գալ նաեւ հեշտոցի

զբղիւռէն, գոց կուսաթաղանդէն, ամօթաշուրթերուն եւ միզուկին մէջ գտնուող ուռեցքներէն եւ ցաւերէն որոնք շիտակ սեռալին մերձեցումը անկարելի կը դարձնեն:

Ընդհանուր պատճառներն են չափազանց սեռալին մերձեցում, կնոջ ուժասպառութիւնը ալլեւալլ հիւանդութիւններով, ինչպէս օրինակ, թոքախտով, սաստիկ պարարտութեամբ, ալկոլամոլութեամբ, արիւնատութեամբ, շաքարախտով եւ սիֆիլիսով:

Ասկէ չաչտնի կ'ըլլայ անշուշտ որ ամլութեան դարմանը կախում ունի անոր պատճառներէն: Երբ Փալօպեան խողովակներն ու ձուարանները աւրուած ու փճացած են անկարելի է անոր համար բան մը ընել, որովհետեւ, երբ յիշեալ գործարանները անգամ մ աւրուած են ալ անհնար է զանոնք իրենց առողջ վիճակին եւ գործածութեան վերադարձնել:

Երբ արգանդը տեղափոխուած է կարելի է զայն վերարուժական գործողութիւններու կամ նեցուկներու օգնութեամբ իր շիտակ դիրքին մէջ դնել ու աչդպէս չղութիւնը հնարաւոր դարձնել: Երբոր այնպէս չղութիւնը երկար ու ծուռուծուռ է, կարելի է անոր ծայրէն քիչ մը կտրել ու աչդպէս սերմին մուտքը արգանդին մէջ դիւրացնել: Սաստիկ նեղ ծակը կարելի է հեշտութեամբ լայնցնել եւ սերմին մուտքը անոր մէջ դիւրացնել: Վերարուժական գործողութեամբ կարելի է բուժել նաեւ գոց կուսաթաղանդը, վերցնել ամօթաշուրթերուն ու միզուկին մէջ գոչութիւն ունեցող ուռեցքները եւ աչդ կերպով շիտակ մերձեցումը հնարաւոր դարձնել:

Ուժ սպառող հիւանդութեանց պարագային

դարձանուժը պէտք է ուղղուի սոչն հիւանդութեանց դէմ : Թոքախտաւորները պատշաճ կերպով դարձանուելու են եւ արիւնատ եղողներուն արիւնը պէտք է հարստացուի լաւ սնունդով, թարմ օդով եւ երկաթի զանազան բաղադրութիւններով : Անոնք որ չափազանց պարարտ են իրենց ծանրութիւնը պէտք է պակսեցնեն մարմնամարդով, քիչ ուտելով եւ սառն լողանքներով : Միֆիլիս, շաքարախտ եւ ալիօլամոլութիւնն ալ պէտք է իրենց չտուկ դարձանուժը ստանան :

Երբոր կիներն ու էրիկը իրենց սեռային չարաբերութեանց մէջ ծաւրացեղութեան դացած են պէտք է դադարեցնեն դաչն : Պէտք է կիներ հանգիստ թողուլ մասնաւորապէս այն ատեններ որոնք կը համապատասխանեն դաշտանի ժամանակաշրջանին, որովհետեւ, ինչպէս մենք տեսանք, այդ ատեն վիժուծի մասնաւոր հակամիտութիւն մը կայ : Երբ արդանդը անդամ մը վիժէ վտանգ կայ որ վիժուծը իրեն ունակութիւն դարձնէ եւ ուրիշ չղութիւններու ընթացքն ալ խանդարէ : Ասոր մէկ լաւ ապացոյցը մենք կը տեսնենք անառակ աղջիկներուն մէջ : Յայտնի իրողութիւն է որ անոնք առհասարակ ամուլ կ'ըլլան, շատ քիչերն են որ չլի կը մնան : Պատճառը անոնց սեռային չափազանցութիւնն է :

Այսպիսի դէպքերուն մէջ լաւ է որ էրիկն ու կինը ժամանակ մը իրարմէ հեռանան եւ ժուժկալ մընան : Օրինակի համար, կիներ կրնայ դիւզ մը երթալ ու էրիկէն հեռու այն տեղ երկար հանգիստ մը ընել ու կազդուրուիլ : Մարդն ալ ժամանակ մը լաւ է որ ուրիշ միջավայրի մէջ ապրի, կնոջ բացակայութեան

ժամանակ բացօդեայ շրջադաշտութիւններով եւ ծովաչին լողանքներով իր ուժերը աւելցնէ : Այսօրինակ ժամանակաւոր բաժանումներ եւ օդափոխութիւններ չաճախ խիստ բարեբաստիկ արդիւնքներ տուած են : Երբեմն պատահած է տասը տասնեւհինգ տարի ամուլ մնացած կիներ, որոնք տղաբերութեան չոչնչն իսպառ հրաժարած էին, յանկարծ յղի մնացած են երբ քանի մը շաբաթ օդափոխութեան երթալով՝ ընտորհիւ բացօդեայ շրջադաշտութիւններու եւ ծովաչին լողանքներու լաւ մը կազդուրուած են : Կատարուած փոփոխութիւնը կարելի է այսպէս բացատրել : Հաւանական է առաջ անոնք տկար էին եւ իրենց հեշտոցէն հոսող վատառողջ, թթու հեղուկները արգելք կ'ըլլային փափուկ ու պզտիկ սերմնակենդաններու դուրսութեան, չէին թողուր որ անոնք ողջ ու առույգ վիճակի մէջ արդանդը հասնէին եւ այդ տեղ սաղմը արգասաւորէին : Երբ կազդուրուեցան, իրենց մարմնի հեղուկները դարձան նորմալ եւ այդ զիբենք չղութեան ընդունակ դարձուց : Մերձեցման ժամանակ կնոջ կողերը անոր պառկած դիրքին մէջ վեր պահելը սերմին մուտքը արգանդին մէջ կը դիւրացնէ եւ կրնայ այդպիսով չղութիւն հնարաւոր դարձնել : Եթէ կնոջ հեշտոցէն չափազանց թթու հեղուկներ կը հոսին, մերձեցումէն առաջ դաչն նատրի կամ ուրիշ ալքալայ ջրերով լուալը կրնայ խիստ բարեբար արդիւնքներ տալ :

Ամուլ եղող կիներ չուսահատելու եւ իրենց կեանքը դառնացնելու չեն : Ամէն պարագայի տակ այդ տեսակ կիներ մասնագէտ բժիշկի մը ինքզինքնին քննել տալու են : Բժշկութիւն կրնայ շատ մը

դէպքերու մէջ այս տեսակ հիւանդներուն օգնել: Երբեմն անիկա չի կրնար օգնել, որովհետեւ, ամուլթեան պատճառը անչալտ կը մնայ կամ տեղի ունեցած աւերմունքը անկարելի կ'ըլլայ դարմանել: Բժշկութիւն չի կրնար օգնել նաեւ այն պարագային երբ մարդը սերմնակենդան արտադրելու կարողութիւնը կորսնցուցած է չնորհիւ իր ամորձիներուն մէջ տեղի ունեցած բորբոքումին:

## VIII

## ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ

Անառակութիւն եւ վեներական ախտեր քաղաքակրթութեան երկու արտոնները.— Վեներական ախտերու դէմն առնելու համար Եւրոպայի մէջ ձեռք առնուած միջոցները.— Անոնց մուտքը հայոց մէջ.— Սիֆիլիս.— Վարակման կերպերը.— Նախազուլթեան պէտքը.— Հիւանդութեան շրջաններն ու ամբողջ ընթացքը.— Սիֆիլիս ժառանգական հիւանդութիւն մը.— Դարմանը.— Միզկատապ.— Վարակման կերպը.— Հիւանդութեան բնութիւնը եւ ընթացքը.— Պատճառը շատ մը մարդոց եւ կիներու ամուլթեան.— Դարմանը.— Շանկրօիդ.— Ընթացքը.— Դարմանը:

Վեներական ախտեր մեծաւ մասամբ արդիւնքն են անառակութեան ու այդ երկու բաներ քաղաքակիրթ կեանքի երկու խոշոր սեւ բիծերն են: Բոլոր ձեռնհաս խուզարկուներ կը վկայեն միաբերան որ անառակութիւն վերջերս քաղաքակիրթ ազգերուն մէջ սաստիկ տարածուած է ու դեռ կը տարածուի: Վեներական ախտերն ալ անոնց հետ համընթաց առաջ կ'երթան:

Անառակութեան ու վեներական ախտերու վե-

րացումը պիտի ըլլար ամենամեծ օրհնութիւն մը մարդկային ազգին, որովհետեւ, անոնց հետ շատ տառապանք եւ թշուառութիւն պիտի վերնաջին աշխարհէն: Ուրախալի է որ այժմ բժիշկներու, քաղաքագէտներու եւ օրէնսգիրներու ուշադրութիւնը դարձած է այս հրատապ հարցին եւ սկսած է պաշարը այդ երկու շարիքներուն դէմ: Կռիւր ի հարկէ այնքան ալ դիւրին չէ եւ հաւանական է բաւական երկար տեւէ մինչեւ չաղթութեամբ պսակուի, որովհետեւ, անառակութեան ու անոր ընկերացող վեներական ախտերու ետեւ, իբրեւ պատճառներ, կան ծանրակշիռ խնդիրներ որոնց պատշաճ լուծումէն կախում ունի այդ Ուտոպիայի գալուստը: Այդ խընդիւրներէն մէկն է, օրինակ, տնտեսական վիճակը: Տարակուս չը կայ որ շատ մը աղջիկներ չետին ծայր չքաւորութենէն ստիպուած իրենց մարմինները կը ծախեն իրենց ողորմելի գոյութիւնը պահելու համար: Տարակուս չը կայ նաեւ որ շատ մը երիտասարդներ տնտեսական ծանր պայմաններու պատճառաւ չը կրնալով շուտ ամուսնանալ եւ տուն կազմել, անառականոցներ կը չաճախեն իրենց սեռային զգացումներուն գոհացում տալու համար: Տնտեսական այս խնդիրները պէտք է նախ գոհացուցիչ կերպով լուծուին որպէս զի չարիքներու թերեւս ամենէն կարեւոր պատճառը վերցուի:

Տնտեսական վիճակը սակայն միակ պատճառը չէ: Կան ուրիշ պատճառներ ալ, ինչպէս տգիտութիւն, կամքի զօրութեան պակասութիւն, ծուլութիւն, բարոյական բնազդներու թուլութիւն, պչրասիրութիւն, անհետեւողականութիւն եւ ի վերջոյ

ըստ Լօմբրոզօյի բնածին պակասամտութիւն: Պէտք է ուրեմն մեր կռիւնները չամառ կերպով մղուին ասոնց դէմն ալ: Պէտք է լուսաւորել ժողովուրդը եւ կրթել, զօրացնել անոր կամքը:

«Մարդկութեան բարեկամը», կ'ըսէ Հայնէի բժիշկ Դօկտօր Մաքս, «կրնայ որոշ վստահութեամբ մը գուշակել վեներական ախտերու տակաւ նուազումը եւ չուսալ ոչ շատ հեռուոր ապագայի մը մէջ անոր իսպառ անհետացումը: Այս նպատակին հասնելու համար հարկաւոր է միայն որ ընդհանուր առողջապահութիւն ուսումնասիրողներ և քարոզողներ, նաեւ հասարակաց բարոյականութեան սատարողները չը չոգնին իրենց ջանքերէն, որ գիտական հետազոտութիւնը առանց սովորութեան բռնապետութենէն ազդուելու եւ կանխակալ կարծիքներու մէջ իջնալու, չստակ եւ հաստատուն կերպով իր նպատակը շարունակէ»:

Եւրոպայի մէջ վեներական ախտերու հանդէպ սկսուած շարժումը 1899ի սեպտեմբերին որոշ ձեւի եւ կադամակերպութեան մէջ մտաւ երբ Բրուէլի մէջ տեղի ունեցաւ առաջին միջազգային համաժողովը սիֆիլիսի եւ ուրիշ վեներական ախտերու դէմ նախազգուշական միջոցներ ստեղծելու համար: Այդ ժողովին մասնակցեցան բժիշկներ, օրէնսգէտներ, կղերականներ, հեղինակներ եւ մարդասէրներ Եւրոպայի ամէն կողմերէն: Անկէ չետոյ ժողովին իբրեւ զործնական արդիւնք, կազմուեցաւ միջազգային ընկերութիւն մը սիֆիլիսի եւ ուրիշ վեներական

ախտերու դէմ առողջապահական միջոցներ եւ բարոյական նախազգուշութիւններ ձեռք առնելու համար: Այս ընկերութիւն իր կայանն ունի Բրուսէլի մէջ ուր կ'ունենայ միջազգային պարբերական խորհրդակցութիւններ: 1903ի հոկտեմբեր 19ին ալ Գերմանիոյ մէջ կազմուեցաւ այսպիսի ընկերութիւն մը, «Վեներական Ախտեր Նուաճող Գերմանական Ընկերութիւն» անունով, Բերլինի մէջ: Այս ընկերութիւններ կը հրատարակեն առողջապահական հանդէսներ, տետրակներ, կուտան դասախօսութիւններ եւ ամէն կերպով կը ջանան լուսաւորել ու կրթել ժողովուրդը եւ զգուշացնել զայն վարակումէ: Կը ջանան հիւանդներ պատշաճ կերպով դարմանելու միջոցներ ստեղծել եւ ստիպել որ կառավարութիւնը նպատակաշարժար օրէնքներ անցնէ վեներական ախտերը արգելելու համար:

Ասկէ առաջ հաչեր, շնորհիւ իրենց կղզիացած դիրքին եւ նահապետական պարզ ու քրիստոնէական կենցաղին, մաքուր էին ու այս ախտերէն դերձ մնացած էին: Վերջին տարիներ սակայն, շնորհիւ դաղթականութեան եւ օտար երկիրներէ հաչոց դէպի հաչրենիք երթեւեկութեան, վեներական հիւանդութիւնները սկսած են հաչերուն մէջն ալ մտնել: Այնոնք շատ տարածուած են մասնաւորապէս արեւմտեան Փոքր Ասիոյ եւ Կիլիկիոյ նահանգներուն մէջ: Նիւ Եօրքի Վիլիամ Բօբինսօն կ'ըսէ Նիւ Եօրքի ամբողջ ժողովուրդէն քսանհինգ առ հարիւրը միզկատապ իսկ հինգ առ հարիւրը սիֆիլիս ունին: Բոստոնի համբաւաւոր Չարլզ Ուիտնին, որ վեներական ախտերու մասնագէտ մըն է եւ որուն քով

հաչերը շատ կ'երթան, կ'ըսէ Բոստոնի մարդոց քրտան առ հարիւրը վարակուած են: Ըստ Ուիտնինի՝ հաչերուն մէջ վարակուածներուն տոկոսը աւելի մեծ է, հաւանաբար քսանհինգ առ հարիւրը: Ուիտնին նաև կ'ըսէ վեներական ախտեր հաչերուն մէջ աւելի դէջ հանգամանք կ'ունենան եւ բարդութիւններու մէջ շատ կը մտնեն: Ասոր պատճառը անոր կարծիքով հաչերու դիմադրական պակաս ուժն է ընդդէմ սոչն հիւանդութեանց: Դօկտօր Եարտըմեան կ'ըսէ իր հիւանդներէն վաթսուսվեց առ հարիւրը վարակուած են: Դօկտօր Տիգրան Նալչաճեան կը կարծէ ամերիկահաչերէն չիտուն առ հարիւրը վարակուած են: Իմ պահած արձանագրութեանց համեմատ՝ իմ հաչ հիւանդներէն քսանհինգ առ հարիւրը վարակուած են: Եթէ ենթադրենք Դօկտօր Եարտըմեանի եւ Դօկտօր Նալչաճեանի հաչիւնները միջին հաչուէն քիչ մը վեր են եւ խնդիրը խտացած գոչներով կը ներկայացնեն, կարծեմ կրնանք բաւական ապահով կերպով ըսել ամերիկահաչերէն երեսունէն մինչեւ երեսունհինգ առ հարիւրը վեներական ախտերով վարակուած են: Պէտք է նկատել որ վարակուածներէն ոմանք երբէք բժիշկի չեն դիմեր: Իրենց ընկերներու հրահանգին համեմատ իրենք կը ջանան ինքզինքնին բժշկել ու այդպէս վարակման դէպքը բժիշկէն անյայտ կը մնայ: Յետոյ ոմանք ալ տարիներ առաջ հաչրենիք կամ արտասահման եղած ատեն վարակուած են ու այս տեղ երբ ուրիշ տեսակ հիւանդութեանց համար մեզի կուգան դէպքը չեն չիշեր ու այդպէս սոչն դէպքերն ալ վիճակադրական նպատակներու համար մեզմէ անչաչտ կը մնան: Այնպէս որ այս իրո-



դուժիւններ և թէ ի նկատի առնենք կրնանք բաւական վստահարար ըսել ամերիկահայ ժողովուրդէն երեսուն, երեսունհինգ առ հարիւրը չլիշեալ հիւանդուժիւններով վարակուած են: Ասիկա պզտիկ տուրու մը չէ: Եւ ոչ մէկ հիւանդութեամբ մարդիկ այս համեմատութեամբ կը վարակուին, ոչ իսկ գործօն թորախտով կամ ժանտախտով: Ահաւասիկ լուրջ խնդիր մը որ մտահոգութիւն պէտք է պատճառէ ամէն բանիմաց հայուն: Մեր արտասահմանեան երիտասարդութեան առողջական վիճակը իրաւցնէ ողբալի պատկեր մը կը ներկայացնէ: Հարիւրաւոր, հազարաւոր երիտասարդներ վեներական նողկալի հիւանդութիւններով կը բռնուին ու շարաթներով, ամիսներով, երբեմն նոյն իսկ տարիներով կը չարաչարուին ու կը մտատանջուին: Շատ անգամ իրենց բոլոր վաստկածը բժիշկին կուտան եւ իրենց ապագան կը փճացնեն: Հարիւրաւորներ առանց լաւ բժշկուելու կ'ամուսնանան, կը վարակեն իրենց կիները եւ կը թշուառացնեն իրենց տունը: Տարակոյս չը կայ որ հարիւրաւոր երիտասարդներ հայրենիք վերադառնալով կը վարակեն իրենց կիները, զաւակները, բարեկամները եւ այդպէս վատ հիւանդութիւնները կը տարածեն հայ ժողովուրդին մէջ:

Արդարեւ վեներական ախտերու մուտքը մեր մէջ մեծ սպառնալիք մըն է մեր ցեղային կենսունակութեան ու նոյն իսկ գոյութեան: Արդէն շատ առողջ ազգ մը չէինք, երկար տարիներու ճնշման ու հարստահարութեան տակ առողջութիւննիս սկսած էր քայքայուիլ եւ ահա այս ալ վրայ եկաւ: Ազգի մը գորութեան ամենէն մեծ ազդակը անոր առողջու-

թիւնն է թէ մարմնին եւ թէ մտքին միանգամայն: Երբ ազգ մը ներքնապէս առողջ է եւ կորովի անկրնայ իր արտաքին թշնամիներուն հետ չափուիլ եւ իր գոյութիւնը հաստատ պահել: Առողջ, հաստ կաղնին կը մնայ կանգուն որքան ալ փոթորիկները զայն ծեծեն եւ շանթերը անոր զարնեն, որովհետեւ, անոր ներսը պինդ է եւ ամուր: Թող որդերը սակայն անոր ներսը կրծեն եւ այն տեղ փտութիւն եւ ապականութիւն առաջացնեն եւ ահա այն ատեն արտաքուստ զօրաւոր երեւցող կաղնին ամենէն պղծտիկ հովէն իսկ անփառունակ կերպով գետին պիտի տապալի: Այսպէս է նաեւ ազգերու կեանքը: Յորչափ ժողովուրդ մը ներքնապէս մաքուր է եւ առողջ շատ վախ չը կայ անոր համար. արտաքին թշնամիները, փոթորիկները չեն կրնար անոր մեծ վնաս մը հասցնել: Բայց թող մոլութիւններ, վարակիչ կործանարար հիւանդութիւններ որդերու պէս անոր կեանքը կրծեն ու անոր մէջ փտութիւն, ապականութիւն առաջացնեն, այն ատեն անիկա արտաքին ամենէն պզտիկ թշնամիին առջեւ իսկ պիտի իյնայ: Ժամանակ է որ մեր բժիշկները, հասարակագէտներն ու գործիչները իրարու քով դան եւ դարման մը մտածեն ասոր համար:

\* \* \*

Վեներական ախտերուն մէջ թերեւս ամենէն նողկալին սիֆիլիսն է: Անոր ծագումը թանձր մթութեամբ պարուրուած է ու յայտնի չէ թէ երբ սկսաւ ան: Ոմանք կը կարծեն անիկա շատ հին ատեններ

Ձինաստանի եւ Եգիպտոսի մէջ գոյութիւն ունէր, բայց ուրիշներ ալ հիմնուելով այն իրողութեան վերայ որ հին ձեռագիրներու եւ դրահանութեան մէջ սիֆիլիսի մասին բնաւ ակնարկութիւն չը կայ, կը պնդեն որ ան Հարաւային Ամերիկայէն Կոլումբոսի նաւերուն միջոցով տասնեւհինգերորդ դարու վերջերը տարուեցաւ Սպանիա ուսկից անցաւ Իտալիա եւ ապա ժանտախտի նման տարածուեցաւ ամբողջ Եւրոպայի եւ հին աշխարհի մէջ: Այս կարծիքն ունին Իվան Բլոխ եւ ուրիշները: Այդ ժամանակներ սիֆիլիս շատ թունալից բնութիւն ունէր եւ այդ իրողութիւնը մեծ ուժ կուտայ այս կարծիքին, որովհետեւ, երբ սիֆիլիս կը մտնէ ժողովուրդի մը մէջ ուր անկա առաջ գոյութիւն չունէր, շատ թունալից համաճանք կ'ստանայ եւ մեծ կոտորածներ կ'ընէ: Ժամանակ մը վերջ մարդիկ հիւանդութեանը կը վարժուին, անոր հանդէս ախտադերձ կը դառնան ու այն ատեն ախտը բազդատարար աւելի մեղմ բնաւորութիւն կ'ստանայ: Ահա այս պատճառաւ այնպէս կ'երեւի որ սիֆիլիս սկսած է բոլոր այն երկիրներուն մէջ, ուր անիկա ժամանակէ մը ի վեր գոյութիւն ունեցած է, իր ուժը կորսնցնել եւ կրնայ ըլլալ շատ չանցած բոլորովին մաշի ու անհետանայ:

Երկար ատեն անոր պատճառն ինչ էր չէին գիտեր եւ մինչեւ տասնեւիններորդ դարուն մէջտեղեր նոյնիսկ կը կարծէին որ միզկատապի, շանկրօիդ և սիֆիլիս միեւնոյն հիւանդութիւններն էին: Մինչեւ անգամ Ջոն Հընտերի պէս նշանաւոր հեղինակութիւն մը այդպէս կը հաւատար: Այսօր որոշ կերպով հաստատուած է որ սիֆիլիս տեսակարար, տարախոխիկ

հիւանդութիւն մըն է որուն թոյնը կը թափանցէ ամբողջ մարմնին մէջ ու երբէք առնչութիւն չունի վեներական միւս ախտերուն, միզկատապի եւ շանկրօիդի հետ որոնք միայն տեղական հիւանդութիւններ են, այսինքն, մարմնի մէկ մասին վրայ կը չարձակին եւ այն տեղ կը մնան մինչեւ բժշկուին:

Բիկօրդ 1830ական եւ 50ական թուականներուն բացարձակ կերպով ապացուցուց սիֆիլիսի, միզկատապի եւ շանկրօիդի զանազանութիւնը ու ապա սիֆիլիսի առաջին, երկրորդ եւ երրորդ շրջաններու վարդապետութեան հիմը դրաւ: 1903ին Մեչնիքօֆ չաջողեցաւ սիֆիլիս մարդէն կապիկի փոխանցել եւ չաջողեցաւ սիֆիլիս մարդէն կապիկի փոխանցել եւ այդպիսով ահագին զարկ մը տուաւ անոր վրայ կատարուող հետազոտութեանց եւ ուսումնասիրութեանց: Լասար գայն մէկ կապիկէ ուրիշի մը փոխանցեց եւ չառաջ տարաւ այս հետազոտութիւնները: 1905ին Շաուդին անունով դերմանացի պրօտօզօագէտը գտաւ սիֆիլիսի պտուտակածեւ մանրէները (*spirochaeta pallida*) եւ հրատարակեց իր ուսումնասիրութիւնները: Անկէ վերջ կատարուած շատ մը հետազոտութիւններ հաստատեցին այս պրօտուտակածեւ մանրէներու եւ սիֆիլիսի միջեւ եղած կապակցութիւնը: Սիֆիլիսի պատճառի չաչանադործութեան պատմութեան մէջ երկու անուններ, Մեչնիքօֆ եւ Շաուդին, օսկեղէն տառերով պիտի արձանագրուին:

Նկարագրութեան չարմարութեան համար սիֆիլիսի ամբողջ ընթացքը բաժնուած է երեք շրջաններու: Առաջին շրջանն այն է որուն մէջ նախնական վէրքը կ'երեւի ու կ'անհետանայ: Ասիկա երեսուցէն

մինչև քառասուն օր կը տեւէ : Նախնական վէրքէն մինչև վեց շաբաթ վերջ հիւանդութիւնը կը մտնէ իր երկրորդ շրջանը : Այս շրջանին մէջ մարմնի մակերեսային կազմուածքներն են որ ախտաւորման նըշաններ ցոյց կուտան, ինչպէս մորթը, մաղասամաշկը, մազերը եւայլն : Նախնական վէրքէն գրեթէ երկու տարի վերջ կուգայ երրորդ շրջանը : Ասոր մէջ մարմնի ներսը, խորը գտնուող հիւսուածքներն ու գործարանները չարձակման կ'ենթարկուին : Սիֆիլիս առաւելապէս միաւորիչ հիւսուածքներու վրայ կը չարձակի եւ մարմնի ոչ մէկ գործարան զերծ կը մնայ անոր ասպատակութենէն : Սիֆիլիսէն կատարելապէս բուժուել կարելի է :

Սիֆիլիսով վարակուելու ամենէն հասարակ կերպը սեռային չարաբերութիւնն է, բայց կարելի է տարբեր կերպերով ալ վարակուել ու երբեմն անմեղ մարդիկ սոցն հիւանդութեամբ կը բռնուին ուրիշ տեսակ միջոցներով : Այսպէս՝ կարելի է վարակուել ախտաւոր անձի շրթունքները համբուրելով, անոր դաւաթէն խմելով, անոր բերնէն անցած պատառաքողը, դանակը, պնակը, ծխամորձը, ակռայի վըրձինը, մատիտը գործածելով . գործածելով նաեւ անոր դաշկինակը, անձեռոցը, անկողինը, ածելին եւայլն : Կարելի է վարակուել լեզուով հիւանդութեան թոցնով աղտոտուած նամակադրոշմ թրջելով, արտաքնոցներու նստատեղիներուն վրայ նստելով, ախտաւոր մանկան ծիծ տալով կամ ախտաւոր կինէ մը կաթ ծծելով, հիւանդ մը քննած եւ անոր վրայ վիրարութեական գործողութիւն կատարած ժամանակ, ախտաւոր մայրէ մը տղայ առած պահուն : Թուրքիոյ

և Հայաստանի մէջ տարակոյս չը կայ որ ժողովուրդէն հարիւրին չիտունը կամ վաթսունը կը վարակուին այս երկրորդական միջոցներով առանց սեռային չարաբերութեան :

Սիֆիլիսի բոլոր վէրքերէն հոսող հեղուկները թունաւոր են : Արիւնն ալ երբեմն կրնայ վարակել : Լորձուք, արտասուք, քրտինք, մէզ եւ կաթ, եթէ սոցն վէրքերու թարախներով ապականուած չեն, վարակիչ չեն : Թոցնը մարդուն մէջ կը մտնէ մորթէն կամ մաղասամաշկէն երբ անոնց վրայ պզտիկ վէրք կամ կտրած մը կայ :

Նզերական, տխուր բան մը կայ այն կերպերուն մէջ որոնցմով անմեղ անձեր չաճախ այս հիւանդութեամբ կը բռնուին : Այս տեղ երիտասարդ մը կայ որ իր կեանքի ամենալաւ տարիները անառակ աղջիկներու հետ անցուցած է : Օրին մէկը սիֆիլիսով կը բռնուի ու անոր համար իր բժիշկին կ'երթայ : Բժիշկը զայն կը քննէ ու կ'ըսէ որ հիւանդութիւնը սիֆիլիս է : Պէտք եղած դարմանն ու հրահանգները կուտայ ու ապա կը չաչտարարէ որ ան առնուազն երկուեւեկէ տարի դարմանուելու պէտք ունի, պէտք է երբեմն երբեմն զինք այցելէ որպէս զի հետեւի հիւանդութեան ընթացքին : Երիտասարդը առջի մէկ քանի ամիսները դեղը բաւական կանոնաւոր կերպով կը գործածէ ու կը տեսնէ որ շատ չանցած արտաքին ախտանիշները, վէրքերն ու բորբոքումները անհետացած են : Անկէ վերջ կը դառնայ անհոգ : Կը կարծէ որ ինք բուժուած է, դեղին գործածութիւնը կը դադրեցնէ եւ ալ բժիշկին չերթար : Օր մըն ալ դեղեցիկ, առողջ աղջկան մը կը հանդիպի, վրան կը

սիրահարի եւ կը չաջողի հետը ամուսնանալ: Բայց մարդը տակաւին իր հիւանդութենէն բժշկուած չէ, հիւանդութեան թոյնը դեռ իր մէջն է եւ իր ներսը կ'ուտէ. ասկէ զատ ոեւէ ատեն կարող է ան թմրած օձի մը պէս տաքնալ ու արթննալ եւ խաչթել ուրիշները: Նորատի, մաքուր աղջիկը ամէն պատճառ ունի հաւատալու որ իր էրկան հետ երջանիկ ուրախ տուն մը պիտի կազմէ: Էրիկը ճարպիկ մարդ է, լաւ դրամ կ'ստանայ եւ կրնայ բարեկեցիկ տուն մը պահել: Բայց ի՞նչ զարմանք եւ չուսախաբութիւն: Կ'ամուսնանայ թէ չէ կ'սկսի միշտ տկար զգալ, գլուխը կը ցաւի, վէրքեր կ'երեւին մարմնին վրայ, աչքերը կը բորբոքին, գիշերներ չի կրնար քնանալ, ոսկորներուն մէջ չօղացաւի պէս ցաւեր կ'ունենայ, վերջապէս ամէն կերպով վատուած եւ թշուառ կ'զգայ ինքզինք: Թէեւ չլի կը մնայ բաց ողջ երախտի մը չի կրնար ծնունդ տալ, կը վիժէ եւ պղտիկ, զառամած ու տխրած երախտներ միայն դուրս կ'ուզան որոնք քանի մը օրէն վերջ կը մեռնին: Դրացիներ եւ բարեկամներ կը ցաւակցին եւ կ'արգահատին իր վրայ. «խեղճ աղջիկ», կ'ըսեն անոնք, «ամուսնութիւն իր վրայ չեկաւ, ի՞նչ առոյգ, գեղեցիկ աղջիկ էր, ո՞վ կը կարծէր այսպէս պիտի ըլլար իր վախճան»: Չար լեզուներն ալ կ'կսին վատ բաներ փոփսալ, թունոտ ակնարկներ ընել. «գէշ բնաւորութիւն եւ հիւանդութիւն ունի, իր մեղքն է, հարկաւ բան մը ըրած է, մաքուր չապրիր որ այդպէս եղաւ»: Խեղճ աղջիկ, ոչ ոք մտքէն կ'անցունէ որ ամբողջ մեղքը էրկանն է, կրնը անմեղ, թշուառ զոհն է իր անմաքուր եւ վեհերոտ էրկան: Ու այդպէս տարիներ կ'անցնին բաց

կրնը երբէք առջի կայտառ ու կենսուրախ կրնը չի ըլլար, երթալով կը վատուծնայ եւ կը տգեղնայ, միշտ ցաւով եւ տխրութեամբ իր օրերը կ'անցնէ մինչեւ օրհնեալ մահը վերջ կուտայ իր թշուառութեան: Այսպէս կը վարակուին շատ մը անմեղ, առաքինի կրներ իրենց էրիկներէն:

Այս տեղ կայ ուրիշ սիֆիլիս ունեցող մարդ մը որ կ'ելլէ իր սափրիչին քով ամիլուելու կ'երթայ: Սափրիչը զգն կ'ածիլէ ու առանց գիտնալու անոր երեսին վրայ գտնուող վէրքերով իր ամելին կը թուսնաւորէ: Հիւանդին դուրս ելլելէն անմիջապէս չետոյ մաքուր առողջ մարդ մը ամիլուելու կուգայ: Որովհետեւ սափրիչը իր ամելիները եռացած ջուրով եւ հականեխական դեղերով մաքրելու սովորութիւն չունի, թունաւոր ամելիով առողջ մարդը կ'ածիլէ եւ անոր երեսին վրայ պղտիկ կտրած մը բանալով անկէ զգն սիֆիլիսի թոյնով կը պատուաստէ:

Քաղաքի մը պօստատան նամակադրոշմ ծախող պաշտօնեաներէն մէկը՝ սիֆիլիս ունի եւ իր բերանը վէրքերով լեցուն է: Նամակադրոշմ ձեռնելու ժամանակ պաշտօնեան սովորութիւն ունի մատները բերան դնելու ու անոնց ծայրերը թրջելու որպէս զի աւելի լաւ կարող ըլլայ նամակադրոշմները թղթատել եւ վերցնել: Մաքուր, գեղեցիկ աղջիկ մը կ'երթայ անկէ նամակադրոշմ գնելու: Մարդը իր թըրջըրած, թունաւոր մատներով կը վերցնէ քանի մը նամակադրոշմ ու աղջկան կուտայ: Անոնցմէ քանիները այժմ սիֆիլիսի թոյններով ապականուած են: Աղջիկ առանց ոեւէ վտանգ տեսնելու թունաւոր նամակադրոշմը իր լեզուով, որուն վրայ փոքրիկ պա-

տըրուածք մը կայ, կը թրջէ եւ պահարանին վրայ կը փակցնէ: Քանի մը շարաթ վերջ աղջկան լեզուին վրայ վէրք մը կ'երեւի եւ երբ բժիշկին կը դիմէ կ'իմանայ որ շանկը է: Աղջիկը կը շիտթի, սաստիկ կ'այլալլի բաց հիւանդութեան ուսկից ստանալը ինքն ալ չի դիտեր:

Կառապանին մէկը բերանին մէջ սիֆիլիսի վէրքեր ունի: Անիկա սովորութիւն կ'ունենայ իր մըտքովը չաճախ բերնին մէջ բռնելու եւ դաչն խածնելու: Օր մը մտրակը այսպէս բերանը դնելէ չետոյ իր ընկեր կառապանին հետ բանավէճի կը բռնուի եւ երբ կը բարկանայ անով հարուած մը կ'իջեցնէ կառապանին ճիշդ քթին վրայ ու դաչն կ'արիւնէ: Աչնպէս կը պատահի որ մտրակի թունաւորուած մասը քթին կը դաչի: Կառապանը սիֆիլիսով կը վարակուի եւ քանի մը շարաթ վերջ անոր քթին վրայ խոշոր շանկը մը կ'երեւի:

Կին մը երախայ մը կը ծնանի բաց բաւականաչափ կաթ չունի մանուկը սնուցանելու: Պարտաւորուած ստնտու կին մը կը վարձէ բաց իր մտքէն երբէք չի անցնիր որ անիկա սիֆիլիս ունի եւ անոր ըստինքները ծածկուած են վէրքերով: Ծծմայրը կ'ըսկըսի երախան դիեցնել եւ ահա երկու ամիս չանցած մանուկը սիֆիլիսի ախտանշաններ կը ցուցնէ:

Վարակման բոցներ են չաճախ ճաշարանները, սօտայի ջրի աղբիւրները, օթեւանները: Այս տեղեր դպաններ, դաւաթներ, պատառաքաղներ եւ պնակներ հազար տեսակ մարդոց բերնէն կ'անցնին: Եթէ ճաշարանապետը, պաղպաղակ ու սօտայի ջուր ծախողը մաքրասէր մէկը չէ ու իր գաւաթներն ու պը-

նակները լաւ կերպով մաքրելու սովորութիւն չունի, կը պատահի որ երբ առողջ մարդիկ սիֆիլիսոտ բերաններէ անցած թունաւոր գաւաթներ ու պնակներ դործածելու կուգան առանց երբէք դիտնալու անմեղ կերպով կը վարակուին:

Վարակման շատ ենթակայ են իրենց դործին բերմամբ բժիշկներ, վիրաբույժներն ու մանկաբարձները: Վերջապէս շատ են այն կերպերն ու միջոցները որոնցմով մարդիկ կարող են սիֆիլիսով վարակուիլ: Այս մէկ քանի օրինակները բաւական են ցոյց տալու թէ վտանգը որքան վերահաս կրնայ ըլլալ: Նպատակս չէ իմ ընթերցողները ի դուր տեղ վախցնել եւ անգործութեան դատապարտել: Անչուշտ ըսել չեմ ուզեր երբ անոնք չաջորդ անդամին հասարակաց ճաշարանի մը մէջ ուտեն, իրենց սափրիչին քով ամիլուին, շաքարեղէն ծախողի խանութը պաղպաղակ ուտելու երթան պիտի վարակուին: Ամենայն հաւանականութեամբ անոնցմէ մեծագոյն մասին այսպիսի դժբաղդութիւն մը երբէք պիտի չի պատահի իրենց կեանքին մէջ: Բաց խնդիրը այդ չէ. խնդիրը այն է որ կրնայ պատահիլ եւ մէկ անգամ եթէ պատահի հերիք է արդէն: Խնդիրն այն է որ չենք դիտեր երբ կը պատահի: Այսպիսի դէպքեր դործնականապէս շատ անգամ տեղի ունեցած են եւ անոնք ցոյց կուտան զգուշութեան, մաքրութեան անհրաժեշտութիւնը:

Արդեօք հարկ կա՞ց կրկնելու որ երիտասարդներ մաքրակեաց ըլլալու են եւ անառակ աղջիկներու հետ երբէք դործ ունենալու չեն: Անոնք որ արդէն սիֆիլիսով բռնուած են մինչեւ որ լաւ մը չի բժշկուին

պէտք չէ ամուսնանան: Սիֆիլիս ունեցող հիւանդներ իրենց գործածելիք առարկաները, դաւաթը, պնակը, պատառաքաղը, դգալը, դանակը, ակուպի վրձինը, ծխամորճը, ածելին, խոզանակը, անձեռոցը, բոլորը առանձին պահելու են և թոյլ տալու չեն որ ուրիշներ գործածեն: Համբուրելու չեն պղտիկները կամ ուրիշ հասակաւոր անձերը: Պէտք է իրենց վէրքերը միշտ մաքուր և չոր վիճակի մէջ պահեն որպէս զի անոնցմէ թարախներ չը հոսին: Աչն առողջ անձերը, որոնք ստիպուած են հասարակաց ճաշարաններու մէջ ուտել, ընտրելու են որքան կարելի է մաքուր տեղ: Լաւ կ'ըլլայ որ անոնք ամէն ճաշէն առաջ իրենց պատառաքաղը, դգալն ու դանակը թրղթէ կամ լաթէ թաշկինակով լաւ մը սրբեն ու չետոյ ուտել սկսին: Պարտաւորցնելու են ճաշարանապետին որ պնակներն ու դաւաթները եռացած ջուրով լաւ մը լուալ եւ մաքրել տայ: Վատ սովորութիւն է պաղպաղակի սրահներուն մէջ նստիլ եւ պաղպաղակ ուտել, նաեւ սօտաչի ջուրի աղբիւրներուն առջեւ կանդնիլ եւ զանազան տեսակ խմելիքներ, գովացուցիչներ խմել, որովհետեւ, այդ տեղեր դգալներն ու դաւաթները չես գիտեր ինչ տեսակ բերաններէ կ'անցնին: Երբեմն չափազանց խոնուած սօտաչի աղբիւրներու մօտ կանդնելով դիտած եմ աչն տեղեր կատարուող արագ գործունէութիւնն ու իրարանցումը եւ ապա ինքն իրենս հարցուցած եմ ի՞նչ պատեհութիւն կայ այս տեղեր կանոնաւոր մաքրութիւն ի գործ դնելու. խորհած եմ որքան շատ պատեհութիւն կայ այս տեղեր սիֆիլիսով իրարմէ վարակուելու: Բազմութիւնը երբեմն աչնքան անձկանօք

իրենց կարգին կ'սպասեն որ սպասաւորը երբէք չի կրնար դաւաթներն ու պնակները կանոնաւոր կերպով մաքրել: Ու այդպէս դաւաթներն ու դգալները արագ արագ բերնէ բերան կ'անցնին ու բնաւ չես գիտեր ով էր քեզմէ առաջ խմողը, քու դաւաթդ գործածողը: Կրնայ ըլլալ ան թունաւոր, զազրելի բերան մը ունէր եւ դուն անոր թունաւոր դաւաթը կը գործածես ու ինքզինքդ կը թունաւորես: Որքան կարելի է խուսափելու է այդ տեսակ տեղերէն: Պաղպաղակ ու գովացուցիչներ առէք տարէք ձեր տունը և աշնտեղ կերէք և խմեցէք: Ձեր դաւաթներն ու դգալները դիտէք թէ մաքուր են ու հանդիստ սրտով կրնաք ձեր սիրած բաները վաշելել: Աւելի լաւ է մարդիկ իրենց սեփական ածելին ունենան եւ իրենք զիրենք ածիլեն: Անոնք որ աչպէս թէ աչնպէս ստիպուած են սափրիչին երթալ թող իրենց սեփական ածելին ունենան անոր քով եթէ կրնան: Եթէ չեն կրնար, պարտաւորցնելու են սափրիչին ածելին եռացած ջրով կամ հականեխական զեղերով լաւ մը մաքրել: Ամէն սափրիչ շատ դիւրութեամբ կրնայ, օրինակի համար, լիտր մը տաս կամ քսան առ հարիւր ասիտ ֆէնիկի լուծուածք ունենալ իր խանութին մէջ և ածելիներն ու մկրատները անով հականեխել զանոնք ամէն անգամ գործածելէն չետոյ: Անշուշտ ամենէնապահովն է տաք ջրով զանոնք քանի մը րոպէ եռացնելը: Երբէք ուրիշ բերնին մէջ, մազեղերուն եւ մորթին վրայ գործածուող առարկաները փոխ առնելու եւ գործածելու չէ: Աչպէս՝ գործածելու չէ ուրիշի ակուպի վրձինը, ածելին, ծխամորճը, խոզանակը, անձեռոցը եւ այլն: Տգեղ, վտան-

գաւոր ունակութիւն մըն է լեզուով նամակադրոշմ, մատիտ եւ ուրիշ բաներ թրջելը: Անոնք որ ստիպուած են իրենց երախաներուն համար ծծմայր վարձել, պէտք է վստահ ըլլան որ ան առողջ է գաջն իրենց տուն բերելէ առաջ: Ծծմայրը ինքն ալ պէտք է վստահ ըլլայ որ երախան առողջ է ու սիֆիլիս չունի: Ասիկա ան կրնայ ստուգել երախայի բժիշկէն: Հասարակաց պարտէզներուն եւ շէնքերուն մէջ գրտնրուող ջրի գաւաթները երբէք գործածելու չէ: Այս երկրին մէջ այդ տեսակ վաչրերուն մէջ սկսած են առողջապահական ազդիւրներ շինել եւ հասարակաց գաւաթներն ու թասերը մէջտեղէն վերցնել. բայց շատ տեղեր անոնք դեռ կը մնան: Եթէ խմելու ուրիշ աման չը կայ, աւելի լաւ է ձեռքով խմել: Երբէք մի քնանանաք այն մարդուն հետ կամ այն մարդու անկողնին մէջ որ վստահ չէք թէ մաքուր եւ առողջ է:

Սիֆիլիսի առաջին ախտանշանն է շանկր կոչուած պալարը որ կ'երեւի վարակումէն երեք կամ չորս շաբաթ վերջ ճիշդ այն տեղը ուսկից թոշնը ներս մտած է: Անիկա կրնայ երեւիլ աւանդամին վրայ, հետոցին մէջ, շրթունքներուն եւ ձեռքերուն վրայ, ուեէ տեղ: Շանկր սկիզբ բշտիկի ձեւ կ'ունենայ որ կարծիր է բաւական: Հետզհետէ ան կը մեծնայ մինչեւ պզտիկ կաղինի մը մեծութիւն կ'ստանայ ու միւսնոցն ժամանակ կը կարծրանայ: Կարծրութիւնը ցոյց կուտայ որ թոշնը արդէն մտած է մարմնին մէջ ու սկսած է տարածուիլ: Շատ հազուադէպ պարագաներու մէջ միայն կարելի եղած է շանկր կտրելով կամ այրելով թոշնի չառաջխաղացումը արեւան մէջ արգիլել:

Շանկրի չաչտնութենէն քիչ վերջ, անոր մօտ եղող աւշեան գեղձերը կ'սկսին մեծնալ ու կարծրանալ: Մինչ ժամանակը կ'անցնի, հետզհետէ աւելի հեռուն, ապա մարմնի ամենէն հեռուոր անկիւնները գտնուող գեղձերն իսկ կը խոշորնան ու կը կարծրանան: Վզի եւ արմուկի վրայի գեղձերու ուռոցը սիֆիլիսի բաւական ստուգ նշաններէն մէկն է: Սիֆիլիսի թոշներով ուռած գեղձերը երբէք չեն ցաւիր ինչպէս առ հասարակ անոնք կը ցաւին երբ ուրիշ տեսակ թոշներով կը բորբոքին: Երկու կամ երեք շաբթուան մէջ շանկրը կամայ կամայ կը մաշի եւ ինքնիրեն կ'անհետանայ: Երբեմն իր ետեւ սպի մը կը թողու: Դեռ երկրորդ շրջանը չեկած կամ անոր հետ համընթաց, հիւանդը շատ անգամ կ'ունենայ տաքութիւն, որ ընդհանրապէս մեղմ կ'ըլլայ, ցաւեր յօդուածներուն եւ մկաններուն մէջ, գլխացաւ, մասնաւորապէս դիշերները, ընդհանուր թուլութիւն, գունաթափութիւն եւայլն:

Շանկրի երեւումէն վեց կամ եօթը շաբաթ վերջ հիւանդութիւնը կը մտնէ իր երկրորդ շրջանին մէջ: Հիմա մորթին ու մազասամաշկին վրայ վէրքեր կ'ըսկսին դուրս տալ: Մորթին վրայ ոլոռնի կամ լուրիայի մեծութեամբ կարմիր բիծեր երեւան կ'ըլլեն: Քանի մը շաբաթէն կամ ամիսէն անոնք կ'սկսին չորնալ եւ թեփոտիլ, ապա կամայ կամայ կ'անհետան մութ պղնձի գոյն առնելէ յետոյ: Երբեմն կը փոխուին շարաւալից բշտիկերու որոնք բացուելով թարախ կը հոսին ու այդ պատճառաւ վտանգաւոր կը դառնան: Ասիկա աւելի կը պատահի այն ատեն երբ խոնաւութիւն կ'առնեն ու կը տաքնան: Այս-

պէս՝ շարաւալից վէրքեր կարող են առաջ դալ ուսերուն, կնոջ կախուած ծծերուն տակ, ծննդական գործարաններու մորթին ծալքերուն մէջ ուր մորթը տաք և խոնաւ կ'ըլլայ: Մորթի այս կարմիր բիծերը ընդհանրապէս առաջ իրանին վրայ կ'երեւին և ապա կը տարածուին թևերուն, ազդրերուն, ձեռներուն ու ոտներուն վրայ: Երեսը սովորաբար գերծ կը մնայ: Մաղասածաշկին վրայ, ինչպէս բերնին մէջ, կոկորդին ու քիմքին վրայ, սրբանին բոլորաիջը, հեշտոցին ու ամօթաշուրթերուն մէջը, լուբիայի մեծութեամբ տախակած և դունդեր առաջ կուդան որոնք կը հալին եւ կեղերու կը փոխուին: Լորձունքը այս վէրքերէն հոսող թարախին հետ խառնուելով է որ սաստիկ վտանգաւոր կը դառնայ: Ասոնք կը կոչուին մաղասային կարկտաններ (mucous patches) որոնք զանազան ձևեր կ'ունենան: Անոնց մէջտեղը ճերմակ կ'ըլլայ իսկ եղերքը կարմիր: Երկրորդ շրջանին մէջ կը բորբոքին նաեւ աչքերը, կոկորդը: Ծիածանատապի հարիւր դէպքերէն վաթսունը սիֆիլիսէն առաջ կուդան: Ծիածանատապ աչքի ծանր հիւանդութիւն մըն է որմէ կուրութիւն կրնայ առաջ դալ: Այս շրջանին մէջ նաեւ մազերը շատ անդամ փունջ փունջ կը թափին: Առաջին տարին հիւանդի ընդհանուր ուժը երբեմն շատ կը պակսի իսկ երբեմն ալ անոր առողջութիւնը երեւութապէս անփոփոխ կը մնայ:

Իր սկզբնաւորութենէն մէկ կամ մէկուկէս տարի վերջ սիֆիլիս բնական հակամիտութիւն մը ունի կանդ առնելու, այնպէս որ շատ մը ամիսներու միջոցին հիւանդին վրայ ոեւէ ախտանշան չերեւիր:

Բացառիկ պարագաներու մէջ այս դադարը մնայուն կ'ըլլայ եւ հիւանդը կարծես այդ ատենէն սկսեալ կ'առողջանայ և կը մնայ միշտ այդպէս: Սովորաբար սակայն այս դադարէն յետոյ հիւանդութիւնը իր գլուխը դարձեալ դուրս կը ցցէ եւ նոր ախտանշաններ կ'երեւին մորթին, կոկորդին ու բերանին մէջ: Հիւանդի ոսկորները այժմ հակամէտ են բորբոքելու պատճառելով անոր անհնարին ցաւ, մանաւանդ գիշերները: Հիւանդի ընդհանուր առողջութիւնը ընդհանրապէս զգալապէս կը վրիպի: Իրաց վիճակը այս պէս կը շարունակուի քանի մը ամիս կամ մօտաւորապէս երկու երեք տարի մինչեւ հիւանդութիւնը կը մաշի եւ կամ կը մանէ իր երրորդ շրջանը:

Այս շրջանի ախտանշանները վերին աստիճանի այլազան են: Մարմնին մէջ գտնուած ոեւէ գործարան, ներքին թէ արտաքին, կրնայ չարձակուծ կրել եւ վնասուիլ: Այսպէս՝ կարող են վնասուիլ սիրտը, թոքերը, լեարդը, երիկամները, արեան անոթները, ոսկորները, մորթը, ուղեղը եւայլն: Ուղեղին եւ ջիղերուն հասնող երրորդ աստիճանի սիֆիլիս կրնայ կատարելապէս նմանիլ ուղեղին և ջիղերուն ազդող ուրիշ ոեւէ մնայուն հիւանդութեան և միեւնոյն ախտանշանները ցուցնել: Երրորդ շրջանի ամենէն բնորոշ ախտաբանական փոփոխութիւններն են միաւորիչ հիւսուածքներու չափազանց աճումը եւ զանազան մեծութիւն ունեցող դրմա կոչուած ուռեցքներու երեւումը մարմնին մէջ: Ասոնք կրնան բուսնիլ ամէն տեսակ գործարանի մէջ. մորթին, լեարդին, ուղեղին, ոսկորներուն, ստամոքսին եւայլն: Եթէ պատահի անոնք շատ կենսական գործարանի մը մէջ



ածին, աղիտալի հետեւանքներ կ'առաջացնեն եւ կրնայ պատահիլ մահ պատճառեն: Կարող են բուսնիլ շնչափողին մէջ եւ մարդը շնչահեղձ ընել: Երբ կոկորդին մէջ բուսնին կլլելու գործողութիւնը դժուար եւ անհնարին կը դարձնեն ու այդպէս հիւանդը սովամահ կ'ըլլայ: Երբ սրտին մէջն են, կըրնան զաչն անդամանելի եւ մահացու կերպով աւրել: Անոնք չաճախ կը կակուղնան ու չաճառ կեղեր կ'առաջացնեն, ինչպէս սրունքներուն, թեւերուն, գլխուն վրայ: Քիմքը այս տեսակ վէրքով մը կրնայ ծակուիլ ու այդ բան հիւանդը հըմ հըմ կը դարձնէ եւ ուտելու ժամանակ անոր նեղութիւն կուտայ: Քիթի կամուրջը կրնայ փլչիլ եւ առաջ բերել աչն սոգեղ վիճակը որ կը կոչուի թամբաձե քիթ: Այս վէրքերէն գրեթէ բոլորն ալ իրենց ետե խորունկ սպիւններ կը թողուն որոնք նոցնպէս կրնան աղիտալի հետեւանքներ առաջացնել, ինչպէս որկորը կամ նախաղիքի դուռը կծկել եւ գոցել, սրտի դռնակները այլանդակել ու աւրել եւաչն: Արեան անօթներ շնորհիւ միաւորիչ հիւսուածքի սաստիկ աճման կը կարծրանան ու կը քարանան ու այդպիսով առաջ կը բերեն վաղահաս ծերութիւն: Ըստ Ծուէտացի բժիշկ Էդդրէնի, կարծրերակութեանց հինգ դէպքերուն մէկուն սիֆիլիսն է պատասխանատու: Մեչնիքօֆ կը կարծէ մարդկութիւն մեծ չառաջդիմութիւն մը պիտի ընէր երկարակեցութեան մէջ եթէ կրնար այս տկարութեան առաջը առնել: Կաթուածահարութեանց դէպքերէն մեծագոյն մասը, թերեւ հարիւրէն ութսունը եւ իննսունը, ոմանց կարծիքով սիֆիլիսէն առաջ կուգան:

Սիֆիլիսէն առաջ կուգան մեծաւ մասամբ ջղային երկու անդամանալի հիւանդութիւններ, տէպլիս դօրսալիս եւ խենդերու ընդհանուր անդամալուծութիւն: Երկուքի վախճանն ալ մահ է: Երբ սիֆիլիս ջղային դրութեան վրայ կը յարձակի հիւանդը ծանր կացութեան մը առջեւ կը գտնուի: Դէպքեր կան որոնց մէջ սիֆիլիս սկիզբէն ջղային դրութեան հանդէպ մեծ նախասիրութիւն մը ցոյց կուտայ եւ բուռն կերպով անոր վրայ կը յարձակի: Երբոր հիւանդը երկրորդ շրջանին մէջ կ'սկսի անհնարին տեսակ, գանկը պայթեցնող գլխու ցաւերէ տառապիլ, ըսել է թէ հիւանդութիւնը ջղային դրութեան վրայ յարձակած է: Երբ հիւանդութիւնը ջղային դրութեան մէջ մտած է, շատ դժուար է անոր հետ յաջող կռիւ մղել, եւ զայն անկէ դուրս հանել: Յետոյ, ջղային դրութեան մէջ տեղի ունեցած աւերմունքը լման կերպով անկարելի է դարձանել: Հիւանդութիւն ուղեղէն կ'իջնէ մէջքուղեղին մէջ ու այնտեղ եւս աւերներ կը գործէ: Յիշեալ երկու հիւանդութիւնները առաջ կուգան աչն ատեն երբ սիֆիլիս ուղեղին եւ ողնուղեղին վրայ յարձակած է:

Սիֆիլիս երրորդ շրջանէն յետոյ կ'սկսի մեղմանալ ու մաշիլ, բայց դեռ ատիկա չը պատահած մարմնի կենսական գործարաններէն ոմանք շատ անդամ արդէն գէշ կերպով կ'աւրուին եւ առողջութիւնը անկարելի կը դարձնեն: Երկամներու, լեարդի եւ ջղային երկարատեւ հիւանդութիւններ կրնան ուղղակի ծաղիլ սիֆիլիսէն: Չափահաս մարդուն մէջ սիֆիլիսէն ուղղակի անմիջական մահ առաջ չի գար,

ինչպէս օրինակ, թորատապէն եւ տիֆօէն: Անիկա առաջ կուգայ միայն իբր հետեւանք կենսական դորձարանի մը խանգարման և հիւժուճէ որ յաճախ տեղի կ'ունենայ երրորդ շրջանին մէջ: Հիւժուճ այս շրջանի ակնյայտնի ախտանշաններէն մէկն է:

Սիֆիլիս վերին աստիճան դաւաճան եւ անկանոն բնութիւն մը ունի: Երկու դէպքեր երբէք միեւնոյն կերպով չեն վարուիր: Մէկ դէպքի մէջ երրորդ շրջանի ախտանշանները կարող են շատ կանուխ, նոյն իսկ շանկրէն քանի մը ամիս յետոյ երեւիլ իսկ երկրորդ շրջանին պատկանող մորթի եւ մաղասամաչկի վէրքերը չաչտնուել աչն ատեն երբ մարդ կը կարծէ երրորդ շրջանը արդէն իր վախճանին հասած է եւ հիւանդութիւնը անհետացած: Երբէք կարելի չէ ըսել սիֆիլիս այս ինչ դէպքին մէջ ինչ ընթացքի մը պիտի հետեւի, ինչպէս պիտի վարուի: Ասոր համար անակնկալներով լեցուն է անիկա թէ հիւանդին եւ թէ բժիշկին համար:

Երբոր հիւանդ մը թաքուն թորախտ ունի եւ անոր վրայ կուգայ նաեւ սիֆիլիս, վա՛յ այն հիւանդին: Անիկա այն ատեն ամենավտանդաւոր եւ երբուն կացութեան մը դէմը կը գտնուի: Երբոր երկուքը միասին կուգան հիւանդին վրայ, անոր ուժը այնպէս կը քամեն որ ան այլեւս ոչ մէկուն եւ ոչ միւսին դէմը կ'ընայ չաջող կռիւ մղել: Սիֆիլիսի թոչներ հիւանդին դիմադրական ուժը այնքան կը պակսեցնեն որ թորախտ այժմ չարմար ատեն կը գտնէ եւ վիշապի մը պէս իր թաքստոցէն արթննալով դուրս կուգայ եւ իր մահահոտ ճանկերը անոր վրայ տարածելով գայն կը սեղմէ մինչեւ կարճ մի-

ջոցի մը մէջ ուժասպառ ընելով կը մեռցնէ: Այսպիսի դէպքի մը ես հանդիպեցայ ասկէ գրեթէ երեք տարի առաջ: Երիտասարդ մը եկաւ իմ խորհուրդը հարցընելու իր աճուկներուն մէջ գտնուող երկու պղտիկ ուռեցքներու մասին: Երբ ես զանոնք ձեռնեցի տեսայ որ քիչ մը ցաւ կը պատճառէին հիւանդին: Մարդը առնանդամին կամ մարմնի ուրիշ ուեէ մասին վրայ բնաւ վէրք մը չունէր: Ես կասկածեցայ որ ան բանէ մը վարակուած էր բայց որովհետեւ մարմնի վրայ ուեէ վէրք չունէր քիչ մը տարօրինակ թուեցաւ ինձ հիւանդին վիճակը: Ես իրեն կասկածս չաչտնեցի եւ տուի մանչի օժանելիք ուռեցքներուն վրայ քսելու համար, նաեւ չանձնարարեցի անոնց վրայ տաք բան դնել: Երկու շաբաթ անցնելէն վերջ հիւանդը նորէն զիս տեսնելու եկաւ: Այս անգամ ան իր առնանդամի ձախ կողմին վրայ, ճիշդ գլխիկին եղերքը, բաւական խորունկ, անկանոն եղերք եւ կակուղ չատակ ունեցող կեղ մը ունէր որ իսկական կակուղ շանկրի տեսքն ունէր: Աճուկի գեղձերը տակաւին ուռած էին եւ բաւական զգալուն: Այժմ ես որոշ տեսայ կեղին եւ աճուկի ուռած գեղձերու միջև եղած կապակցութիւնը և հիւանդին յայտնեցի որ իր ունեցածը կակուղ շանկր է: Ես սկսայ զինք դարմանել բայց հակառակ իմ ջանքերուն կեղը վերին աստիճանի ըմբոստ վարմունք մը ցոյց տուաւ եւ լաւանալու նշան ցոյց չէր տար: Երբեմն կ'սպառնար տարածուիլ ամբողջ առնանդամին վրայ եւ գայն ջնջել, այնպէս որ պահ մը ես կասկածեցայ մի դուրցէ ուտիչ եւ տարածուող կեղի մը առաջը կը գտնուէի: Ազդու միջոցներով ես չաջողեցայ անոր չառաջխաղացումը

կանգնեցնել բաց մօտաւորապէս երկու շաբթուան դարձանուծէ չետոյ կեղը դեռ լաւանալու նշան մը ցոյց չէր տար: Հիւանդը այնուհետեւ սկսաւ թեթեւ տաքութիւն ունենալ իրիկունները եւ աճուկի գեղձերը թէեւ ուռած էին եւ զգայուն, թարխտակու ոչ մէկ նշան ցոյց կուտային: Ես սկսայ կասկածիլ որ հիւանդը հաւանաբար խառն վարակում մը ունեցած էր, թէ կակուզ շանկր ունէր և թէ սիֆիլիս, բան մը որ երբեմն կը պատահի: Ես կը պատրաստուէի սիֆիլիսի ախտորոշման միջոցներ ձեռք առնել, բաց այս ատեն հիւանդը իր այցելութիւնները իմ քով դադարեցուց ու ալ չկրցայ անձամբ իրեն հետեւիլ: Ասկէ վերջ գրեթէ ամիս մը անցաւ ու մէկ ալ լըսեցի որ հիւանդը հազալ սկսած է, շատ գունատ է եւ մաշուած: Ասոր համար ուրիշ բժիշկի մը կ'երթայ եւ երբ բժիշկը զինք կը քննէ կը չափնէ իրեն որ թոքախտ ունի: Ասոր վրայ անցաւ մէկ երկու շաբաթ ևս ու այս անգամ լսեցի որ հիւանդին բարեկամները զինք հիւանդանոց փոխադրած են: Հիւանդանոցէն ինձմէ հիւանդութեան սկզբնաւորութեան մասին տեղեկութիւն խնդրեցին եւ ես հիւանդանոցի բժիշկներուն չափնեցի որ հիւանդը կակուզ շանկր ունէր բաց հաւանաբար սիֆիլիս ալ ունէր: Որովհետեւ իմ հսկողութենէն դուրս ելաւ չը կրցայ այդ մասին իրեն հետեւիլ: Ասոր վրայ հիւանդանոցի բժիշկները մարդու արիւնը կը քննեն և կը գտնեն որ իրօք մարդը սիֆիլիս ալ ունի եղեր: Հիւանդին թոքախտը միեւնոյն ժամանակ արագ արագ առաջ կ'երթայ, հազը կը սաստկանայ, հիւանդը արիւն կը թքնէ, չափազանց կը ծիւրի եւ կը մաշի: Քանի մը շաբաթ վերջ բը-

ժիշկներ արդէն ամէն շուք կը կտրեն: Հիւանդը ուրիշ հիւանդանոց մը կը փոխադրուի ուր քանի մը ամիս մնալէն չետոյ շուտով կը մեռնի:

Տարակույս չը կայ որ այս դէպքին մէջ թոքախտը իսկոյն երեւան եկաւ եւ կարճ միջոցէ մը հիւանդը զգետնեց, որովհետեւ, սիֆիլիսի պատճառով անոր ընդհանուր կենսունակութիւնը, դիմադրական ուժը ընդդէմ թոքախտին վերջին ծայր պակսեցան: Վենեւրական ախտով վարակուելէն առաջ մարդը թոքախտի ունէ նշան ցոյց տուած չէր որքան գիտեմ, բաւական զօրաւոր էր ու կը դորձէր: Եթէ սիֆիլիսով չը վարակուէր ամենայն հաւանականութեամբ թոքախտը այդպէս երեւան չի պիտի ելլէր եւ մարդը դեռ երկար ատեն ապրէր:

Սիֆիլիս այն սակաւաթիւ հիւանդութիւններէն է որոնք ուղղակի ծնողներէն կ'անցնին զաւակներուն: Փոքրիկ անմեղ արարած մը կարող է իր մօրը կամ հօրը ախտին շնորհիւ լույս աշխարհ գալ բոլորովին ախտազէտ, վերալից ու զառամեալ մարմնով մը, հակառակ իր կամքին: Հիւանդութիւնը կրնայ անմիջապէս երեւան գալ մանկան ճիշդ ծնած ժամանակ, ծնանելէն մէկ երկու օր չետոյ, քանի մը տարի վերջ, կամ արբունքի ժամանակը: Բնածին սիֆիլիսի հետեւանքներն են հարբուխ, մնայուն տկարութիւն, աճման եւ զանազանաւորման կասեցում, տեսակ տեսակ տձեւութիւններ, ինչպէս սղոցածեւ ախուաներ, զաճաճութիւն, համրութիւն եւ խլութիւն, արտաքին եւ ներքին ծննդական գործարաններու անկանոնութիւններ, մանկանց ըրէքտոս կոչուած հիւանդութիւն, լուսնոտութիւն, մտքի տկարութիւն

եւալն : Բնածին սիֆիլիսի հետեւանքները հետապընդուած են մինչեւ երրորդ սերունդը : Սուրբ Գրքի այն խօսքը որ կ'ըսէ . «կը հատուցանեմ հայրերու անօրէնութիւնը որդւոցը վրայ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը» , հիանալի կերպով կը չարմարի աչս ախտին : Բնածին սիֆիլիս ունեցող երախաներ առ հասարակ շուտով կը մեռնին : Անոնց կենսունակութիւն աչնքան քիչ է , դիմադրական ուժը ընդդէմ հիւանդութեանց աչնքան պակաս է որ անոնք երբէք չեն կրնար գոյութեան կռիւ մղել , շուտով ամենաթեթեւ հարուածին տակ կ'իջնան : Չեն կրնար նոյնիսկ իրենց ներկայացուած անուղբ պատշաճ կերպով գործածել եւ իւրացնել , եւ ալզպէս կեանքը արգանդէն դուրս դեռ չսկսած կը մեռնին : Քիչերն են որ բախտ կ'ունենան ապրելու եւ չափահաս տարիքի մը հասնելու :

Սիֆիլիս ունեցող կիներ քիչ անգամ իրենց զուժեան լրիւ շրջանը կը լմնցնեն եւ հասուն երախացի մը ծնունդ կուտան : Անոնք ընդհանրապէս կանուխէն կը վիժեն եւ կամ ժամանակէն շատ առաջ տղայ կը բերեն : Երբոր հայրն ալ մալըն ալ սիֆիլիս ունին , տղան անշուշտ սիֆիլիս պիտի ունենայ : Երբոր մալըր միայն սիֆիլիս ունի տղան չաճախ սիֆիլիս կ'ունենայ : Երբոր հալըր սիֆիլիս ունի , բայց մալըր առողջ է , տղան կը պատահի չաճախ որ առողջ կը ծնի : Անդոհացուցիչ կերպով բացատրուած են սակայն հետեւեալ իրողութիւնները որոնք Կօլլէս առաջին անգամ նկատեց եւ անոնցմէ օրէնք մը ձեւակերպեց որն իր անունով կը ճանչցուի : Երբէք տեսնըուած չէ որ սիֆիլիսոտ հօրմէ բայց առողջ մօրմէ

ծնած սիֆիլիսոտ երախաց մը իր մալըր վարակէ : Այսպիսի երախաց մը կարող է վարակել օտար կին մը երբ անկէ կաթ ծծէ կամ ուրիշ մը , բայց իր մալըր բնաւ երբէք :

\* \* \*

Ներկայիս սիֆիլիսի դէմ ամենէն շատ գործածուած երկու դեղերն են սնդիկն ու զառիկը իրենց զանազան բաղադրութիւններովը եւ ձեւերովը : Սնդիկը աւելի հին է եւ փորձուած իսկ զառիկը (arsenic) ալլեւալլ բաղադրութիւններու ձեւով նոր սկսած է գործածուիլ ու կարելի է ըսել անոր արժէքը դեռ լման կերպով հաստատուած չէ : Ասոնցմէ զատ պէտք է չիշեմ նաեւ մանիչը իբրեւ օժանդակ դեղ որուն ամենէն գործածական բաղադրութիւնն է մանչային կալի (iodide of potassium) :

Սնդիկն ու զառիկը իսկական գործ տեսնողներն են , աչինքն սիֆիլիսի մանրէները ուղղակի կը ջընջեն եւ մարմինը անոնցմէ կը մաքրեն : Սնդիկ , ինչպէս ըսի , ամենէն հին ու փորձուած դեղն է եւ բըժիշկներու ձեռքին մէջ կը մնայ դեռ իբրեւ ամենէն վստահելին : Ջառիկն ալ , մասնաւորապէս անոր 606 բաղադրութիւնը , ընտիր դեղ մըն է բայց անիկա իր վրայ դրուած մեծամեծ ակնկալութիւնները լիովին չարգարացուց : Կրնայ ըլլալ չանցանքը բժշկական ու աշխարհական դասի չափազանց խանդավառութիւնն էր սոյն դեղի արժէքի նկատմամբ եւ ոչ թէ գայն շինողին : 606 գտնողը , Դօկտօր Պօլ Էրլիխ ,

չափազանց համեստ եղած է իր չափտարարութիւններուն մէջ աչս մասին: Ասկէ քանի մը տարի առաջ էր լինի աչս դեղը դտաւ ու հասարակութեան առաջ դբաւ: Դեղը առաջ 606 անուանով ճանչցուեցաւ բաց Վերջ անոր անուն սալվարսան դրին: Դեղին իսկական քիմիական անունն է dioxidiamidoarsenobenzol: Անիկա համադրական կերպով շինուած բաղադրութիւն մըն է որ կը պարունակէ մեծ քանակութեամբ դառիկ: Այնպէս շինուած է աչն որ անոր մէջ գտնուող դառիկը, որ եթէ առանձին մարդուն մէջ ներարկուի պիտի թունաւորէ եւ թերեւս սպանէ զաչն, սերտ կերպով կը միանայ սիֆիլիսի մանրէներուն ու զանոնք կարճ միջոցէ մը կը ջնջէ բաց երբէք մարմնի միւս բջիջները չի վնասեր: Դեղը ամենէն առաջ փորձողները հրաշալի արդիւնքներ տեղեկագրեցին: Յաշտարարուեցաւ որ անիկա երկու, երեք շարաթուան մէջ, մէկ ներարկուծով նոչն իսկ, ամենէն գէշ, վիրալից հիւանդները իրենց վէրքերէն մաքրեց ու բժշկեց: Ժամանակը ցոյց տուաւ սակաչն որ աչս հրաշալի արդիւնքներ եւ ամենալաւատես աղնկալութիւնները կանխահաս էին: Տեսնուեցաւ որ իրաւ սալվարսան արտաքին վէրքերը կարճ միջոցի մը մէջ կ'անհետացնէ բաց հիւանդութիւնը բոլորովին արմատախիլ չըներ: Տեսնուեցաւ որ երկու, երեք, նոչն իսկ աւելի ներարկուծներէ չետոչ հիւանդութիւնը շատ անգամ դարձեալ իր գլուխը տեղէ մը դուրս կը ցցէ եւ հիւանդին մէջէն ամբողջապէս դուրս ելլելու տրամադրութիւն ցոյց չի տար: Աչս պատճառաւ բժշկական դասը սալվարսանի մասին լսած առջի մեծադորդ յաշտարարութիւններ-

րէն եւ տածած աղնկալութիւններէն չետոչ տեսակ մը հիասթափութիւն ունեցաւ, բաց հիմա, դեղը բաւական երկար փորձելէ չետոչ, աւելի պաղարին ոգիով մը կը դատէ եւ կ'ընդունի որ սալվարսան շատ արժէքաւոր դեղ մըն է որ կարելի է սնդիկին հետ միասին գործածել իբրեւ անոր օժանդակ եւ լըրացուցիչը: Սալվարսան չաճախ մէկ երկու շաբաթուան մէջ կը կատարէ աչն ինչ որ սնդիկը քանի մը ամսուան մէջ չի կրնար ընել: Օրինակի համար, կարգ մը հիւանդներ գէշ տեսակ վէրքեր կ'ունենան իրենց բերնին մէջ եւ մորթին վրայ որոնք վերջին ծայր չամառ կ'ըլլան եւ տեղի չեն տար սնդիկի ազդեցութեան, նոչն իսկ քանի մը ամսուան միջոցին: Սալվարսանի մէկ ներարկուծ աչս վէրքեր կարճ ժամանակի մէջ կ'անհետացնէ մեծ տպաւորութիւն առաջ բերելով հիւանդին վրայ: Մնդիկին հետ եւ չիտակ կերպով գործածուելով, սալվարսան ընտիր արդիւնքներ կուտայ եւ կարող է հիւանդութեան ընթացքը շատ կարճեցնել:

Սալվարսան կը գործածուի ներարկուծով մորթի տակէն, կամ մկանի մը եւ երակի մը մէջէն: Երակի մը մէջ ներարկուծը ամենէն լաւ արդիւնքը կուտայ եւ ամենէն շատ կը գործածուի: Մնդիկը կը գործածուի դեղահատի եւ օժանելիքի ձեւով ընդհանրապէս: Անիկա կը գործածուի նաեւ ներարկուծով, երբեմն ալ ծխուծով:

Առաջներ երբ դեռ սալվարսան չկար, սիֆիլիս ունեցող մարդը պէտք էր առնուազն երկուուկէս տարի շարունակ սնդիկ առնէր մինչեւ հիւանդութենէն բժշկուէր: Այժմ երբ մեր ձեռքն ունինք սալ-

վարսան, ինչպէս չիշեցի, կարելի է դաշն սնդիկին հետ գործածելով դարմանի այս ժամանակամիջոցը բաւական կարճեցնել:

Մանիշ սիֆիլիսի մանրէները ջնջելու կարողութիւն չունի: Անիկա գլխաւորաբար կը գործածուի գլխաւորապէս ուռեցքներ հալեցնելու համար եւ այդ գործը ան կը կատարէ շատ ձեռնհաս կերպով:

Սիֆիլիս բուժելի հիւանդութիւն մըն է ինչպէս առաջ չիշեցի: Ասիկա անոր ամենէն մխիթարական կողմն է: Անիկա կարելի է բոլորովին բուժել պայմանաւ որ հիւանդը իր վիճակն իմանալուն պէս հըմուտ բժիշկի մը ձեռքով հաւատարմօրէն ու կանոնաւոր կերպով դարմանուի: Սիֆիլիս ունեցողները պէտք է չուսահատին եւ իրենց կեանքը դառնացնեն: Եթէ մեծ թուով այսպիսի հիւանդներ վրիպած են իրենց նախկին առողջութիւնը կրկին ձեռք բերելուն մէջ եւ երկար տարիներ վէրքերով ու ցաւերով տանջուած են, ատոր պատճառը պէտք է փնտռել բուն իսկ հիւանդի չուստեսութեան եւ դարմանումին անկանոն կերպով հետեւելուն մէջ: Օրինակի համար, շատեր երբ ժամանակ մը դեղ գործածելէն չետոյ արտաքին ախտանշաններէն կ'ազատուին և բաւական լաւ կ'զգան, կը կարծեն որ իրենց ախտը բոլորովին բուժուած է ու այլեւս դարմանումը կը դադարեցնեն: Մինչդեռ հիւանդութեան թոյնը դեռ իրենց մէջն է եւ կ'սպասէ այսպիսի պատահութիւններու որպէս զի նորէն գործունէութեան սկսի ու թարմ աւերներ գործէ: Սիֆիլիս ունեցողը պէտք է միանգամ ընդ միշտ հասկնայ որ երբ ինք ժամանակ մը դեղ գործածելէ չետոյ արտաքին ախտանշան-

ներէն կազատուի եւ քիչ մը լաւ կ'զգայ, այդ չի նշանակեր ինք բոլորովին բժշկուած է, պէտք է իր բժիշկին անսայ եւ դարմանումին կանոնաւոր կերպով հետեւի մինչեւ որ բժիշկը պէտք եղած քննութիւններ կատարելէ չետոյ զինք բժշկուած չաչտարարէ: Ամենամեծ սխալ մըն է սիֆիլիսի եւ ուրիշ վեներական ախտերու դարմանումի միջոցին մէկ բժիշկէ ձանձրանալ եւ ապա շարունակ բժիշկ փոխել ու ասդին անդին թափառիլ: Ամենամեծ սխալ մըն է մանաւանդ շարլատաններու եւ խարբրաններու ձեռքը իյնալ: Սարբբայ բժիշկներ (quacks) կան որոնք ահագին դրամ կը ծախսեն ու լրագիրներու մէջ մեծադրոյ ծանուցումներ կ'ընեն: Կը չաչտարարեն որ կարճ միջոցի մը մէջ, քանի մը շաբաթէն բոլորովին կը բուժեն սիֆիլիս, մնացուն միզկատապ, սեռային կատարեալ անգորութիւն եւ ուրիշ երկարատեւ տրեկարութիւններ, ինչպէս երիկամներու, լեարդի, ստամոքսի, աչքի եւայլն: Անծանօթ ճառագայթներով, կամ այն ինչ նորահնար դեղերով կը բուժեն ամէն բան, նոյն իսկ անդարմանելի համարուած հիւանդութիւնները: Այսպէս՝ ահագին թուով միամիտ չաճախորդներ կը քաշեն եւ անոնց դրամը կը կորզեն առանց անոնց ունէ իրական օգնութիւն մը հասցնելու: Այսօրինակ ծանուցումներէն խարբուելու է: Հրաշալի պատմութիւններու եւ հրաշագործ դեղերու չաչտարարութեանց հաւատ ընծայելու է: Եթէ դիտութիւնը գտնէ այդպիսի հրաշալի դիւտեր ու դեղեր, արդէն գիտական լուրջ թերթերուն մէջ գիտունները զանոնք հասարակութեան կը չաչտարարեն: Բնութեան մէջ ուստնում ու հրաշք չը կայ: Ամէն

ինչ ունի իր պատճառն ու բնական ընթացքը: Հիւանդութիւններ, մանաւանդ մնացուն տեսակները, կարելի չէ մէկ ակնթարթի մէջ բուժել: Ժամանակ հարկաւոր է մինչեւ անոնք բուժուին: Շատ մը մնացուն տկարութիւններ արդէն անբուժելի են, միայն զանոնք մեղմել կարելի է: Այս կարգի հիւանդներ երթալու են միայն ուղղամիտ ճանչցուող բժիշկներուն: Անոնք պիտի ընեն, պիտի ըսեն իրենց այն ինչ որ շիտակ է:

Սիֆիլիս ունեցողը պէտք է խստաւ հրաժարի ալկոհօի եւ ծխախոտի գործածութենէն, որովհետեւ, երկուքն ալ հիւանդութիւնը կը վատթարացնեն եւ աչքայէս արդելք կը հանդիսանան անոր դէմ իր մղած պայքարին: Առհասարակ առողջ, զօրաւոր կազմի տէր մարդիկ աւելի կը դիմանան եւ չաջող կռիւ կը մղեն խիտին դէմ քան թէ հիւանդոտ, անզօր անձեր: Լաւ սնունդ եւ մաքուր օդ անհրաժեշտ են կռուի չաջողութեան համար: Ե՞րբ կարելի է ըսել հիւանդը բոլորովին լաւցած է եւ կրնայ ամուսնանալ առանց իր կինը վարակելու: Առաջներ երբ հիւանդը առնուազն երկուուկէս տարի կանոնաւոր կերպով դարմանուէր եւ չետոյ անկէ վերջ ամբողջ տարուան մը միջոցին երբէք սեւէ ախտանշան ցոյց չը տար, կարելի էր զինք բուժուած համարել եւ արտօնել որ ամուսնանար: Հիմա մեր ձեռքն ունինք ախտորոշման ընտիր նոր միջոց մը որ մեզ շատ կ'օգնէ այս մասին: Այս միջոցը Վասէրմանի փորձն է: Անոր միջոցով կարելի է իմանալ հիւանդը դեռ սիֆիլիս ունի՞ թէ անկէ մաքրուած է: Հիւանդին արիւնը կարգ մը քիմիական քննութիւններու ենթարկե-

լէ չետոյ կարելի է իմանալ անիկա սիֆիլիսի թոչներէն բոլորովին մաքրուած է թէ տակաւին թոչներ կը գտնուին անոր մէջ: Կնճառոտ քննութիւն մըն է անիկա որ այս տեղ նկարագրել աննպատակ կը համարիմ: Երբ հիւանդը ժամանակ մը դեղ կը դործածէ, չետոյ անոր արիւնը Վասէրմանի փորձով քննուելէ չետոյ բացասական արդիւնք կուտայ, ըսել է թէ հիւանդը բժշկուած է: Ապահով ըլլալու համար լաւ է երկու, երեք քննութիւն կատարել, ամէն երկու կամ երեք ամիս անգամ մը, որովհետեւ, փորձը անսխալական չէ եւ երբեմն կը վրիպի: Երբ երկու, երեք քննութիւններ բացասական արդիւնք կուտան բաւական ապահով ըլլալու է թէ հիւանդը բժշկուած է: Երբոր անիկա դրական արդիւնք կուտայ, ըսել է թէ հիւանդը դեռ սիֆիլիս ունի: Այս փորձը սիֆիլիսի ախտորոշման ահադին զարկ տուաւ: Դէպքեր կը պատահին որոնց մէջ շատ դժուար է առանց անոր օդնութեան վստահ ախտորոշում մը ընել: Երբոր տարակուսելի դէպքերուն մէջ Վասէրմանի փորձը դրական արդիւնք կուտայ, ըսել է թէ հիւանդը սիֆիլիս ունի:

\* \* \*

Միզկատասյ առաջներ թեթեւ հիւանդութիւն մը կը նկատուէր բաց աչք մը կը կարծուի որ անիկա սիֆիլիսէն շատ ետ չի մնար իր աղիտալի հետեւանքներուն մէջ: Միզկատասյ տեղական հիւանդութիւն մըն է որ կը յարձակի ծննդական դործարաններու մաղասամաչկին վրայ: Անիկա առաջ կուգայ

գօնօկօկ կոչուած մանրէներէն որոնք Նայսէր գտաւ 1897ին : Նայսէրի այս դիւտով միզկատապ վստահ կերպով դասուեցաւ տեսակարար, տարափոխիկ հիւանդութեանց կարգը եւ սիֆիլիսէն բոլորովին զատորոշուեցաւ իրրեւ առանձին հիւանդութիւն մը : Միզկատապ կը կարծուի որ Եւրոպայի մէջ հին ժամանակներ գոյութիւն ունէր : Գօնօկօկներ կիսագունդի ձև ունեցող մանրէներ են որոնք զոյգ զոյգ կ'երթան եւ անոնց տափակ երեսները իրարու կը նային : Անոնք մասնաւոր սէր մը ունին դէպի մաղասամաշկը : Երբեմն կը յարձակին նաեւ շջկային (serous) թաղանդին վրայ ինչպէս կը պատահի միզկատապէն առաջ եկած չօղացաւի ժամանակ :

Վարակման կերպը սեռային չարաբերութիւնն է : Շատ քիչ անգամ մէկ մը ուրիշ տեսակ միջոցներով կը վարակուի : Երբ մարդ մը միզկատապ ունեցող կինը մը հետ մերձեցում կ'ունենայ, գօնօկօկները կ'անցնին իր միզուկին մէջ ուր պարարտ հող գտնելով կ'աճին եւ մէկէն մինչեւ տասն օր յետոյ առաջ կը բերեն մարդուն մէջ հետեւեալ խռովութիւնները : Հիւանդը միզելու ժամանակ մէկէն սաստիկ այրելու նման ցաւ մը կ'զգայ, չետոյ կը նկատէ որ առնանդամի ծայրը կարմրած է և ուռած : Յաւէն քիչ վերջ ճերմակագոյն թարախ կ'սկսի հոսիլ որուն գոյնը չետոյ կը փոխուի դեղինի եւ ապա կանաչի : Յաւը եւ թարախի հոսումը քանի մը օր երթալով կը սաստկանան : Շատ մը դէպքերուն մէջ հիւանդը կ'ունենայ նաեւ թեթեւ ջերմ, թուլութիւն եւ մտաւոր անձկութիւն : Բացառիկ դէպքերուն մէջ միզուկէն ուղղակի արիւն կը հոսի : Բարեբաղդ դէպքերուն մէջ,

գրեթէ երեք շաբաթ վերջ այս ախտանշանները կ'ըսկըսին մեղմանալ, թարախի հոսումը կը նուազի մինչեւ իվերջոյ կը դադրի եւ հիւանդութիւնը կը վերջանայ :

Բազմաթիւ դէպքերուն մէջ սակայն հիւանդութիւնը այսպիսի բարեբաստիկ վախճանի մը չի չանդիր : Շատ անգամ ան խիստ ըմբոստ կ'ըլլայ եւ ախտանշանները չամառ կերպով կը շարունակուին հակառակ դարմանումի ամէն միջոցին մինչեւ չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ շաբաթը երբ հիւանդութիւնը այլեւս կը դառնայ մնացուն եւ հակամէտ կ'ըլլայ այլեւայլ բարդութիւններու մէջ մտնելու : Չարմանալի չէ ուրեմն որ Րիկօրդ տարիներ առաջ կը գըրէր. «Երբ մէկ մը միզկատապ ունեցած է միայն Աստուած դիտէ թէ ան երբ պիտի աղէկնայ» :

Ասոր պատճառը այս է : Միզուկի մաղասամաշկին վրայ շատ մը խորչեր ու ծալքեր կան : Գօնօկօկներէն ոմանք կը մտնեն այս խորչերուն մէջ որոնք այն տեղ մնալով հականեխական ու սպանիչ դեղերու ազդեցութենէն կը խուսափին : Վերջը երբոր պատեհ առիթ ներկայանայ նորէն կը շատնան ու հիւանդութիւնը կը վերսկսեն : Այս կերպով անոնք յաճախ կը չունեն դէպի ներսը, միզուկի ետեւի կողմը. կը մտնեն առաջագեղձին մէջ ու այն տեղ առաջ կը բերեն թարախակոցտեր. կը տարածուին աւելի ներսերը ու կը վարակեն ամորձիները, երիկամները եւ չօղուածները : Հազուադէպ պարագաներու մէջ կը վարակեն նաեւ միզափամփուշտը : Երբեմն կը պատահի կը մտնեն արեան մէջ ու կը վարակեն սիրտը : Կարող են ոչ միայն սիրտը աւրել ցկեանս այլեւ



ուղղակի հիւանդը մեռցնել արեան թունաւորութեամբ: Երբ մտնեն չօգերուն մէջ, առաջ կը բերեն չօղացաւ որ շատ ըմբոստ եւ նեղացուցիչ հիւանդութիւն մըն է: Յօղացաւ շատ մը դէպքեր առաջ կուգան այս ախտէն: Ամորձիներու բորբոքումը հարիւրէն ութսուն, ութսունհինգ դէպքերուն մէջ կ'առաջացնէ ամլութիւն:

Միզկատապ առաջ կը բերէ նաեւ սեռային անզորութիւն երբ անիկա քանի մը անգամ կրկնուի ու երկար տեւէ: Անոր չաճախադէպ մէկ գէշ բարդութիւնն է միզուկի նեղնալն ու գոցուիլը: Միզուկը բորբոքած ժամանակ շատ անգամ կը պատահի որ անոր մէջ վէրքեր կ'առաջանան: Այս վէրքերը երբ բուժուին իրենց ետեւ սպիւններ կը թողուն որոնք մաղասամաչիկ կը կծկեն ու այդպէս միզուկը կը նեղցընեն կամ կը գոցեն: Այն ատեն հիւանդը ալ չի կըրնար հանգիստ կերպով միզել, այդ գործողութիւնը կը պատճառէ անոր անհնարին ցաւ ու մտատանջութիւն: Միզկատապ եթէ շատ երկար տեւէ հիւանդը այնքան կը տանջէ մինչեւ ի վերջոյ դայն կը դարձնէ ջլախտաւոր: Երբ մարդ այս ախտէն կատարելապէս բժշկուած չէ, հիւանդութիւնը սուր կերպով վերսկսելու վտանգը միշտ կը մնայ իր հետ: Այսպէս՝ հիւանդ մը կարող է իր առաջին վարակումէն տասներեք տարի չտուց դարձեալ միեւնոցն հիւանդութեամբ տառապիլ եւ ուրիշներ վարակել ինչպէս շատ մը բանկիմաց բժիշկներ տեղեկագրած են:

Ես իմ հիւանդներուն մէջ միայն մէկ շատ գէշ բարդութիւններ ունեցող միզկատապի դէպքի հանդիպած եմ որն այս տեղ պիտի նկարագրեմ ցոյց տա-

լու համար թէ միզկատապ մարդուն մէջ ինչեր կըրնայ ընել:

Երիտասարդ մը որ երեք շաբաթուան միզկատապ ունէր վրան ինձի եկաւ դարմանուելու: Թէեւ երեք շաբաթ է ի վեր բժիշկի մը ձեռքով դարմանուած էր բաց դեռ շատ թարախ կը հոսէր միզուկէն: Ես սկսայ զայն ազդու կերպով դարմանել: Մարդը օրական երեք անգամ իմ պաշտօնատեղին կուգար եւ ես իմ ձեռքով արդիւրօլով ներարկումներ կ'ընէի միզուկին մէջ: Յետոյ տուի իրեն խմելու դեղ մը օրական չորս անգամ առնելու համար: Քանի մը օր վերջ թարախը սկսաւ նուազիլ եւ հինգ կամ վեցերորդ օրուան վրայ բոլորովին անհետանալու վրայ էր մէկ ալ հիւանդը սկսաւ գանգատիլ որ իր ետեւի կողմը կը ցաւի քիչ մը: Ես սկսայ կասկածիլ որ միզկատապը ետեւի կողմն անցնելու վրայ է: Հետեւեալ օրը հիւանդը գանգատեց նաեւ որ գիշերներ երկու երեք անգամ միզելու կ'երթար եւ առնանդամի սաստիկ լարում ու ցաւ կ'ունենար: Առնանդամի մէջ, տեղ տեղ կարծր դնդիկներ կային եւ ամբողջ առնանդամը քիչ մը ուռած էր եւ կարծր: Հիւանդը այժմ յայտնապէս թէ Փօլիկիլիտիս ունէր եւ թէ չետամիզուկի բորբոքում: Ես հիւանդին տուի խմելու դեղ մը գիշերներ տեղի ունեցող առնանդամի սաստիկ լարումը եւ չաճախամիզումը արդիւլելու եւ իմ ուշադրութիւնը դարձուցի առնանդամի դնդիկները հալեցընելու, նաեւ կարծրութիւնն ու ուռեցքը անհետացընելու: Պատուիրեցի իրեն՝ չետուցիլ վրայ ու ամորձիներուն տակ տաք բան դնել: Թարախը հիմա սկսաւ նորէն շատնալ: Ես բաւական նեղութեամբ

յաջողեցաւ կամաց կամաց առնանդամը կակուղցնել ու անոր գնդիկները հալեցնել բաց հիւանդը այժմ սկսաւ գանգատիլ որ չետուքի ցաւը չի կտրիլ, ընդհակառակն երթալով կը սաստկանայ: Երբոր ես վերջնադիքի մէջէն չառաջագեղձը քննեցի տեսայ որ ան սաստիկ ուռած էր եւ վերին աստիճան զգայուն: Պարզ էր հիմա որ գոնօկօկներ մտած էին չառաջագեղձին մէջ եւ զայն բորբոքման ենթարկած էին: Ես ժամանակէ մը ի վեր ներարկումները դադարեցուցած էի եւ հիւանդին չանձնարարեցի շարունակաբար տաք բան դնել յետոյքին վրայ, յետոյ հանգիստ պահելի, յուսալով այդ կերպ բորբոքումը իջեցնել եւ առաջագեղձի թարախոտումը արգելել բաց օգուտ չըբաւ: Յաւը երթալով սաստկացաւ եւ ուռեցքը սկսաւ դուրս տալ յետոյքին վրայ, սրբանին առջեւի կողմը: Հիւանդը նաեւ ունեցաւ դող եւ տաքութիւն: Այժմ տարակոյս չը կար որ չառաջագեղձին մէջ թարախակոյտ կար եւ ես որոշեցի անմիջապէս զայն բանալ: Մորթը կօկախնով թմրեցնելէ յետոյ ես բացի թարախակոյտը որմէ գրեթէ մէկուկէս թէյի դալի չափ թարախ դուրս վազեց: Չանացի խոռոչը որքան կարելի էր մաքրել եւ ապա անոր մէջ պատրոյզ մը դնելով վէրքը կապեցի:

Հիւանդը շուտով սկսաւ աւելի լաւ զգալ եւ հետեւեալ օրը տաքութիւնը բոլորովին անցած էր ու ցաւ շատ քիչ մնացած էր: Մարդը սկսաւ բաւական ուրախանալ սաստիկ ցաւէն ու նեղութենէն ազատուելուն համար բաց իր ուրախութիւնը շատ երկար չը տեւեց, որովհետեւ, առջի թարախակոյտը բանալէն մօտաւորապէս շաբաթ մը վերջ, ուրիշ կարծր

ուռեցք մը, գրեթէ պզտիկ հակիթի մը մեծութեամբ, սկսաւ երեւիլ առաջին վէրքէն վեր, ձախ ամորձիին կողք եւ դէպի վարը, միաւորիչ հիւսուածներուն մէջ: Այս ուռեցքը թէեւ աչնքան ցաւ չէր պատճառեր մարդուն, բաց նորէն ան սկսաւ մտատանջուիլ: Կտաւատի սերմի տաք խիւսերով ես ջանացի այդ ուռեցքը հալեցնել եւ չը թողուլ որ թարախակոյտի փոխուի բաց դարձեալ օգուտ չըբաւ: Անիկա թէեւ երթալով քիչ մը սկսաւ կակղիլ բաց երբէք չը պզտիկցաւ եւ եօթն օր վերջ հիւանդը թեթեւ տաքութիւն ունեցաւ: Ես տաքութենէն իմացայ որ ուռեցքին մէջ թարախ դոյացած էր, ուստի որոշեցի չսպասել, այդ ուռեցքն ալ նշգրակով բանալ: Ուռեցքը ես կտրեցի ու բացի բաց շատ քիչ պինդ թարախ դուրս հոսեց: Ինչ ալ ըլլար սակայն, ուռեցքի բացուիլը անոր հալելուն կ'օգնէր: Ես վէրքին մէջ պատրոյզ մը գրի եւ կտաւատի տաք խիւս դնելով վրան զայն կապեցի: Աչնուհետեւ ուռեցքը տաք խիւսերու օգնութեամբ սկսաւ պզտիկնալ բաց եկաւ ժամանակ մը երբ ալ չէր մաշեր: Յառաջագեղձի վէրքը այժմ բոլորովին գոցուած էր: Հիւանդը որ հաւատարմութեամբ զարմանին կը հետեւէր նորէն սկսաւ մտատանջուիլ եւ անհամբեր դառնալ: «Աս ինչ է Դօկտոր», կ'ըսէր ան, «ե՞րբ պիտի ազատուիմ այս ցաւերէն, վախնամ ասիկ լմննամ ուրիշ տեղ մը փոխադրուի հիւանդութիւնը. ա՛խ այն աղջիկը, ձեռքս իննար ես զայն կ'սպանէի»:

Ես որչափ կրնայի զինք կը յուսադրէի եւ կը բացատրէի իրեն որ այս տեսակ հիւանդութիւններ ժամանակ կ'առնեն, պէտք է համբերէ, վերջը պիտի

աղէկնայ եւայն: Ես հիմա որոշեցի կտաւատի խիւսի գործածութիւնը դադարեցնել եւ անոր փոխարէն գործածել իկթիօլի օծանելիք: Մէկ օրուան մէջ ըզգալի տարբերութիւն տեսանք. ուռեցքը սկսաւ շուտով հալիլ ու փոքրանալ: Մէկ օրուան արդիւնքէն քաջալերուած, իկթիօլի գործածութիւնը շարունակեցի մինչեւ մէկ շաբաթուան մէջ ուռեցքը բոլորովին անհետացաւ: Այժմ հիւանդը սկսաւ նորէն սըրտապնդուել եւ ուրախանալ: Բայց ես դիտէի ի հարկէ որ խնդիրը դեռ վերջացած չէր, դեռ շատ ժամանակ հարկաւոր էր մինչեւ ան բոլորովին բուժուէր: Հիւանդութիւն սկսելէն մինչեւ հիմա տասը շաբաթներ անցած էին: Ես հիմա նորէն սկսայ լրջօրէն միզուկը եւ չառաջագեղձը մաքրել մասաժներով, լուացումներով եւ ուրիշ միջոցներով: Բայց անցաւ երկու երեք օր մէջ մ'ալ հիւանդը սկսաւ դանդաւորի որ իր աջ ամորձիի վերը քիչ մը կը ցաւի: Ես անմիջապէս դուշակեցի որ չաջորդ բարդութիւնը հաւանաբար ամորձիի բորբոքումը պիտի ըլլար: Իմ դուշակութիւն կատարեալ համողման փոխուեցաւ երբ աջ ամորձին քննեցի եւ տեսայ որ սերմնառասանը քիչ մը ուռած էր եւ զգացուն: Այնուհետեւ ես կ'ըսպասէի զալիք փոթորիկին եւ ահա շատ չանցած մարդը առաւօտ մը յայտնուեցաւ պաշտօնատեղիիս մէջ, բոլորովին անձկոտ, ցաւազին արտայայտութեամբ եւ տնքաւով: Երբ եղելութիւնը հարցուցի յայտնեց որ աջ ամորձին սաստիկ կը ցաւի եւ ուռած է:

Ես ամորձին քննեցի եւ չետոյ տեսայ որ հիւանդը թեթեւ տաքութիւն ունէր: Մարդը կ'անիծէր իր բախտը ըսելով. «Ալ ես կեանքէս զղուած եմ, մե-

ռած դիակ մըն եմ հիմա, ինձ համար մեռնիլ աւելի աղէկ է քան թէ ապրիլ, ալ սակէ վերջ ինչ կուզէ թող ըլլայ»: Ես ամորձիին վրայ սփուրիչ դեղ մը դրի, զայն կակուղ բամբակով պատեցի, կախադանաւոր պարկի մը մէջ առի եւ զինք անմիջապէս տուն դրկեցի ու պատուիրեցի որ անկողին երթայ ու հանդիստ պառկի: Տուի իրեն նաեւ լուծողական դեղ մը եւ պատուիրեցի որ կտաւատի տաք խիւսառնէ ամորձիին վրայ օրական քանի մը անգամ: Հանգստի ու տաք խիւսերու շնորհիւ ամորձիի ցաւն եւ ուռեցքը տաս օրուան մէջ անհետացան բայց դեռ քիչ մը ուռեցք կը մնար ամորձիին մէջ: Մէկուկէս ամիս վերջ ուռեցքը գրեթէ բոլորովին անհետացաւ: Թարախի հոսումը այժմ դադարած էր բայց մէկը շատ պղտոր էր եւ լեցուն էր կտորուանքներով: Քիչ վերջ ես սկսայ ձգախէժի բարակ խողովակներով միզուկին ու միզափամփուշտը լուալ եւ մէկը մաքրել բայց այժմ միւս ամորձին բորբոքեցաւ եւ ուռաւ: Ալ սեռային գործարան մը չը մնաց այս հիւանդին մէջ որ գօնօկօկներու ասպատակութենէն զերծ մնաց: Կտաւատի տաք խիւսերու եւ հանգստի շնորհիւ այս ամորձիի ցաւն ու ուռեցքն եւս անհետացան մինչեւ գրեթէ ամիս մը վերջ ես նորէն ձեռք զարկի հիւանդի ծննդամիզային անցքը մաքրել մասաժով, լուացումներով եւ այլ միջոցներով: Շատ մը ամիսներու դարմանումէ չետոյ հազիւ մարդուն մէկը ու ներքին գործարանները մաքրուեցան ու ան իր առողջութիւնը քիչ շատ նորէն գտաւ: Հիւանդը այժմ լաւ է ու կը գործէ: Ասանկ դէպքեր քիչ չեն պատահիր: Միզկատապ շատ անգամ այս տեսակ

բարդութիւններ կ'ունենալ սակաւ դիմադրական ուժ ունեցող հիւանդներուն մէջ հակառակ բժիշկի ամէն զգուշութեան եւ հերոսական ջանքերուն:

Միզկատապով կնոջ վարակումը մեծ աղէտ մըն է, որովհետեւ, մանրէները կը չուեն դէպի անոր ներքին գործարաններ ուր անոնք երկար ատեն կը պահուած լին ու կը մնան եւ երբէք կարելի չէ դեղերով անոնց հասնիլ եւ դանոնք ջնջել: Անոնց մէջ մանրէներ պարարտ հող գտնելով կը բազմանան եւ առաջ կը բերեն թարախակոցտեր, գործարաններու ծոռակումներ, կցուածքներ (adhesion), ամլութիւն, վիժում եւայլն: Բլօխ իրաւունք ունի երբ կ'ըսէ. «Միզկատապ կնոջ մէջ կը նշանակէ ճշմարիտ մարտիրոսութիւն մը եւ դժոխք այս երկրի վրայ՝ երբ ան չաջորդաբար կը չարձակի անոր հեշտոցին, արգանդին, Փալօպեան խողովակներուն, ձուարաններուն եւ որովայնամաշկին վրայ»:

Երբ կնոջ հեշտոցը վարակուած է դժուար է գօնօկօկներու չառաջխաղացումը դէպի վերը արգելիլ: Անոնք դիւրութեամբ կը չուեն դէպի վեր եւ չաջորդաբար կը մտնեն արգանդը, Փալօպեան խողովակները եւ ձուարանները: Արգանդի բորբոքումը անոր մաղասամաշկի առողջ վիճակը այնքան կը փոխէ եւ կ'աւրէ որ ան այլեւս անընդունակ կ'ըլլայ սաղմը բռնելու եւ սննդաւորելու: Ոչ ալ սերմնակենդանները կրնան ապահով անոր մէջ մնալ եւ սաղմը արգասաւորել, որովհետեւ, արգանդի արտաթորուածքները այնքան աննօրմալ կը դառնան որ դանոնք կը ջնջեն: Փալօպեան խողովակներու բորբոքումը աւելի ծանր խնդիր մըն է: Անոնց բորբոքումի պարա-

գաչին անոնց մաղասամաշկը յաճախ այնքան կ'ուռիւ կը թանձրանայ որ խողովակի անցքը բոլորովին կը գոցուի: Երբ երկու խողովակներն ալ այսպէս գոցուած են այն ատեն կ'ինը կը դառնայ ամուլ, որովհետեւ, ձուն այլեւս չի կրնար չուել դէպի արգանդը: Աւելի ծանր բարդութիւններ կան դեռ: Բորբոքումի պատճառաւ շատ անգամ խողովակի երկու ծայրերն ալ կը գոցուին բաց գօնօկօկներ դեռ կը շարունակեն խողովակին մէջ աճիլ ու բազմանալ առաջ բերելով այն տեղ թարախակոցտ: Կ'ինը այժմ կ'սկսի ունենալ անհնարին ցաւ, տաքութիւն եւ մըտաւոր անձկութիւն: Եթէ չուտով վիրաբուժական գործողութեամբ խողովակը դուրս չի հանուի անկա կը շարունակէ ուռիլ եւ մեծնալ մինչեւ ի վերջոյ կը պայթի եւ թարախը դուրս հոսելով կը վարակէ չարակից գործարաններն ու որովայնամաշկը: Որովայնամաշկի բորբոքումը արդէն ամենավտանդաւոր բարդութիւն մըն է որ դէպքերէն մեծագոյն մասին մէջ կը նշանակէ մահ: Միեւնոյն բանը կարող է պատահիլ նաեւ ձուարաններուն մէջ: Կնոջ ներքին ծննդական գործարաններու բորբոքումը գրեթէ միշտ առաւել կամ նուազ չափով կ'անցնի կոնքի որովայնամաշկին: Այս պատճառաւ անկէ հեղուկներ կը հոսին որոնք վերջ կը թանձրանան սոսինձի նըման ու կոնքին մէջ գտնուող գործարանները կը փակցնեն իրարու: Սոսնձանման նիւթէն կապեր կը կազմուին որոնք ծնդական գործարանները կ'առնեն իրենց մէջ, անոնց բոլորտիքը կը պտտին եւ դանոնք իրենց նեարդակապերով միասին այնպէս կը ծընձըռկեն եւ կը խճճեն որ անոնք կ'ըլլան գունդ մը կը

ծիկի պէս ու ալ մէկ գործարանը միւսէն չես կրնար ճանչնալ: Ծննդական գործարաններու աշտօրինակ ծումուկուծներ կ'նոջ կուտան շատ ցաւ ու նեղութիւն: Ամէն անգամ որ ան կը ծուր մէկ կողմին վրայ, կայերը կը ձգտուին եւ անոր ցաւ կը պատճառեն: Ես այս տեսակ դէպքեր շատ տեսած եմ եւ անոնցմէ մէկը, որ երբէք չեմ կրնար մոռնալ, պիտի նկարագրեմ այս տեղ:

Ասկէ դրեթէ երեք տարի առաջ մօտաւորապէս 24 տարեկան աղջիկ մը չանկարծ փորի ցաւ կ'ունենայ եւ իր բժիշկը Դօկտօր Տ. Նալչաճեան կը կանչէ: Դօկտօր Նալչաճեան որովհետեւ այդ գիշեր սաստիկ չօգնած էր ու քիչ մը տկար կ'զգար, ինձմէ խնդրեց որ իր փոխարէն ես երթամ ու աղջիկը տեսնեմ: Ես աղջկան տուն գացի եւ տեսայ որ ան հիւանդ պառկած էր անկողնին մէջ ու կը դանդաւոր որ սաստիկ ցաւ ունէր փորի վարի մասին մէջ, առաւելապէս աջ կողմը: Ես անոր տաքութեան աստիճանը նայեցայ ու գտայ որ ջերմ չունէր: Յետոյ երբ ձեռներովս հիւանդի փորի վարի կողմը շօշափեցի, տեսայ որ ձեռքիս ճնշումը անորոջ տարածութեան մը վրայ անոր ցաւ կը պատճառէր: Որովհետեւ ցաւը քիչ մը աւելի սաստիկ էր փորի աջ կողմը, ես կասկածեցայ թերեւս աղջիկը կցաղետապ ունէր: Աղջիկը սակայն ինձ յայտնեց որ իր որդանման աղիքը դուրս հանուած է: Այնուհետեւ ես խորհեցայ հիւանդը կամ պարզ աղիքներու խանգարում ու խիթ ունէր եւ կամ նեղութիւն կար կոնքին մէջ

Ես հիւանդին լուծողական դեղ մը տուի եւ չանձնարարեցի ցաւցած տեղը տաք բան դնել մինչեւ

զինք նորէն տեսնէինք: Հետեւեալ առաւօտ ես աղջկան վիճակը Դօկտօր Նալչաճեանին պատմեցի եւ անոր հոգատարութիւնը անոր չանձնեցի: Այնուհետեւ աղջկան մասին պատեհութիւն չունեցայ լսելու մինչեւ չորրորդ օրը երբ Դօկտօր Նալչաճեան զիս Պ... հիւանդանոցը կանչեց վիրահատական գործողութեան մը մէջ իրեն օգնելու: Երբ հիւանդանոց գացի տեսայ չիշեալ աղջիկն էր գործողութեան ենթարկուողը: Դօկտօր Նալչաճեան ինձ պատմեց աղջկան պատմութիւնը: Մէկ երկու օր զան իր հսկողութեան տակ պահած էր բաց տեսած էր որ անոր ցաւը չէր անհետանար: Աղջիկը սկսած էր ունենալ ջերմ եւ աւելի վատ զգալ: Դօկտօր Նալչաճեան իսկոյն կը գուշակէ ծանր հիւանդութիւն եւ ապա վիրահատական գործողութեան պէտքը որուն համար անմիջապէս վիրաբույժ մը կը կանչէ խորհրդակցելու հիւանդի վիճակի մասին: Վիրաբույժ զան կը տեսնէ եւ Դօկտօր Նալչաճեանի հետ միասին կ'որոշեն շուտով գործողութիւն ընել: Երբ վիրաբույժը աղջկան կոնքը բացաւ խիտն դարչելի հոս մը դուրս բուրեց եւ տարածուեցաւ ամբողջ սենեակին մէջ: Կոնքը լեցուն էր թարախով եւ արգանդը, Փալօպեան խողովակները, ձուարանները, բոլորը անձանաչելի կերպով այլանդակուած էին ու խճճուած իրարու մէջ: Հիւսուածքներէն մեծ մասը բառին բուն նշանակութեամբ փտած էր: Չուարանները բոլորովին անձանաչելի եւ անգործածելի դարձած էին: Խողովակներէն մէկը պայթած էր որմէ դուրս հոսած էր կոնքին մէջ մեծ քանակութեամբ թարախ: Երկու խողովակներն ալ չափազանց թանձրացած եւ հաստա-

ցած էին ու գրեթէ փտած : Արդանդն ալ այլանդակ-  
 ուած ու ներսած վիճակի մէջ էր : Հակառակ կնոջ  
 չաչտարարութեան , որդանման աղիքը ներկայ էր եւ  
 ան ալ ծաղուած էր : Կնոջ վիճակը պարզապէս աս-  
 սելի էր : Վիրաբոյժը ջանաց կոնքը մաքրել եւ ըրաւ  
 ինչ որ կարելի էր բաց աղջիկը երկար ատեն մնաց  
 հիւանդանոց եւ վերջը ուրիշ բարդութիւններ ալ ու-  
 նեցաւ : Անիկա թէեւ հիւանդանոցէն դուրս եկաւ ,  
 աչնուամենայնիւ , հաւանաբար միշտ տկար եւ հի-  
 ւանդոտ աղջիկ մը պիտի ըլլայ եւ մայրութեան ու-  
 բախութենէն իսպառ պիտի գրկուի :

Այս տեսակ դէպքեր երբէք հազուադիւտ չեն :  
 Հարիւրներով ու հազարներով կը պատահին անոնք  
 առաւել կամ նուազ սաստիկութեամբ եւ բարդու-  
 թիւններով : Շատ մը կիներ իրենց էրիկներէն վա-  
 րակուելով գրկանքի ու թշուառութեան կեանք մը  
 կ'ապրին : Յաճախ իրենց միակ մխիթարութիւնը ե-  
 դող մայրութենէն գրկուելով ողբալի կերպով գոչու-  
 թիւննին քարշ կուտան մինչեւ մեռնին :

Գոնօկօկներ աչքին վրայ ալ կը չարձակին : Աս-  
 կէ բաւական առաջ միզկատապ ունեցող կիներէն  
 ծնած ահագին թուով երախաներ իրենց մայրերէն  
 վարակուելով աչքի բորբոքում կ'ունենային եւ կը  
 կուրնային : Բարեբախտաբար Կրէտէի հնարած մէկ  
 նախադդուշական միջոցին շնորհիւ այսպիսի դէպքեր  
 հիմա հազուադիւտ են : Կրէտէ խորհուրդ տուաւ ար-  
 ծաթի ուեէ մէկ բաղադրութեան լուծուածքէն կա-  
 թիլ մը երկու կաթեցնել մանկան աչքին մէջ անոր  
 ծնելէն անմիջապէս չետոյ որպէս զի եթէ գոնօկօկ-

ներ կան անոր մէջ ջնջուին :

\* \* \*

Միզկատապի դարմանը պէտք է ըլլայ ընդհա-  
 նուր եւ տեղական : Հիւանդը եթէ ջերմ ունի պէտք է  
 պառկի : Անիկա պէտք չէ դործէ , պէտք է հանգիստ  
 ընէ որպէս զի իր վիճակը աւելի շուտ լաւնայ : Ան  
 պէտք է ոչ քալէ , ոչ ձի եւ ոչ հեծելանիւ նստի : Ա-  
 ղիքները լուծ ու բաց վիճակի մէջ պահելու է : Յե-  
 տոյ իսպառ հրաժարելու է թթու եւ կծու կերակուր-  
 ներէ ու համեմներէ : Պէտք է ան հրաժարի նաեւ  
 խոզի մսէն ու տոմարիսէն : Կերակուրը պէտք է  
 շատ պարզ ըլլայ : Կաթը անոր գլխաւոր մասը կազ-  
 մելու է : Հիւանդը ի հարկէ պէտք է հրաժարի նաեւ  
 սեռային չարաբերութենէ եւ ուեէ գրգռումէ : Հասա-  
 րակ ժողովուրդին մէջ գաղափար մը գոչութիւն ու-  
 նի որուն համեմատ իբր թէ միզկատապ ունեցող  
 մարդը եթէ մաքուր աղջկան մը հետ սեռային չա-  
 րաբերութիւն ունենայ անով կը մաքրուի ինք : Աս-  
 կէ աւելի սխալ ու հրէշային գաղափար մը չի կըր-  
 նար ըլլալ : Միզկատապ ունեցող մարդը մաքուր կը-  
 նոջ մը հետ սեռային չարաբերութիւն ունենալով եր-  
 բէք չի մաքրուիր , ընդհակառակն , իր վիճակը պի-  
 տի վատթարանայ եւ իր ախտը հարիւրէն 99 դէպ-  
 քերուն մէջ կնոջը փոխանցէ : Անոնք որ այս մտքով  
 մաքուր աղջկան մը կը մօտենան ու դայն կը վա-  
 րակեն ահուելի ոճիր մը գործած կ'ըլլան : Այս տեսակ  
 հիւանդը պէտք է ինք իր մէջ ամփոփուի եւ սեռային  
 ուեէ գործողութենէ հրաժարի : Երբ ցաւ եւ ուռեցք

չատ կաչ լաւ կ'ըլլայ որ ան իր ամորձիները եւ առնանդամը պարհիկ մը մէջ առնէ դանոնը հանդիստ պահելու համար: Տեղական դարման ըսելով պիտի հասկնանք միզուկին մէջ դանադան հականեխական դեղեր լեցնել ու զօնօկօկները ջնջել որչափ որ կարելի է: Այդ դեղերուն մէջ արծաթի բազադրութիւնները գլխաւոր տեղը կը բռնեն: Այս մասին հիւանդը պէտք է իր բժիշկին գիմէ եւ անոր հրահանգներովը շարժի: Երբոր յառաջագեղձին, Փալջաբեան խողովակներուն եւ ձուարաններուն մէջ թարախակոչտ կաչ աչն ատեն վիրաբուժական գործողութիւն պէտք է կատարուի եւ թարախակոչտը բացուի ու թարախը պարսպուի եւ կամ վնասուած գործարանը ամբողջութեամբ վերցուի: Ե՞րբ կարելի է ըսել հիւանդը բոլորովին բուժուած է միզկատապէն: Առհասարակ հիւանդը կարելի է բժշկուած համարել երբ անոր մէզին մէջ բարակ թելեր եւ կեղտոտութիւններ չը կան ալլեւս, ան բոլորովին չտակ ու մաքուր է. նաեւ մասաժով յառաջագեղձէն ու սերմնարշտիկներէն հանուած հեղուկը զօնօկօկներ չի պարունակեր իր մէջը:

\* \* \*

Սիֆիլիսէն ու միզկատապէն համեմատաբար պակաս աղիտալի հիւանդութիւն մըն է շանկրօիդը: Այս հիւանդութիւնն ալ միւսներուն պէս առաջ կուգայ մանրէէ մը որ կը կոչուի bacillus ulceris cancris: Դուելրէյ եւ Սեննա դտան գայն 1889 եւ 1892 թուականներուն: Շանկրօիդը զուտ տեղական հի-

ւանդութիւն մըն է եւ սեռաչին չարաբերութեամբ մէկ անձէ ուրիշի մը կը փոխանցուի: Անոր բնորոշ ախտանշանները մէկ կամ աւելի ոսպի կամ ոլոռնի մեծութիւն ունեցող բշտիկներ են որոնք երեւան կ'ըլլեն առնանդամին, հեշտոցին կամ ամօթաշուրթերու մաղասամաշկին վրայ որոնք վերջ կը թարախտին ու կը փոխուին կեղերու: Ասոնք սիֆիլիսի շանկրէն կը տարբերին հետեւեալ կէտերուն մէջ: Սիֆիլիսի շանկրի չտակը կարծր կ'ըլլայ, երբ մարդ գաչն կը շօշափէ կը դանէ որ ամբողջ կեղը պլինդ է եւ հաստ: Շանկրօիդ ընդհակառակն կակուղ կ'ըլլայ, ասոր համար է որ անիկա կը կոչուի նաեւ կակուղ շանկր: Սիֆիլիսի շանկր միայն մէկ հատ կ'ըլլայ, երբ անոր թարախը մարմնի ուրիշ մէկ մասին դաչի, աչն տեղ երկրորդ կամ երրորդ շանկր մը չի դոչանար: Շանկրօիդ ճիշդ ասոր հակառակ վարմունքն ունի: Եթէ շանկրօիդէ մէկ կեղի թարախը մորթի ուրիշ մէկ մասին դաչի աչն տեղ կարող է ուրիշ շանկրօիդի կեղ մըն ալ երեւիլ: Այսպէս կարող է պատահիլ որ առնանդամին վրայ, օրինակի համար, միւսնոցն ժամանակ երեք չորս շանկրօիդի կեղեր երեւին:

Կակուղ շանկրներ սովորաբար մէկ կամ երկու շաբաթուան մէջ ասիդ դեղերով ալրելով եւ հականեխական փոշիներով կարելի է բժշկել: Ասոնց երկու տեսակներ կան սակաչն որոնք դարմանուծի դէմ յամառ ընդդիմութիւն մը ցոյց կուտան եւ կրնան ամբողջ առնանդամը կործանել: Մէկ տեսակն է օձանման (serpiginous) կոչուած շանկրը որ ջատուանակ մէկ տեղէն կը սողայ ուրիշ տեղ մը եւ

չատ դժուար է անոր չառաջխաղացումը կասեցընել: Միւսն է ուտիչ կոչուած (phagedenic կամ gangrenous) շանկրը որ կարող է ամբողջ առնանդամը փտտեցնելով ուտել եւ բոլորովին զայն ջընջել:

Շանկրօիդի խիստ չաճախաղէպ մէկ բարդութիւնն է աճուկի աւշեան գեղձերու բորբոքում որոնք չաճախ թարախակոչութեան կը փոխուին: Ասիկա թէեւ կեանքին վտանգաւոր բան մը չէ, այսուամենայնիւ, հիւանդը չափազանց նեղացնող եւ անոր ցաւ պատճառող բարդութիւն մըն է: Թարախակոչութեան վիրահատական գործողութեամբ պէտք է բանալ եւ զանոնք մաքրել, բան մը որ քանի մը շաբաթ կը տեւէ: Շանկրօիդով ես կը վերջացնեմ նկարագրութիւնը զուտ վեներական ախտերուն ու հիմա վեր կ'առնեմ սեռային անզօրութիւնը:

## IX

## ՍԵՌԱՅԻՆ ԱՆՉՕՐՈՒԹԻՒՆ

Սեռային անզօրութիւն առաւելագէս մարդուն չատուկ տկարութիւն մը.— Անզօրութեան շրջա ձեւերը.— Երկրորդ ձեւը իսկական սեռային անզօրութիւնը.— Պատճառները.— Ձեռնամուկութիւն եւ արուադիտութիւն ամենէն Հասարակ պատճառները, նաեւ սեռային ամէն տեսակ չափազանցութիւնները.— Երազագիճութիւն սեռային անզօրութեան նախակարգապետը.— Դարմանը, թէ տեղական եւ թէ ընդհանուր.— Սեռային անզօրութիւն կանանց մէջ սովորաբար առաջ կուգայ տեղական պատճառներէ.— Հեշտոցագրգիռ.— Դարմանը:

«Սեռային անզօրութիւն աւելի շատ տխուր ժամեր կը պատճառէ մարդկութեան քան ուրիշ հիւանդութիւն», կ'ըսէ Վիլիամ Համմօնդ: Սեռական անզօրութիւն ըսելով պիտի հասկնանք այն վիճակ որուն մէջ մերձաւորութեան գործողութիւնը կամ անհնար կ'ըլլայ կատարել կամ կարելի է կատարել միայն թերի կերպով: Սեռական անզօրութիւն կարող է պատահիլ թէ մարդուն եւ թէ կնոջ մէջ, բայց մարդու Ֆիզիքական կազմութեան բերմամբ հաս-



կընայի է որ անիկա աւելի մարդուն յատուկ տկարութիւն ճըն է :

Սեռային անզօրութիւն պէտք է բոլորովին զանազանել ամբողջինն որուն մէջ մարդ կամ կինը կը կորսնցնէ սերմ կամ ձու, հետեւաբար սերունդ արտադրելու ընդունակութիւնը : Մարդ կարող է ըլլալ բոլորովին անզօր բաց ունենալ սերունդ արտադրելու կարողութիւնը, հակադարձաբար, կարող է ան ունենալ սեռային լիակատար ուժ կանոնաւոր մերձաւորութիւն կատարելու համար բայց անկարող ըլլալ սերունդ արտադրել : Ես վեր պիտի առնեմ նախ մարդու սեռային անզօրութիւնը եւ ապա թրուուցիկ ակնարկ ձը տամ կնոջ անզօրութեան վրայ :

Անզօրութեան չորս ձեւեր կան : Առաջինը կը բընորոշուի սեռային ցանկութեան բացակայութեամբ : Երկրորդը այն է որուն մէջ հիւանդը չի կրնար ունենալ առնանդամի լարում, հետեւաբար կարող չէ զայն հեշտոցին մէջ ներմուծել : Երրորդ ձեւին մէջ հիւանդը չի կրնար սերմը արգանդին մէջ դատարկել : Ան առնանդամի լարում կ'ունենայ եւ զայն հեշտոցին մէջ կրնայ ներմուծել բայց զայն դեռ չը ներմուծած կ'ունենայ սերմնացատում ու այդպիսով մերձաւորութիւնը թերի կը մնայ : Չորրորդ ձեւին մէջ հիւանդը կարող է մերձաւորութիւն կատարել բայց գործողութեան ժամանակ իր մէջ հեշտասիրական այումը բոլորովին կը բացակայի :

Սեռային ցանկութեան բնածին բացակայութիւնը վերին աստիճանի հազուադէպ երեւոյթ է : Վիլիամ Համմօնդ իր բժշկական ամբողջ գործունէութեան ընթացքին միայն երկու այսպիսի դէպքեր

տեսած է : Այս տեսակ դէպքերուն մէջ հիւանդը երբէք սեռային չարաբերութեան պահանջ չի զգար, ոչ ալ հեշտասիրական գրգիռ կարող է ունենալ : Հիւանդը կարող է նոյնիսկ կանանց ընկերութեան մէջ ըլլալու եւ սեփական օճախ կազմելու փոփոք ունենալ բայց ամէն անգամ որ ան կը փորձէ սեռային մերձեցում ունենալ կատարեալ զգուանք կ'զգայ : Սոյն գործողութեան մասին մտածելն անգամ փրստում եւ ործ կը պատճառէ իրեն : Գրգռիչ գրքերու ընթերցանութիւն եւ հասարակական կանանց ներկայութիւն երբէք չեն կրնար անոր մէջ զարթեցնել հեշտասիրական գրգիռ :

Աւելի չաճախադէպ է սեռական ցանկութեան ստացական բացակայութիւնը, այսինքն, նախապէս գոյութիւն ունեցող սեռային ցանկութեան կորուստը : Այս տեսակ դէպքեր ընդհանրապէս ժամանակաւոր կ'ըլլան : Երբ ցանկութեան բացակայութիւնը առաջ բերող պատճառը վերցուի մարդը կը վերադառնայ իր նախկին առողջ դրութեան :

Չանազան պատճառներ առաջ կը բերեն սեռային ցանկութեան ժամանակաւոր եւ մնացուն բացակայութիւն : Ամենէն հասարակ պատճառներն են մտաւոր լարուած գործունէութիւն, գործողութեան ժամանակ ուշադրութեան վրիպումը այլեւայլ մտքերով, օնանկանութիւն, սեռային զգացումներու չեղաչըրջում, ամորձիներու ծիւրումը եւայլն :

Կարծեմ ամէն ոք փորձով գիտէ որ երբ մարդ կ'ընկղմի մտային վերացական գործունէութեան մէջ զգացական գրգիռները բոլորովին կը թմրին : Ինչպէս առաջ ակնարկած եմ, շատ ազդեցիկ են այս տես-

սակէտէն մասնաւորապէս մաթեմատիկական ու բընազանցական փիլիսոփայական պարապմունքները: Հետեւեալ դէպքը, որ պատմած է Վիլիամ Համմօնդ, լաւ կերպով ցոյց կուտայ թէ մտաւոր գործունէութիւնը ինչ աստիճան կարող է ազդել սեռային զգացումներուն վրայ:

«Քաղաքային ճարտարապետ մը, որու պարապմունքը ահագին թուաբանական հաշուողութիւն կը պահանջէր, գանգատեց ինձ որ իր սեռական ցանկութիւնը բոլորովին կորսնցուցած է: Ինձ համար այդ տեղ զարմանալի բան մը չը կար, որովհետեւ, այդ տեսակ պարապմունքը առանձնապէս կը տրամադրէ մարդուն իր մտքերը սեռական գործունէութենէն հեռացնելու եւ ամէն տեսակ ցանկական ըզգայութիւն ճնշելու: Այս ազդեցութիւնը այն աստիճան հզօր է, որ Գրիմօ-Դը-Կօն եւ Մարդէն Սէնտ-Անժը ուղղակի խորհուրդ կուտային թուաբանական քննութիւններ ուսումնասիրել, իբրեւ ամենէն գործնական միջոցը սեռական չափազանց ախորժակը ճնշելու համար: Բրուսէն նկատած էր մինչեւ անգամ որ թուաբանական պարապմունքի հետ կապուած մտաւոր լարուած դրութիւնը կը թուլացնէր ոչ միայն ցանկութիւնը այլ նոյն իսկ սեռական ընդունակութիւնը: Պարիզի բժշկական Փակուլտէի մէջ կարդացած իր գանկարանութեան դասախօսութեանց մէջ ան ոչ միայն պնդելով պաշտպանեց այս դրութիւնը այլ եւ ցոյց տուաւ երկու մեռած, աչքի ինկող թուաբաններու գանկեր, որոնք ամուսնացած չէին եղած, սաստիկ զզուանք կ'զգային դէպի

կիներ եւ երբէք սեռական չարաբերութիւն ունեցած չէին:

«Բնաց դառնանք մեր ճարտարապետին: Ամբողջովին դրաւուած ըլլալով իր հաշուարարութեամբ, որ անկէ օրական 14 ժամ կը խլէր, ան սեռային ցանկութեան նշույլ անգամ չունէր եւ աւելի քան մէկ տարուան ընթացքին մէջ ամուսնական առաջաստը չը չաճախեց: Այդ դեռ բաւական չէ, անոր զզուանքը դէպի սեռային գործունէութիւնը այնքան մեծ էր որ ան, վախնալով թէ մի գուցէ կերպով մը զիջանի հրապուրանքին, իր կնոջը ստիպեց Եւրոպայի մէջ ճանապարհորդութիւն կատարել: Երկար ճանապարհորդութենէ մը չետոյ ան վերադարձաւ ճիշդ այն ժամանակ երբ այս դէպքը չայտնի եղաւ ինձ:

«Հիւանդն ինձ հաղորդեց որ կնոջ վերադարձէն չետոյ շուտով, աւելի պարտականութեան եւ անձնըրուիրութեան զգացումէն զրդուած քան անձնական ցանկութենէն, ան որոշեց մերձաւորութեան գործողութիւն կատարել, բայց փորձը կատարեալ անչաջող վախճան ունեցաւ. դրդիւր բոլորովին կը բացակայէր եւ ոչ մէկ հնարաւորութիւն կար զարթեցնելու ցանկութիւնը որ նիրհած էր այդքան երկար ժամանակ:

«Այսպիսի դրութիւն մը ի հարկէ չէր կարող ազդեցութիւն չունենալ անոնց տան չարկին մէջ այնքան ժամանակ թագաւորող խաղաղութեան եւ համաձայնութեան վրայ: Բացի այդ, հիւանդը կը վախնար որ կինը կարող էր անոր անգործութիւնը վերադրել կողմնակի չափազանցութիւններու, եւ ահա

այս մտածութիւններէն դրդուած՝ ան վճռած էր բըժըշկական օգնութիւն որոնել իմ մօտ իր հիւանդութեան համար:

«Քննելով ես գտայ որ անոր սեռական անդամներու գործունէութիւնը եւ կազմութիւնը կատարելապէս կարգին էին: Առնանդամը բոլորովին բնական էր, ամորձիները մեծ մեծ, կարծր եւ ամէն տեսակ փոփոխութենէ ազատ: Երազագիճութիւն կը պատահէր ամիս անդամ մը, սովորաբար հեշտասիրական երազներով, երբեմն ալ առանց անոնց: Առնանդամի լարումը մասամբ տեղի կ'ունենար դիշերը բաց առանց սեռական ամենաչնչին գրգռման: Ըստ երեւոյթին՝ այդ հետեւանքն էր ողնուղեղի արենայլութեան, որովհետեւ, հիւանդը սովորութիւն ունէր մէջքի վրայ քնանալու եւ միզափամփուշտը ձգուած կ'ըլլար մէզով: Ան կը հաւատացնէր որ եթէ անգամ մը գրգռու տեղի ունենար, առանց դժուարութեան կարող պիտի ըլլար մերձաւորութեան գործողութիւնը մինչեւ վերջ հասցնել եւ սոսկալի անհամբերութեամբ կ'սպասէր այն վաչրկեանին երբ վերջապէս ցանկացած գրգռու նորէն երեւան պիտի դար: Ան իր հաւաստիացումը կը հիմնէր այն փաստի վրայ որ մինչեւ այդ շրջանը ան միշտ չափաւոր կեանք վարելով՝ լիուլի կերպով կ'իշխէր ոչ միայն իր սեռական ցանկութեան այլեւ սեռական ընդունակութեան:

«Ես անոր հետ ունեցածս չաջորդ խօսակցութենէն համոզուեցայ որ ան իր կորսնցուցած սեռական գործունէութիւնը վերականգնելու հոգին մէջն էր մի միայն անոր համար որ տարօրինակ դրութեան

մը մէջ կը գտնուէր եւ վերջապէս կը վախնար որ այդ հանգամանքը խիստ հետեւանքներ պիտի ունենար իր առողջութեան եւ ընտանեկան բաղդաւորութեան նկատմամբ: Գալով սեռական ցանկութեան, այդ բանին, ճշմարիտ որ, ըստ երեւոյթին ոչ մէկ հետք մնացած էր:

«Լրջութեամբ խորհելէ չետոյ իմ հիւանդին լայտնեցի թէ չաջորդութեան չոյս կարելի է ունենալ միայն ան պարագային երբ ան իր գործունէութենէն խսպառ կը հրաժարի եւ կը նուիրուի բացառապէս իր կնոջ ներկայութեան: Միեւնոյն ժամանակ ես անոր ծոծրակին ելեքտրական հոսանք անցուցի, ուզելով հակադրելու առաջ բերել եւ ազդեցութիւն գործել հիւանդի հոգեկան դրութեան վրայ: Այն շարժառիթները, որոնք զայն իմ մօտ բերին, այն աստիճան ստիպողական էին որ ան չը վարանեց իսկոյն եւեթ իր խիստ օգտակար հասարակական դիրքը զոհել եւ հնազանդիլ նշանակուած բժշկութեան: Քաղաքի շրջականեր ան փոքրիկ ամարանոց մը գնեց եւ իր կնոջ հետ այն տեղ տեղափոխուեցաւ: Իմ պատուէրի համեմատ ան մերձաւորուելու ոչ մէկ փորձ ըրաւ եւ համբերութեամբ սեռական ցանկութեան դարթնումին կ'սպասէր: Առողջանալը իրօք երկար սպասել չը տուաւ. երեք ամսէն չետոյ ան սկսաւ ըզգալ գրգռու որ այնքան երկար ժամանակ անոր համար օտար էր: Ծնորհիւ իր կնոջ խոհեմութեան, որմէ ես կարեւոր չը համարեցի գործի դրութիւնը ծածկել, եւ որը համոզուելով իր ամուսնոյ սիրոյն, փորձութեան ամբողջ ժամանակամիջոցին հազուադիւր հոգացողութեամբ եւ խոհեմութեամբ կը վար-

ուէր անոր հետ, հիւանդի առողջանալու շրջանին մէջ երբէք ընդհատուած տեղի չունեցաւ եւ ան շուտով վերջնականապէս առողջացաւ»։\*

Սեռական անտարբերութիւնը շատ անգամ երեւան կուգայ նաեւ այն մարդոց մէջ որոնց ամբողջ գործունէութիւնը կեդրոնացած է իրենց գործնական զբաղմանց, ինչպէս առեւտուրին վրայ։ Այս մարդոց մէջ վաստակի ծարաւը այնքան մեծ կ'ըլլայ որ անոնք իրենց առեւտուրէն ու հաշիւներէն դատ երբէք ուրիշ բանի վրայ չեն մտածեր։ Ոչ գիտութիւն, ոչ գեղարուեստ եւ ոչ թատրոնը զիրենք կը հետաքրքրէ։ Իրիկուններ երբ տուն կուգան պարզապէս կը պառկին որ քնանան։ Քունն ալ հանդիստ չեն կրնար վայելել չաճախ, որովհետեւ, այնքան լողնած ու ջարդուած կ'ըլլան, միտքը այնքան դրաւուած կ'ըլլայ բորսայի հաշիւներով որ քուն չի գար իրենց աչքը։ Հասարակական բոլոր չարաբերութիւնները եւ հաճուցները անոնց համար կորսնցուցած են իրենց հմայքը։ Մէկ ալ չանկարծ կը տեսնեն որ իրենց սեռային ցանկութիւնը կորսուած է, որուն համար կը վրդովին ու սաստիկ կը տխրին։ Այնուհետեւ զանազան վհատեցուցիչ մտքեր կ'անցնին իրենց գլխէն։ Կը վախնան մի գուցէ սեռային անդորութեան կաթուած հետեւի, ի՞նչ պիտի ըլլայ իրենց հարստութիւնը եթէ անժառանգ մեռնին, կամ առանց ընտանեկան օճախի եւ համակրելի կնոջ ըն-

\* «Երիտասարդութեան Մեղքեր», Վիլիամ Համմոնդ, Թրգմ. Արայ Արաչեան։

կերակցութեան մնան եւ այլն, եւ այլն։

Կը պատահի երբեմն ալ որ կարգ մը բոլորովին առողջ մարդիկ կ'ունենան նօրմալ սեռային ցանկութիւն եւ կարող են մերձաւորութիւն կատարել բաց երբ կը պատրաստուին գործողութիւնը կատարելու, չանկարծ իրենց մտքէն ծիծաղելի խորհուրդ մը, կամ տարօրինակ գաղափար ու միտք մը կ'անցնի ու այդ միտքը իրենց ուշադրութիւնը սեռային գործողութենէն մէկդի դարձնելով ամբողջ փառաւոր տրամադրութիւնը կը ցրուէ եւ զանոնք այդ պահուն անգոր կը դարձնէ։ Այսպէս՝ երիտասարդ ձեռնածուի մը համար կը պատմուի ամէն անգամ իր երեկոյեան ներկայացուած աւարտելէն չետոյ սաստիկ սեռական ցանկութիւն կ'զգար, բաց ոչ մէկ անգամ ան կարողացած էր իրեն բաւականութիւն տալ, որովհետեւ, ճիշդ մերձաւորութեան ժամանակ անոր գլխէն տեխնիկական որեւէ նոր ձեռնածութիւն մը կ'անցնէր եւ անողորմ կերպով կ'ոչնչացնէր թէ՛ ցանկութիւնը եւ թէ՛ ուժը։

Ժամանակաւոր անգորութիւն սեռային անտարբերութեան ձեւով՝ կ'ունենան երբեմն նաեւ մարդիկ որոնք անցեալին մէջ շուտաւ ու ապօրէն կեանք մը ապրելէն չետոյ ազնիւ ու մաքուր կնոջ մը հետ կ'ամուսնանան ու ապա այդ բանին համար խղճահար կ'ըլլան։ Համմոնդ հոգեկան այսպիսի վիճակ զեղեցիկ կերպով լուսարանող դէպք մը կը պատմէ որ խիստ հետաքրքրական ըլլալուն պատճառաւ ես ինձ

«Ամուսին մը», կ'ըսէ ան, «որ մինչեւ պսակը զգայական բաւականութիւններու դիցուհու սեղա-

Թույլ կուտամ զաչն մէջ բերել այս տեղ : նին ահագին զոհեր բերած էր , բայց ոչ մէկ ապացոյց ունէր իր սեռական ընդունակութիւնը քաջքայնուած կամ դէթ միայն նուազած համարելու , տեսաւ որ պսակի ու հետեւեալ գիշերները ամենեւին ուժ չունէր իր ամուսնական պարտաւորութիւնները կատարելու : Կինը գեղեցիկ էր , խելօք եւ զարգացած , քնքուշութեամբ կը սիրէր իր մարդը եւ ամուսնութեան օրէն ի վեր կտրեց իր բոլոր նախկին կապերը : Սաստիկ ցանկութիւնը մարդը կ'աչրէր բայց մօտենալու փորձ ընելուն պէս ցանկութիւնը վայրկենապէս կը ցնդէր այն մտքի ազդեցութեան տակ որ իր կողմէն սրբապղծութիւն պիտի ըլլար ստիպել այդպիսի անմեղ , գեղեցիկ կնոջ ծառայելու կըքի ստոր զգացումներու բաւականութեան : «Ան աչնքան լաւ է որ ես անոր արժանի չեմ» , կ'ըսէր ան ինքնիրեն : «Ես պէտք էր այնպիսի կնոջ վրայ պսակուէի որ պատանի ըլլար այդպիսի նպատակի համար , բայց աւելի լաւ պիտի ըլլար եթէ ես ամուրի մնայի եւ ապրէի առաջուան նման» : Ան շատ անգամ կը կրկնէր այս եւ մէկ անգամ , սաստիկ ինքնամեղադրութեան ժամանակ , ան այցելեց իր նախկին բարեկամուհիներէն մէկը եւ շուտով համոզուեցաւ որ հին բարեկամը անդաւաճան կերպով կը ծառայէր իրեն : Նորէն ան իր կնոջ հետ փորձ ըրաւ բայց դարձեալ անջաղութեան հանդիպեցաւ : Պսակի օրէն արդէն շարաթէ մը աւելի անցած էր եւ ան չուսահատած որ դեռ եւս պարտաւոր կը մնայ իր կնոջ առաջ , որ ոչ մէկ անգամ ամուսնական փառաքչանք փորձած չէր , դիմեց ինձ : Այս դիպուածը առանձին դժուարութիւն

չէր ներկայացներ : Ես անոր խորհուրդ տուի քիչ մը իր կինը ցած բերել այն պատուանդանէն որուն վերայ ինք զաչն դրած էր , մոռնալ հրեշտակային անբրծութիւնը եւ մաքրութիւնը եւ անոր մէջ տեսնել կին մը որ կը ցանկայ իր հետ վերաբերուին այնպէս ինչպէս ուրիշ պատուաւոր կանանց հետ : Ան խոստացաւ հետեւիլ իմ խորհուրդին բայց հետեւեալ առաւօտ դարձեալ անմխիթար կերպով լուր բերաւ ինձ նոր անջաղութեան մասին : Ան ամէն ջանք ի գործ դրած էր , քանի մը անգամ լարում ունեցած էր եւ բաւական զօրեղ կերպով , բայց ճիշդ այն ատեն երբ փորձած էր մօտենալ , սեռական գրգիռը կախարդական գաւազանի նման անհետացած էր : «Ան չափազանց լաւ է» , կը գանգատէր մեր հիւանդը — «չափազանց եթերային է այնպիսի զգայական բնութեան մը համար ինչպէս իմս է : Ես չը կարողացայ այսքան ստոր գործով անոր հրաշալի մարմինը նսեմացնել» , եւայլն :

«Անոր մէկ քանի խօսքերէն ես հետեւցուցի որ կինը աչնքան պղատոնական էակ մը եղած չէր ինչպէս որ ան կը նկարագրէր եւ որ անոր հետ խօսելով ես կարող էի գործը վերջացնել փոխադարձ բաւականութեամբ : Ուստի ցանկութիւն չայտնեցի կնոջ հետ տեսնուիլ եւ անոր հաւանութիւնը ստանալով ճաշէն չետոյ այցելեցի կնոջն այն հիւրանոցին մէջ ուր անոնք ամուսնական ուղեւորութեան ժամանակ իջեւանած էին : Ես համոզուեցայ որ գործ ունիմ չիրաւի շատ քնքոյշ բայց ոչ ամբարտաւան անձի մը հետ եւ որ սիրով պիտի աջակցի որպէս զի իր մարդը փափուկ դրութեանէն ազատէ , որու բնաւորութեան

մասամբ մը ծանօթ էր :

«Ես անկէ խնդրեցի որ իր մարդու հետ քիչ մը ազատ ու բաց ըլլար . այս խորհուրդին հետեւելով կարելի պիտի ըլլար կատարեալ չաջողութիւն ունենալ : Միեւնոյն ժամանակ նախազգուշացուցի որ երբէք ցոյց չի տայ թէ ստացած հրահանգով կը դործէ , այլ ընդհակառակն , այնպէս ցոյց տայ թէ ինքը իմ պատուէրները կ'արհամարհէ : Մանրամասները բնականաբար ես թողի անոր կանացի խոհեմութեան : Իմ ծրագիրը փայլուն հետեւանք ունեցաւ , ինչպէս անոր ամուսինը ինձ չայտնեց հետեւեալ օրը : Ամենամեծ ուրախութեան ժպիտը երեսին «կինս ինձ չայտնեց» , ըսաւ ան , «որ իրեն ոեւէ բժիշկ պէտք չէ , որ ինքը կրնայ բանը ուղղել : Մնացեալը դադարիք է որ կը մնայ իմ եւ անոր մէջ , բաց կերպնում որ այս գիշերը . . . : Հարկ չը կայ աւելցնելու որ այլեւս ոեւէ տխուր թիւրիմացութիւն տեղի չունեցաւ» :\*

Ամորձիներու ծիւրումը եւ բացակայութիւնը անկասկած կարող են պատճառել սեռային ցանկութեան կորուստ թէեւ ոչ միշտ , որովհետեւ , եղած են շատ մը ներքիններ որոնք սեռային ցանկութեան հետ պահած են նաեւ առնանդամի չարման կարողութիւնը եւ ընդունակ եղած են մերձաւորութիւն : Այս իրողութիւնը չայտնի էր Հոովմի ազնուական դասակարգի կանանց որոնք , չուզենալով չլի մնալ , ներ-

\* «Երիտասարդութեան Մեղքեր» , Վիլիամ Համմօնդ , թրգմ . Արայ Արայեան :

քինիներ կը պահէին եւ անոնց հետ աներկիւղ սեռային յարաբերութիւն կ'ունենային : Որ ամորձիներու ծիւրումը առաջ կը բերէ սեռային ցանկութեան կորուստ , ապացուցուած է շատ մը դէպքերով որոնք բժիշկներ ժամանակ առ ժամանակ տեղեկագրած են :

«Լարէյն օրինակ կը բերէ երիտասարդ զինուոր մը որ կը ծառայէր Նիւյուտտի մէջ եւ որու ծոծրակին մահակով մը զարկած էին : Շուտով բորբոքում մը սկսած էր որ , ինչպէս կը կարծէին , սահմանափակուած էր միայն ուղեղիկին մէջ և ի վերջոյ սկսած էր այն աստիճան բուժուիլ որ հիւանդը կարելի եղաւ Ֆրանսա դրկել : Շատ մը տարիներէ յետոյ ան նորէն Լարէյնին դիմեց եւ վերջինս անոր սեռական դործարանները մէկ տարեկան երեխայի դործարաններէն ոչ մեծ գտաւ : Առնանդամի լարում չը կար , սեռական ցանկութիւնը բոլորովին անչայտացած էր» :\*

Այս տեղ կարելի է կասկածիլ որ ուղեղի խանգարումը խոշոր բաժին մը ունեցած է մարդու սեռային ցանկութեան կորուստին մէջ : Գիւրքօվէ չըբի տեղեկագրած հետեւեալ դէպքը ցոյց կուտայ գոնէ որ այդ պարագային ուղեղ երբէք մաս ունեցած չէ այդ բանի մէջ եւ այդ կասկած կարող չէ գոյութիւն ունենալ :

\* «Երիտասարդութեան Մեղքեր» , Վիլիամ Համմօնդ , թրգմ . Արայ Արայեան :

«Վիճննաչի համալսարանին մէջ պաշտօնավարող իմ նախկին պաշտօնակիցներէն մէկը պարտա-

ւորուեցաւ իր ամորձիներէն մէկը կտրել տալ, որովհետեւ յամառ բորբոքում մը տեղի ունեցած էր մէջը որ առաջ եկած էր միզկատապէն. անկէ վերջ երկրորդ ամորձին բոլորովին ծիւրեցաւ: Խիստ արգահատելի գեղեցկագէժ, վաչելչակազմ ու համակրելի երիտասարդը դեռ քանի մը տարի մերձաւորութիւն կատարելու ընդունակութիւնը պահեց, անոր համար ինքզինք բաղդաւոր կը համարէր եւ կը սիրէր կանանց հետ ըլլալ եւ զանոնք փաղաքշել: Բայց ան քիչ անգամ ի վիճակի կ'ըլլար մերձաւորութիւն կատարելու եւ երեք տարի վերջ կանանց ներկայութենէն իսպառ քաշուեցաւ եւ տակաւ առ տակաւ տխուր եւ մենակեաց դարձաւ մինչեւ օր մը Վիճննաչէն անհետացաւ, իր սերտողութիւնները դադրեցուց եւ իր մասին մեղմէ ոեւէ մէկին լուր մը չը ղրկեց: Այս դէպքը խիստ կենդանի կերպով մնացած է իմ չիչողութեան մէջ եւ շատ չստակ կերպով կը լուսաբանէ առնական զօրութեան ազդեցութիւնը անհատի ամբողջ էութեան վրայ»: \*

Ամենէն աւելի սեռաչին չեղաչըջուած, թիւր զգացումները եւ ծուռ ունակութիւններն են որ մարդուն մէջ նօրմալ սեռաչին ցանկութիւնը կը չըքացնեն: Այդ ունակութիւններէն յիշուելու արժանի են այս տեղ երկու գլխաւորները, ձեռնամուրթիւն

\* «Մեր Ժամանակի Սեռաչին կեանքը», Բլօխ:

եւ արուագիտութիւնը:

«Օտոնականը», կ'ըսէ Համմօնդ, օգնութեան կը կանչէ իր երեւակաչութեան ամբողջ անսպառ հարըստութիւնը, անով զգացած բաւականութիւնը ուժեղացնելու համար եւ ասոր հետ միասին անընդհատ կ'աշխատի վերջինս դեռ աւելի զօրացնել դաշթակղեցնող գրքերու ընթերցանութեամբ եւ պոռնկագրերական պատկերներ դիտելով: Ան բնականաբար շուտով կը համոզուի որ երեւակաչութեան տեսարանները, որոնք երբեմն բաւական էին անոր զգայականութիւնը դրդուելու, աստիճանաբար իրենց ուժը կը կորսնցնեն, ճիշտ այնպէս ինչպէս որ սուր անդական նիւթը երկար դործածութենէն չետոց վերջ ի վերջոյ կը դադրի հաճուցական զգացում պատճառելէ: Ան կ'ստիպուի ուրեմն հետզհետէ աւելի հեշտասիրական եւ անբնական դրութիւններ հնարել եւ ահա, վերջապէս ան կը տեսնէ որ մերձաւորութեան սովորական գործողութիւնը իրեն այլեւս բաւականութիւն չի տար, որովհետեւ, իրականութիւնը անոր սպասածէն շատ հեռու է: Ան իրապէս կանանց նկատմամբ անզօր կը դառնայ, ամենաչնչին պահանջ անգամ չի զգար սեռական չարաբերութիւն ունենալու, այլ ամբողջովին անձնատուր կ'ըլլայ իրեն իշխող ձեռնամուրթեան կրքին, որովհետեւ, լիովին կը խոստովանի իր երեւակաչութեան ուժի գրեթէ անսպառ օժանդակ միջոցները որոնք ամէն անգամ նորանոր ցանկութիւններ կը ծնեն իր մէջ: Այսպիսի մարդիկ կանանց հետ հաղորդակցութիւն ունենալէն հեռու կը փախչին եւ չաճախ կը դառնան իսկական

կնատեացններ : Այս ախտով գրաւուելու սովորական վախճանը կ'ըլլայ սեռական ցանկութեան կատարեալ կորուստ» :

Ձեռնամուկութենէն զատ բնական սեռական գործողութեան կը փոխարինեն ուրիշ աւելի անբնական գործողութիւններ որոնց մէջը իբրեւ ամենէն ակնշատնին ու տարածուածը պէտք է չիշել արուագիտութիւնը : Այս մուկութիւնը երբեմն երեւան կուգայ մարդուն մէջ շատ կանուխ հասակէ մը եւ այդ պարագային կարելի է նկատել զայն իբրեւ բնածին հիւանդութիւն մը : Հիւանդը ինքը չաճախ գիտակից է իր մուկութեան անբնական ու զգուելի բնութեան եւ կուզէ հրաժարիլ անկէ բաց չի երնար դիմադրել անդիմադրելի բնագրին , իր ախտաժէտ մղումներէն կը քշուի ան ինչպէս ճանճը կը քշուի հովէն : Աւելի չափահաս մարդոց մէջ այս ախտը երեւան կուգայ իբրեւ հետեւանք անոնց ցոփ կեանքին : Ասոնք իրենց կեանքը սեռային չափազանցութիւններով աչնքան կը մաշեցնեն որ բնական սեռական գրգիռը աչլեւս կը ջնջեն եւ դիմում կ'ընեն նորանոր ձեւերու եւ հրնարքներու իրենց չոզնած երեւակալութեանց եւ չեղաշրջուած ախորժակներուն բաւականութիւն տալու համար : Այս տեսակ մարդիկ բնական սեռական ցանկութիւնը բոլորովին կորսնցնելով զիրար կը գաղափարացնեն , կնոջ եւ էրկան գերբեր կ'ստանձնեն եւ չաճախ ամենաանկեղծ ու խորին սէր կը տածեն իրարու հանդէպ :

Վերը չիշուած անգորութեանց բժշկութիւնը գլխաւորապէս հոգեկան պէտք է ըլլայ եւ կը պա-

հանջէ բաւական շատ տակտ : Այն տեղ ուր ցանկութիւնը բացակայ է մի միայն մտաւոր գործունէութեան եւ գործնական պարապմունքներու մէջ ընկղմելով , հիւանդը պէտք է իր միտքը իր գործէն հեռացնէ , ժամանակ մը հանգիստ ընէ եւ համակրելի կանանց ընկերակցութեան մէջ մտնէ : Մարդ պէտք է իր ամէն մէկ կարողութիւնը ժամանակին գործածէ եւ զայն գործօն վիճակի մէջ պահէ : Այդ կը պահանջէ լեցուն ու կատարեալ կեանքը : Մութ քարաչրնբու մէջ բնակող կենդանիներ կան որոնք պատեհութիւն չունենալով իրենց տեսողութիւնը գործածելու ժամանակ մը վերջ կը կուրնան եւ ալ չեն կրնար տեսնել , թէ եւ աչք ունին : Միեւնոջն է հոգեկան եւ Ֆիզիքական ուրիշ կարողութիւններու նկատմամբ : Եթէ մենք ունէ Ֆիզիքական գործարան մը , ինչպէս մկան մը , կամ հոգեկան կարողութիւն մը անգործ պահենք ժամանակ մը վերջ ան պիտի մաշի եւ բթանայ : Դարվին իր ծերութեան ժամանակ պատմած է ինք իր գիտական չոր հետազոտութիւններով այնքան տարուեցաւ եւ իր բնութեան գեղեցկագիտական կողմը աչնքան անմշակ թողուց որ վերջ ի վերջոյ բանաստեղծութեան եւ երաժշտութեան ճաշակը իսպառ կորսնցուց եւ ատոր համար ողբաց : Հաւասարակշիռ կերպով պէտք է մշակել հոգեկան ու Ֆիզիքական ամէն մէկ կարողութիւնը որպէսզի կեանքը լեցուն ու հաճելի ըլլայ : Կանանց ընկերակցութեան հաճուցը ի հարկէ բացառութիւն չը պէտք է կազմէ ասոր :

Դեղեր սեռային գրգիռ արթնցնելու համար կարող են որոշ չափով օգտակար ըլլալ : Այս դեղերուն



մէջ ամենէն գործածականներն են լուսածինը, ստրիկնինը, յովհաննաճանճը եւ այլն, որոնք բժշկին հրահանգներովը պէտք է գործածուին: Ամենէն կարեւորն է որ հիւանդը վստահութիւն եւ հաւատ ունենայ իր սեփական ուժերուն վրայ: Երբ խնդիրը կը վերաբերի սեռային չափազանցութիւններով մաշուած ու չեղաչըջուած զգացումներ ունեցող անհատներուն, աչն տեղ հիւանդը պէտք է ունենայ հանդիստ եւ հրաժարի իսպառ իր կործանարար մոլութիւններէն: Այսպիսիներուն կրնան օգնել հանդարտեցուցիչ դեղեր, ինչպէս ժահն, քափուր եւ այլն իրենց վատ մղումներէն ետ պահելու համար:

\* \* \*

Անդորութեան դէպքերու ճնշող մեծամասնութիւնը կը պատկանի այն տեսակին որուն մէջ առնանդամի լարումը եւ անոր ներմուծումը հեշտոցին մէջ անկարելի է: Այս է իսկական անդորութիւնը որ խիստ վատ կերպով կ'ազդէ հիւանդի ամբողջ հոգեկան ու ֆիզիքական կեանքին վրայ: Բաւական է որ երիտասարդ կամ չափահաս մարդը անգամ մը խմանայ իր սեռային զօրութեան կորուստը եւ ահա ան աչնպէս դժբաղդ պիտի զգայ ինքզինք ինչպէս զայն չը պիտի դժբաղդացնէր ուրիշ ոեւէ բանի կորուստը, մինչեւ անդամ եթէ ան խիստ թույլ ցանկութիւն կամ սեռային չարաբերութեան շատ քիչ պատեհութիւն ունենայ:

Այս տեսակ անդորութեան պատճառներն են նախ՝ սեռային չափազանցութիւններ որոնց մէջ առաջնա-

կարգ տեղ մը կը գրաւէ ձեռնամոլութիւնը, չետոյ կուգան երազազիճութիւն, սեռային գործարաններու, մասնաւորապէս ամորձիներու ծիւրումը, միգրատապ, սաստիկ պարարտութիւն եւ նիհարութիւն, մէջքուղեղային հիւանդութիւններ, կարգ մը դեղերու գործածութիւնը, անչափաւոր սեռային գրգիռ, երկիւղ եւ նախապաշարում:

Ձեռնամոլութեան վրայ խօսած ժամանակ ես արդէն ցոյց տուի որ այս մոլութիւնը խիստ կործանարար կերպով կ'ազդէ ջղային դրութեան վրայ եւ որ ան աւելի վնասակար է քան նօրմալ սեռային չափազանց մերձաւորութիւնը: Ըսի նաեւ որ ասիկա ճիշդ է մասնաւորապէս պատանիներու վերաբերմամբ որոնց սեռային գործիքը լրիւ կերպով զանազանաւորուած ու հասունցած է: Հիմա երբ բովանդակ ջղային դրութիւնը քայքայուած է սեռային գործիքը չի կրնար անմասն մնալ ընդհանուր աւերմունքէն, որովհետեւ, անոր պատշաճ գործունէութեան համար ջղային լաւ ուժ հարկաւոր է: Առնանդամի լարման ու մերձաւորութեան գործողութիւնները հետեւանքն ենք ջղային եւ մկանական ամենանուրբ կարգադրութեանց ու գործունէութեանց որոնց մէջ մաս եւ բաժին ունին ուղեղը, մէջքուղեղը, վազոմօտօր դրութիւնը, աչեւայլ ջիղեր, սերմնաբշտիկը, մանր ու խոշոր մկաններ եւ այլն: Այս գործարաններէն իւրաքանչիւրը պէտք է անվթար վիճակի մէջ ըլլայ, ապա թէ ոչ լարման ու մերձաւորութեան գործողութիւնը թերի կերպով պիտի կատարուի: Երբ այս ջիղերն ու մկանները, ուղեղն ու մէջքուղեղը արդէն չարաչար կերպով չօգնած եւ բոլորովին

ուժասպառ եղած են սեռային չափազանցութիւններով, այլեւս ընդունակ չեն ըլլար սեւէ նօրմալ սեռային գրգիռի պատասխանելու ու արդիւնքը կ'ըլլայ թուլութիւն: Անզօրութեան համար դանդաւոր դրութիւն բոլոր հիւանդներ կը խոստովանին որ իրենք շատ կանուխ հասակէ մը սկսեալ անձնատուր եղած են սեռային ամէն տեսակ վայելքի եւ չափազանցութիւններու: Համծօնդ կը պատմէ Նոր Մեքսիկոյի մէջ փոքր տղաներ կ'սկսին զուգաւորութիւն շատ կանուխ հասակէ մը, նոյն իսկ օրը ցերեկով փողոցներուն մէջ: Յետոյ այն տեղ ձեռնամոլութիւնը շատ տարածուած ախտ մըն է որ երբէք պարսաւանքի չի արժանանար: Նոր Մեքսիկոյի տղամարդիկ չայտնի էին իրենց անզօրութեամբ որուն համար դիմում կ'ընէին երգումներու եւ նախապաշարեալ արարողութիւններու, կատարուած պառաւներու կողմէն որոնք հռչակուած էին այս հիւանդութիւնը բուժելու արուեստով: Ուրիշ ճանապարհորդ հեղինակներ կը պատմեն արեւելեան շատ մը տաք երկիրներու, ինչպէս Նգիպտոսի, Պաղեստինի եւ Ճապոնի մէջ, տըղաչք ու աղջիկներ կ'սկսին մերձաւորութիւն շատ վաղ հասակի մը մէջ ու անուանի են իրենց չափազանցութիւններով ու ծուռ ունակութիւններով: Այդ բոլոր երկիրներու բնակիչները չայտնի են իրենց անզօրութեամբ եւ կարճ կեանքով:

Համծօնդ կը կարծէ որ չափազանց ձեռնաշարժութիւն աւելի հեշտ անզօրութիւն կը պատճառէ քան չափազանց մերձաւորութիւն հետեւեալ պատճառներով: Նախ՝ ձեռնամոլութեան համար աւելի դիւրութիւն եւ յարմարութիւն կայ քան մերձաւոր

րութեան համար: Բաւական է որ հիւանդը երկուրոյէ առանձնանայ եւ ահա գործողութիւնը կատարուած է: Եթէ ան ուզէ կարող է գործողութիւնը կրկնել օրական հարիւր անգամ: Մերձաւորութեան համար ի հարկէ երբէք այս տեսակ դիւրութիւն չը կայ: «Նրիտասարդ մը», կը գրէ ան, «22 տարեկան, արդէն անզօր, ինձ պատմեց որ ինք այդ սովորութեան ծանօթացած էր 9 տարեկան հասակէն, երբեմն ամիսներով օրը 10-12 անգամ ձեռնաշարժելով: Ոչ մէկ քաղաքակիրթ աշխարհի մէջ կարելի չէ այդպէս չաճախ բնական սեռական չարաբերութեան նուիրուել»: Երկրորդ՝ ձեռնաշարժութեան ժամանակ հոգեկան գործունէութիւնը մեծ ու կարեւոր դեր մը կը խաղայ: Լոկ Ֆիզիքական շփումը բաւական չէ արտադրելու ցանկացած զգայական գրգիռը, այլ ծնանականը պէտք է երեւակացութեամբ իր աչքի առջ նկարէ ամենահեշտասիրական տեսարաններ որպէս զի բաւականութիւն զգայ: Որոշ ժամանակ անցնելէն չետոյ ձեռնամոլը արդէն կը նկատէ որ կանանց սեռական գործարաններուն մերձենալը անզօր է իր մէջ սեռական գրգիռ արթնցնելու, որովհետեւ, իրականութիւնը խիստ վար կը մնայ իր այն երեւակայական բանդագուշանքներէն որոնք ինք ըստեղծած էր ձեռնաշարժութեան գործողութեան ժամանակ: Այս երկու պատճառներուն վրայ պէտք է աւելցնել եւ այն որ ծնանական մեքենական զօրաւոր գրգիռներով առնանդամի և միւս սեռական գործարաններու զգայականութիւնը այն աստիճան կը բթացնէ որ կանանց սեռական գործարաններուն մօտենալը երբէք անոր մէջ պէտք եղած հեշտասիրա-

կան գրգիռը չի արթնցներ : Օնանականը յաճախ ձեռնաշարժութեան գործողութեան մէկ ձևով եւ կամ նոյնատեսակ գրգիռներով չի չափենար : Ան մէկ ձեւէն կը չոգնի եւ նորանոր ձեւեր կը հնարէ որպէս զի կարողանայ բաւականութիւն տալ իր չոգնած ու ըզգայականութիւնը կորսնցուցած անդամներուն :

Թէ ինչո՞ւ վաղ հասակի մը մէջ սեռային չափազանցութեանց նուիրուիլը աւելի շուտ անդօրութիւն առաջ կը բերէ կարծեմ քիչ շատ ծանօթ պէտք է ըլլայ ընթերցողներուն : Այդ մասին արդէն ես քիչ մը բացատրութիւն տուած եմ ձեռնամուրթեան վրայ խօսած ժամանակ : Պատճառը տհաս ու անդարդացած գործարանները վաղաժամ կերպով պաշտօնի կոչելն է :

\* \* \*

Ասկէ առաջ ես տեղ մը ըսի սեռային չափազանցութեանց հետեւող յաճախագէտք երեւոյթներէն մէկն է երազագիծութիւնը : Այս տկարութիւնը կարելի է արդէն անդօրութեան նախակարապետը համարել եւ եթէ շատ կրկնուի այն, վատ կերպով պիտի ազդէ առողջութեան վրայ եւ պատճառ ըլլայ անդօրութեան շուտափուլ ժամանումին :

Նօրմալ երազագիծութիւն առողջ մարդու կեանքին մէջ տեղի կ'ունենայ սովորաբար ամիսը մէկէն մինչեւ երկու, երեք անգամ : Նոյն իսկ շաբաթը մէկ անգամ, կամ ինչպէս երբեմն կը պատահի քանի մը գիշեր իրարու վրայ երազագիծութիւն ունենալը երեք շաբաթուան ընթացքին, կարելի է նօրմալ սահ-

մանին մէջ համարել : Երբոր երազագիծութիւն տեղի կ'ունենայ ամէն գիշեր, մէկ գիշերուան մէջ քանի մը անգամ, նոյն իսկ ցերեկ ժամանակ, ամէն տեղ ու ամենաթեթեւ գրգիռին շնորհիւ, այն տեղ մենք արդէն գործ ունինք ախտաբանական վիճակի հետ :

Առողջ ջիղը արագօրէն եւ ցնցական կերպով չի չուզուիլ : Յամբ ու հանդարտ կերպով կը գրգռուի եւ իր գրգիռը կը հաղորդէ մկանին : Երբ սեւէ պատճառաւ ջղային թել մը կամ հիւսուածք մը չոգնած ու տկարացած է այդ ջիղի առաջին ախտանշաններէն մէկը կ'ըլլայ դիւրագրգռութիւն եւ ցնցական տկար գործունէութիւն մը : Տկարացած ջիղը շուտով արտաքին գրգիռներէն կ'ազդուի եւ իր գրգիռը իսկոյն ցնցական կերպով կը հաղորդէ մկանին : Արդիւնքը կ'ըլլայ մկանին կողմէն անկանոն, անզօր, ցնցական գործունէութիւն մը : Իբրեւ օրինակ, չիչենք ծերունիի դողդոջուն ձեռքերը, լուսնոտի ջրհաձգական գալարումները, ջլախտաւոր կնոջ պղտիկ ձայնէ մը կամ տեսարանէ մը ընդօստ վեր ցատկելը եւայլն : Միեւնոյն սկզբունքն է որ կը դեկավարէ աննօրմալ սերմնահոսութեան գործողութիւնը : Սեռային չափազանցութիւններ առաջ կը բերեն մէջբողեղի եւ սեռական գործիքի ջիղերու դիւրագրգիռ թուլութիւն եւ դերզուայութիւն : Սեղմիչ, փակիչ ջիղերն ու անոնց համապատասխանող մկանները բոլորովին կը կորսնցնեն իրենց ուժն ու տօնը ու կը գործեն շատ անկանոն, ցնցական կերպով : Արդիւնքը կ'ըլլայ այն որ մէջբողեղի ամենաթեթեւ գրգիռ եւ արենալիութիւն կը պատճառեն հիւանդին ցոլական սերմնահոսութիւն : Բաւական է որ այս տեսակ հիւանդ-

ներու մտքէն պզտիկ տուրական խորհուրդ մը անցնի, առնանդամի գլխիկը հազուստին քսուի, կոնսակի վրայ պառկին եւ կամ ուսերը եւ վիզը քիչ մը մերկացած կին մը տեսնեն եւ ահա սերմնահոսութիւն տեղի կ'ունենայ առանց նոյն իսկ առնանդամի լարման: Կարող է այս պատահիլ նոյն իսկ կղկղանքը կամ մէզը պարպելու ժամանակ: Եթէ այս ախտաժէտ վիճակը երկար շարունակուի առողջութիւնը գէշ կերպով կը քայքայուի, հիւանդը ուժասպառ կ'ըլլայ եւ ապա առաջ կուգայ կատարեալ սեռական անզօրութիւն:

Երագագիճութեան պատճառներ, սեռային չափազանցութիւններէն զատ, կրնան ըլլալ նաեւ երկարատեւ միզկատապ, միզուկի նեղութիւն, վերջնաղիքի հիւանդութիւններ, ալիօլականութիւն, շաքարախտ եւ մէջքուղեղային տկարութիւններ:

Որ ամորձիներու ծիւրումը եւ կատարեալ բացակայութիւնը կարող է սեռային անզօրութիւն եւ առնանդամի լարման անկարելիութիւն առաջ բերել, այդ կարծեմ չաչանի իրողութիւն մըն է եւ ընդունուած է բոլոր բժիշկներէն: Համմօնդ եւ ուրիշ գիտնականներ խիստ հետաքրքրական դէպքեր կը պատմեն ցոյց տալու թէ ինչպէս մշտապէս ձիով ման դալը կը պատճառէ ամորձիներու ծիւրում եւ ապա սեռական անզօրութիւն: Այս հիւանդութիւնը խիստ ընդհանուր էր Սկիւթացիներու եւ շատ մը հնդիկ թափառական ցեղերու մէջ որոնք չափազանց ձի նստելու սովորութիւն ունէին: Հիպպոկրատ կը գըրէ. «Ես պէտք է այնուհետեւ նկատեմ որ Սկիւթացիներու մէջ շատ անզօր տղամարդերու կարելի է պա-

տահիլ որոնք կանանց աշխատանքներ կը կատարեն եւ կանացի ալ ձայն ունին»: Խօստոմսիկ կը վկայէ որ ներկայիս կովկասեան թուրքերու մէջ շատ տղամարդիկ կան որոնք անզօր են ձի նստելու շնորհիւ:

Թէ ինչո՞ւ ձի նստիլը ամորձիներու ծիւրում կը պատճառէ տարբեր գիտնականներ տարբեր կերպերով կը բացատրեն: Շարէնգէտը կը կարծէ որ այդ առաջ կուգայ ձեռնամուրթենէն որուն այդ թափառաշրջիկ ցեղերը սաստիկ անձնատուր կ'ըլլային: Դատէմբերգ ուրիշ բացատրութիւն մը կուտայ: Ան անզօրութիւն կը վերագրէ շարունակական ճնշողութեան սերմնառասաններուն վրայ եւ առկէ առաջացած արեան շրջանառութեան խանգարման: Այնուհետեւ ամորձիներու ծիւրում առաջ կուգայ ուղեղիկի խանգարումէն եւ խղճամէն (mumps) որ տղայք ու աղջիկներ կ'ունենան չաճախ մանկութեան ժամանակ:

Սեռային անզօրութեան երրորդ եւ չորրորդ պատճառներն են սաստիկ պարարտութիւն եւ նիհարութիւն: Պէտք է կարծել պարարտ մարդոց անզօրութիւնը լոկ մեքենական բնույթ ունի, այսինքն մեծ փոր ունենալուն պատճառաւ չեն կրնար մերձաւորութիւն կատարել: Դժուարութիւնը կը կաշանայ այն բանի մէջ որ սննդական անկանոնութեան պատճառաւ անոնց նեարդային համակարգութիւնը խանգարուելով ուժերնին կը պակսի եւ այլեւս առնանդամի լարումը անկարելի կը դառնայ: Երբ պատշաճ բըժըշկութեամբ հնարաւոր կ'ըլլայ անոնց ծանրութիւնը պակսեցնել, անոնք իրենց սեռային զօրութիւնը կը վերստանան:

Սատրիկ նիհարութիւն նոյնպէս անգորութիւն առաջ կը բերէ շնորհիւ սննդական խանգարումին: Երբ ամբողջ մարմինը ուժասպառ է, սեռական գործիքը ի հարկէ գերծ չի կրնար մնար ընդհանուր թուլութենէն: Անիկա աւելի շուտ երեւան կուզայ երբ ամորձիները ծիրած են:

Երկարատեւ միզկատապ ուրիշ չաչտնի պատճառ մըն է սեռային անգորութեան: Միզկատապէն առաջացած երկարատեւ բորբոքումը, ըստ երեւոյթին, սեռային գործարաններու նեարդաչին համա-կարգութիւնը խանդարելով եւ անոնց գրգռականութիւնը բթացնելով առաջ կը բերէ անգորութիւն: Ես իմ հիւանդներուն մէջ հանդիպած եմ այսպիսի դէպքի մը: 30 տարեկան երիտասարդ մը երեք տարի առաջ ինծի դիմեց եւ չաչտնեց որ սեռային անգորութիւն ունի: Ֆանկութիւնը տեղն էր, կուզէր աղջիկներուն հետ սեռային չարաբերութիւն ունենալ բաց առնանդամի լարումը խիստ թույլ կերպով տեղի կ'ունենար ու չէր կրնար զաչն դոհացուցիչ կերպով ներմուծել: Ես անկէ իմացայ որ ան քանիցս միզկատապ ունեցած էր եւ շատ անգամ կը չաճախէր աղջիկներուն քով: Երբ ես հիւանդի սեռային անդամները քննեցի սեւէ անկանոնութիւն մը չը գտայ անոնց մէջ: Ես կարծեցի այս տեղ հաւանաբար գործ ունիմ ոչ միայն միզկատապէն այլեւ չափազանցութենէն առաջ եկած անգորութեան հետ, ուստի իրեն խորհուրդ տուի որ բաւական ատեն, գոնէ տարի մը աղջկան չերթայ, իր միտքը սեռային խորհուրդներէն բոլորովին հեռու պահէ եւ տաք ու պաղ, նաեւ ծովային լողանքներով ջանայ իր ուժերը լաւ մը

կազդուրել: Յետոյ տուի իրեն ստրիխնինի ոգեթըրմոց որմէ պատուիրեցի առնել 10—12 կաթիլ օրը երեք անգամ: Երիտասարդը խոստացաւ իմ պատուէրները պահել եւ զնաց: Գրեթէ ամիս մը վերջ դարձեալ եկաւ և յայտնեց որ իր վիճակը միևնոյնն է, չէր կարծեր որ բժշկութիւնը իրեն սեւէ նկատելի օգուտ մը տուած էր: Ես իրեն պատասխանեցի որ այդքան կարճ միջոցի մէջ այս տեսակ տկարութեան մը համար բարեփոխութիւն ակնկալել միամտութիւնն է, սէտք է աւելի երկար սպասէ մինչեւ արդիւնքը տեսնէ: Ես անոր ստիպումներուն վրայ ուրիշ աւելի ազդու միջոցներ ձեռք առի եւ սկսայ ինքս շարաթ երկու անգամ իմ պաշտօնատեղիին մէջ դարմանել զաչն: Շարաթը մէկ անգամ իր միզուկին մէջ երկաթեայ ձող կ'անցունէի մէկ անգամ ալ չառաջադեղձին մասաթ կուտայի: Իւրաքանչիւր գործողութենէն վերջ արծաթի բորակնատի 1—4000 զօրութիւն ունեցող լիտր մը լուծուածքով միզուկն ու միզափամփուշտը կ'ոռոգէի եւ սպա ամէն մասաթէն չետոյ աւելի զօրաւոր արծաթի լուծուածքէ մը 8—10 կաթիլ կը ներարկէի խորը, միզուկին մէջ: Ես իրեն առաջուան պէս պատուիրեցի որ աղջիկներէն խսպառ հեռու մնայ եւ սեռային գրգռումէ բոլորովին ազատ պահէ ինքզինք: Իրեն հաւատ ներշնչելու համար տուի իրեն ստրիխնինի, երկաթի եւ կուինինի էլիքսիրէն եւ պատուիրեցի առնել օրը երեք անգամ մէկ թէչի դգալ: Այսպէս ես պէտք էր դարմանը շարունակէի մինչեւ առնուազն հինգ ամիս: Անցաւ ամիս մը հիւանդը եւէ փոփոխութիւն չը նշմարեց: Երկրորդ ամսուան վերջը նոյնպէս, երրորդին նոյնպէս:

Այժմ հիւանդը բժշկութենէն ճանճրացաւ ըստ երեւոյթին ու իմ հսկողութենէն դուրս ելաւ: Կը հաւատամ սահալն որ այս հիւանդը հակառակ իմ պատուէրներուն կը շարունակէր աղջիկներուն քով յաճախել իր զօրութիւնը փորձելու համար եւ երբէք բաղձացուած հանդիստը չէր տար իր սեռական գործարաններուն: Այդպիսի պարագայի մը մէջ ի հարկէ կարելի չէր ցանկալի արդիւնքը ստանալ եւ մարդ իր անժողկալութեամբ բոլորովին ի դերեւ կը հանէր իմ աշխատութիւնները: Անցաւ բաւական ժամանակ մէկ ալ Դօկտօր Ուիտնին ինձ պատմեց որ ինք եւ Դօկտօր Կուշինգ որոշած են վիրահատական գործողութեամբ այս հիւանդի առնանդամի վրայի երակը կտրել դուրս հանել: Ասիկա անզօրութեան բժշկութեան վիրարութեան նոր կերպ մըն էր որուն արժէքը անոնք կուզէին փորձել հիւանդին վերայ ի հարկէ այս վերջինի կամեցողութեամբը: Վիրահատական գործողութիւնը կատարեցին բաց երբէք օգուտ մը չունեցաւ ան:

Անզօրութիւն առաջ բերող ուղեղային եւ մէջք-ուղեղային հիւանդութեանց մէջ ամենէն կարեւորներն ու յաճախ պատահողներն են խենդերու ընդհանուր թուլութիւն եւ մէջքուղեղի հալուածաչ: Կարգ մը դեղերու եւ նիւթերու գործածութիւնը, ինչպէս վերը չիշեցի, առաջ կը բերէ սեռային անզօրութիւն. ատոնք են մանիչ, ժահն, բորակ, քափուր, ալիօօլ, ծխախոտ եւայլն: Ալիօօլի առաջին ազդեցութիւնը զրգոխիչ է բաց շուտով ասոր թուլութիւն կը հետեւի: Որ դիմով մարդիկ չեն կրնար առնանդամի լարում ունենալ եւ մերձաւորութիւն կատարել, շա-

տերը արդէն դիտեն: Ասիկա ի հարկէ ժամանակաւոր անզօրութիւն է. երբ ալիօօլի ազդեցութիւնը ցնդի, մարդ նորէն կ'ստանայ իր զօրութիւնը, բաց ճիշդ է եւ ան որ անչափաւոր եւ երկարատեւ կերպով արեցութեան նուիրուիլը կարող է մարդուն մէջ առաջ բերել կատարեալ ու մշտատեւ սեռային անզօրութիւն: «Ծխախոտի եւ կանանց միջեւ», կ'ըսէ Դէ Գօնկուրտ, «հակամարտութիւն մը կայ: Մէկին ճաշակը կը նուազեցնէ միւսին համար եղած ճաշակը: Այնքան ճշմարիտ է այս որ կը քոտ Լօթորիօններ ընդհանրապէս ծխելէն կը հրաժարին, որովհետեւ, կ'զգան կամ կը հաւատան որ ծխախոտը կը նուազեցնէ իրենց սեռային ակտիւտիւնը եւ սիրելու ընդունակութիւնը»: Սուրճ, թէյ եւ օփիում նոյնպէս եթէ չափազանց գործածուին, սեռային զօրութիւնը կը պակսեցնեն ու մինչեւ անգամ կը ջնջեն:

Կարելի է ընթերցողներէն շատերուն զարմանալ թուի երբ ըսեմ անչափաւոր սեռային գրգիռն ալ ընդունակ է անզօրութիւն առաջ բերելու բաց այս գոնէ բնախօսութենէն տեղեկութիւն ունեցողներուն համար անքան ալ զարմանալի չէ: Չզային ոեւէ անչափաւոր գրգիռը միեւնոցն գործնական արդիւնքը կուտայ: Ասիկա նման է անքան որ մենք սաստիկ տաք եւ պաղ առարկաները չենք կրնար զանազանել, որովհետեւ, սաստիկ տաքութիւն եւ պաղութիւն նոյն տեսակ զգայութիւն առաջ կը բերեն մեր մէջ: Կամ աւելի ճիշդ՝ նման է անքան որ ձայնական սաստիկ բարձր նօթերը նոյնքան անխելի կը մնան մեր ականջին որքան ցած նօթերը: Մեր ջիղերը չեն կրնար ամէն աստիճանի սաստկութիւն ու-

նեցող գրգիռներուն պատասխանել: Երբ գրգիռը չափազանց ուժգին է մեր ջիղերուն համար, նոյնքան անպատասխան կը մնայ այն որքան չափէն աւելի թոյլ գրգիռը: Այսպէս՝ ինչպէս կարգ մը բժիշկներ վկայած են, վերին աստիճանի վաւաչոտ բնութեան տէր անձինք, չը նաչելով իրենց սեռական սաստիկ ցանկութեան, կարող չեն մերձաւորութիւն կատարել: Սովորական ժամանակ անոնց աննստապարտութեամբ զօրաւոր կ'ըլլայ, բայց ճիշդ այն բոլորին երբ կ'սկսին սաստիկ գրգռուիլ ու կ'ստանան մօտենալ, անդամը իրենց կը դաւաճանէ, չի լարուիլ եւ այդպէս անկարելի կ'ըլլայ դաչն հեշտոցին մէջ ներմուծել: Եթէ այսպիսիներ զօրեղ կամք ի գործ դնելով ինքզինքնին քիչ մը զսպեն, սաստիկ ցանկութիւնը փոքր ինչ սանձեն, յաջողութիւնը այն ատեն աներկբայ պիտի ըլլայ:

Երկիւղը, ինչ կերպով ալ առաջ եկած ըլլայ, կրնայ հեշտութեամբ առաջ բերել ժամանակաւոր եւ երբեմն նոյն իսկ տեւական սեռական անզօրութիւն: Կարծեմ չայտնի իրողութիւն է որ երկչոտ ու ժուժկալ մնացած երիտասարդներ պատկի առաջին դիշերը եւ անկէ վերջ քանի մը օր նոյն իսկ սեռական անզօրութիւն կ'ունենան շնորհիւ մերձաւորութեան գործողութեան նորութեան եւ անոր առթած շփոթութեան եւ երկիւղին: Հրէջ խմբի մը պատկանող պարոնի մը համար կը պատմուի որ շատ տարիներ առաջ դիշերը կատարելապէս անզօր կը դանկը ինքզինք, որովհետեւ, ամէն անգամ որ անկողին կը մտնէր կը վախնար մի դուցէ գինք հրդեհի կանչեն. այդ երկիւղը թոյլ չէր տար իրեն մերձաւորութիւն

կատարելու թէեւ սեռային զօրաւոր ախորժակ կ'ունենար: Յետոյ կայ ուրիշ տեսակ անզօրութիւն մը որ Բէտի անուանած է կարեկցութեան անզօրութիւն: «Երիտասարդ նորասպակ ամուսնեւր զիրար կը համբուրեն ու անուշ գուրգուրանքի մէջ իրարու հետ կը մըցին: Բայց երբ մարդը կը փափաքի իր իրաւունքը վայելել, կ'ինը անհաւատալի անձկութեամբ մը կը բռնուի եւ իր ամբողջ անդամներով կը դողայ, կը գալարուի, կը ճչէ եւ կուլայ: Մարդը կը չօգնի եւ ի վերջոյ երբ կ'ինը կը զիջանի եւ կը չօտարի անձնատուր ըլլալ իր բաղդին, մարդը արդէն անզօր է մերձաւորութեան իր բաժինը կատարելու»:<sup>\*</sup>

\* \* \*

Սեռային անզօրութեան այն տեսակը, որուն մէջ սերմը անհնար կ'ըլլայ հեշտոցին մէջ պարպել այնքան ալ հազուադիւր երեւոյթ չէ: Ասիկա աւելի շատ արդիւնք է սեռային անդամներու անկանոնութեան եւ աչլանդակութեան, բայց չաճախ կը պատահի նաեւ որ զուտ հոգեկան պատճառներ առաջ կը բերեն սոցն երեւոյթը: Ասիկա պզտիկ թերութիւն մը չէ, մանաւանդ երբ սերունդ արտադրելու խնդիրը միտ բերենք: Անիկա մերձեցման գործողութիւնը բոլորովին անկատար կը դարձնէ. մարդու եւ կ'ստանայ հեշտասիրական լիութի զգացումներէն խոշոր չափով մը կը պակսեցնէ: Այս անզօրութեան մէկ տեսակը կայ որ ժամանակի ընթացքին մէջ ինքնիրեն կը շրտ-

\* «Մեր ժամանակի Սեռային կեանքը», Բլոխ:

կըուի: Խօսքս բարոյականի տէր, երկար ատեն ժուժկալ մնացած այն երիտասարդներու մասին է որոնք մերձաւորութեան առաջին մէկ քանի գործողութեանց ժամանակ նախ քան առնանդամը հեշտոցին մէջ ներմուծելը կ'ունենան սերմնացատու: Պատճառը անոնց կուտակուած սեռայլին ցանկութիւնը եւ մէջքուղեղայլին ցոլական դրդիւնն է: Ասիկա կը նրմանի այն բանին որ երբ շատ անօթի մնացած մարդ մը կուգայ համեղ կերակուր մը ուտելու, անոր հոտէն նոյն խիւսկոյն մարդուն բերանը ջրով կը լեցուի եւ ստամոքսին հիւթը կը վազէ: Անցաւոր երեւոյթ մըն է այս որուն համար վախնալու պէտք չը կայ: Երբ երիտասարդը մերձաւորութեան գործողութիւնը արդէն քանի մը անգամ կատարած է եւ նոր փորձառութեանը վարժուած՝ սոյն թերութիւնը ինքնիրեն կը շտկուի:

Ուրիշ բան է երբ խնդիրը վերին աստիճանի վաւաշոտ եւ իրենց ուժը ցոփութեամբ վատնած, մէջքուղեղայլին թուլութիւն ունեցող մարդոց կը վերաբերի: Այս տեղ սոյն երեւոյթը արդէն ախտաբանական հանգամանք կ'ստանայ ու աւելի երկարատեւ կ'ըլլայ: Մենք արդէն տեսանք որ այս մարդիկ բաւական է որ կնոջ մերկ ուսերը տեսնեն որպէս զի խիւսկոյն անոնցմէ սերմ հոսի: Առնանդամի գլխիկի դերզգայութիւնը չաճախ առաջ կը բերէ միեւնոյն երեւոյթը: Ասիկա սովորաբար կը պատահի չափազանցութիւններով մաշուած եւ դիւրագրգիռ դարձած մարդոց մէջ, բայց ես կարծեմ անգորութեան այս տեսակը երեւան կուգայ նաեւ նեղաթլիփութիւն ունեցող բայց աչլապէս բոլորովին առողջ մարդոց

մէջ: Յայտնի է որ երկար թլիփը առնանդամի գըլխիկը շարունակ գոց պահելով՝ զայն վերին աստիճան զգայուն կը դարձնէ: Երբ երիտասարդը այս տեսակ առնանդամով մերձաւորուելու կուգայ, մերկացած, դերզգայուն գլխիկը հեշտոցին դպչելուն պէս շուտով մէջքուղեղէն իր զրկած դրդիւն պատասխան կը բերէ ու այդպէս տեղի կ'ունենայ վաղաժամ սերմնացատու:

Առնանդամի զանազան տեսակ աչլանդակութիւններ սերմը հեշտոցին մէջ թափուելուն արգելք կը հանդիսանան: Յիշեմ ասոնց մէջ չափազանց կարճ եւ փոքր առնանդամ, ապա ստորաթերութիւն եւ վերնաթերութիւն կոչուած տձեւութիւնները: Ստորաթերութեան մէջ միզուկը փոխանակ գլխիկին ծայրը բացուելու, կը բացուի առնանդամի ստորին մակերեսին վրայ: Վերնաթերութեան մէջ միզուկը կը բացուի առնանդամի վերին մակերեսին վրայ: Երբ բացուածքները բաւական ետ դետեղուած են յայտնի է որ սերմը այդ պարագաներուն մէջ չի կրնար հեշտոցին մէջ թափուիլ:

\* \* \*

Սեռայլին անգորութեան չորրորդ տեսակ մը կայ եւ, ինչպէս առաջ չիշեցի, այդ այն է որուն մէջ հիւանդը թէեւ առնանդամի լարում կ'ունենայ եւ զայն հեշտոցին մէջ կարող է ներմուծել, սոյն գործողութեան միջոցին սակայն ոեւէ հեշտասիրական զգացում չի ունենար: Ասոր պատճառը կամ այն է որ առնանդամ իր զգայնութիւնը կորսնցուցած է եւ ո-



եւէ հեշտասիրական գրգիռ չի կրնար հաղորդել վեր գլխուղեղին եւ կամ գլխուղեղին մէջ խանգարում տեղի ունեցած է ու առողջ, զգայուն առնանդամի վեր զրկած գրգիռները գլխուղեղը չի կրնար ընդուդունիլ եւ մեկնել իրրեւ հեշտասիրական զգացում: Ասիկա շատ անգամ առաջ կուգայ ցոփութեամբ բտլորովին մաշուած, հոգեկան նուրբ զգացումնին կորսնցուցած մարդոց մէջ, նման այն դէպքին որուն մէջ մարդ մը մէկ գիշերուան մէջ տասն անգամ մերձաւորութիւն ունենալէ չեսոց վերջին գործողութեան ժամանակ այնքան չոգնած կ'ըլլայ որ երբէք հաճոցք մը չի զգար անկէ:

Մտաւոր սաստիկ չոգնութիւն կրնայ միւսնոցն թերութիւնը առաջ բերել շնորհիւ այն իրողութեան որ մտաւոր չարիքանց գործունէութենէն չոգնած ու բթացած ուղեղը ընդունակ չի ըլլար հեշտասիրական ու գեղեցկագիտական ամէն տեսակ ախորժ ըզգացումները ընդունիլ եւ պատշաճ կերպով գնահատել: Ճիշդ ինչպէս մենք սաստիկ չոգնած ժամանակ մեր կերած կերակուրէն ոչ կրնանք կանոնաւոր համ առնել, ոչ ալ գայն լաւ մարսել:

\* \* \*

Սեռային անգորութեան բժշկութիւնը, իր գանազան տեսակներուն մէջ, թէ ընդհանուր պէտք է ըլլայ եւ թէ տեղական: Երբ առնանդամը թուլացած է շնորհիւ ցոփութեան եւ անժուժկալութեան պէտք է սեռային անդամներուն երկար հանգիստ մը տալ: Զօրութիւնը վերստանալու համար ասիկա ամենէն

կարեւոր և անհրաժեշտ պայմանն է: Երբ մենք մտքով ու մարմնով յոգնած ենք հանգստի չե՞նք կարօտիր ու չե՞նք ուզեր վազանց ունենալ: Միւսնոցն ճիշդ է նաեւ սեռային գործողութեանց նկատմամբ: Իր զօրութիւնը ցոփութեամբ կորսնցուցած հիւանդը պէտք է գոնէ տարի մը բացարձակապէս ժուժկալ մնայ: Կատարելապէս խաղաղ ու հանգիստ պահելու է նաև իր միտքը և ունէ սեռային բաներու վրայ մըտածելու չէ: Եթէ կրնայ ան դիւր մը, ծովեղերեայ հանդարտ տեղ մը կամ լեռները երթալ, միջավայրի փոփոխութիւնը եւ մաքուր օդը մեծապէս պիտի նըպաստեն իր կազդուրման: Կերակուրը պէտք է առատ ու սննդարար ըլլայ, հիւանդը պէտք է ալիօհօլէն, սուրճէն եւ ծխախոտէն հրաժարի: Քայքայուած ջղաջին դրութիւնը վերանորոգելու համար ընտիր միջոց մըն է սառն ջրով լողանքը: Կարելի է ամէն առաւօտ պաղ ջրով շփուիլ կամ ցողացիր գործածել փոխնիփոխ տաք եւ պաղ ջրով մէկ երկու վայրկեան: Լաւ են նաև յաճախակի տաք լողանքները: Խիստ կազդուրիչ են մասնաւորապէս ծովային լողանքները եւ երբոր հիւանդը ծովին մօտ կը գլուխը լաւ կ'ընէ եթէ ամէն օր աղի ջրով լողանք առնէ եւ ապա լողաց քիչ մը: Լողէն դատ հիւանդը կըրնայ նաև ամէն օր ուրիշ տեսակ թեթեւ բացօդեայ մարմնամարզ ընել:

Հիւանդը պէտք է հաւատ եւ ինքնալստահութիւն ունենայ իր սեփական ուժին վրայ: Երբ ան բժշկութիւնը հաւատ եւ կամք ունի, բժշկութեան գործը արդէն շատ կը դիւրանայ եւ բժիշկն ու հիւանդը նպատակին կէսին գրեթէ հասած կ'ըլլան:

Տեղական բժշկական միջոցներուն մէջ չիշատակութեան արժանի ամենէն կարեւորներն են յառաջագեղձի եւ սերմնարշտիկներու մասաթ, միզուկի թեթեւ դաղում եւ զննածոզով ընդլայնում, պաղ ջրով ոռոգում, տաք եւ պաղ նստալոգանք եւ ելեքտրականութիւն: Համմոնդ ելեքտրականութեան միջոցով ախտաբուժութեան խիստ չաջող դէպքեր տեղեկագրրած է բայց զգուշութեամբ պէտք է դործածել զայն: Հիւանդը ի հարկէ ասոր համար բժիշկին դիմելու է: Կը դործածեն դալվանացում, Փարազացում եւ Փրանկլինացում: Հոսանքը կ'ուղղեն մէջքուղեղին, ամորձիներուն եւ առնանդամին, երբեմն ալ ուղղակի միզուկէն ներսը:

Այն բոլոր դեղեր որոնց համար առասպելական զօրութիւններ վերագրած են անզօրութեան ախտաբուժութեան մէջ, աւելի հոգեբանական ու ժամանակաւոր ազդեցութիւնունին քան թէ իրական օգուտ մը: Շատ դեղեր առաջարկուած են անզօրութեան համար բայց անոնց մէջ ամենէն շատ դործածուողներն են լուսածինը, ստրիխնին, յովհանաճանճը եւ եօհիմբին: Յովհանաճանճը պէտք է դործածել շատ զգուշութեամբ, որովհետեւ, կարող է ան թիզափամփուշտի եւ միզուկի դրդում առաջ բերել: Ամենէն մատչելի ձեւը ողեթրմոցն է որմէ կարելի է առնել վեցէն մինչև տասը կաթիլ: Լուսածինը և ստրիխնինը աւելի վստահելի եւ արժէքաւոր են քան բոլոր միւսները:

Երագազիճութեան համար խիստ ձեռնտու են տաք եւ պաղ ջրով լոգանքներ, մասնաւորապէս նրստալոգանքը, լաւ սննդառութիւն, բացօդեայ կեանք

գիւղին եւ լեռնային օդին մէջ, մասաթ, ելեքտրականութիւն եւ ժահնային բաղադրութիւնները: Երագազիճութիւն ունեցողը պէտք է երբէք կոնակին վրայ քնանայ: Ասկէ խուսափելու համար հիւանդը հետեւեալ միջոցը կարող է ի դործ դնել: Անկողին երթալու ժամանակ իր մէջքին վրայ լաթ մը կը կապէ որու հանդոյցը կ'ուղղէ կոնակին կողմը: Երբ ան քունին մէջ կը դառնայ իր կոնակին վրայ, հանդոցը կոնակին սղմուելով կը ցաւցնէ զինք ու այդ պատճառ կ'ըլլայ որ ան վերստին դառնայ կողին վրայ: Այս տեսակ հիւանդներ քնանալու են կարծր անկողնի վրայ: Ամենէն լաւն է հաստ մաղէ անկողինը: Ելեքտրականութիւն և մասաթ կարող են բաւական օգտակար ըլլալ և կը դործածուին ճիշդ միկնոյն կերպով ինչպէս առնանդամի թուլութեան պարագային, միայն սա տարբերութեամբ որ հոսանքը առաւելապէս մէջքուղեղին կ'ուղղուի: Մէջքուղեղի ցուլական դիւրադրութիւնը մեղմացնելու համար բաւական ազդեցիկ է ժահնը իր զանազան ձեւերով: Ամենէն շատ դործածական բաղադրութիւնները ժահնային կալին և նատրն են:

Ես պէտք կ'զգամ ընթերցողին մտքին վրայ տըպաւորել սա կէտը որ դեղերն ու տեղական դարմանումի այլեայլ ձեւերը թէև, եթէ չիտակ կերպով դործածուին, ընտիր օժանդակ միջոցներ են անզօրութեան ախտաբուժութեան համար, աչտուամենայնիւ, ընդհանուր բժշկութիւնը իմ կարծիքով ասոնցմէ շատ աւելի դերակշիւ արժէք ունի եւ հիւանդը ինքը իր կամքով ու հաւատքով կարող է շատ բան ընել այդ դործին մէջ: Սեռային անզօրութիւն իր բո-

լոր ձեւերովն ալ, եթէ կապուած չէ Ֆիզիքական աշխարհակութեան եւ ծանր ախտաժէտ փոփոխութիւններու հետ, գերազանցօրէն ջղալին տկարութիւն ու խօթութիւն մըն է: Մէջքուղեղը, ջիղերը, վազո-մօտօր դրութիւնը սաստիկ չողնած ու մաշած կ'ըլլան, անոր համար հիւանդը դիւրագրգիռ ու վաւաշոտ կ'ըլլայ, շուտ սերմ կը հոսի եւ ի վերջոյ առնանդամը լարման կարողութիւնը կը կորսնցնէ: Սեռային դրութիւնը կարելի է մարդու ընդհանուր առողջութեան եւ կայտառութեան չափանիշը համարել: Երբ մարդ առողջ եւ առողջ է, ցանկութիւն ալ կ'ունենայ, առնանդամի ուժեղ լարում ալ: Երբ ան չողնած է եւ ուժասպառ, ոչ ցանկութիւն կ'ունենայ ոչ ալ առնանդամի կանոնաւոր լարում: Կարելի է աւելի առաջ երթալ եւ ըսել որ սեռային դործիքը մէկն է այն դործիքներէն որոնք ամենէն շուտ կ'ազդուին չողնութեանն եւ ամենէն առաջ ազդարար նշանը կուտան թէ Ֆիզիքը ջլատուած եւ տկարացած է:

Սեռային ինչպէս նաեւ ուրիշ տեսակ ջլախտաւորութեանց դէպքեր բժշկելու համար ամենաընտիր միջոցներ են հանգիստ, լաւ սնունդ, թարմ օդ եւ ջրարժութիւն: Հիւանդը ինքը եթէ հաւատք եւ կամք ունենայ կարող է այս միջոցներով հրաշալի արդիւնքներ ձեռք բերել: Ես պարտք կը համարիմ մասնացոյց ընել այստեղ օգտակարութիւնը տաք եւ պաղ լողանքներուն որոնց մասին հասարակութիւնը դեռ այնքան լսած չէ որքան թարմ օդի եւ հանգստի մասին: Զրարութիւնն այժմ բժշկականութեան ամենակարեւոր մասնաճիւղներէն մէկը եղած է եւ

պատուական գէնք մըն է մարդուն ձեռքին մէջ կըրուելու ջղալին ու հոգեկան շատ մը տկարութիւններու դէմ:

Անդօրութեան այն տեսակները, որոնց մէջ անհրնար է սերմը հեշտոցին մէջ դատարկել, կարօտ են նոյնպէս թէ տեղալին եւ թէ ընդհանուր բժշկութեան: Երբ հիւանդը սաստիկ վաւաշոտ է կամ չափազանցութիւններով մէջքուղեղը թուլցուցած է, պէտք է իր Ֆիզիքն ու ջղալին ընդհանուր դրութիւնը կազդուրէ թարմ օդով, հանդստով եւ լողանքներով, մասնաւորապէս պաղ ջրով: Եթէ հիւանդը նեղաթլիփութիւն ունի թլիփատութիւն ամենայն հաւանականութեամբ զինք իր նեղութեանն պիտի ազատէ: Երբ առնանդամը սաստիկ փոքր կամ կարճ է, ի հարկէ այդ տեղ բժշկութիւն չի կրնար օգնել: Վերնաթերութեան եւ ստորաթերութեան պարագաներուն մէջ կարելի է յաճախ վիրահատական դործողութեամբ թերութիւնը շտկել և հիւանդին օգնել: Ի վերջոյ պէտք է երբեմն առնել ժահնային խառնուրդները դիւրագրգիռութիւն եւ վաւաշոտութիւնը վանելու համար: Երբ հեշտասիրական զգացումը բացակայ է շնորհիւ մտաւոր սաստիկ դործունէութեան եւ սեռային չափազանցութիւններու, այն ատեն հիւանդը կը կարօտի դործի և միջավայրի փոփոխութեան եւ սպա երկար ու հաճելի հանգստի մը:

\* \* \*

Կնոջ սեռական անդօրութիւնը կարելի է բաժնել երեք տեսակներու որոնք բաւական սերտօրէն կը

համապատասխանեն մարդու անզորութեան տեսակներուն: Անոնք կը բնորոշուին սեռային ցանկութեան բացակայութեամբ, առնանդամը հեշտոցին մէջ ընդունելու անկարելիութեամբ ու ասպ հեշտասիրական զղացման բացակայութեամբ մերձաւորութեան դործողութեան ժամանակ:

Առհասարակ ընդունուած է թէ կինը աւելի պաղարիւն եւ ժուժկալ է սեռային կեանքի մէջ քան մարդը: Աղջկանց սէրը աւելի պղատոնական սիրոյ բնույթ ունի եւ անոնք երբեմն իսկական սեռական ցանկութիւն չեն գիտեր ինչ է մինչեւ ամուսնութենէն եւ նոյն իսկ տղարեւութենէն վերջը: Նայելով կարգ մը ձեռնհաս գիտողներու վկայութեան, սեռային ցանկութեան բնածին բացակայութիւնը կանանց մէջ անքան ալ հազուադէպ երեւոյթ չէ որքան մարդոց մէջ: Համեմոյն տեղեկադրած հետեւեալ դէպքը խիստ գեղեցիկ կերպով կը լուսարանէ կնոջ սեռական բնաւորութեան այս կողմը:

«Տիկին... արդէն երկու տարուան պսակուած, յայտնեց ինձ որ ոչ այդ ժամանակի ընթացքին մէջ ոչ ալ անկէ առաջ ինք երբէք սեռական ցանկութեան նշոյլ զգացած չէ: Քսանհինգ տարեկան, բալորովին բնական կազմուածքով, անպայման առողջ երիտասարդ կինը, բացի երախայ ժամանակ հանած քութիչէն, երբէք ծանր հիւանդութիւն մը ունեցած չէր: Դաշտանը սկըսած էր 16 տարեկան եղած ժամանակ ու անուհեւեւ միշտ կանոնաւոր կերպով շարունակուած էր: Կնաբիրը քննելով բոլորովին բնական դտայ, ձուտ-

րաններն ու արգանդը նոյնպէս թերութիւն մը չունէին: Սեռական դործողութիւնը երբէք ցաւ մը չէր պատճառեր անոր բաց տեղի կ'ունենար առանց հեշտասիրական ցանկութեան: Արտաքին սեռական դործարանները շօշափական գրգռմունքին արձագանք կուտային անպայման բնական կերպով: Հիւանդը ինձ չպտնեց որ ինք միշտ իր մարդու ցանկութիւններուն սիրով տեղի տուած է եւ աշխատած է, ինչպէս ինք կ'ըսէր, «նմանիլ միւս կանանց»: Իմիջի աչոյց զանազան արհեստական միջոցներ գործադրած էին անոր մէջ սեռական հաճոյք զարթեցնելու նպատակաւ, բայց ատոնք բոլորը ասպարէիւն եղած էին եւ միայն զգուանք առաջ բերած էին դէպի նման ձեռնարկութիւններ: Սիրելով իր ամուսին անամէն միջոցի կը դիմէր որ հաճելի ըլլար անոր եւ ի վերջոյ վճռած էր ինձմէ խորհուրդ հարցնել: Ես սակայն պէտք էր զայն հիասթափ ընէի, բացատրելով իրեն որ բժշկական գիտութիւնը այդպիսի հիւանդութեան դէմ անզոր է եւ որ միեւնոյնը պիտի ըլլար եթէ ան իր մագերու գոյնը փոխելու համար ինձ դիմէր: Բայց այս համեմատութիւնը միեւնոյն ժամանակ զայն ուսումնասիրելու իրաւունք տուաւ ինձ: Տոյց տուի որ մագերն ալ երբեմն չպտնի պատճառներով իրենց գոյնը կը փոխեն եւ հասկցուցի որ բնութիւնը մեզմէ ծածկուած շատ միջոցներ ունի որոնք թերեւս բժշկեն իր հիւանդութիւնը: Անոր հարցին, թէ կարո՞ղ է ինք չղանալ, դրական պատասխան տուի եւ իրօք 2-3 տարիէն չետոյ ան զաւակ մը ծնաւ: Անոր ամուսինը հաղորդեց ինձ որ ինք կընոջ մէջ աստիճանաբար կը նկատէր սեռական ցան-

կուլթիւն» : \*

Սեռային ցանկութեան բնածին բացակայութիւնը կանանց մէջ կարող է առաջ դալ նաեւ չալտնի ֆիզիքական պակասութիւններէ, ինչպէս ձուարաններու եւ արգանդի բացակայութենէն, չափազանց սղտիկ, անզարգացած կնարիւրէ եւայլն : Սեռային ցանկութեան ստացական բացակայութիւնը չաճախ երեւան կուզայ իբր հետեւանք զանազան հիւանդութիւններու եւ վիրահատութեան, ինչպէս օրինակ, կնարիւրի, ձուարաններու եւ արգանդի անդամատան գործողութեան : Կարգ մը վարենի ցեղերու մէջ կնարիւրը անդամատութեամբ դիտմամբ կը վերցրուի, իսկ արգանդի եւ ձուարաններու վերացումը արդէն շատ անգամ տեղի կ'ունենայ մեր օրերը իբր հետեւանք միզկատապի, ջրաբշտիկներու, ալլեւալ տեսակ խոցերու, ուռուցներու եւայլն : Անշուշտ ձուարաններու եւ արգանդի վերացումը կինը ամէն պարագայի տակ իր սեռային ցանկութենէն խապռ չի դրկեր : Հակառակ չիշեալ գործարաններու ստացական բացակայութեան՝ կանայք չաճախ կը պահեն իրենց սեռային ցանկութիւնը, բայց որ սոցն գործարաններու վերացումը կանանց սեռային ցանկութիւնը չաճախ նաեւ չալտնի կերպով կը նուազեցնէ եւ նոցն իսկ բոլորովին կը ջնջէ, ճշմարտութիւն մըն է որ կարելի չէ ուրանալ :

\* «Երիտասարդութեան Մեղքեր», Վիլիամ Համմոնդ, Թրգմ. Արայ Արայեան :

\* \* \*

Կանանց մէջ սեռային անզօրութիւնը աւելի շատ զուտ մեքենական բնույթ ունի եւ կը բնորոշուի առնանդամը ներս ընդունելու անկարելիութեամբ ալլեւալ տեսակ խոչընդոտներու պատճառաւ : Սոյն խոչընդոտներն են հեշտոցի բացակայութիւն, լիակատար կամ մասնակի կալնումը, անոր անցքի սաստիկ նեղութիւն՝ շնորհիւ կոնքի անբաւարար զարգացման կամ սեռային վերածոմներու, չափազանց խոշոր կնարիւր, ամօթաշուրթերու կցուածք, փղամորթութիւն, ջրային իջուածք (hydrocele), միզուկին մէջ բուսած մսի պտուկներ, սաստիկ պինդ կուսաթաղանդ, շուրթերու եւ հեշտոցին մէջ բոցն դրած զանազան վէրքեր եւ ի վերջոյ հեշտոցի դրդիւ :

Խիստ հազուադէպ բան է որ կինը հեշտոցէն բուրովին զուրկ ըլլայ ու այդպիսի դէպքերուն մէջ իհարկէ մերձաւորութեան խօսքը չի կրնար ըլլալ : Թէեւ վիրաբուժական գործողութեամբ երբեմն հրնարաւոր է հեշտոցի պէս բան մը շինել, բայց այդ տեսակ հեշտոցով առնուազն խիստ անգոհացուցիչ կերպով կարելի պիտի ըլլար մերձաւորութիւն կատարել եթէ երբէք զուգաւորուիլը հնարաւոր ըլլար : Աւելի չաճախ կը պատահի որ հեշտոցը բոլորովին կալնուած է գոց կուսաթաղանդով կամ կցուած մեծ ու փոքր շուրթերով : Այս դէպքերուն մէջ կարելի է վիրահատութեամբ թերութիւնը գոհացուցիչ կերպով շտկել եւ բանալ ցանկալի անցքը : Երբեմն կոնքը ոսկրային հիւանդութեանց պատճառաւ անբաւարար կերպով կը զարգանայ ու այն ատեն հեշտոցի

անցքը աչնքան անցուկ կ'ըլլայ որ անհնար կը դառնայ առնանդամի ներմուծումը անոր մէջ: Հեշտոցի անձկութիւն կարող են առաջ բերել նաեւ ոսկրային վերածուծները եւ ապա փափուկ մասերու անկատար զարգացումը: Վերջին գէպերուն մէջ կանխագիտութիւնը (prognosis) առհասարակ խիստ բարեյաջող է, որովհետեւ, բաւական հեշտ գործողութիւն մըն է ձեռքով, կամ չտակապէս պատրաստուած ճնշուած սպունգի եւ կարգ մը բոլսերու արծատէն շինուած ձողերով փափուկ մասերը տաք խիւսերով կակուղցընելէն վերջ, ձգել եւ աստիճանաբար անցքը աչնչափ լայնցնել մինչեւ կարելի ըլլայ դիւրութեամբ առնանդամը ներս ընդունիլ: Ընդլայնման այս գործողութիւնը զեղեցիկ կերպով կարող է կատարել մանկան գլուխը կնոջ ծննդաբերութեան ժամանակ: Շատ անգամ պատահած է անզարգացած, նեղ հեշտոց ունեցող կիներ, շնորհիւ չղութեան եւ ծննդաբերութեան, իրենց թերութենէն ազատուած են եւ ապա վայելած են երջանիկ կեանք մը:

Չափազանց խոշոր կնաբիր անախորժ խոչընդոտ մը կը հանդիսանայ կանոնաւոր մերձաւորութեան: Ասիկա աչնքան ալ հազուադէպ երեւոյթ չէ: Կը պատմեն կնաբիր աչնքան մեծ կ'ըլլայ երբեմն որքան մարդու առնանդամը, աչնպէս որ անոր տէրը կրնայ մարդու պէս ուրիշ կնոջ մը հետ զուգաւորուիլ: Շատ հեշտ գործ է երկար ու դուրս ցցուած կնաբիրը վիրահատական գործողութեամբ կտրել եւ զայն իր նօրմալ վիճակին դարձնելով անհաճոյ արդելքը վերցընել:

Մեծ ու փոքր ամօթաշուրթերը երբեմն հրէշային

մեծութիւններու կը հասնին որոնք նօրմալ մերձաւորութիւնը անկարելի կը դարձնեն: Այս վիճակը կը կոչուի փղամորթութիւն: Կը պատահի երբեմն ամօթաշուրթերը աչնքան երկար կ'ըլլան որ կը կախուին մինչեւ կնոջ ծունկերը: Քաղաքակիրթ ցեղերուն մէջ այս հրէշային երեւոյթը շատ հազուադէպ է բաց կարգ մը վայրենի ցեղերուն մէջ բաւական չաճախադէպ է ան: Կնոջ ամօթաշուրթերը անուհետեւ վայրը կարող են ըլլալ զանազան տեսակ վէրքերու, ուռոցներու եւ ջրային իջուածքներու որոնք նոցնպէս կանոնաւոր զուգաւորութիւն անհնար կը դարձնեն: Տղաբերութեան մը ժամանակ ես անգամ մը նկատեցի աղիքի իջուածք մը կնոջ մը աջ մեծ ամօթաշուրթին մէջ: Աղիքի իջուածքը առաջ բերած էր մօտաւորապէս երեք մատ երկար ու երկու մատ լայն ուռոց մը որ հեշտոցի անցքը դրեթէ բոլորովին գոցած էր եւ ես կարծեմ որ չաչտնի չափով արդելք կ'ըլլար անիկա հաճելի մերձաւորութեան մը: Բոլոր այս անկանոնութիւններն ու վէրքերը կարելի է բաւական գոհացուցիչ կերպով շտկել ու բժշկել վիրահատութեամբ եւ տեսակարար զեղերով ու դարմաններով:

Վերին աստիճանի ցաւոտ բաներ են միզուկին բերանը բուսնող կարունկը կոչուած մսի պտուկները որոնք շնորհիւ իրենց զգայուն եւ ցաւոտ հանգամանքին կարող են բոլորովին անկարելի դարձնել զուգաւորութեան գործողութիւնը: Վիրահատութեամբ կարելի է ասոնք ալ կտրել դուրս հանել եւ վերցնել անախորժ խոչընդոտը: Ի վերջոյ սեռային կատարեալ անդօրութիւն կարող է առաջ բերել կը-

նոջ մէջ աչն վիճակ որ կը կոչուի հեշտոցագրգիւտ, վագինիզմը (vaginismus) : Ասիկա թերեւս կանանց անզորութիւն ատաղացնող ամենէն չաճախադէպ երեւոյթն է որ կը բնորոշուի հետեւեալ ախտանշաններով : Հիւանդը կ'զգայ անտանելի դրգիւտ հեշտոցի պատերուն եւ չաճախ նաեւ ամօթաշուրթերուն մէջ : Հեշտոցի սեղմիչ մկանները ցնցական կերպով կը կծկին եւ հիւանդին կը պատճառեն անհնարին ցաւ : Ամենաթեթեւ ու պզտիկ առարկայի մը, ինչպէս փետուրի մը հպումը շուրթերուն ու հեշտոցին երբեմն բաւական է վրայ բերելու սոսկալի ցաւն ու դրգիւտը : Չննաձողի մը, մատի մը մուտքը հեշտոցին մէջ միեւնոյն բան առաջ կը բերէ : Երբեմն ցաւն ու դրգիւտը աչն աստիճան անտանելի կ'ըլլան որ կինը գրեթէ կը խենդենայ : Ան կը ջանայ իր սեռայլին մասերը քերելով հովացնել բաց օդուտ չունի, սոցն արարքը աւելի կը սաստկացնէ ցաւը : Ամբողջ գիշերներ հիւանդը շատ անգամ ցաւին ու դրգիւտին պատճառաւ չի կրնար քնանալ : Մերձաւորութեան խորհուրդն անգամ երկիւզ ու զգուանք կը պատճառէ իրեն : Անքնութիւնը, ցաւն ու դրգիւտը աչն աստիճան կը տանջեն հիւանդը մինչեւ անոր առողջութիւնը բոլորովին կը քայքայուի ու ան կատարեալ ջրախտաւոր մը կը դառնայ : Ի հարկէ հեշտոցագրգիւտի բոլոր դէպքերը այս տեսակ վերջաւորութեան մը չեն չանդիր : Հիւանդութեան զանազան աստիճաններ կան, ոմանք թեթեւ են, ոմանք ծանր : Անիկա սովորաբար երեւան կուգայ երիտասարդ ու ջղաչնոտ կիներուն մէջ որոնք սեռայլին գործողութիւնները նոր սկսած են : Ես իմ բժշկական ասպարէզին մէջ հեշտոցագրգը-

գիւտի միայն մէկ դէպք ունեցած եմ : Դէպքը կը վերաբերի երիտասարդ, ամուսնացած, երեւութապէս առողջ ու հաստակազմ կնոջ մը : Կիրակի օր մը կանչուեցայ այս կինը տեսնելու : Ան ինձ չայտնեց որ հեշտոցի սաստիկ դրգիւտ ունի եւ այդ պատճառաւ անհնար էր իր համար գիշերները քնանալ : Ես կընոջ դէմքին վրայ նկատեցի խոր անձկութիւն մը որուն մասնակից եղած էր նաեւ էրիկը : Երբ կինը քնեցի տեսայ որ մեծ ու փոքր շուրթերը սաստիկ քերուելէն ուռած ու կարմրած էին : Ուռած էին նոյնպէս նախադուռը եւ միզուկի բերանը : Քիչ մը կարմրած էին նաեւ հեշտոցի պատերը եւ բաւական թանձրացած էին բաց ուռէ խոշոր ուռոց կամ վէրք չը գտայ անոր մէջը : Կինը հինգ ամսուան չղի էր : Զուգաւորութիւն անկարելի էր կատարել :

Ես հեշտոցի պատերը արծաթի բորակնատի չորս առ հարիւր լուծուած քով ներկեցի եւ ապա չանձնարարեցի երկու լիտր տաք ջուրի մէջ մէկ թէյի դգալ կրէօլին խառնել եւ անով օրը երկու երեք անգամ հեշտոցը ոռոգել : Երեք շաբաթ վերջ կինը իմ քով եկաւ եւ չայտնեց որ իր վիճակը միեւնոյնն է, իմ չանձնարարած միջոցները երբէք օգնած չէին իրեն եւ թէ իր դրութիւնը արդարեւ վատ էր, գիշերները գրգիւտը աւելի սաստիկ կ'ըլլար որուն պատճառաւ երբէք չէր կրնար քնանալ : Ես իմ քով երկու փոքրիկ աման մէնթօյէն ու բորակէն շինուած բաղադրութիւն մը ունէի որ ինձ զրկած էին իրբե նմուշ Ես խորհեցայ այդ խառնուրդը կրնար օգնել կնոջ ուստի աչնոյցմէ մէկը իրեն տուի փորձի համար եւ պատուիրեցի երկու թէյի դգալ խառնել երկու լիտր տաք

Չուրիմէջ և անով դարձեալ շարունակել հեշտոցային ուղղումները: Երկու շաբաթ վերջ ան օր մը նորէն իմ մօտ եկաւ եւ ժպտադէմ չաչտնեց որ վերջին դեղը իրեն շատ օգնած էր: Չեմ գիտեր իրօք դեղը իրեն օգնած էր թէ հիւանդութիւնը արդէն պիտի անհետանար: Ինչ ալ ըլլար սակայն իրողութիւնը, ան ինձ պատմեց որ դեղը դործածելէն անմիջապէս վերջ հանդատութիւն զգաց, գրգիռը անհետացաւ: Հիմա եկած էր միւսնոյն դեղէն քիչ մըն ալ ուզելու, որովհետեւ, գրգիռը սկսած էր դարձեալ երեւան դալ թեթեւ չափով մը: Ես իմ քով ունեցած մնացեալ դեղը իրեն տուի և անկէ վերջ ալ այդ մասին իրմէն զանդատ մը լսած չեմ:

Հեշտոցագրգիռի պատճառները կարող են թէ տեղական ըլլալ և թէ ընդհանուր: Զդայնոտ կիներ, ինչպէս չիչեցի, աւելի ենթակաչ են անոր: Արդարեւ՝ նեարդաչին խառնուածքը պէտք է չիչել իրբեւ ընդհանուր պատճառը: Տեղական պատճառներուն մէջ յիշատակութեան արժանի են փափուկ մասերու փեռեկտումը, կարունկը, հեշտոցին մէջ դոյութիւն ունեցող ուռուցներ ու զանազան տեսակ վէրքեր, յղութիւն և ապա առնանդամի անհամաչափ մեծութիւնը եւ օնանականութիւնը:

Հեշտոցագրգիռը բժշկելու համար պէտք է նախ վերցնել ամէն տեսակ տեղական խանդարմունքներ որոնք կրնան անոր պատճառը ըլլալ: Կարունկը և ուռուցներ վիրահատական դործողութեամբ հեշտօրէն կրնան դուրս հանուիլ: Փեռեկտումը ու ցաւոտ մասերը պէտք է կատարեալ հանգիստ ունենան որպէս զի ամօքին ու կազդուրուին: Երբեմն կարելի չէ ու-

ևւէ տեղական չաչտնի պատճառ մը գտնել, կը թուի թէ այդպիսի պարագաներու մէջ ամբողջ խնդիրը կը կաշանայ նեարդաչին համակարգութեան խանգարման մէջ որու իսկական բնոյթը կարելի եղած չէ ճշգրտել:

Այսպիսի դէպքերու մէջ հիւանդ կիներ պէտք է իր ընդհանուր վիճակը կազդուրէ թարմ օդով, լաւ սնունդով եւ զօրացուցիչ դեղերով: Յաչտնի ջղաչնոտ կիներուն կուտան ժահնաչին բաղադրութիւններ նեարդաչնութիւնը պակսեցնելու համար: Հիւանդը պէտք է մերձաւորութենէն բոլորովին հրաժարի: Իրբեւ տեղական դարման կը դործածեն հետեւեալ միջոցները: Հիւանդ մասերը կ'օծեն կօկախին լուծուածքով օրը դոնէ երկու անգամ: Միւսնոյնի մասերը կ'օծեն նաեւ արծաթի լուծուածքներով շաբաթը երկու անգամ: Յետոյ հիւանդին կը չանձնարարեն ամէն օր դոնէ երկու անգամ առնել տաք նըստալոգանք եւ ուռուցել հեշտոցը բորակի կամ կրէօլինի նման դեղերու շատ թույլ բաց առատ տաք լուծուածքներով: Ելեքարականութիւն տուած է խիստ բարերար արդիւնքներ եւ երբ պարզ միջոցները չեն օգներ միշտ փորձելու է դայն: Մէկ ելեկտրօդը կը դնեն ողնաշարի վրայ իսկ միւսը սեռաչին փափուկ մասերուն մէջ ու աչգպէս հոսանքը կ'անցնեն ներսը: Եթէ հեշտոցը խիստ նեղ է կամ առնանդամը անհամեմատ խոշոր, պէտք է հեշտոցանքը աստիճանաբար ընդլայնուի մինչեւ հնարաւոր ըլլայ առնանդամը հեշտութեամբ ներս ընդունիլ: Հեշտոցը նախ կօկախին լուծուածքով կը թմրեցնեն և ապա աստիճանաբար ապակիէ կամ ճնշուած սպունդէ գլաններ



ու ձողեր կ'անցնեն մէջը մինչեւ բաղձալի չափով ընդլայնի: Վերին աստիճան ըմբոսա դէպքերուն մէջ կը դիմեն արձատական վիրահատական գործողութիւններու:

\* \* \*

Մերձաւորութեան ժամանակ կնոջ հեշտասիրական զգացման բացակայութիւնը առաջ կուգայ հոգեկան ու Ֆիզիքական պատճառներէ: Երբ կինը իր էրիկը չի սիրեր, հասկնալի է զուգաւորութեան գործողութիւնը չի կրնար տալ իրեն ունէ հեշտասիրական զգացում: Հոգեկան տրամադրութիւնը ահագին դեր կը խաղայ սեռային գործողութեանց յաջող կամ անյաջող ելքին մէջ: Մենք արդէն տեսանք որ կինը բնաւորութեամբ աւելի պաղարիւն է եւ կրաւորական, իսկ երբ ատոր վրայ կ'աւելնայ սիրոյ բացակայութիւն, այն ատեն մերձաւորութեան գործողութիւնը ամենեւին ընդունակ չի ըլլար յարուցանելու կնոջ մէջ հեշտասիրական զգացում, ընդհակառակն, կարող է կատարեալ զրուանք ազդել անոր: Միեւնոյն արդիւնքը կ'ստացուի երբ մարդու եւ կնոջ տարիքներուն միջեւ մեծ անհաւասարութիւն կայ, օրինակի համար, երբ էրիկը շատ աւելի տարիքով է քան կինը: Որպէս զի զուգաւորութեան գործողութիւնը երկու կողմին ալ, մարդուն եւ կնոջ, հաղորդէ հեշտասիրական լիուլի բաւարարութիւն, պէտք է երկուքի սեռային գործողութեանց համապատասխան բոլոր փուլերը ժամանակագրական կարգով ընթանան, ուրիշ խօսքով, կատարելասլէս իրարու զու-

գաղիւլին: Պէտք է երկուքի չուզմունքներն ալ միեւնոյն ժամանակ իրենց գազաթնակէտին հասնին, երկուքի սերմնահոսութիւններն ալ միեւնոյն ընդլայն տեղի ունենան, ապա թէ ոչ սեռային գործողութիւնը անկատար կերպով կը վերջաւորուի եւ ոչ մէկը ոչ միւսը պիտի կարողանայ վայելել սեռային լրիւ հաճոյքը: Կնոջ չուզմունքը աւելի դանդաղ կերպով կը զարգանայ եւ իր գազաթնակէտին կը հասնի, մարդ ընդհակառակն շուտ կը չուզուի եւ շուտով ալ կը հանդարտի: Ուստի մարդ պէտք է համբերէ մինչեւ կնոջ չուզմունքը զարգանայ ու այն ատեն միայն մօտենայ անոր: Կրթուած ու ճարտար մարդը կարող է մերձաւորութեան ժամանակ ամբողջ կէս ժամ ինքզինք զսպել եւ այդ ժամանակը չատկացնել զզուանքներով ու փաղաքշանքներով կնոջ ցանկութիւնը արթնցնելու եւ զարգացնելու:

Այս տեսակ կանոնաւոր, գաղափարական մերձաւորութիւն տեղի ունենալու համար պէտք է էրկան ու կնոջ տարիքները իրարու բաւական մօտ ըլլան եւ մարդը լաւ ուժ ունենայ: Երբ այս պայմանները կը պակսին, կը պակսի նաեւ հեշտասիրական կատարեալ գոհացում: Օրինակի համար, երբ չխտուն տարեկան մարդ մը երեսուն տարեկան կնոջ մը էրիկն է, անոնց մերձաւորութեան ժամանակ մինչեւ երիտասարդ, առոյգ կնոջ ցանկութիւնն եւ չուզմունքը տակաւ զարգանալ սկսին եւ իրենց գազաթնակէտին հասնին, մարդու թոյլ ցանկութիւնն ու առնանդամի լարումը արդէն եկած ու գացած կ'ըլլան եւ ան շատ թերի կերպով միայն պիտի կարողանայ իր առնական պարտականութիւնը կատարել: Այսպիսի պարա-

զայլի մը մէջ ի հարկէ կինը երբէք չի կրնար ստանալ հեշտասիրական կատարեալ գոհացում :

\* \* \*

Կինն ալ մարդուն պէս կրնայ իր հեշտասիրական գլխացումներն ու ընդունակութիւնները բոլորովին կորսնցնել երբ սեռային չափազանցութիւններով եւ ձեռնամուրթեամբ ինքզինք մաշկեցուցած է : Այս բանին լաւ խելամուտ ըլլալու համար միտ բերենք անառակ աղջկան պարագան : Ողորմելի անառակ աղջիկը, որ օրը չեմ գիտեր քանի անգամ կարող է մերձաւորուիլ մարդուն հետ, կարելի է տասը, քսան անգամ, կարելի՞ է որ իր չոգնած ու պարտասած մարմնին մէջ զգայ միեւնոյն հեշտասիրական զգացումը նոյն խակ իր հաւնած մէկ մարդուն հետ ինչպէս պիտի զգար թարմ ու ժուժկալ օրիորդ մը իր սիրած մարդուն հետ : Բնաւ երբէք : Հեշտասիրական զգացում գոչանալու համար հարկաւոր են թարմ ֆիզիքական ուժ, անաղարտ ջղալին գրութիւն մը եւ լաւ պահուած, զգայուն սեռային մասեր : Անառակ աղջկան, չափազանցութիւններով ինքզինք մաշկեցուցած կնոջ սեռային փափուկ մասերը չարաչար գործածութենէն արգէն բխացած, կորսնցուցած կ'ըլլան իրենց զգայնութիւնը ու ալ ընդունակ չեն ըլլար հեշտասիրական գրգիռը լման կերպով հաղորդելու ողնուղեղին և գլխուղեղին, այս վերջին գործարաններն ալ արգէն յոգնած ու մաշած ըլլալով՝ ընդունակ չեն ըլլար ընդունելու հաղորդուած հեշտասիրական գրգիռը եւ զայն լման կերպով գնահատել :

Անառակ աղջկան սեռային գործողութիւնները մեքենական բնույթ առած են, հեշտասիրական զգացումը անոնց մէջ մեծ չափով անշուշտ պակասած ըլլալու է :

Միեւնոյն արդիւնքը կ'ստացուի աւելի շուտ երբ կինը մարդուն պէս ձեռնամուրթեան եւ ուրիշ վատ ունակութիւններու կը նուիրուի ու այդպէս իր փափուկ մասերու զգայնութիւնը մեքենական կոչու գրգիռներով կը բխացնէ :

\* \* \*

Երբ էրկան ու կնոջ մէջ սէր չը կայ, երբ անոնց մէջ տարիքը մեծ անհաւասարութիւն կայ, ի հարկէ բժշկութիւն այդ դէպքերուն մէջ չի կրնար օգնել այլ մարդն ու կինը իրենք են որ իրենց գրութիւնը ալ մարդն պիտի գիտնէ : Այն տեղ ուր հեշտասիրական զգացումը բացակայ է շնորհիւ ծնանականութեան եւ սեռային չափազանցութիւններու, պէտք է հիւանդը իր վատ մոլութիւններէն իսպառ հրաժարի եւ իր մտքին ու մարմնին կատարեալ հանգիստ տայ : Պէտք է սեռային ամէն տեսակ վաչելք-քիստ տայ : Պէտք է սեռային մէկ տարի մինչեւ սեռային ներէ հրաժարի գոնէ մէկ տարի մինչեւ սեռային չոգնած ու բխացած կակուղ մասերը իրենց զգայնութիւնը վերստանան : Այդ հիւանդը լաւ սնունդով, թարմ օդով եւ տաք ու պաղ լողանքներով իր ուժեղը, գլխուղեղն ու մէջքուղեղը լաւ մը կազդուրելու է : Կարելի է գործածել նաեւ ելեքտրականութիւն անզրախացած մասերուն զգայականութիւն բերելու համար :

ԱՄՓՈՓՈՒՄ

Ահաւասիկ, այսպիսի չառաջխաղացումներով է որ առաջ կը տարուի մարդկային կենդանական ու հոգեկան տնտեսութեան սեռային բարձր պաշտօնը: Ահաւասիկ, ասոնք են անոր հետ առնչութիւն ունեցող մոլութիւններէն ու հիւանդութիւններէն ոմանք որոնք ես ջանացի նկարագրել այս էջերուն մէջ եւ տալ անոնց դարմանը:

Մարդ ու կին, որոնք այս երկրի ամենէն բարձր, ամենէն բնաշրջուած արարածներն են, սեռային կազմուածքով ու կոչումով կը ներկայացնեն իրարմէ ամենէն աւելի զանազանաւորուած ու զատորոշուած էակներ եւ սէրը անոնց մէջ՝ շնորհիւ այս զանազանաւորման ու անոնց բանականութեան ամենավսեմ երեւոյթ մը կ'ստանայ: Սէրը մարդ ցեղի շարունակութեան համար անհրաժեշտ է, անոր ուժերը կ'աւելցնէ, ուստի մարդ պէտք է սիրէ, պէտք է սեւէ բանի սէր ունենայ այս աշխարհի վրայ: Այդպիսով ան լաւատես ու զուարթ էակ մը պիտի ըլլայ:

Ափսո՛ս սակայն, սէրը անխառն չէ չարիքէ չբորհիւ ժարդու սեռային գործիքի անկատարելու-

թեան եւ ներկայ քաղաքակիրթ կեանքի բարդ պատմաններուն: Սեռային պաշտօնը, ըլլալով կենդանական ու հոգեկան տնտեսութեան ամենէն բարձր պաշտօնը, ամենէն աւելի ենթակայ է զանազան խանդարումներու եւ խօթութիւններու: Մարդուն մէջ զտնուող սեռային աններդաշնակութիւններէն ոմանք չենք կրնար հիմակուհիմա դուրս հանել. կրնանք սակայն գիտութեան եւ կրթութեան շնորհիւ զանոնք մեղմել, ուրիշներ նոյն իսկ բոլորովին դարմանել, մեր սեռային զգացումները նորմալ վիճակի մէջ պահել ու այլեւայլ մոլութիւններէն եւ տկարութիւններէն հեռու մնալ:

Առողջ, կորովի մարմին մը անհրաժեշտ է սեռային վատ հակումներու եւ մոլութիւններու դէմ մաքառելու համար: Սեռային չառաջխաղացումները չենք կրնար կղզիացնել եւ մարմնական միւս չառաջխաղացումներէն բոլորովին զատ պահել: Երկուքը խաղացումներէն բոլորովին զատ պահել: Ասոր հաւիրարու վրայ փոխադարձաբար կ'ազդեն: Ասոր համար է որ ես տուի իմ ընթերցողներուն մարմնական մար է որ ես տուի իմ ընթերցողներուն մարմնական ուրիշ առողջապահական կանոններ ու խրատներ եւս որոնք կ'օգնեն սեռային զգացումներ նորմալ եւ խաղաղ վիճակի մէջ պահելուն:

Սեռային մոլութիւններէն եւ տկարութիւններէն զերծ մնալու համար իմ տուած առողջապահական բոլոր կանոններուն եւ միջոցներուն մէջ չորսը իմ կարծիքով ամենէն կարեւորն են որոնք կարելի է ըսել սեռային կրթութեան էութիւնը կը կազմեն, անոր keynoteն են: Անոնք են մաքրութիւն, զբաղուած կեանք, շուտ ամուսնութիւն եւ ապա չափաւորութիւն:

Մաքրութեան վրայ, մտքին ու մարմնին միանգամայն, եւ արդէն բաւական մանրամասն խօսեցայ եւ ցոյց տուի թէ ան որքան կը նպաստէ շղային անդորրութեան: Cleanliness is next to godliness կ'ըսէ անգլիական առածը: Այս խօսքը խորունկ ճշմարտութիւն մը կը պարունակէ իր մէջը: Մաքրութեան գաղափար, սէր ունեցողը ամէն տեսակ աղտոտութիւններէ ու տգեղութիւններէ կը զղուի եւ այդպէս ինքզինք վատ հակումներէ եւ ունակութիւններէ հեռու կը պահէ:

Զբաղուած կեանքը սեռային զգացումները խաղաղ, նոյն իսկ թմրած վիճակի մէջ պահելու համար պատուական միջոց մըն է: Սեռային անցքը, եթէ կարելի է այսպէս ըսել, մարդկային բնութեան մէջ ընդգերմութեան ամենաթույլ կէտ մըն է: Մեր մարմինները մտաւոր եւ մկանական ուժ պատրաստող ինքնաշարժ մեքենաներ են: Անոնց առաջ բերած ուժագընտլութիւնը պէտք է կերպով մը վատնուի: Չենք կրնար փայտի պէս անշարժ նստիլ եւ մկանական ու մտաւոր գործունէութիւն բոլորովին խափանել: Արդ՝ երբ մենք ծոյլ մնալով մեր ուժերը ունէ կանոնաւոր մարմնական եւ մտաւոր գործունէութեան չենք լծեր, սիստեմատիկ աշխատանքի նուիրելով զանոնք չենք գործածեր, անոնք մեր մէջ պիտի կուտակուին եւ ելքի ճամբայ մը փնտռեն: Սեռային անցքը կը մատակարարէ խիստ դիւրին ճամբայ մը մարմնական ուժագընտլութեան անկէ դուրս ելլելու. ընդգերմութեան ամենաթույլ կէտ մըն է, մանաւանդ երբ զբոլորէ կերակուրներով եւ խորհուրդներով ջիղերը կը չուզուին: Այս ճամբայէն ան դուրս պիտի ելլէ եւ ինքզինք

վատնէ: Եթէ չը կառավարուի ու չը սանձուի, վատանդ կայ որ փոթորիկ չարուցանէ, մարմնի ուժերը բոլորովին ծծէ եւ զայն խորտակէ: Յարատեւ մտաւոր ու մկանական գործունէութիւն սակայն մարմնի ուժերը օրէ օր կը վատնէ եւ չի թողուր որ անոնք մարմնին մէջ կուտակուին եւ սեռային անցքէն ելքի ճամբայ մը փնտռեն: Երիտասարդներ ու աղջիկներ եթէ կ'ուզեն խաղաղ միտք մը ունենալ, սեռային փորձութիւններէն հեռու մնալ, ինքզինքնին մտաւոր ու մկանական օգտակար աշխատանքով մը միշտ ըզբաղուած պահելու են: Օրհնեալ է աշխատանքը: Առանց շարժման, առանց աշխատանքի արդարեւ կեանքը կը մեռնի:

Երիտասարդներ ժամանակին շուտ ամուսնանալու են եւ քսանհինգերորդ տարիքէն վերջ երկար չետաձգելու չեն ամուսնութիւնը: Ուշ ամուսնութիւն ալժմեան քաղաքակրթութեան դժբաղդ պարագաներէն մէկն է եւ պատճառը անհամար չարիքներու: Անոր պատճառաւ է գլխաւորաբար որ անառակունոր վեներական ախտեր այնքան տարածուած են: Երկար ատեն ամուրի մնալուն պատճառաւ է որ շատ մը երիտասարդներ անառականոցներ դիմելու փորձութեան մէջը կ'իջնան եւ այդ աչլեւաչլ նողկալի հիւանդութիւններով բռնուելով՝ մարմնով ու հոգով կ'աւրուին ու կը փճանան: Եթէ ամէն երիտասարդ իր կեանքի նպատակներէն մէկը ընէ շուտ ամուսնանալ եւ տուն կազմել, վստահ եմ որ ան աւելի ձեռներէց եւ խնայող պիտի ըլլայ, աւելի գիտակից ու մաքուր կեանք մը պիտի ապրի եւ ամէն տեսակ մոլութիւններէ ինքզինք հեռու պիտի պահէ:


Չափաւորութիւն սեռային գործողութեանց ինչպէս նաեւ օմէն բանի մէջ կեանքի պատուական նշանաբան մըն է : Այս ընտիր յատկութիւնը արդարեւ խորունկ կը թուութեան նշան մըն է : Եթէ մարդիկ ամէն բանի մէջ գիտնային չափաւորութիւն պահել շատ աւելի առողջ ու երջանիկ պիտի ըլլային : Մարդիկ աներես տղաներու պէս չաճախ ալլեալ չափազանցութիւններու մէջ ինչալով կ'աւրեն իրենց առողջութիւնը : Բնութիւն մեզ սովորաբար կ'ազդարարէ, կ'իմացնէ թէ այն ինչ բանի մէջ չափը անցընելու վրայ ենք բաց մենք անոր ձաջնին մտիկ ընել չենք գիտեր : Կարծես այս խնդրին մէջ մենք անասուններէն ետ մնացած ենք : Անասուններ իրենց կերակուրի ընտրութեան, ուտելու եւ խմելու մէջ, նաեւ սեռային գործողութեանց մէջ զգուշ են եւ չափաւոր : Մարդիկ, ընդհակառակն, շատ անգամ չափէն աւելի կ'ուտեն եւ այդպէս իրենց ստամոքսը կ'աւրեն : Չափազանց խմելով, այլեւայլ թունաւոր նիւթերով, ինչպէս ալիօզօլով, ծխախոտով ու օփիոմով կը թունաւորեն իրենց մարմինները : Մըտքով ու մարմնով չափէն աւելի կ'աշխատին ու այդպէս կը քայքայեն իրենց Ֆիզիքը : Մենք տեսանք որ սեռային անզօրութեան դէպքերէն մեծ մասը, նաեւ ուրիշ շատ մը տկարութիւնները առաջ կուգան սեռային չափազանցութիւններէն : Մարդ բանական է՝ ահ մըն է ու պէտք է գիտնալ կառավարել իր զգացումները, չափ ու սահման դնել իր ցանկութիւններուն, ապա թէ ոչ շարունակական նեղութիւններու եւ հիւանդութիւններու մէջ պիտի ինչայ : Մարդկային բնութիւնը դեռ անկատար է, բարդ ու բաղա-


դըրեալ կեանքի մը մէջ կ'ապրինք ու չենք կրնար միշտ հետեւիլ մեր կոշտ ցանկութիւններուն : Ամէն քաջափոխին պէտք է այս ու այն ցանկութիւնը զսպենք, կ'օնտրօլի տակ պահենք որպէս զի ըլլայ թէ ընկերութիւնը վնասուի եւ անոր հետ վնասուինք նաեւ մենք : Այս է ճշմարիտ կը թուութեան էութիւնը : Անկիրթ, անհաւասարակչիւ մարդ մըն է այն մարդը որ մանկան մը պէս միշտ չափազանցութիւններու մէջ կ'իչնայ ու երբէք չի կրնար ինքզինք կառավարել : Ընդհակառակն կը թուած մարդ մըն է այն մարդ որ գիտէ կանխատեսել, իր իղձերուն եւ զգացումներուն չափ ու սահման դնել եւ ի պահանջել հարկին զանոնք բոլորովին զսպել, ուրիշ խօսքով, երբ ան կրնայ իր ցանկութիւններն ու զգացումները բնութեան օրէնքներուն հետ կատարելապէս հաշտեցնել :

Բոլոր այս խնդիրներուն մէջ կամքը հզօր դեր մը կը խաղայ : Կամքը անտարակոյս բնութեան մէջ ամենէն բարձր ուժն է : Լաւ ձեւակերպուած ու կը թուած կամքը հրաշքներ կրնայ գործել : Մեր նպատակը պէտք է ըլլայ կամքերնիս կը թել եւ բնութեան օրէնքներէն, գիտութեան լոյսէն օգտուելով մեր զգացումներուն եւ իղձերուն կատարելապէս տիրապետել եւ զանոնք նօրմալ, առողջ վիճակի մէջ պահել : Միայն այն ատենն է որ մենք արժանաւոր մարդիկ եւ կիներ պիտի ըլլանք : Միայն այն ատենն է որ երջանկութիւն քիչ շատ պիտի գայ մեզի :

Վ Ե Ր Ձ







21 MAY 2013

12091

ՀՀ Ազգային գրադարան



NL0883458



11

18679